

ՆՈՐ ՇՐՋԱՆ

III ՏԱՐԻ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№. 8

Օ Գ Ո Ս Տ Ո Ս

1903



ԹԻՖԼԻՍ

Արագածիսկ Մ. Մարտիրոսեանցի.

Գուշկինեան փողոց № 12.

1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 8

Երէս

1. ՄԲԲԿԻ ՍՈՒՐԲԸ, (շար.) վէպ Ա. Ահարոնեանի . . .	5
2. ՓՈՂԻ ՀԵՐՈՍԸ, (Les affaires sont les affaires) Կոմի- զիա, Օկտաւ Միլլըրի, Թարգմ. Փրանսերէ- նից Ս. Շիսեանի	20
3. ՎԱՆ-ՏՈՍՊ, Կարսեցիի	34
4. ՍՄԵՆ. ՀԱՅ. ԿԱԹՈՂ. ԱԹՈՌՈՅՆ ԷՋՄԻՍՄԻՆ ԴԱՌ- ՆԱԼԸ, Պատմասէրի	48
5. ՇՎԵՅՅՍՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ, Ա. Ա.	67
6. ԷՆ ԱՄՊԻ ՆՄԱՆ... Բանաստեղծ. Ա. Իսահակեանի. . .	87
7. ԳԻՄՆԱԶԻՍՏԻ ՕՐԱՏԵՏՐԻՑ, Պանդուխտի	89
8. ԱՔՍՈՐԱԿԱՆԻ ԵՐԳԸ, (Իրլանդ. մեղեդի) Փոփսպր. Ա. Ծառուբեանի	104
9. ՄԱՐ-ՇԻՄՈՆԸ ԵՒ ՄԻՍՍԻՈՆԱՐՆԵՐԸ, Մեսրոպ- Խան Զարամի	107
10. ՎՐԱՅ ԿԵԱՆՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ. — «Երկու գիտնական յօղուած հայերի մասին: — Հայ-կաթոլիկների հարցի շուրջը: — Վրացի ուսանողութիւնը: — Մի հրապա- րակախօսի «առասպելական ուրացումը»: — Մայրենի լե- զուի սերը վրաց մէջ, Տ. Փիլիքովեանի	113
11. ՎԵՅ ՕՐ Ա. ԹԱԴԷԻ ՎԱՆՔՈՒՄ (Այցելուի գիտողու- թիւններէն). — Ն. Փրանզեանի	123
12. ՄԱԿԱՐԻ ԵՐԱԶԸ, (Վաղիմիր Կորսլենկօ) Թարգմ. Ա. Աթայեանի	140
13. ՅՈՅՆԵՐԸ ԵՒ ՄԱԿԵԴՈՆԻԱՆ, Ա. Ա.	171
14. ՍՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՅ ԿԵԱՆՔԻՑ, Ս. Գ.	181
16. ՆՈՐ ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐՔԵՐ.	215
15. ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ, Անտեստանէլի ճառագայթ- ները, Ս. Նալբանդեանի	186
19 ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Նոր փոխարքայութիւն: — Նոր կա- նոններ դժբախտ դէպքերից վնասուած բանուորներին վար- ձատրելու մասին: — Թիֆլիսի նահանգապետի որոշումը: — «Правит. Вѣст.» Կիււի անկարգութիւնների մա- սին: — Փոփոխութիւններ ֆինանսների միւնիստրութեան մէջ: — Կանոններ արքունական հողերի վրայ ապրող գիւղացիների եւ գաղթականների հողատիրութեան մա- սին: — Մեռոնի օրհնութիւնը: — Կարգադրութիւններ մա- մուլի վերաբերեալ:	216

Նոր շրջան III տարի

Հրատ. XV տարի

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՄԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 8

Օ Գ Ո Ս Տ Ո Ս

1903



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Արագատիպ ՄՆ. Մարտիրոսեանցի

Պուշկինեան փողոց № 12.

1903

Дозволено цензурою. Тифлисъ, 30 августа 1903 г.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 8

Երէս

1. ՄՐՐԿԻ ՍՈՒՐԲԸ, (շար.) վէպ Ա. Ահարոնեանի . . .	5
2. ՓՈՂԻ ՀԵՐՈՍԸ, (Les affaires sont les affaires) Կոմեդիա, Օկտաւ Միրբօրի, Թարգմ. Ֆրանսերէ-նից Ս. Շիսեանի	20
3. ՎԱՆ-ՏՈՍՊ, Կարսեցիի	34
4. ԱՄԵՆ. ՀԱՅ. ԿԱԹՈՂ. ԱԹՈՌՈՅՆ ԷԶՄԻԱՅԻՆ ԴԱՌ-ՆԱԼԸ, Պատմասէրի	48
5. ՇՎԷՅՑԱՐԱԿԱՆ ԳԻՒԴԸ, Ա.Ա.	67
6. ԷՆ ԱՄՊԻ ՆՄԱՆ... բանաստեղծ. Ա. Խահակեանի.	87
7. ԳԻՄՆԱԶԻՍՏԻ ՕՐԱՏԵՏՐԻՑ, Պանդուխտի	89
8. ԱՔՍՈՐԱԿԱՆԻ ԵՐԳԸ, (Իրլանդ. մեղեդի) Ժոսաֆր. Ա. Ծատուրեանի	104
9. ՄԱՐ-ՇԻՄՈՆԸ ԵՒ ՄԻՍՍԻՈՆԱՐՆԵՐԸ, Մեսրոպ-Խան Զարամի.	107
10. ՎՐԱՑ ԿԵԱՆՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ.—«Երկու ղիտնական յօդուած հայերի մասին:—Հայ-կաթոլիկների հարցի շուրջը:—Վրացի ուսանողութիւնը:—Մի հրապարակախօսի «առասպելական ուրացումը»:—Մայրենի լեզուի սէրը վրաց մէջ, Տ. Փիլրումեանի	113
11. ՎԵՅ ՕՐ Ս. ԹԱԴԷԻ ՎԱՆՔՈՒՄ (Սյցեկուէի դիտողութիւններէից).—Ծ. Փրանգեանի	123
12. ՄԱԿԱՐԻ ԵՐԱԶԸ, (Վաղիմիր Կորոլենկօի) Թարգմ. Ա. Աթայեանի.	140
13. ՅՈՅՆԵՐԸ ԵՒ ՄԱԿԵԴՈՆԻԱՆ, Ա. Ա.	171
14. ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ, Ս. Գ.	181
16. ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ.	216
15. ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ, Անտեսանելի ճառագայթ-ները, Մ. Նալբանդեանի	185
19. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Նոր փոխարքայութիւն:—Նոր կանոններ դժբախտ ղէպերից վնասուած բանուորներին վարձատրելու մասին:—Թիֆլիսի նահանգապետի որոշումը:—«Правит. Вѣст.» կիեւի անկարգութիւնների մասին:—Փոփոխութիւններ ֆինանսների միւնիստրութեան մէջ:—Կանոններ արքունական հողերի վրայ ապրող գիւղացիների եւ զաղծականների հողատիրութեան մասին:—Մեռնի օրհնութիւնը:—Կարգադրութիւններ մամուլի վերաբերեալ:	216

18. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— Լորդ Սոլսբերիի մահը:— Անգլիական պահպանողականների բնորոշ կողմերը:— Անգլիական պահպանողականների թրքասիրութիւնը:— Մակեդոնական հարցի ներկայ վիճակը:— Յոյների թրքասիրութիւնը:— Կառավ. հաղորդ. Բիտոլիի ռուս. հիւպ. սպանութեան առիթով:— Շահի նուիրած հողը ռուսաց կայսրուհուն Ուրմիայում. Լ. Ս.	222
19. ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ,	228
20. ՎՐԻՊԱԿՆԵՐ,	«
22. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ	229
23. ՅԱԽԵԼՈՒՄԾ, Ա. Ըօլլէսի՝ Հրաչալի դար, թարգմ. Ստ. Լիսիցեանի	145—160

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից զրկել պարզ, մանաւանդ թւերը, յատուկ անուններն ու օտար բառերը, և թերթի միայն մի երեսի վրայ:

2. 2'ընդունուած մեծ յօդուածները պահուում են խմբագրատանը 6 ամիս: Ձեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը: Իսկ փոքր յօդուածներն ու բանաստեղծութիւնները չեն վերադարձնուում:

3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւնը: Խմբագրութեան առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարուում են անվճարելի:

4. Խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:

5. «Մուտճի» համարը չը ստացուելու դէպքում պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ռուսերէն գրուած ազգով (заявление) ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելը: Այդ տեղեկութեանը պէտք է կցել տեղական պոստային զրասենեակի հաւաստագիրը (удостоверение), որ ամսագրի համարը չէ յանձնուած զանգատաւորին:

6. Խմբագրութեանը զանազան հարցումներով դիմող անձինք պէտք է պատասխանի համար ուղարկեն նամակագրոշմ կամ պոստային բլանկ:

ՄՐՐԿԻ ՍՈՒՐԲԸ *)

XXII

Լուսինը մայր մտաւ, երկիրը կորաւ խաւարի մէջ, հեռու ձորերից լսուող կասկածելի ձայներն ու որոտը լռեցին, բայց Ասօն դեռ շարունակում էր վազել հեծահեծ դաշտերի, արտերի, ձորերի միջով: Երկու անգամ նա կորցրեց ճանապարհը, երկու անգամ դուրս եկաւ Զինգետի առաջ, մնաց մտամոլոր, լայն շունչ առաւ և ապա կրկին վազեց դէպի խաչքարի բլուրը: Զայներն այնտեղից էին լսում:

Այդ ձայները... մի գերադոյն վայրկենում՝ զարհուրելի տագնապի մէջ մռնչացող զայրոյթներ լինէին կ'ասես, որոնք ամենքը միասին խաւարի գրկում եղբայրացած գաղարուցին, փաթաթուցին իրար վրէժխնդիր օձերի պէս և մեռան՝ սոսկումը փռելով իրանց շուրջը:

Ո՞վ կարող էր ասել, թէ ինչ էին ասում նրանք, այն խորհրդաւոր ձայները, անիծում էին, թէ՛ արտասուում, օգնութիւն աղաղակում, թէ՛ քրքջում գիւային ծիծաղով, բայց Ասօն թւում էր, թէ նրանք ամենքն իրան կանչեցին բարձր-բարձր և մեռան անպատասխան:

Եւ Ասօն վազում էր անհանգիստ, սիրտը լի անո-

*) Տես «Մուրճ» № 7:

րոշ սարսափով, հոգին տագնապով բռնուած. նա ըզգում էր, որ այս խաւարն իջաւ և մի բան ծածկեց, մի անդառնալի բան, մի ոճիւր, և ինքը գուցէ էլ ոչինչ, ոչինչ չի կարող անել սոսկալի իրականութեան հանդէպ:

«Ուշացայ, ուշացայ, և նրանք սոված էին, մրմնջում էր նա. յոգնած ու սոված, էլ ի՞նչ կարող էին անել... ուշացայ...»

Բլրի ստորոտում նա մի վայրկեան կանգ առաւ. ուղիղ իր հանդէպ մարդիկ էին դալիս և խօսում էին բարձրաձայն: Նա յետ քաշուեց ու ծածկուեց մի քարի յետև: Եկողը մի հոգի էր, մի ստուեր, որ արագութեամբ ցած էր իջնում բլրից, խօսում էր ինքն իրան՝ ձեռքերն սպառնալիկ շարժելով.

— Դէ հիմայ հանգստացիր, Նաւօ, ասում էր խորհրդաւոր ձայնը. ուխտդ ընդունելի եղաւ, մեղար ձուկ կոտորելով, մինչև ուխտաւորներն եկան, եկան ու նրան էլ բերին. Շողերը թող դինջանայ, նշանածն էլ գնաց. հառաւ:

Ապա նա քրքջում էր բարձրաձայն, մի վայրկեան լռում, կրկին շարունակում.

— Ազատուի... չի ազատուի, ոչ ոք չ'ազատուեց, դէ հանգստացիր, Նաւօ:

Կիսախեղադար, վրէժխնդիր Նաւօն սարսափելի իրականութիւնն էր պատմում խաւարին և հրճում դիւային քրքիջով, որ ուխտաւորները ջարդուել են, և որ Ասօն էլ նրանց հետ զոհ էր գնացել: Ուրեմն էլ ոչինչ չը կար փրկելու, ոչինչ չը կար անելու. միակ բանը, որ դեռ հնարաւոր էր, չափազանց ոգորմելի, ջնջին էր. Ասօն կարող էր արգելել այդ քինոտ հրճուանքը, կարող էր թոյն խառնել կիսախեղադար Նաւօի երջանկութեանը, մի ձայն, մի խօսք, կենդանութեան մի նշան: Բայց ի՞նչ օգուտ, ի՞նչ օգուտ. թող հրճուի. խեղադարձ հըրճուանք. գուցէ և նա իրաւունք ունի, վշտացած ծնողի իրաւունքը սահմանել գծուար է, երբ գերեզմանը ծածկում է նրա վերջին յոյսը, փշրում է նրա սիրտը:

Նաւօն մի յուսահատ, մի գտնացած, վրէժխնդիր ծնող էր, որ իր թափած արցունքի փոխարէն արցունք ու արիւն էր պահանջում:

— Երթամ, երթամ կանգնեմ կտրին, շարունակեց Նաւօն. հերթից կանչեմ. «Նունուֆար խաթուն, ոլլը-ծաւ, պրծաւ, հաւասար ենք, քո ծուխն էլ մարաւ. սե, սե» էլ Ասօն չը կոչէր...

Ասօն ցնցուեց, մայրը... այս խելագարը չի խը-նայի նրան:

— Ասօն կենդանի է, Նաւօ, Նունուֆարի ծուխը չի մարել, ասաց նա՝ դուրս ցատկելով քարի յետեից:

Նաւօն սարսափից յետ-յետ քաշուեց, կանգ առաւ մի վայրեկան, ապա կարծես ուշքի եկած՝ բացադանչեց ահագին ձայնով.

— Փախար, փախար, կտրիչ Ասօ, ասաց ու քրքշալով կորաւ խաւարի մէջ:

Վշտացած երիտասարդն իր տեղում քարացած՝ նա-յում էր խուսափող ստուերի յետեից, ապա առաջ շար-ժուեց այժմ աւելի վհատուած, աւելի անյոյս:

Խաչքարի լեռը ցցւում էր նրա առաջ իր սե, ու-նորոշ դանդուածով մի խորհրդաւոր, ահագին հրէշի նման, որ նստել է մի սարսափելի գաղանիքի վրայ, նըս-տել է ու լռել: Ասօն այժմ բարձրանում էր դանդաղու-թեամբ. լերան խուլ լռութիւնը հասկանում էր, խաւա-րի ծածկած գաղանիքը գիտէր:

Լեռնալանջի կէսին հասած՝ նա կրկին կանգ առաւ և լսողութիւնը սրեց: Իրանից քիչ հեռու նա պարզ ու որոշ կերպով լսում էր մի տնքոց: Ասօն քայլերը փու-թացրեց ոտների տակ նայելով, անքոցն աւելի սաստ-կացաւ, նրա սիրտը ճմլուեց ցաւից: Իր ոտների տակ ընկած՝ մէկը գալարւում, մռնչում էր ցաւից: Ասօն կը-ռացաւ, նայում էր:

— Ո՞վ ես:

Վերաւորը պատասխանի փոխարէն տնքում էր. Ա-սօն երկու ձեռքով բռնեց բարձրացրեց նրա գլուխը:

—Ո՞վ ես, կրկնեց նա իր հարցը:

—Մէկը... որ պէտք է... մեռնէր և որ... մեռնում է... թող ինձ...

—Գսպէ ամի՛ր... դ՞ու այստեղ, այս վիճակում...

Ծերունին ցնցուեց, փորձում էր բարձրանալ, ձայնը ծանօթ էր, բայց երևի դժուարանում էր յիշել:

—Գսպէ ամին, հա, հա... ո՞վ ես դու, այս արիւնէ մրրկի մէջ... գնահ, որդի... գնահ, հեռացիր... թող ինձ... ով և լինիս...

—Ասօն քեզ թողնի՛, Գսպէ ամի, էս օրին. Տէր Աստուած, Տէր Աստուած:

—Ասօն... Ասօն... Գսպէն իր բոլոր ուժով ձըգուեց, բարձրացաւ աջ արմունկի վրայ, և ձախ ձեռքը երիտասարդի պարանոցը ձգեց: Եւ խաւարի մէջ երկար ժամանակ լսում էին նրանց համբոյրները, նրանց հեկեկոցը, նրանց կարօտալի հեքը:

—Այժմ ես կը մեռնեմ... հանգիստ, որդի... վիրաւոր, ծեր եղջերուն կը հանգստանայ... էս լեռներում... ճանապարհից հեռու, հեռու... աշխարհից հեռու... դ՞ու ապրիր...

—Բայց դու այստեղ, Գսպէ ամի, էս սարի վրայ, էս գիշերին, վիրաւոր, մենակ...

—Հէ որդի... ես եկայ փնտրելու այն... ինչ որ գտայ... շատ ապրեցի... Ես ոչինչ... ես ոչինչ... ինձանից վերեւ... այ՛ էստեղ... զուլում էլաւ... արիւնէ մրրկի զարկեց... Մրրկի սուրբի վրայ... և... նա չեկաւ, չեկաւ... Շատ էին անօրէնները, ջարդեցին... ջարդեցին... ո՞վ ազատուեց, ո՞վ փախաւ, մէկ Աստուած գիտէ... վերան երկիր... սե՛ ժամանակ... ի՛նչ լաւ է մեռնելը... ապրելն էսպէս չէր...

—2է, չէ, Գսպէ ամի, եկ քեզ շալակեմ և գիւղ հասցնեմ. վերքդ կը կապեմ, ես քեզ չեմ թողնի այստեղ մենակ ու անտէր:

Ծերունին գլուխը թափահարեց:

—Ես գտայ այն... ինչ փնտրում էի, որդի... դ՞ու

էիր պակաս... դու էլ եկար... էս տառապած գլուխս
դիր ծնկիդ...

Ասօն զգուշութեամբ նրա արեղարդ գլուխը դրեց
իր ծնկին:

—Այսպէս լաւ է... Ի՜նչ լաւ է մեռնելը... Թող քեզ
համար... որդիս, ապրելը լաւ լինի... բոլորի համար...
աշխարհի համար... Նաւօի համար էլ... իսկ ես... նա
չը կարողացաւ շարունակել, ծանր հազը ճնշեց նրա կո-
կորդը, և թանձր, մուգ հեղուկը դուրս ժայթքեց բե-
րանից, ծածկեց արեղարդ միրուքը: Վերաւորը մի փոքր
լռեց, հանգստացաւ ու շարունակեց:

—Բունս քանդուեց... եղջերուն էլ մեռնում է...
Նաւօն քանդեց, որդի... իրաւունք ունէր... իր բունն էլ
է քանդուած... Ասօ, Ասօ, Շողերի արիւնը... երանի
թէ ես հաւուցանեմ... Բայց էլ բայդուշը չը կայ... երբ
մրրիկն անցնի, շինիր ջրաղացը, որդի, կը շինես...

—Հա՛, Գսպէ ամի, կը շինեմ, մէջքովս քար կը
կրեմ, կը շինեմ և քեզ պէս դուռը լայն բաց կը թող-
նեմ անցորդների առաջ:

—Աստուած օրհնէ քեզ, որդի... ինձ պէս հին էր
ջրաղացը... ինձ պէս խարխլած... արիքներն եկան, տա-
րան երկօխ էլ... դու նորը շինիր, հաստ պատերով,
նոր սիւներով... մեծ քարերով... և աղան, աղան ցորե-
նը... Թող չախչախն էլի ցատկրտի... էլի երգի... աշ-
խարհում, որդի, ամեն բան ջրաղացի քարի պէս է...
դառնում է հա՛ դառնում... հալքաթ մի օր էլ չարխի-
ֆալազն էս վերան երկրի վրայ կը դառնայ... հալքաթ
մի օր էլ մեր սև սարերին արեւ կը ծագի... հինը խար-
խլած էր... նոր ջրաղաց... նոր ջրաղաց, թող որոտա-
լով աղայ քարը... Նոր ջրաղաց...

Նրա ձայնը նորից խղուեց, հազը կրկին սեղմեց
կոկորդը, մուգ հեղուկը մէկ էլ ժայթքեց, ծերունին
ամբողջ մարմնով ցնցուեց, բերանը մի քանի անգամ
ուժով բաց-խուլի արեց, ապա հանդարտ ձգուեց ու
լռեց: Գսպէն մեռաւ... Ասօն հեկեկալով կրկին կռա-

ցաւ նրա վրայ, գլուխը վար դրեց, ծունկ չոքեց ծեր բարեկամի դիակի առաջ և լալիս էր խաւարի մէջ:

Ուրի կանգնեց, բայց հեռանալ չէր կարողանում, էլի ուշադրութեամբ նայում էր իր ծեր բարեկամի դիակին, որ ձգուած էր խաւարի մէջ այս լեռնալանջին՝ արևնոտ վերքի վրայ պատան սնենալով միայն մութ գիշերը:

«Էս լեռներում ճանապարհից քիչ հեռու...» Ասօն մտաբերեց Գսպէի սիրելի երգը, և ուրիշ էլի չառ բան յիշեց նա այս խորհրդաւոր ծերունու կեանքից, որ ապրեց ճիշտ այնքան ժամանակ, որքան իր ջրաղացը, որ աշխարհը չը սիրեց՝ բայց սգաց, ցաւեց նրա համար, և որ մեռաւ կարծես այն պատճառով, որ էլ չէր կարող իր դռնից անցնող մուրացկաններին, ճանապարհորդներին և մանաւանդ ուխտաւորներին կերակրել: Զրաղացը և Գսպէն Ասօի երեակայութեան առաջ ներկայանում էին որպէս երկու եղբայրներ, երկուսն էլ կենդանի, երկուսն էլ խորհրդաւոր, որոնք այնքան տարիներ բուն դրած մեծ ճանապարհի վրայ՝ պայքարում էին չարիքի դէմ, որ սողում, գալարում էր նրանց չորս կողմում, և իվերջոյ յոգնած, ուժասպառ երկուսն էլ մի օրում ընկան՝ տեղ տալով ուրիշներին, որ շարունակեն նոյն պայքարը, և այսպէս անվերջ...

«Նոր ջրաղաց, նոր ջրաղաց...» յիշում էր Ասօն ծերունու վերջին խօսքերը:

«Հա՛, նոր ջրաղաց, մտածում էր նա, թո՛ղ քո կամբը լինի, իմ խեղճ բարեկամ, նոր ջրաղաց կեանքի մեծ ճանապարհի վրայ, և թո՛ղ քարը դառնայ թափով ու ալիւր շիւի շուրջը, և թո՛ղ անցորդները, և մանաւանդ ուխտաւորներն ապաստան ու հանգիստ գտնեն, մինչև որ չարխի-ֆալագը մի օր էլ էս մեր վէրան վաթանի վըրայ դառնայ. չէ՞ դու ասացիր, որ աշխարհում ամեն բան ջրաղացի քարի պէս է, դառնում է հա՛ դառնում...»

Ասօն թողեց իր մեռած բարեկամին լեռնալանջի վը-

րայ և շարունակեց բարձրանալ: Նա դեռ չատ բան ունէր տեսնելու այս ահաւոր գիշերին, կարծես էլ վերջ առնելու չէր: Լերան կատարին նա կանգ առաւ քրտնաթոր, բորբոքուած ճակատն ու այտերը հովին տուեց, նայեց... սիրաւ ճմլուեց ցաւից: Խաչքարն էլի այնտեղ էր թեւատարած ու համր՝ ինչպէս միշտ, իսկ նրա շուրջը փռուած էին գիականեր, գիականեր... այստեղ էր ուխտաւորների հոյակապ առաջնորդը, նա փռուած էր իր հասակի բոլոր վեհութեամբ և հովանաւորողի, պաշտպանողի դիրքով աջ ձեռքն իջել էր իր կողքին պառկած պատանու, փոքրիկ Մուշօի կրծքի վրայ, հինաւուրց կաղնի լինէր կարծես այս ծերունին, որ մրկից խորտակուած ընկել էր և իր տակ ճխլել մատղաշ ոստը, իր եղբօր որդուն:

Այստեղ իրար կողքի անկենդան փռուած էին և ուրիշ շատերը, պաշքարի և մահուան մէջ եղբայրացած, և բոլորի վրայ երկնքից ասուլերը թարթում էին իրանց աչքերը սառն ու անտարբեր, և խաչքարը տարածում էր իր թեւերը նոյնքան անհոգ, որքան այն ժամանակ, երբ մարդկային բարեպաշտ հօտը փռուած էր նրա ոտների տակ և լիզում նրա պատուանդանը աղօթքի մըրմօններով:

Ապրօն չը կար. Ասօն իզուր իր յուզարկաւորի քայլերով անցաւ զանազան կողմեր, իզուր փրնտրեց ժայռերի յետևում, ականջ դրեց վիրաւորի անքոց լսելու, Ապրօն չը կար ու չկար: Եւ Ասօն չը գիտէր նոյնիսկ ուրախանալ, թէ ոչ, որ Ապրօի գիակը չը կար, երբ ամենքն ընկան, անգամ Մուշօն, որ իր հօր կտրատուած մատներն էր կրում կրծքին՝ որպէս արդարագատութիւն պահանջող նուիրական նշան, և այդ պատանին իր կեանքի արշալուսին ընկաւ աղնիւ պաշքարի մէջ. Ապրօն ինչո՞ւ ապրի, մտածում էր Ասօն: «Բոլորը, բոլորը, վիհը սարսափելի լայն է, պէտք է լցուի, բոլորն ընկել են, Ապրօն էլ կարող էր ընկնել», մոմուտւմ էր նա:

Քայլելով-քայլելով՝ առանց նկատելու՝ նա կրկին եկաւ,

Գսպէի դիակի առաջ կանգ առաւ Շատ էր յոգնած, կամացուկ նստեց մի քարի վրայ:

Հոսաբացը մօտ էր. արեւելքում, հորիզոնի մօտ աստղերը կամաց-կամաց դունատուեցին ու ծածկուեցին. շուտով արեւմուտքումն էլ խաւարի քօղը մաշուեց ու թափանցիկ դարձաւ: Վաղորդեան աղջամուղջի մէջ լիճը քնից զարթնող կոյսի պէս սարսուռւմ, թրթռում էր թեթեւ հողմի զով շնչի առաջ, և նրա շուրջը եզերող լեռներն իրար ուսերի վրայ ընկած՝ կարծես աշխատում էին դիտել նրա կուսական մերկութիւնը և իրանց առաջին ժպիտը նրան ուղարկել:

Դիւղն էլ զարթնում էր, ցասման ժամի օրն էր. ծխի ամպերը պալան-պալան բարձրացան, եկեղեցու բակում մեծամեծ կաթսաների տակ պատրաստուած օջաղներն էին, որ մէկէն վառուեցին. մի քանի եղներ էին մօրթուած, որ պէտք էր եփել: Ասօն նայում էր այդ ծխի պտոյտներին և ակամայ յիշեց ուխտաւորների առաջին այցելութիւնը Գսպէի ջրաղացին և տեղի ունեցած խօսակցութիւնը: Այնտեղ գիւղը սողում է եկեղեցում, աղօթում է, լալիս, այստեղ լեռան վրայ փռուած են դիակները, մտածում էր նա. ո՞վ է կենդանի, ո՞վ մեռած, նրանք, թէ՛ սրանք. ո՞ւմ համար արտասուել, սուգ անել, նրանց, թէ՛ սրանց:

«Նոր ջրաղաց, նոր ջրաղաց...» Գսպէի այս խօսքերը կրկին հնչուեցին նրա ականջում:

—Քնեցէք հանգիստ, քնեցէք, հատիկների պէս փչրուեցէք հին ջրաղացի քարի տակ, և թող ուտեն քաղցածները: Նոր ջրաղաց, ո՞ւմ հետ շինել, ի՞նչպէս շինել, երբ հեղեղը քարերն էլ տարաւ, և չէնքի տեղ ահագին փոս է: Ասօն դեռ երբէք իրան այսքան մենակ, այսպէս մերժուած չէր գգացել: Գսպէն փռուած էր նրա առաջ անկենդան, ընկերները ցաքուցրիւ ընկած ժայռերի տակ, Ապրօն կորած, և գիւղը ցասման ժամով էր զբաղւած:

«Նոր ջրաղաց, նոր ջրաղաց...» Ասօն նայում էր

Գսպէի դիակին, և նրան թւում էր, թէ նրա կապտած շրթունքները դեռ մրմնջում են այս խօսքերը: Եւ երիտասարդն իր միայնութեան մէջ զգում էր, թէ ինչպէս մի ահագին բեռ ճնշում է խորտակելու չափ, և իր շուրջը չը կայ մէկը, որ սիրտ տայ, քաջալերի. նա մենակ էր այս բարձրութեան վրայ, իսկ այնտեղ ներքեւում, նրա ոտների տակ բազմութիւնը եռում, շարժւում էր, նրանք շատ էին և ցասման ժամ էին անում:

«Նոր ջրաղաց, նոր ջրաղաց...»

Երիտասարդն էլի նայեց Գսպէին, նրա արիւնոտ կրծքին, սիրտը նորից փղձկաց, նա գլուխը ձեռքերի մէջ առաւ, և յորդ արցունքները թափուեցին աչքերից: Նա լալիս էր ոչ միայն նրանց համար, որոնք փռուած էին իր շուրս կողմում անկենդան, այլև նրանց համար, որոնք հեռու հարթավայրերի վրայ, այն կժկուած, դողացող գիւղում աղօթում էին ու սողում, ողորմութիւն էին մոլորում պղնձուած երկնքից:

Եւ լճի վրայ յայտնուեց Նաւօի սպիտակ առագաստը, մէկ նա էր անմասն ցասման ժամից, նա ցասումն իր կրծքումն էր կրում: Ծեր ձկնորսն էլի տարւում էր ալիքների վրայ, էլի նրա թին բարձրանում և իջնում էր ձկների մէջքին: Գիշերուայ անցքերը նրան չէին գոհացրել, Ասօն կենդանի էր, վրէժի ծարաւն անյագուրդ Նաւօի սրտում:

«Խեղճ մարդ, խեղճ մարդ...» մրմնջաց Ասօն՝ նայելով լճին:

Եւ ծուխը շարունակում էր բարձրանալ գիւղից պալան-պալան. ցասման ժամ էր, և նաւակը տարւում էր լճի վրայ մեն-մենակ, իսկ Ասօն լերան կատարին լալիս էր բոլորի համար, լալիս էր և էլ չը գիտէր՝ ո՞ւր դնալ, ո՞ւր տանել, ո՞ւր հետ բաժանել իր ծով դարձը:

XXIII

Այն գիշեր լեռներից հնչուող աղաղակները, մահից, սարսափից ու յուսահատ սրայքարից խօսող այն ձայները ոտքի չը հանեցին Ա... զիւղացիներին. խրճիթներում ճրագ չը վառուեց, դռներ չը ճռուացին, փողոցներում մարդ չը յայտնուեց։ Մէկ Գուլէի փոքրիկ խըցում դեռ ճրագ կար, մէկ նա էր ոտքի վրայ և ականջ էր դնում դրսի ձայներին, հասկանալ էր ուղում խաւարի լեզուն։

Յաջորդ օրը պատարագ ու ցասման ժամ էր, կոյսը նշխարներ էր պատրաստում և մերթնդմերթ դադարեցնում էր աշխատանքը, ուշադրութեամբ ականջ դնում՝ գլուխը մի փոքր դէպի լուսամուտը կամ դուռը թեքած։ Աշխատանքը վերջացրեց, ուշ գիշեր էր, բայց նա դեռ չէր քնում, այլ կատարում էր մէկն այն հըսկումներից, որոնք անակնկալների հեռաւոր սարսափներից անհանգիստ հոգիների համար դերագոյն պահանջ են։

Պատի վրայ փորուած էր փոքրիկ խաչքար, և նրա առաջ պլպլալէն վառվում էր կանթեղը. կոյսը վերկացաւ, սևաղդեսաւ ու հոյակապ կանգնեց նրա հանդէպ և աղօթում էր։ Երկար ժամանակ նա ծունր էր դնում և բարձրանում, և նրա հետ միաժամանակ պատի վրայ խաղում էր իր ստուերը միշտ միևնոյն տեղում, միևնոյն ձևով։ «Տէր Աստուած, ասում էր նա, զուլումը մեր չորս կողմը բռնել է, ցաւը խեղդում է մեզ. անճարների և խեղճերի Աստուած, արժանի ենք, մեղաւոր ու յանցագործ ենք, բայց չէ՞ Դու գթած ես ու երկայնամիտ, մեղմիր Քո ցասումը գոնէ անմեղների, արգարների համար, ների՛ր, ների՛ր... ազատի՛ր այս սևաւոր աշխարհն արիւնոտ մրրկից, շատ ենք տեսել, շատ ենք կրել, բաւական համարի՛ր։ Սև ամպերը շարան-շարուն կախուել են մեր գլխին, ո՛վ Դու փո-

Թորիկների, մրբիկների և հողմերի Տէր, քաղցրացրո՛ւ Քո սուրբ աչքը, մի շող, մի ցոլք կաթեցրու այս սև երկնքից...» Նա աղօթքն ընդհատեց և լսում էր... Ընչ ձայներ էին: Աղօթքը վերսկսեց աւելի յոյզով, աւելի երկիւղածութեամբ: Դեռ երբէք նրա հոգին այսպիսի անօրոշ սարսափով պաշարուած չէր, ինչպէս այս գիշեր: Լսուող ձայներից իւրաքանչիւրը խաւարը պատռելով՝ դալիս էր հեռուից, ներս էր թափանցում նրա նեղլիկ լուսամուտից, և կոյսը հասկանում էր բոլորը, դողում էր բոլորից, նրանք բոլորն էլ զուլումից էին խօսում: Եւ կոյսը մրմնջում էր.

«...Անճարների ու խեղճերի Տէ՛ր, ազատիր զու՛լումից...»

Դուռը կամացուկ թրբխկաց, կարծես այն ձայներից մէկն էր, որ եկաւ, դրանք դիպաւ:

«... Քո ողորմութիւնն անհուն է...»

Դուռը թրբխկաց աւելի բարձր:

«... Դու միայն կարող ես, Պեզանից բացի էլ ոչ ոք չ'ունենք...» Նա լռեց:

Մի ձեռք ծեծում էր դուռը:

—Ո՞վ է:

—Հաղորդութիւն ուզող կայ, լսուեց դրսից կամացուկ:

Կոյսը դուռը բացեց. մէկը ներս մտաւ, մնաց դը՛րան առաջ, ստուերում կանգնած լուռ ու անշարժ:

—Ո՞վ ես:

—Դարձեալ ես եմ:

—Ապրճ...

—Սուս, սո՛ւս, Գուլէ. այդ անունը մի տար, անի՛ծուած է, թէ քարերը լսեն՝ կը ճաքեն, կենդանի մարդիկ լսեն՝ կը մեռնեն, մէկ խաւարը նրանից չի դողում, մէկ էլ մահը, որոնցից մէկն ընկերս է, միւսն էլ հեռու չէ. լսեցի՞ր, հասկացա՞ր ձայները:

—Հա, հա, լսեցի, Ապրճ, լսեցի. Տէր Աստուած, այն

ինչ էր, ինչ պատահեց լեռներում. դու այնտեղ էիր, ինչո՞ւ, հրաեղից ես գալիս, ո՞ւր էիր, ո՞ւր գնացիր:

—Պրծա՛ւ, պրծա՛ւ, սուրբ տեղերում, խաչքարի թեւերի տակ արիւնը հեղեղի պէս վազեց, հապա՛, հեղեղի պէս. Իւչ-Քիլիսէի վանքում վարդապետն ասաց, թէ կը հոգայ ուխտաւորների մասին, եթէ նրանք շուտ չը հեռանան, և հոգաց.

—Վարդապետը, Ապրո՛...

—Հա՛, Գուլէ՛, քո սուրբ հայրը. նա լուր տուեց աշորէն մարդասպաններին. այսքան տարի ես ուխտաւորների վալադ էի, այսպիսի բան չէի տեսել. հովիւն իր հօտը տուեց գայլերին. ահա, այս ժամանակներն ամեն բան տարօրինակ է, Գուլէ՛, քիչ է մնում՝ մարդիկ թաթերի վրայ քայլեն ու խոտ արածեն: Քանի՞նք ընկան. հազիւ մի երկու հոգի ինձ պէս խաւարի միջից սողացին՝ անէծքի գործը քնածներին պատմելու:

—Տէ՛ր Աստուած, Տէ՛ր Աստուած...

—Օ՛, երանի թէ մենակ այդ լինէր, Գուլէ՛, մեծ մրրիկը յետոյ է գալու. և ես դրա համար եմ գետինը չանդռելով այստեղ հասել:

—Էլ ի՞նչ, Ապրո՛, ինչ սև է գալու մեր գլխին:

—Վաղը ցասման ժամ է:

—Հա՛, լուսաբացին վարդապետն այստեղ կը լինի:

—Վարդապետն իրաւունք ունի, լաւ պատարագիչ է. այս գիշեր արիւնի հսկում կատարել տուեց, բայց ցասումը չի անցնի և... ցասման ժամը արիւնի ժամ կը լինի:

—Ապրո՛, Ապրո՛, այդ ի՞նչ ասացիր, արիւնի ժամ, ես սարսափում եմ քո խօսքերից:

—Սարսափելն անօգուտ է, ճար ու հնար է պէտք, վաղը գիւղի վրայ զարկելու է նոյն մրրիկը, ինչ որ այս սարի գլխին, ես անիծուած եմ ու հալածուած այս գիւղից, ես բէխեր եմ, դո՛ւ դուրս արի և ճշն կտուրների վրայ, իսկական ցասումը գալիս է, ճար, հնար:

—Ճա՛ր, հնա՛ր, Տէ՛ր Աստուած, ողորմա՛ծ երկինք, դու...—կոյսը ձեռքերը գէպի երկինք տարածեց:

—Աղօթճում ես... էլի՞... Նա չի գայ, ճար ու հընար գտիր, նա չի՛ գայ...

—Նա կը գա՛յ, նա կը գա՛յ, այն Մրրկի սուրբը, այս սև օրերին նա մեզ չի թողնի:

—Լսի՛ր, Գուլէ, մի անգամ գոնէ լսի՛ր ինձ... Ապրօի ձայնը գողգողում էր, նա կարծես շտապում էր վերջացնել ասելիքը...—Լսի՛ր ինձ, աղաչում եմ, շարունակեց նա, ինձ ասում են խենթ ու բէխեր, դու գիտես գոնէ, որ ես ոչ մէկն եմ և ոչ միւսը, տես, ես տանջուած, սողալով քո դուռն եմ եկել ասելու այն, ինչ մեռելներն էլ են պոռում: Աղօթի՛ր՝ որքան կ'ուզես, բայց ճար ու հնար մտածի՛ր, գիւղի գլխին փոթորիկ է գալիս և ի՛նչպիսի փոթորիկ: Ես քարերի տակ էի թաղնուած, ես լսեցի անօրէնների խօսակցութիւնը, նրանց կորուստն այս գիշեր սարսափելի մեծ է, և գիւղի վրայ պիտի թափեն իրանց կատաղութիւնը: Գոնէ նրանք կենդանի լինէին, այն լերան վրայ ընկածները: Ասո՛ւ ժողովրդին, ասո՛ւ այն սուրբ վարդապետին, որի մասին այժմ գիտկները խօսում են աստղերի հետ իրանց չըռած աչքերով, ասո՛ւ, թո՛ղ ցասման ժամի ճաշն ուտեն՝ որքան կամենում են, բայց մրրիկը, արիւնոտ մրրիկը չը մոռանան: Գու կարող ես, քեզ կը լսեն, ասո՛ւ, նա, այն մրրիկը գալիս է արագ-արագ, իսկ այն միւսն, այն մրրկի սուրբը... Է՛հ, թո՛ղ այն էլ այս գիշերը վկայի, թո՛ղ... խաւարը... խօսի... թո՛ղ...

Ապրօն էլ չը կարողացաւ շարունակել, նա կանգնած տեղում երերաց և յանկարծ փռուեց յատակի վրայ իր ամբողջ հասակով: Կոյսն այժմ միայն նկատեց, որ նրա ձախ քունքի վրայ ահագին վէրք էր բացուած, որտեղից արիւնը հոսում էր ծորալսով և բոսորային գոյնով ներկում ուսը, կուրծքը, շարերը: Կանթեղի աղօտ, պղպլան լոյսն ընկաւ վիրաւորի դունաւոտ, մաշուած գէմքի վրայ, բիբերը կորան վերին կողերի տակ, իսկ ըս-

պիտակուցը լայն բացուեց, միայն կապտած շրթունքները հազիւ շարժուում էին.

—Ձեմ... կարող, էլ չեմ... կարող...

Շփոթուած կոյսը վրայ պըծաւ, դրկեց, բարձրացըրեց նրա գլուխը, շփեց աչքերը, կանչում էր ականջին, վէրքը մի ձեռքով փակեց, ապա միւս ձեռքով շտապով քանդեց իր գլխակապը, արագ-արագ փաթաթեց վիրաւոր ճակատը, յետոյ ջուր բերեց, ցանեց դէմքին, մօտեցրեց շրթունքներին, շփեց ձեռները, կուրծքը, ցնցեց, նորից կանչեց:

—Ձեմ կարող... էլ չեմ կարող... մեռնում եմ...

—Ապրօ, Ապրօ, կանչում էր Գուլէն:

.

—Ձեւր:

Կոյսը նորից ջուր մօտեցրեց նրա շրթունքներին, վիրաւորը խմեց, աչքերն այս ու այն կողմը դարձրեց:

—Բոլորն ընկան, բոլորը, և ես մնացի... կեանք է հաճ... երբ է վերջանալու...

—Սուս, Ապրօ, Աստուած լսում է:

Կոյսը վերկացաւ, շոր բերեց ու գրեց հիւանդի գլխատակը, բայց չը գիտէր ինչպէս բարձրացնել նրան յատակից և տեղաւորել: Նա անհանգիստ էր, Ապրօի կացութիւնը նրան երկիւղ էր ներշնչում: Ի՞նչ անել ուշ գիշերին: Գուլէն յիշեց քահանային: Կամաց-կամաց հիւանդը մի փոքր հանգստացաւ, այն ժամանակ Գուլէն դուրս գնաց մեղմով և դիմեց դէպի քահանայի տունը: Կէս ժամ յետոյ նա շտապ-շտապ գալիս էր գիւղի նեղ, մուժ փողոցներով, և նրան հետևում էր մի ուրիշը աղնքալով, հազալով և տրտնջալով խաւարից: Քահանան էր: Երբ նրանք հասան և դուռը բացեցին, կանթեղն էլի պլպլում էր իր տեղում, և Ապրօն կիսակենդան՝ լուրմ էր արեան մէջ: Նա իր ձեռքով քանդել, դէն էր շպրդեւ գլխի վիրակապը, բաց էր արել մահացու վէրքը, և այնտեղից հոսում էր կեանքի վերջին մնացորդը:

Ապրօն մեռնում էր: Կոյսն ու քահանան մնացին քարացած իրանց տեղերում:

—Ներքի ինձ, ասաց մեռնողը, այս բէխեր ու ափսոսանքներ ինձ ուղեցի որ քո յարկի տակ հանգստանայ... Աղօթիր նրանց համար... որոնք ցասման ժամ ունեն... իսկ ինձ աղօթք պէտք չէ... միայն մի անիծիր... իմ խեղճ, իմ արդար Գուլէ...

Կոյսը մօտեցաւ, ու կռացաւ նրա դէմքը, և բռնեց մեռնողի սառը ձեռքը:

—Շնորհակալ եմ, իմ խեղճ ընկեր... իմ քոյր... չընորհակալ եմ... թափառական քամին հանգստացաւ... հալածական ամպը դադար առաւ... երկինքն անսահման էր... երկիրը լայն... և նրանք տեղ չ'ունէին... այժմ հանգստանում եմ քո յարկի տակ... քո աչքի տակ... քո ոտքերի տակ... սուրբ կին... մնաս բարի...

Նա փակեց աչքերը և մնաց անշարժ: Լռութիւն տիրեց...

—Անհանգիստ, թափառական դու ինչ, որպիսի վախճան. մարդ չը հասկացաւ, թէ ինչ էիր փնտրում այս աշխարհում, ասաց քահանան ինքն-իրան:

Գուլէն լուռ էր ու կռացած հեկեկում էր:

—Գլխի վէրքը... շարունակեց քահանան, տնաչէնը, էլի ողորմի իր հոգուն, ուրիշների պէս չէր, մարդ վախենում էր հետը խօսել, ուրիշ բաներից էր խօսում, անհասկանալի բաներ, կ'ասես երազի մէջ լինէր...

—Հն, երանգ, երանգ է այս բոլորը,—ասաց կոյսն առանց զլուխը բարձրացնելու.—մենք էլ ենք սարսափելի երազի մէջ. նրանք գոնէ սիրուն էր... իսկ մերը... մերը...

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

(Պը շարունակուի)

ՓՈՂԻ ՀԵՐՈՍԸ

(Les affaires sont les affaires)

Կոմեդիա 3 գործողութեամբ

ՕԿՏԱԻ ՄԻՐԲՈՒ

(Թարգմանութիւն ֆրանսերէնից)

ԱՐԱՋԻՆ ԳՐԻԺՈՂՈՒԹԻՒՆ

ԵՕԹԵՐՈՐԳ ՏԵՍԱՐԱՆ

ՏԻԿ. ԼԸՇԱ, ԺԵՐՄԷՆ, ԳՐՈՒԳ, ՖԻՆԿ,

(Ամբողջ նախորդ տեսարանի ժամանակ ժերմէնը սաստիկ յուզուած էր: Ամօթ եւ զայրոյթից նա չէր կարողանում զսպել իր բարկութիւնը... Հայրը հեռանում է թէ չէ, նա գնում, սեղանի վրայից վերցնում է իր բերած մի քանի փոքրիկ իրերը):

ԺԵՐՄԷՆ (Մօրը). Թոյլ տո՛ւր՝ ես հեռանամ իմ սենեակը... Գլուխս քիչ պտտւում է... ես ինձ լաւ չեմ զգում...

Տ. ԼԸՇԱ. Ի՞նչ է պատահել... Դու չես ճաշելու...

ԺԵՐՄԷՆ. Ո՛չ... ես քիչ տկար եմ...

Տ. ԼԸՇԱ. (Ուտերը քիչ թօթուելով). Լա՛ւ... Դճա՛ւ...

ԺԵՐՄԷՆ (Գլխի թեթեւ շարժումով քարեւում է Գրուզին եւ Ֆինկին). Ես, պարոններ, ներողութիւն եմ խնդրում ձեզանից...

ՖԻՆԿ. Խնդրեմ, օրիորդ, խնդրեմ...

ԳՐՈՒԳ. Շատ ջաւում եմ...

(Ժերմէնը սանդուղքներով բարձրանում, հեռանում է):

ՈՒԹԵՐՈՐԳ ՏԵՍԱՐԱՆ

Տ. ԼԸՇԱ, ԳՐՈՒԳ, ՖԻՆԿ

ԳՐՈՒԳ. Յոյս ունեմ, որ ծանր չէ օրիորդի հիւանդու-
թիւնը...

Տ. ԼԸՇԱ. Ոչինչ...

ՖԻՆԿ. Գլխացաւ է... անկասկած:

Տ. ԼԸՇԱ. Հա, հա... գլխացաւ է...

ՖԻՆԿ. Ի՞նչ սքանչելի օրիորդ...

ԳՐՈՒԳ. Եւ որքան լուրջ...

Տ. ԼԸՇԱ. Հա, նա շատ քիչ է խօսում, ճիշտն ասած...
Սակայն, պարոններ, նստեցէք, խնդրեմ... Ես ամուսնուս պատ-
ճառով ձեր առջև ուղղակի ամօթալի մնացի... նա իր շատա-
խօսութեամբ... իր վրդովմամբ այսքան ժամանակ ձեզ ոտքի
վրայ պահեց...

ՖԻՆԿ. Ոչինչ... ոչինչ... (Նրանք անոններ վերցնելով՝ նստում
են) Ա՜հ, պ. Լըշան բախտաւոր մարդ է...

Տ. ԼԸՇԱ. (Տխուր կերպով) Շատ... չատ...

ՖԻՆԿ. Ամենուրեք բախտը նրան ժպտում է... Գործեր...
ընտանիք... հասարակական դիրք... (Ձեռքի շարժումով ցոյց է տա-
լիս զղկակը... պարկը եւ դէպ հեռու՝ հորիզոնը) Հիանալի, փառաւոր
կալուածք...

ԳՐՈՒԳ. Հաղադիրւտ... Այս գէնքերը... այս ծառուղի-
ները... այս պարկը... Մի այսպիսի վեհ, գեղեցիկ տեսարան ես
երբէք չեմ տեսել... Սակայն այս իրօք Լիւզովիկոս XIV-ինն
է եղել:

Տ. ԼԸՇԱ. Ասում են...

ԳՐՈՒԳ. Հրաշալի է...

Տ. ԼԸՇԱ. (Վհատուած) Շատ է մեծ... չատ... Այսպիսի մեծ
շինութիւններին ես չեմ կարողանում ընտելանալ... Ես ուղղա-
կի մոլորւում, կորսւում եմ...

ՖԻՆԿ. Միթէ...

Տ. ԼԸՇԱ. Ես ձեզ հաւատացնում եմ... Ապա այն պահե-
լը... ծառաները... նրա հակողութեան և կառավարութեան հա-
զարումի ծախսերը... (Հտուշելով) Եթէ գիտենաք՝ որքան գլխա-
ցաւանք է պատճառում... Շատ ծանր գործ է... չատ... իմ ոյ-
ժից վեր է... (Գլուխը շարժելով) Գիտէք ինչ... Արդէն շատ ուշ էր,
պարոններ, որ այս կալուածքը մեզ ընկաւ...

ԳՐՈՒԳ. Ի՞նչ էք ասում...

Ֆինկ. Դուք չատ համեստ էք: Ես ինձ համար պարծանք կը համարէի, եթէ կարողանայի իմ աշխատանքով, եմ ընդունակութեամբ նուաճել այս բոլորը... ընդհակառակը... հէնց այդ է հիացման արժանի...

Տ. ԼԸՇԱ. Ոչ... ոչ... Հարկաւոր է կամ այս յարկի տակ ծնուած լինել... կամ այստեղ ապրել ջահելութիւնից սկսած... Մեր տարիքն արդէն անցած... մեր նիստ ու կացը... սովորութիւնները դժուար է այժմ փոխել... Թէև տարօրինակ է... սակայն այստեղ, կարծես, ես իմ տանը-դրանը... ինձ մօտ չեմ... Ինձ թւում է, որ ես ճանապարհորդում եմ, հիւրանոցում իջած, մի օտար երկրում...

ԳՐՈՒԳ. (Ծիծաղելով) Ահ, ահ...

Տ. ԼԸՇԱ. Այո, այո... Դուքսը դեռ ոչինչ... տանելի է... ծառերը ծառեր են... ծաղիկները՝ ծաղիկներ... բայց սալոններում... սենեակներում... սարսափելի է... Պատերի վրայ կախած այն մեծ պատկերները... Իշխանուհիներ իրանց անհամեստ հագուստներով... զինուորներ զրահաւորուած... Երբ ես նրանց մօտով անցնում եմ, նրանք, կարծես, իրանք իրանց հարցնում են. «Ո՞վ է այս գեր կինը... նա այստեղացի չէ, և մենք նրան չենք ճանաչում»: (Տխուր կերպով շարժում է գլուխը) Սակայն չէ որ այդ ճիշտ է...

ԳՐՈՒԳ. Դուք չատ անարդար էք թէ դէպի ձեզ և թէ դէպի ձեր երջանկութիւնը...

Տ. ԼԸՇԱ. Իմ երջանկութիւնը... իմ երջանկութիւնը...

Ֆինկ. Իհարկէ... Սակայն պատուական կինը միշտ և ամենուրեք իր տեղն ունի...

Տ. ԼԸՇԱ. Դուք չատ բարի էք... պարոն... Սակայն գիտէք... ես ինքս էլ զգում եմ, որ սա ինձ չէ քանում, սա չէ գալիս... Ի՞նչ է ինձ հարկաւոր... Մի փոքրիկ անակ, մի փոքրիկ աղախին և մի փոքրիկ պարտէզ... Սա ինձ բոլ-բոլ է... Եթէ իմ ամուսինը լինէր այնպէս, ինչպէս բոլորն են... իրան համար նստէր և խաղաղ վայելէր, ինչ որ կայ... եղածով բաւականանար... դեռ կարելի էր այստեղ մնալ... Բայց ասացէք, խնդրեմ, միթէ ինչպիսի բան է... Մի մարդ, որ այնպիսի ահապին դործեր ունի Պարիզ... զանազան տեսակ ձեռնարկութիւններ... բոքս... թերթ... չր գիտեմ էլ ինչ... որը գալիս է այստեղ երեկոները, այն էլ միայն քամոռ... նրան ինչքի է հարկաւոր այս բոլորը—այս դղեակը, այս պարիզ... Ահագին ծախսեր անէ իզուր տեղից... Այս է պակաս... այն է պակաս... մեքենաներն են փռ-չացել, չեն շարժւում... փորձեր անօդւոտ, որ երբեք չեն յաջողւում... Դեռ չեմ հաշուում ծառաների ահագին լեզիւնը, որ մեզ

լափում, թալանում է... Փողը սառույցի նման հալուում, գընում է...

ԳՐՈՒԳ. Սակայն չէ որ պ. Լըշային այդ մեծ բաւականութիւն է պատճառում...

Տ. ԼԸՇԱ. Բաւականութիւն... որ փոխանակ շահ բերելու, ահագին փող է նստում... ո՛չ, դա բաւականութիւն չէ...

ԳՐՈՒԳ. Վերջապէս պ. Լըշայի դիրքը, որ առանց այն էլ նշանաւոր է, չէ որ պատգամաւոր ընտրուելուց յետոյ նա նորից պիտի բարձրանայ...

ՖԻՆԿ. Նրա գործերի համար դա շատ և շատ կարեւոր է...

Տ. ԼԸՇԱ. Պատգամաւոր ընտրուի...

ԳՐՈՒԳ. Դա հաստատ, աներկբայ գործ է... Նա ինքը մեզ ասաց:

Տ. ԼԸՇԱ. Անտարակոյս... Նա ձեզ շատ ուրիշ բաներ էլ կ'ասէ... Այս երբորդ անգամն է, պարոններ, որ նա դնում է իր թեկնածութիւնը... (Հառաչելով) Ես հէնց այժմեանից դողում եմ... Աստուած իմ, ինչ չփոթ, ինչ հոգս և գլխացաւանք է այդ... եթէ դուք իմանայիք...

(Մտնում են Իսիդոր եւ Լիւսիէն):

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ԻՍԻԴՈՐ, ԼԻԻՍԻԷՆ, ՏԻԿ. ԼԸՇԱ, ՖԻՆԿ, ԳՐՈՒԳ

ԻՍԻԴՈՐ. (Նայում է նախ իր կնոջը, ապա հիւրերին) Ա՛հ, իմ բարեկամներս, ես ձեզ տեղն ու տեղը բռնեցի... Այդ ինչ էիք խօսում... Ինչ էիք ինձանից բամբասում... Ո՞վ գիտէ՝ ինչքան էք պատմել իմ մասին...

Տ. ԼԸՇԱ. Հը՞, կո՞վն ինչպէս է...

ԻՍԻԴՈՐ. (Ձեռքերը շփելով) Ոչինչ... Մի մեծ չիչ ոտմ է նրա ջանք... կը տանք, և նա կ'առողջանայ բոլորովին... չէ, Գարբօ:

ԼԻԻՍԻԷՆ. (Իր լոռնեամբ կասկած է արտայայտում):

Տ. ԼԸՇԱ. Կովին... ոտմ... ուզում ես, որ նա իսկոյն և եթ սասկի...

ԻՍԻԴՈՐ. Լաւ, լաւ... տաւարաբուժութիւնից դու ոչինչ չես հասկանում, իմ ամուսինս... Իսկ ժերմէնն ուր է:

Տ. ԼԸՇԱ. Իր սենեակը դնաց... Տկար է...

ԻՍԻԴՈՐ. Օ՛հ, դարձեալ ջղերը... Ա՛խ, այս ինտելիգենտ... այս գիտնական ազգերբը... (Chaise-longue-ի մօտով անցնելիս նկատում է ժերմէնի պիրքը, վերցնում է, նայում եւ վեր նետում) Ընթերցանութիւն... անտարակոյս... ընթերցանութիւն, միշտ բն-

թերցանութիւն... Եւ ոտանաւորներ... Սատանան գիտէ, թէ ինչպէս են հազարումի յիմարութիւններով շչմեցնում զլուսները և վիչացնում ստամորաները... (Կոմիկական զգուանքով վայր է գցում զիրքը: Ֆինկին) Ոտանաւորներ... Լամարալին... Հիւգօ... Միւսէ... Գիտես դու՝ այդ ինչ է...

Ֆինկ. Ոտանաւորներ...

ԻՍԻԴՈՐ. Այծի կտիտներ... (Ծիծաղում են) Իսկ դու կարդում ես:

Ֆինկ. Բորսայի բիւլետենները... երկաթուղու գնացքների ժամացուցակը...

ԻՍԻԴՈՐ. Բրաւօ... (Գրուզին) Իսկ դո՛ւ...

ԳՐՈՒԳ. Երբեմն ճանապարհին՝ վազոնում... փոքրիկ պատմաձօններ, այն, կարդում եմ...

ԻՍԻԴՈՐ. (Նփելով նրա ուսին) Բանաստեղծ... Իսկ Էս... Ես, իմ զաւակներս, երբէք չեմ կարդում... Ես երբէք ո՛չ մի բան չեմ կարդացել... Եւ ես զրանով պարծենում եմ, պարծենում... Սակայն այդ ինձ չէ խանգարում, որ ես Իսիդոր Լըչան լինեմ— Վոպերգիւի զղեակի տէրը... յիսուն միլիոն փող ունենամ... և մի թերթ, ուր ես վարում եմ քաղաքական, զրականական, փիլիսոփայական և բոլոր այլ բաժինները... (Աշխոյժ, ինքնազոհ, ձեռքերը շփելով քայլում է: Բեմի խորքում կանգնում եւ այդտեղից նայում է իր շուրջը... Բժամատերը ժիլետի կոնատակերին դրած... ղէմքը հրծում է) Ֆինկ... Եւ դու... տա՛... տա՛... տա՛... ինչպէս է...

(Աշխատում է յիշել նրա անունը):

ԳՐՈՒԳ. Գրուգ... Վիլհելմ Գրուգ:

ԻՍԻԴՈՐ. Հա՛... Գրուգ... Ձեմ կարողանում այս զահրումար անունը մտքիս մէջ խոթել, պահել... Եկէք այստեղ... երկուսդ էլ... (Ձեռքերի մի մեծ, լայն շարժումով ցոյց է տալիս ամբողջ շրջակայքը) Ի՞նչպէս էք դա՛նում այս տեսարանը...

Ֆինկ. Աքանչելի...

ԳՐՈՒԳ. Քիչ առաջ տիկին Լըչայի հետ միասին մենք հիանում էինք...

ԻՍԻԴՈՐ. (Կամաց) Իմ կնոջ... Նա ինչ է հասկանում... Նա մի հասարակ կին է... (Բարձր) Ինչ որ այդտեղ դուք տեսնում էք... դէպի աջ... ձախ... ձեր առջեր... յետեր... այն բոլոր դաշտերը... բոլոր այն մարգագետինները... և այ՛ այնտեղ՝ հեռւում այն գետը՝ վրան մի մեծ ջրաղաց... ապա բոլորովին խորքում... բլրակների վրայ գտնուող բոլոր անտառները... Այդ ամենը ինձ է պատկանում... Եւ սակայն այս դեռ մի աննըշան մասն է... Եօթ հազար հեկտար հող ունեմ... Երկու նահանգ, ութ գաւառական քաղաք, և քսան և չորս համայնքներ...

բում են գտնւում իմ կալուածքները... Չորս հարիւր տասնե-
ինն արտ և արօտատեղիներ... Բայց այս ամենը մակարդակի
վրայ աւելի լաւ կը տեսնէք... Գարրօ...

ԼԻԻՍԻԷՆ. Պարոն...

ԻՍԻԴՈՐ. Բարի եղէք... Գնացէք, բերէք իմ մակարդակը...
նախասնեակում, դէպի ձախ Մարի-Անտուանետայի սեղանի
վրան է... արքայական ճայի մօտ: (Լիսիէնը քարծրանում է սանդղե-
ներով) 1898 թւականի դեկտեմբերի 5-ին ես ինքս եմ այդ
ճային անձամբ, իմ ձեռքով սպանել... Վալդիսի իմ հովտում...
Ինչ ասես՝ իմ կալուածքներում կայ... և բոլորն էլ արքայա-
կան... (Գնում է քեփ առաջը) Ութ ժամ է հարկաւոր... որպէսզի
կարողանաս իմ կալուածքների շուրջը մի պտոյտ անել... Բայց
այս ամենը մակարդակի վրայ աւելի լաւ կը տեսնէք... Վաղը
դուք կը տեսնէք նոյնպէս... իմ վաթսուէն կթի կովերը... հա-
րիւրերեսուն եղները... ճահիճների ցամաքացները... մատղաշ
ծառերի սնկարանները... իմ ձկնաւաղանները... փարախները...

ՖԻՆԿ. Իոկ ո՞րս... չափ կայ...

ԻՍԻԴՈՐ. Խիստ չափ... Սակայն բացի կաքաւից և փա-
սեանից դուք իմ ամբողջ կալուածքներում ո՛չ մի այլ թռչուն
չէք գտնիլ...

ՖԻՆԿ. Այդ լաւ չէ...

ԻՍԻԴՈՐ. Ի՞նչպէս թէ լաւ չէ... Միթէ դու չը գիտես, որ
թռչունները գիւղատնտեսութեան ամենատիւներն են թշնամի-
ներն են... Բարբարոսներ... Բայց ես աւելի խորամանկ եմ,
քան նրանք... Նրանց բոլորին էլ ես սպանել եմ տալիս... Լու-
րաքանչիւր սպանուած ճնճղուկի համար ես երկու սու եմ
վճարում. իւրաքանչիւր խածկալիկի և կարմրալանջի համար—
երեք սու... չիկահաւի—հինգ սու... եկքանիկի և սոխակի—
վեց... որովհետեւ սրանք չափ սակաւ են... Գարնանը՝ ձուերը
մէջը թռչնի ընին ես վճարում եմ քսան սու... Այս ամենը ինձ
բերում են տասը մդոն հեռու տեղերից... Եթէ այսպէս տարա-
ծուի... մի քանի տարուց յետ ես կտորած կը լինեմ ֆրանսի-
այի բոլոր թռչուններին... (Ձեռքերը շփելով) Դեռ այնպիսի բա-
ներ կը տեսնէք դուք այստեղ, իմ բարեկամներս...

ՖԻՆԿ. (Մատով ցոյց է տալիս ծառուղու մի կէտը՝ դէպի ձախ)
Սակայն ներողութիւն, կարծեմ, չեմ ախալւում:

ԻՍԻԴՈՐ. Ի՞նչ է:

ՖԻՆԿ. Մի թռչուն:

ԻՍԻԴՈՐ. (Ուսեր թօթուելով) Ծաղրածո՛ւ...

ՖԻՆԿ. Ո՛չ, ո՛չ: Ես չափ լաւ տեսայ... Այ, այ...

ԻՍԻԴՈՐ. Կարմրալանջ է... Հա՛, ճիշտ որ... Ա՛յ, դու ան-

պիտան... (Լիւսէին մակարդակը ձեռքին դալիս է): Այստեղ, այստեղ՝ սեղանի վրայ դրէք: (Լիւսէինի ձեռքից մակարդակը վերցնելով, սեղանի վրայ բացում է) Նայեցէք այստեղ: (Երեքն էլ զլուլմները կորացած նայում, հետեւում են Իսիդորի ձեռքին, որ զնում, գալիս է եւ մակարդակի վրայ զծում երկրաչափական բոլոր հնարաւոր ձեւերը): Հիանալի է, չէ՞: Նայեցէք՝ իմ դաշտերը... իմ արօտատեղիները... անտառները... այնպէս պարզ երևում են, կարծես ինքզ անձամբ, փայտդ ձեռքիդ, զբօսնում ես... Ուշադրութիւն դարձրէք... այս կարմիր քառակուսիների վրայ... իմ քսան ագարակներն են դրանք... Ահա այն հովիտը, ուր ես սպանեցի արքայական ճային...

Ֆիւնկ. Այս ինչ է... այս բաց-կանաչը...

ԻՍԻԴՈՐ. Դա իմ լճակն է, ուր ես ահադին ծածաններ եմ պահում, ինչպէս այդ անում էին Ֆրանսական արքաները Ֆոնտենբլօում: Հետեւեցէք ինձ... Սա...

Տ. ԼԸՇԱ. Դու այս պարոններին յոգնեցնում ես... գուցէ նրանք կը ցանկանային նախ քան ճաշը՝ իրանց սենեակները զընայ...

ԻՍԻԴՈՐ. Միթէ ես ձեզ յոգնեցնում եմ... Ես... իմ այս մակարդակով...

ԳՐՈՒԳ. Բնաւ... բնաւ ոչ...

ԻՍԻԴՈՐ. (Կամաց) Նա բոլորովին հասարակ կլին է: (Բարձրաձայն, Ֆինկին) Աւելի լաւ է՝ ղլխարկդ վերցրու... Հայելիս քեզ խանգարում է... (Ինքը վերցնում է Ֆինկի զլխից նրա ղլխարկը եւ զընում սեղանի վրայ): Նայիր այս մեծ սպիտակ տարածութեան, որ աջ կողմից գալիս, ներս է խոթւում իմ կալուածքի մէջ... Դա Պորսելլէն է... մարկիզ դը Պորսելլէի հողերը... ծեր դատարկաչքիկ, դատարկապորտի, որին ես մի միլիոն երկու հարիւր հազար ֆրանկ անշարժ գրաւականով պարտք եմ տուել... Հիանալի կը լինի, չէ՞. Վոպերդիւ և Պորսելլէ միացնել և մի կալուած շինել... հը...:

Ֆիւնկ. Փառաւոր...

ԻՍԻԴՈՐ. Դա արդէն վերջացած գործ է, իմ դաւաններս... եթէ այսօր չէ, դա կը լինի վաղը... Ա՛յ, վաղը դուք կը տեսնէք, թէ ինչպէս է Իսիդոր Լըշան վարում ազնւական-չրջմուլիկների հետ... Որքան պիտի ծիծաղենք...

Տ. ԼԸՇԱ. Դարձեալ նոր կալուածք... դարձեալ զղեակ... Եղածը բաւական չէ, Աստուած իմ... Դու ուզում ես, որ ես բոլորովին խենթանամ...

ԻՍԻԴՈՐ. (Ուսերը թօթուելով) Կալուածք... միթէ դա դժբախտութիւն է... Դու հէնց չարունակ տրտնջան...

ՖԻՆԿ. Սրանք ինչ են... այս պատիկ մարդիկը... գոյնը գոյն... որ ցատկոտում, ոստոստում են մակարդակի իւրաքանչիւր մասում...

ԻՍԻԴՈՐ. Դու չես գուշակում:

ՖԻՆԿ. Ո՛չ...

ԻՍԻԴՈՐ. Դա իմ պատկերն է... խոշորացոյցով շատ նման է ինձ... Լաւ միտք է, չէ... նայելիս իսկոյն երևում է, թէ ում է պատկանում այս կալուածքը... (Մտով ցոյց է տալիս մակարդակի բոլոր դները): Այս փոքրիկ կանաչագոյն շեղանկիւնը... դա իմ գտարանն է... ուր ես գետեղել եմ վերջին սիստեմի մի լաւ լաբորատորիա... (Գտնալով դէպի Լիւսիէնը) Ահա եւ իմ քիմիկոսը... մի հիմնալի տղայ... ասպազայ գիտնական... որի հետ այժմ մենք զարմանալի փորձեր ենք անում... փորձեր... ինչպէս է... Գարրօ...

ԼԻԻՍԻԷՆ. Պարոն...

ԻՍԻԴՈՐ. Ինչպէս էք դուք անուանում այն փորձերը, որ ես անում եմ այժմ:

ԼԻԻՍԻԷՆ. Բուսական բիոլոգիայի փորձեր:

ԻՍԻԴՈՐ. Հա՛... բիոլոգեական... Հասարակ բան չէ... հա՛... Արդե՛ք բացատրեմ սրանց իմ գիւտը... Օ՛ն յառաջ... (նա մակարդակը ղորում է եւ նրան շարժելով) Ե՛ս երկրագործ չեմ... այլ ագրոնոմ... լաւ ըմբռնեցէք տարբերութիւնը... ագրոնոմ... Դա կը նշանակէ, որ ես երկիրը մշակում եմ ոչ իբրեւ մի հասարակ մարդ, այլ որպէս մի ինտելիգենտ, մի տնտեսագէտ, մի ժամանակակից, moderne մտածող... Այլեւ էլ ո՛չ ցորեն... ո՛չ գարի... ո՛չ վարսակ... դրանց վերջն է... այլեւ պահանջ չը կայ... զբոսնք այլեւ չեն ծախում... Այժմ ուրիշ բան է հարկաւոր... Ամեն ինչ յառաջադիմում է, ժամանակի պահանջները բազմա-նում եւ փոխում են... Եթէ մարդկութիւնը յետադէմ է եւ պահպանողական, այստեղից չէ հետեւում, որ ես ես, ես՝ Իսիդոր Լըշա՝ սոցիալիստ ագրոնոմ, յեղափոխական տնտեսագէտ... ես եւ ինեմ յետադէմ եւ պահպանողական... Հետեւաբար,—լաւ լըսեցէք ինձ,—եւ ցանում եմ բրինձ... տնկում եմ թէյ... սուրճ... չաքարեղէն...

(Ֆինկ եւ Գրուզ քիչ ապշած են):

Տ. ԼԸՇԱ. (Ուտերը թօթուելով) Դարձեալ:

ԻՍԻԴՈՐ. (Իր կնոջը) Էլ ինչ դարձեալ... Դու քո զրուածքով զբաղուիր... (Աւելի վստահութեամբ) չաքարեղէն... (Քիչ լռութիւնից յետոյ ինժեներներին)... Իսկ դուք... կարծես թէ չէք հասկանում...

Տ. ԼՃՇԱ. Բաւական է, իմ բարեկամս... ես յեղ խնդրում եմ...

ԻՍԻԴՈՐ. Օ՛հ, ինձ հանգիստ թո՛ղ... Ախեր հասարակական մեծ խնդիրների մասին կանայք ի՛նչ կարող են հասկանալ... Սակայն սա մի շատ պարզ բան է... Այս իմ նոր սխառմով ես հողագործութիւնը ոչ միայն ազատում եմ բուտինայի ճանկերից, այլև վերջ եմ դնում կոլոնիաներին... հետևաբար և պատերազմին... Է՛լ ոչ մեծածախս արչաւանքներ՝ դաղթակոնութիւններ հաստատելու... ոչ արիւնայեղջ նուաճումներ... Կոլոնիաներն այստեղ՝ քեզ մօտ, քս տանը-դրանը... (Միծաղելով ձեռքերը շփում է) Հնդկաստան... Չինաստան... Աֆրիկա... Տոնկին... Մադագասկար... այստեղ՝ քեզ մօտ... Դուք ապշած էք, խոստովանեցէք... Կարող էիք այդպիսի դիւտ դուք ինքներդ առնել, հօր...

Ֆինկ. Իհարկէ, սկզբում...

ԳՐՈՒԳ. Քիչ անհաւատալի է թւում...

ԻՍԻԴՈՐ. Ինչպէս առհասարակ բոլոր մեծ գիւտերը... Յետոյ նրանց ընտելանում, սովորում են... Օ՛հ, ես դիտեմ ձեր առարկութիւնը... թէ նրանք չեն բուսնիլ... Մենք կը տեսնենք... (Գոռողութեամբ եւ կատաղաբար) Ինչ որ ես կամեցել եմ... իրագործել եմ... Ես ցանկացայ հարստանալ... հարստացայ... Ես ցանկացայ այս գլխակին տիրանալ... տիրացայ... Ես կամենում եմ Պարսկէն... և Կ'ունենամ... Ես կամենում եմ այստեղ՝ ինձ մօտ շաղարիղէզն բուսնիլ... և կը բուսնի... Այնպէս չէ, Գարբո... Այո, այո... Հարցը միայն պարարտացման մէջն է... Եւ ես այնպէս եմ համոզուած դրա մէջ, որ ընտրութիւններին ես հէնց այդ տնտեսական, գիտական և հումանիտարական ծրագրով եմ դուրս գալիս և իմ թեկնածութիւնը դնում... Սակայն դուք երևակայում էք՝ մեր գաւառի պատերի վրայ այս տեսակ աֆիշաներ... Իսիդոր Լըշա... սոցիալիստ-ազրոնոմ... հակակղերական և նոր-գաղթականութեան հիմնադիր...

Տ. ԼՃՇԱ. (Կողկանձիւն ծայնով) Վեց հարիւր քուէ...

ԻՍԻԴՈՐ. Դու ի՛նչ ես այդտեղ խօսում...

Տ. ԼՃՇԱ. Վեց հարիւր քուէ, որ քեզ կ'արժենայ վեց հարիւր հազար ֆրանկ, ինչպէս միշտ... (Տաքանալով) Դու՝ հակակղերական... Սակայն հէնց որ մի փոքրիկ ցաւ ես զգում... չուտ... չուտ մի քահանայ... (Գրուզին եւ Ֆինկին) Եթէ սրան ականջ դնենք... այն խեղճ քահանան այստեղից պիտի չը հեռանայ... սրա կողքին նստած, շարունակ սրան հաղորդելու... Այո, այո... վեց հարիւր քուէ:

ԻՍԻԴՈՐ. (Ատամները կրծմացնելով ծիծաղում է. Գրուզին և

Ֆինկին բեմի խորքը հրելով) Հէ, հէ, հէ... Նա մի տարօրինակ կին է... Ինքն էլ չը գիտէ՝ թէ ինչ է ասում... Նա միայն ծիծաղելու համար է այդպէս խօսում... Նա դառանցանքների մէջ է... Ա՛հ... քահանաները... բոյալիստները կը տեսնեն, կ'իմանան այդ անպիտանները... ես նրանց ցոյց կը տամ... (ձաշի սուղին զանգը) Գնանք ճաշենք... (Վերադառնում է բեմի սուղ... Տիկ. Լըշա թեւանցուկ բարձրանում է սանդուղքով):

Տ. ԼԸՇԱ. Ես չը գիտեմ՝ այլեւ ի՞նչի համար է հեռախօսն այնտեղ դրած... Թողնեա՛ առանց նախադիւշայնելու հէնց հրաւիրի ու հրաւիրի...

ԻՍԻԴՈՐ. (Վերցնելով Գրուգի թելը... խղճահարուժեամբ) Ներքիւ նրան... հասարակ կին է... սովոր չէ...

(Հանդիսատէր կերպով մտնում են եօթը նոր հիւրեր)

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԵՍԱՐԱՆ

ՄԻԵԻՆՈՅՆ ԱՆՁԻՆՔ, յետոյ ՀԱՇՏԱՐԱՐ ԴԱՏԱԻՈՐԸ և ԻՐ ԿԻՆԸ, ԲԺԻՇԿԸ և ԻՐ ԿԻՆԸ, ՀԱՐԿԱՀԱՆԸ և ԻՐ ԿԻՆԸ, ՊԱՇՏՈՆԱԹՈՂ ԶՕՐԱՊԵՏԸ

Տ. ԼԸՇԱ. (Սչքերը պլշած, սարսափահար) Այս ի՞նչ կը նշանակէ... սրանք ո՞վքեր են...

ԻՍԻԴՈՐ. (Զեռքը ծակատին խփելով) Ա՛խ... ճիշտ... մարեկուրցիները... Ստանան տանի... ես նրանց հրաւիրել էի: Մի՞թէ՞ ես քեզ չեմ յայտնել...

Տ. ԼԸՇԱ. (Բողբոլիւն ապշած) Դու նրանց հրաւիրել ես...

ԻՍԻԴՈՐ. Ճիշտն ասած, հա՛...

Տ. ԼԸՇԱ. Իսկ մտածել ես դու արգեօք... Ես նրանց բնորոշել չեմ կարող:

ԻՍԻԴՈՐ. Լաւ, լաւ:

Տ. ԼԸՇԱ. (Արագ-արագ սանդուղքներից իջնելով) Ի՞նչպէս կարող եմ ես այս բոլոր մարդկանց կերակրել...

ԻՍԻԴՈՐ. Ընտրողներ... բարեկամներ են...

(Վազում, զնում է արմկալի կերպով նրանց ընդունում, բարեւում)

Տ. ԼԸՇԱ. (Յուսահատ կերպով) Ա՛խ, Աստուած իմ:

(Բողբոլիւն ապուշ կտրած նայում է իրան մօտեցող հիւրերին)

ԻՍԻԴՈՐ. (Անցնելով մէկից միւսը) Իմ սիրելի բժիշկա... Իմ սիրելի դատաւորա... Տիկին...

ՀԱՇՏ, ԴԱՏ. Մենք քիչ ուշացել ենք:

ԻՍԻԴՈՐ. Ո՛չ, ո՛չ... մենք ենք քիչ շտապել...

ՀԱՇՏ. ԴԱՏ. ԿԻՆԸ. (Տիկ. Լըշային) Սիրելի տիկին, մենք ձեզ սպասեցնել ենք տուել...

ԲԺ. ԿԻՆԸ. Ներեցեք... ճանապարհն այնքան երկար էր... օմնիբուսը գալիս էր, գալիս... չէր վերջացնում...

(Փոխադարձ բողոք, սիրալիրություններ... Իսիդորը յուզում է, սրանրա ձեռքը նորից եւ նորից սեղմում... մէկի, միւսի ուսին զարկում):

ԻՍԻԴՈՐ. (Զօրապետին) Հ՞ը... զօրապետ... ինչպէս է ձեր սակրացաւը:

ԶՕՐԱՊԵՏԸ. Դրա մասին միք խօսիլ... (Փորձում է ծունկը շարժել) Ա՛խ, այս անիծուածը:

ԻՍԻԴՈՐ. Sandow ընդունեցէք, զօրապետ, Sandow... Հա... զինուորական մինիստրին ես տեսայ:

ԶՕՐԱՊԵՏԸ. Հ՞ը, ինչ ասաց:

ԻՍԻԴՈՐ. Ահա թէ ինչ... (Զօրապետին քաշում տանում է: Հարկահանի մօտով անցնելիս) Հա, գիտէք, ես տեսնուեցայ ֆինանսաների մինիստրի հետ:

ՀԱՐԿԱՀԱՆԸ. Հ՞ը, ինչ ասաց:

ԻՍԻԴՈՐ. Ահա թէ ինչ... (Հարկահանին եւս քաշում, տանում է):

(Տիկինները խօսում, պտտում են տիկ. Լըշայի շուրջը: Հարկահանը եւ բժիշկը խօսում են Լիւսիէնի հետ... Այս աղմուկ եւ իրարանցման ժամանակ Ֆինկ եւ Գրուգ մի կողմ են քաշուել):

ԳՐՈՒԳ. Դա մի անասուն է...

ՖԻՆԿ. Գուցէ...

ԳՐՈՒԳ. Մի խենթ... Ես կարծում եմ, մենք չափ հեշտութեամբ կարող ենք սրա հետ մեր ցանկացածն անել:

ՖԻՆԿ. Ո՞վ գիտէ... Հարկաւոր է այսպիսի խենթերից երբեմն զգուշանալ... Նրա աչքերին նայեցէք... սարսափելի են նրանք...

ԳՐՈՒԳ. Լաւ, է:

ՖԻՆԿ. Ձէ, զգուշանալ է հարկաւոր... Ես ճանաչում եմ սրա նմաններից մի քանիսին... ամենավտանգաւոր մարդիկը հէնց դրանք են:

ԳՐՈՒԳ. Դուք միշտ միևնույնը կը մնաք... Ո՛չ մի հոտառութիւն...

ՖԻՆԿ. Իսկ դուք՝ զուրկ աչքերից... Նայեցէք... նրան նայեցէք...

ԳՐՈՒԳ. Մի մարդ, որ անընդունակ է նոյնիսկ վողի միջոցով պատգամաւոր ընտրուել:

ՖԻՆԿ. Որը սակայն ընդունակ կը լինի մեզ խաբել...

ԳՐՈՒԳ. Ես կը ցանկանայի այդ տեսնել:

ԻՍԻԴՈՐ. (Բեմի խորքում, մի խմբի մէջ կանգնած) Դուքս դը Մոժին... Այն խոշոր դեղձանիկը... Այժմ նա ոչնչացրուած է (Ծիծաղում են):

Տ. ԼԸՇԱ. (Դեռ եւս բոլորովին յուզուած՝ իրան շրջապատող անձանց) Ներեցէք, խնդրում եմ... Մի ամենահամեստ ճաշ ունենք մենք այսօր:

ԻՍԻԴՈՐ. (Վերադառնալով սրանց մօտ) Մի ամենահամեստ, ընտանեկան մի ամենահամեստ ճաշ:

ԲԺՇԿԻ ԿԻՆԸ. Ամենալաւերը հէնց դրանք են...

Տ. ԼԸՇԱ. Սակայն...

ԻՍԻԴՈՐ. Լաւ... Լաւ: Յարգելի տիկինները ուտելու համար չեն եկել... այլ քեզ այցելելու, քեզ հետ ժամանակ անցկացնելու (Լիւսիէն մօտենում, հրաժեշտ է առնում) Ի՞նչպէս, իսկ դուք ճաշին չէք մնում:

ԼԻԻՍԻԷՆ. Ո՛չ, պարոն, չնորհակալ եմ...

ԻՍԻԴՈՐ. Անշուշտ... սիրային արկածներ կը լինեն... այս երեկոյ... Չէ որ ջահիլ էք... Սակայն պարարտացման գործը չը մոռանաք, իմ սիրելի տղաս... Մտածեցէք... աշխատեցէք... (Հնչում է ճաշի երկրորդ զանգը) Պարոններ, ձեր թւերը տիկիններին առաջարկեցէք:

(Սպասաւորները զալիս եւ հանդիսաւոր կերպով շարուում են սանդղդի երկու կողմը: Հանդիսաւոր զնացք... Սիրալիրութիւններ... կոտորտուել)...

Տ. ԼԸՇԱ. (Հաշտարար դատաւորի հետ թեւանցուկ՝ սանդղդը բարձրանալով) Երեւկայեցէք, ես չեմ կարողանում իմ ամուսնուս ստիպել... որ ինձ հեռախօսով յայտնի:

ՀԱՇՏԱՐԱՐ ԴԱՏԱՒՈՐԸ. Պարոն Լըչան այնքան զբաղմունքներ ունի...

ԻՍԻԴՈՐ. (Հաշտարար դատաւորի կնոջ հետ թեւանցուկ զնում է հանդիսաւոր զնացքի վերջին. դիմելով իր առջեւից զնացող հարկահանին) Մի երեսիլի յօդուած կայ «Petit Tricolore»-ի այսօրուայ համարում... ցորենի մասին է: Ձեզ խորհուրդ կը տայի կարգալ: (Հաշտարար դատաւորի կնոջը) Փոքրիկ Բամպոնի գրածն է: Կարծեմ որ դուք նրան այստեղ տեսած պիտի լինէք...

ՀԱՇՏ. ԴԱՏ. ԿԻՆԸ. Պ. Բամպոն... Խարտեաչ մագերով, փոքրիկ, զուարճախօսը... նա...

ԻՍԻԴՈՐ. Այո...

ՀԱՇՏ. ԴԱՏ. ԿԻՆԸ. Որ այնպէս լաւ կատարում է Սարահ Բերնարի ձեւերը...

ԻՍԻԴՈՐ. Հա, հէնց դա...

ՀԱՇՏ. ԴԱՏ. ԿԻՆԸ. Որ քթով... ոտով... դաշնամուր է նուազում...

ԻՍԻԴՈՐ. Ամեն ինչով... իսկ և իսկ դա... Նա ստորազըրում է՝ Պարսիֆալ... Մի հիանալի աղայ է... Եւ երեկի տնտեսագէտ...

(Նրանք գնում, անհետանում են)

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ԼԻԻՍԻԷՆ, յետոյ ԺԵՐՄԷՆ, ապա ԵՐԿՈՒ ՍՊԱՍԱՒՈՐ

(Լիւսիէնը բեմի վրայից չի հեռացել: Օրը կամաց-կամաց մթնում է. սանդուղքի աշտանակները վառուած են: Լիւսիէնը նայում է դէպի դռները: Այն բոլորին, որքան ուզում է հեռանալ, դռների անկիւնի յետեւից դուրս է գալիս Ժերմէնը եւ դէպի Լիւսիէնը վազում):

ԺԵՐՄԷՆ. Այդ գո՛ւ ես... (Լիւսիէնն շտապով վերադառնում է Ժերմէնի մօտ) Վերջապէ՛ս... Ես կարծում էի՝ թէ նրանք այստեղից չը պիտի դնային, հեռանային... (Ընկնելով նրա դիրքը) Լիւսիէն... իմ սիրելի Լիւսիէնս...

ԼԻԻՍԻԷՆ. (Նրան ամուր գրկելով) Իմ թանգագին Ժերմէն... Որքան թշուառ... որքան անհանդիստ էի, որ չը կարողացայ քեզ նորից տեսնել... Նայի՛ր ինձ... լաւ նայի՛ր... (Բռնելով նրա գլուխը) Դու հիւանդ ես...

ԺԵՐՄԷՆ. (Գլուխը Լիւսիէնին ուսին դնելով եւ փաղաքշելով) Ո՛չ... ո՛չ...

ԼԻԻՍԻԷՆ. Դու լաց ես ևղել...

ԺԵՐՄԷՆ. Ո՛չ... ես քեզ հաւատացնում եմ... ո՛չ:

ԼԻԻՍԻԷՆ. Իսկ քիչ առաջ ինչո՞ւ հեռացար...

ԺԵՐՄԷՆ. (Հառաչելով) Ես այլևս չէի կարող... Ձէի կարողանում այլևս ինձ վրայ իշխել... Այդ տեսարաններն ինձ վրայ չատ վատ են ազդում... Այս կեանքն ինձ սպանում է... Ամօթ... բարկութիւնից և զայրոյթից ես խեղդում եմ այս տան մէջ, ուր ամեն օր, ամեն բոլորէ կատարւում է մի անարդարութիւն և մի դժբախտութիւն, եթէ ո՛չ մի իսկական ոճիբ... Ես այլևս չեմ կարող... (Խոր հառաչանք քաշելով) Ես այլևս չեմ կարող...

ԼԻԻՍԻԷՆ. (Նայելով իր շուրջը) Ձգո՛յ՛... Կարող են մեզ տեսնել... լսել...

ԺԵՐՄԷՆ. Օ՛հ, Աստուած իմ... թող լսեն... Ի՞նչ նշանակութիւն ունի դա ինձ համար... և քեզ համար... (Ձղային յուզ-

մունքով) Մեր յարաբերութիւններն այս կէտին հասնելուց յետոյ այլեւ ինչ կայ...

ԼԻԻՍԻԷՆ. (Քաղցրութեամբ եւ քնքշութեամբ) Հանգստացիր, սիրելիս... ես քեզ աղաչում եմ...

ԺԵՐՄԷՆ. (Գողալով) Սակայն ինչպէս հանգստանամ... (Լռութիւն) Հն, հն... դու այստեղ ես այժմ... Որքան բազմաբնէ... (Փաթաթում է Լիւսիէնին, որը նրան բերում, մօտեցնում է մարմարէ պատանդանին) Որքան լաւ է... (Լռութիւն) Դու չես կարող երկակայել՝ որքան ինձ վրայ լաւ է ազդում, ինչպէս ինձ տաքացնում, ոգևորում է, որ դու այստեղ ես, այստեղ, ինձ մօտ, ինձ գրկած... ինձ հետ խօսելիս... ինձ օրօրելիս... (Լռութիւն) Տեսնում ես, ես այլեւ ջղային չեմ, ոչ էլ յուզուած, տխուր... ես գոհ եմ... (Լռութիւն) Գոհ... շատ, շատ գոհ... (Աղերսական ծայնով) Եթէ դու ուղեկցես... (Աւելի զղացուած ծայնով) Ա՛խ, եթէ դու կամենաս... (Նայում է նրան երկար եւ... խանդավորով) Լիւսիէն...

ԼԻԻՍԻԷՆ. Ի՞նչ է, սիրելիս:

ԺԵՐՄԷՆ. Տմբ ինձ այստեղից... Աղաւթի, հանիւր ինձ այստեղից... (Լիւսիէնը մի շարժում է անում) Հն... հն, խնդրում, աղաչում եմ քեզ... խղճան, տմբ ինձ... հեռու... թէկուզ թշուառութեան մէջ լինեմ քեզ հետ... միայն հեռու... հեռու այստեղից... Ահ, որսիւսի փրկութիւն...

ԼԻԻՍԻԷՆ. Զղոյշ:

(Մի սպասաւոր սանդուղքներից իջնելով՝ որոնում է տիկ. Լըշայի ծածկոցը, որ գտնում, տանում է... Ժերմէնը եւ Լիւսիէնը ծառերի տակ թաքնուել էին... Սպասաւորի հեռանալուց յետոյ նրանք վերադառնում են, գրկախառնուած, ծանր, լուռ, որպէս ստուերներ, գալիս անցնում են քեմի վրայով դէպի ձախ եւ անհետանում):

(Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր)

Թարգմ. Ս. ՇԽԵԱՆՅ

(Գը շարունակուի)

Վ Ա Ն-Տ Ո Ս Պ *)

III

Ինչպէս Հայաստանի ամենայն կողմերում, նոյնպէս և Վան-Տոսպ գաւառի սահմանին մէջ հայոց վանքերը, որոնք Վասպուրականի այս մասում բազմաթիւ են, դրաւում են երկրի ամենալաւ տեղերը, հաստատուած լինելով ընդհանրապէս ջրաչատ ձորերի բերան կամ լեռանց լանջերի դիւրին վայրերում:

Այդ վանքերի պսակը կազմում է Վարազայ Մենաստանը ս. Նշան անունով—յանուն Սաչափայտի, որը իբր թէ կախել է կրծքից Հոֆֆսիմէ նահատակը—որ տարածւում է Վարազայ լեռան արևմտ. կրծքի վրայ, ջրաչատ, դալարաւէտ և բազմաթիւ ծառաստաններով չրջապատուած գեղեցիկ ձորակի մէջ, քաղաքից 8 մղոն հեռաւորութեամբ դէպի արևելահարաւ, որից (քաղաքից) տեսանելի լինելու արդելք է լինում մի բլրակ, որի ետև թագնում է Վարազ իր գեղեցկութիւնները վասպուրականցի ամօթխած նորահարսի նման:

Վարազը թիւրքերից անուանւում է «Եդդի Բիլիսէ» (եօթն տաճար). վաղմի այդ երջանիկ ժամանակներում կանգուն եղող 7 տաճարներից**) մի քանիսն են այժմ միայն կանգուն մնացել,

*) Տես «Մուրճ», № 7:

**) 1) Ս. Նշան, 2) ս. Աստուածածին, 3) Գետաբգել ս. Նշան II, 4) ս. Գէորգ, 5) ս. Սիւն (այժմ ծառայում է իբրև ցորենի շտեմարան XVIII դարու կէսերից սկսեալ), 6) ս. Սոփիա, որ Թերդով եկեղեցի էլ է կոչւում, 7) ս. Յովհաննէս, բալորն էլ խիտ և միմիանց մօտ շինուած, ծածուկ և փոքր տներով և նեղ անցքերով միմիանց հետ յարաբերութիւն ունենալով. վերջին երկու եկեղեցիները՝ ս. Յովհաննէս և ս. Սոփիա որք մի առանձին խումբ են կազմում, նայելով որմերի վրայ գտնուած, ոչ ամբողջ, մի հին արձանագրութեան—«Նէ. թվին (981) ես Խաչաշ-Խաթուն, դուստր Դադկայ, յաղգէն Բագրատունեաց, կենակից Սենեքերիմայ ար... (ջնջուած) շինող ս. տաճարացս յիշեցէք ի մաքուր...»

մնացեալները խոնարհեալ կիսաւեր վիճակի մէջ են գտնուեալ անցեալ դարերում պարբերաբար տեղի ունեցող մեծ երկրաշարժների երեսից: Մնացեալ կանգուն եկեղեցիներն են ա. Աստուածածնի, ս. Գէորգայ *) և Գետարգել ս. Նշանի տաճարները, որոնցից վերջինս նորաշէն է և կառուցուել է անցեալ դարու սկզբներում (1811 թ.) Ղարասա էֆէնդենց Յակոբ աղայի միջոցներով, ինչպէս երևում է վրան գտնուած արձանագրութիւնից: Ներկայ վեհ. հայրապետի Վարդայ վանքի վանահայրութեան ժամանակից, անցեալ դարի կէսերքում, այս զոգարիկ եկեղեցին ծառայում է իբրև մատենադարան-թանգարան, ուր ամփոփուում է ներկայումս պահպանների մէջ դարսած 400-ի մօտ ձեռագրեր զրչագիր մատենաների, մեծաւ մասամբ կրօնական-վարդապետական բովանդակութեամբ, և 1000 կտորից աւելի տպագրեալ մատենաներ—միայն թանգագին ազատեալները 1896 թ. աւելումներից: **)

Լինելով իսկզբանէ անտի Վասպուրականի ամենահարուստ վանքը, և եպիսկոպոսանիստ կենտրոն մի ընդարձակ թեմի, որ բովանդակում է 40-ից աւելի մեծ և փոքր գիւղեր,

(շարունակութիւնը ջնջուած)... շինուել են Սենեքերիմ արքայի օրով նրա նշանաւոր զաղթից մի քանի տարի առաջ:

*) Ս. Գէորգ եկեղեցու մէջ աջակողմեան դասում գտնուում են գերեզմանների երկու տապանաքարեր, որոնց վրայ որոշակի կարգացւում է. ա) «Թվին ԴձՃԱ (1022). այս է հանգիստ տեառն Պետրոսի կաթողիկոսին որ ի Տրապիզոն զգետն ձորոխ արգելեաց առաջի Վասիլ արքային». բ) Այս է հանգիստ Սենեքերիմ թագաւորին թվին ԴձՃԸ: Ինձ թւում է, որ այս պատմական անձնաւորութիւնների, որոնք այնքան էլ պատուաւոր զերեր չեն կատարել մեր նախնեաց պատմութեան այդ շրջանի արիւնոտ թատերաբեմի վրայ—մահուանից յետոյ միմիայն նրանց մարմնի նշխարները՝ զուցէ և նշխարների մի մասը՝ տեղափոխուել են իրանց սիրելի—հայրենի մենաստանը զուցէ նրանց մի կտակի համաձայն, որովհետև որպէս յայտնի է, Գետարգարձ Պետրոս կաթողիկոսի շիրիմը մինչև այժմ էլ գտնուում է Սվաղի (Սեբաստիա) մերձ նրանից 3 մղոն միայն հեռուութեան վրայ գտնուող ս. Նշան մենաստանի ս. Կարապետի տաճարին մէջ:

**) Այստեղ արժէ յիշել, որ Վան-Տոսպում, եթէ Վանայ Ծովի կղզիներն էլ հետը հաշւենք, կայ այս բոլէիս ապահովապէս 2000 կտորից աւելի ձեռագիր մատենան—400-ը Վարդգ, 1500-ը երեք անապատներում (տառուաղն 500-ական հաշիւով իւրաքանչիւր կղզու ձեռագիր հաւաքածուները) և մի քանի—2-300 հարիւր էլ քաղաքի եկեղեցիներում (օր. Ապոդոս եկեղեցին Բերդաքաղաքում 120 կտոր ձեռագիր մատենան ունի): Կարիք կ'այ աւելացնելու, որ մեր գրականութեան այդ թանկագին մնացորդները անյայտութեան են մատնուել մինչև այսօր էլ, միայն մեղուաձան Փիրզալէմեան վարդապետն է, որ մի քանիսի միայն յիշատակարանները օրինակելու համար խանգարել է նրանց փոշիով պատուած անդորրութիւնը:

Վարազը եղել է ամեն անգամ ծաղկեալ և բազմանգամ միաբանութիւն ունեցող մի մենաստան, որով և բազմաբղիւն և լուսատու վառարան իր կարևոր հայաբնակ շրջակայքին. նրա ազդեցիկ վանահայրերը վերջին մի քանի դարերի ընթացքում եղել են և Վանի առաջնորդներ, հովուելով միաթամանիկ Վանն ու Վարազը, կապելով ժողովուրդը (վանեցի) Վարազայ նուիրակ մենաստանին հետ սերտ և ամուր կապերով: Նրա թեմերից աչքի են ընկնում իրանց մեծութեամբ և հարստութեամբ Աւանց, Արճակ և Շահալաղի մեծ գիւղերը. իր սեպականութիւնն է կազմում այս 20—25 տարիներից ի վեր, Խոշապ (Վան-Տոսպի արեւելք) գաւառի Սալախանէ կոչուած արգասաւրեր գիւղը, որը գնել է Խրիմեանն 80-ական թւականների Հայաստանի ահաւոր սովից յետոյ սովկոյց յանձնաժողովի անտեսած մի կարևոր գումարով, և որին սակայն այժմ անտէրութեան երեսից կորսուելու վտանգն է սպառնում՝ դառնալով ինչ որ քիւրդ ազգայի կալուածը և նրա հոտերի ընդարձակ արօտավայրը: Այս թեմերից բացի՝ վանքը ունի ներկայումս հարուստ երկրագործութեան, ոչխարների և այլ ընտանի անասունների աչքի ընկնող երամներ և հարուստ արօտավայրեր թէ իր շրջակայքում և թէ Վարազայ լեռան կանաչաւէտ փէշերի վրայ, որոնք ամենայն եղանակում՝ բացի ձմեռուանից՝ ծածկուած են լինում ճոխ մշտադալար բուսականութեամբ: Այլ և վանքի ձորակը չրջապատող ընդարձակ անտառներ, ծառաստաններ, առատ ջրեր, քաղցրահամ և սառնորակ աղբերակներ Վարազայ լեռան ջրաշատ շտամարանից բղխող, որոնք բանեցնում են վանքի մի քանի ջրաղացները և ոռոգում նրա այգիներն ու պարտէզները:

Վարազայ վանքի արեւելահիւսիսային կողմի լեռան հովտի մէջ մի բարձրավանդակի վրայ Վարազ լեռան կրճքին մինչև այժմ էլ մնում են հին՝ Վերին-Վարազի հսկայ շինութեան փառաւոր մնացորդները, նրա որմերը գրեթէ ամբողջութեամբ, աւերակների կարևոր մասերը, քարերը, միակտուր, գլանաձև մեծ սիւները տարիներ առաջ կողոպտուել և ծառայել են Վանում թիւրք մզկիթների շինութեան. ինչպէս հաւաստում են, Ուլա կոչուած նշանաւոր ջամիի (մզկիթ) երկու մեծ սիւները գեղեցիկ դրուադներով՝ բերուել են Վերին-Վարազի աւերակներից: Այս աւերակ մենաստանին մերձ հոսում է մի փոքրիկ աղբերակ՝ Գրիստոսի-Աղբիւր կոչուած:

Վերին-Վարազին մերձ Վարազայ լեռան բարձրութիւնների վրայ բնակիչները ցոյց են տալիս աւանդաբար՝ Հօրիսիմէ կոյսի ապաստանավայրը՝ Գալիլիա կոչուած, այլ և մի այր, ուր ճգնել է ինչ որ Թողիկ կոչուած ճգնաւոր, որի աղօթքով ինչ-

պէս աւանդում են պատմագիրներէից չափերը, Ներսէս-Շինող կաթողիկոսի օրով 653-ին յայտնուել է ս. Հռիփսիմէ կոյսի կրճքի Քրիստոսի խաչափայտի կտորը, երբ որ լոյսեր է փայլատակել, և լուսեղէն 12 սիւններ իջել են զանազան տեղերի վրայ Վան-Տոսպ դաւառում, որոնք կազմել են ներկայ Վան-Տոսպի վանքերի և տաճարների կառուցման սկզբնապատճառը: Յիշեալ խաչափայտը երկար ժամանակ պահպանուում էր իբրև սրբութիւն Վարազայ վանքի մէջ, որից և առել է նա իր ս. Նշան անունը, և որի գիւտը կազմում է հաւանօրէն նրա հիմնարկութեան սկիզբն ու թւականը (653)^{*)} մինչև 1661 թ., երբ խոշաւ քաղաքի մեծ անառիկ բերդի տէր Թաթար-Չոմար բռնակալը աւերում և թալանում է վանքը և գերի վարում ս. Նշանը, այդ անձնութիւնը համարուող սրբութիւնը: Չորս տարի յետոյ միայն ժամանակի Վանի ամենաազդեցիկ մեծատուն Սոճա-Մարխասի միջնորդութեամբ ազատւում է և բերւում այս անգամ Բերդաքաղաք, Վանի Տիրամայր եկեղեցին, որտեղից էլ 1717-ին տեղափոխւում է նոյն Բերդաքաղաքի առաջնորդանիստ էջմիածին կոչուած եկեղեցին, որ յետ անորիկ կոչւում է ս. Նշան, ուր պահւում է մի ծածուկ պահարանի մէջ մինչև այսօր էլ իբրև ասպնով տեղ, և չատ հազւագէտ պարագաներում միայն— ժանտափտի, սովի գէպքերում է դուրս հանւում ^{*)}:

Վարազայ վանքը այժմ աննախանձ վիճակի է մատնուել, մօտիկ անցեալում տեղի ունեցող հայկական ահռելի կոտորածների ժամանակ սա էլ ենթարկուեցաւ հարստահարութիւնների. այդ ժամանակից ի վեր ամեն ինչ փոխուեցաւ. ապականիչ մի հով անցաւ կարծես այդ սրբալայրի վրայից սրբելու, քչելու նրա միջից լաւը, նուիրականն ու օգտակարը: Անցեալում միշտ ունեցած հոյակապ միաբանութեան մի-երկու (մէկ հոգևորական, մէկ աշխարհական) բեկորները են միայն մնացել, Հայաստանի այդ մօայլ հորիզոնին վրայ մերթ ընդ մերթ շողեր արձակող, լուսաւոր, հրաշայի խօսքերի աղբյուրի գործիքը՝ ապարանը իր պարագաներով օտարին, բռնաւորին է ծառայում ներկայումս: Վանքի աւերուած նիւթական շէնքերը միայն նորոգւում են հետզհետէ, և մի քանի սասնեակ որբերից կազմուած խղճուկ որբանոցը ծառայում է կենդանութիւն տալու վանական թրմբած կեանքին, բայց այդ արուեստական ճիգերը ոչ մի բանի չեն

^{*)} Վանի տարեգիրները յիշում են իբրև բացառիկ գէպք նրա դուրս հանուելը և ժողովրդին ի յոյց դրուելը 1755 թ. Վանում երևացող մի մեծ մահտարածամի ժամանակ:

ծառայում, ըստ որում պակասում է նրա մէջ կենսատու, կենդանաբար ոգին:

2 Ս. Գրիգորի՝ Սալնապատու վանքը.—Վարագ լեռան հիւս. փեշերի վրայ մի գեղեցիկ ձորակի մէջ շինուած է ս. Գրիգորի փոքրիկ մենաստանը յանուն Գրիգոր Լուսաւորչի, որը հին ժամանակներում Սալնապատի վանք և մեր պատմագիրներից էլ շատ անգամ Ձորավանք է կոչուել: Միմիանցից շատ մօտիկ՝ կից շինուած 3 մատուռները՝ ս. Գրիգոր, ս. Կարապետ, ս. Աստուծածին, նրանց շրջապատող մի քանի միաբանական և ուխտաւորների սենեակներով՝ կազմում են այս գեղեցիկ մենաստանի ամբողջութիւնը, որ իր մեղմ և հիանալի կլիմայով և քաղցր, վճիտ ջրերով հանդիսանում է իբր ամենայարմար ամառանոց և օգտսուն բնակավայր և ապաստանավայր վանեցիների՝ քաղաքի ամառուայ տապից խուսափող: Մեր տարեգիրներում յիշուած են մի քանի նորոգութիւնները այս վանքի վրայ եղած, նախ 1260 թ., ապա նոյն վանքի վանահայր Ստեփանոս եպիսկոպոսի ժամանակ և նրա ձեռքով: 1559 թ. վանեցի Մէլիք-Ղուլիճան և որդիք նորոգել են ս. Աստուծածնի տաճարը միայն, և յետ այնորիկ մի քանի անգամներ էլ: Այս վերջին տարիներում ուխտաւորների համար միայն շինուել են յարմարաւոր սենեակներ բարձր դիրքով, որոնք շրջապատում են վանքը, առաւելապէս նրա արեւլա-հարաւը. իսկ բուն վանքի վրայ կատարուել են աննշան նորոգութիւններ՝ մի քանի փոքր կարկասաններ միայն:

Սալնապատու ս. Գրիգորի վանքը մօտիկ անցելուում ունեցել է ճոխ և բազմաթիւ միաբանական հոյակապ ուխտ. յիշուում են օր. Սալնապատու Յովսափ եպիսկ. (1628—1642), Եղիշէ վարդապետ 1868 և ուրիշները նշանաւոր և իրանց ժամանակի գիտնական հոգևորականները. այժմ տարաբախտաբար ներկայացնում է վանքը մի միաբանական անապատ, ամայութիւն. մի փոխ բերած ծերունի վարդապետ միայն տարին միեկու անգամ աղօթքի մրմունջներ է հնչեցնում Աստուծոյ այդ հինաւուրց տաճարների մէջ: Վանքից քիչ հեռու մի բարձր բլրակի վրայ գտնուում է մի փոքրիկ մատուռն. նրան մերձ գտնուում է մի աղբերակ. այս բլրակի վրայ կարծւում է լինել աղօթավայրը ս. Գրիգոր Լուսաւորչի: Շատերը նոյնացնում են Սալնապատու ս. Գրիգորի վանքը նրանից արեւմուտք երկու մղոն հեռաւորութեան վրայ գտնուող Ձորավանք գիւղում (որ այժմ թուրքաբնակ է) գտնուող համանուն վանքին հետ, որի աւերակները միայն երեւում են ներկայումս, գիւղին մերձը, և որը պիտի եղած լինի հաւանօրէն մեր մի քանի աստանդական

հայրապետների ապաստանարանը, ուր պահուելիս է եղել Լուսաուորչի գաւազանը և հայրապետական քողը, որոնք հին ժամանակներում հայրապետական աստիճանի նուիրական զարդերն ու անօթներն էին կազմում: Դեռ մի քանի տարիներ առաջ Վանի մի մզկիթի դաւթից դուրս եկաւ մի տապանաքար իր արձանագրութեամբ Դրասխանակերտցի Յովհաննէս Ե. կաթողիկոսին պատկանող, որ իր վերջին տարիներում ապաստանել է այդ տեղ և կնքել իր երկտաւոր կեանքը իր պատմական երկասիրութիւնը վերջացնելուց անմիջապէս յետոյ:

3) Կարմրուորի ս. Աստուածածնի փոքրիկ վանքը գտնուում է Ջորավանքից դէպի հարաւ Շուշանից լեռան սարալանջերի վերայ, քաղաքից 5 մղոն հեռու դէպի արևելք բարձրահայնաց դիրքով: Այս փոքրիկ վանքը շրջապատում են մի քանի հազար տարուայ հնութեան դրոշմը կրող աւերակների մնացորդներ, որպէս յոյց են տալիս նրանցից պարբերաբար՝ բայց ոչ կանոնաւոր՝ պեղումներով դուրս եկած զանազան իրեր, մերթ էլ բնեռագիր, ամենայն հաւանականութեամբ Ուրագեանց շրջանի ժամանակներից մնացած:

Կարմրուորի վանքից դէպի արևմուտք Վանայ դաշտի վրայ նայողի առաջ բացւում է մի սքանչելի տեսարան—Վանայ ծովակը՝ իր ծիփուն կոհակների շողշողումով, որպէս արծաթի չըլթաներ՝ նրան շրջապատող լեռներով՝ կանաչազարդ դաշտը, որի վրայ սփռւում է քաղաքը լայնարձակ նստուածքով և խիտ այգեստանով:

Վանքի հին նորոգութիւններից մէկը յիշուում է 1615 թ. նորոգութիւնը նոյն վանքի Զսքարիա վարդապետի վանահայրութեան օրով, վանեցի Խոճա-Միրաքի ձեռքով: Մի քանի տարի առաջ էլ նորոգւում է վերջին աւերումներից յետոյ յարմարելու համար մի որբանոցի, որ մի վանեցու գովելի ջանքերով մի քանի տարի գոյութիւն ունեցաւ:

4) Ս. Խաչ վանքը շինուած է Վանայ դաշտի հարաւային սահմանի վրայ գտնուող բլրակի վրայ, որ իր անունով է կոչւում. Կուռուպաչ գիւղին շատ մերձ գտնուող այս վանքը, որ խորին հնութեան շրջում է կրում իր վրայ, ամենայն տարի գրաւում է դէպի ինքը ուխտաւորների ահագին բազմութիւն, մասնաւորապէս քաղաքի Սրարք կոչուած թաղից և շրջակայ գիւղերից: Զարմանալին այն է, որ վերջին տարիներում կարողացաւ նմանուել հարուստ և մեծ վանքերին և իր աղքատիկ և սուղ միջոցներով և կալուածների արդիւնքով և չնչին և կամուսաներով կարողացաւ պահպանել մի փոքրիկ որբանոց 10—15 որբերից: Վերջին տարիներում նոյն վանքի հոգաբարձութեան

ջանքերով չինուեցաւ վանքի համար մի քանի կոկիկ չինուեթիւններ միաբանութեան և ուխտաւորների համար: Մէկ ծերունի վարդապետ և երկու տիրացու միաբանական մարմին հսկում է այս փոքրիկ մենաստանի պահպանութեան վրայ:

5) Ի հնումն Վան-Տոսպում ցիրուցան բազմաթիւ վանքերի այժմու ներկայացուցիչ եղող այս մի քանի վանքերից շատ արժէ յիշել և ս. Խաչ վանքից դէպի արեւմուտք՝ Արտամէդ քաղաքին մերձ՝ ծովի վրայ նայող և գեղեցկանիստ մի բլրակի վրայ չինուած Կոնկու ս. Աստուածածնի վանքը, որ ներկայումս անտէրութեան է մատնուել: Այս վանքը իր անունն առած լինի իբր թէ պատարագի ս. Խորհրդի ժամանակ զինու բաժակի պահպանութեան համար խաղողի մի ողկոյդ բերող կը ոռնակից, որպէս աւանդում է Հ. Հ. Սարգսեան *). բայց այս տեսակ պարագաներում բանաւոր է ենթադրել, որ յաճախ պատմութեանը, աւանդութիւնները ժողովրդի կողմից յերկու-տում են զանազան անունների վրայ, քան թէ անունները դուրս են գալիս այդ տեսակ անհեթեթ իրողութիւններից, ինչպիսի-ները ստեղծելու ընդունակ են ժողովրդի ջերմեռանդ երեւակա-յական թռիչքները:

IV

Այս երկրի պատմութեան անյիշատակ ժամանակներում Վան-Տոսպ գաւառը հանդէս է գալիս իբրեւ կուլտուրական և ռազմագիտական նշանաւոր կենտրոն, որի սահմաններում իշխող ժամանակի քաղաքակրթութեան կարեւոր մէկ ներկայացուցիչ եղող հարստութեան ծաղման և պատմական զարգացման վերաբերեալ շատ կցկտուր և ցամաք տեղեկութիւններ են հասել մեր ձեռք տարաբախտաբար այն սակաւաթիւ բեկոռդիւր արձանագրութիւնների միջոցով, որոնք սխուռած կան այդ հըզօր տէրութեան հինաւորաց սահման կազմող երկրների մէջ ամենայն կողմ ցիրեցան, որոնց թիւը՝ ինչքան հետազօտող գիտութիւնը կարողացել է լոյս աշխարհ հանել՝ 100-ից հազիւ է անցնում, որոնցից 90-ի չափ զիտութեան սեպհականութիւն են կազմում այս բոպէիս: Այդ հարստութեան ինքնակալների լեզուն, որպէս և գրութեան օրիգինալ ձեւ մեծ դժուարութիւններ էր յատուցանում դեռ մի քանի տարի առաջ՝ ուսումնասիրողի քայլերի հանդէպ, ի բաց առեալ Շարիրտուրիս I ինքնակալի (835—820 Ն. Ք.) երկու արձանագրութիւնները, որոնք

*) Հ. Հ. Սարգսեան. Տեղագրութիւն, 1864, Վենետիկ. 256:

դրոշմուած են ասորական բեռադրերով, որոնք հետզհետէ հարթւում են:

Դժբախտաբար մինչև այժմ էլ որոշ չի կարելի ասել, թէ ինչպէս էր յորջորջւում այդ հոյակապ տէրութեան մէջ ասլորող սղղաբնակութեան ցեղական աղգային անունը: Նրա միապետները անուանւում են մերթ՝ «արքայ հզօր, արքայ Բիայնայ», «արքայ՝ հզօր քաղաքին Տուչպա», այլև «երկիր Ուրարդու», «աշխարհ հայերի»՝ առաւելապէս թշնամիների ձեռքով փորուած արձանագրութիւնների մէջ: Բնիկ—վանեան բեռնաձև արձանագրութիւնների մէջ ամենից գործածականն է Բիայնայ անունը իբրև հին անուն վան քաղաքի կամ Վան-Տոսպ գաւառի, և որի անունով հաւանօրէն կանչուել է և աղգաբնակութիւնը: Դարեհեան արձանագրութիւններից մէկի մէջ պատահում է և Հարմենիապ (Արմենիա?) անունը: Թէ ինչ աստիճան նշանակութիւն ունի խալդէական ազգ, կամ ինչպէս անունը, որ տալիս են Բելք և Լեման գերման գիտնականները այդ ազգին իրանց վերջին հետազօտութիւնների վրայ հիմնուած—չի կարելի որոշ ասել, այդ ենթադրութեան հիմք կարող է լինել զույգ (այն էլ շատ թոյլ հիմք) այն հանգամանքը, որ նրանց Աստուածների գլխաւորը կոչուել է «Խալդիս», որի անունով բազմաթիւ մեհեաններ են եղել այդ լայնածաւալ տէրութեան ամենայն մասում:

Այսպէս թէ այնպէս արձանագրութիւններից այս յայտնի է լինում, որ Տուչպա քաղաքի կամ «Ուրարդեան հարստութեան»—ինչպէս անուանում են սովորաբար—միապետների սկզբնական ծայրը հասնում է ոմն ինքնակալ՝ Լուտապրիսի՝ IX դարում Ն. Ք., որից անմիջապէս յետոյ երևան է գալիս Արամէս (860—845), որ մի նոր հարստութեան հիմնադիր է երևում, որին յաջորդում են 10—15 միապետների մի ոչ շատ որոշ և աննդհատ շարք մինչ VI-րդ դարու սկզբները Ն. Ք., երբ ընդհատւում է յանկարծ յիշատակութիւն այդ տոհմի մասին՝ կադմելով մութ անորոշ և տարտամ մի անցման շրջան, ոտից յետոյ հայկական թատերաբեմի վրայ հանդէս է գալիս հիւս. արեմտեան կողմից արչաւող մի թարմ, ընտիր առանձնայատկութիւններով օժտուած հայկական սերունդ, որին պէտք է տեղի տուած լինի ուրարդու կամ հայերի պետութեան իր ջլատուած և քայքայուած կազմով:

Տուչպան կամ Վանը եղել է ուրարդեան կայսրների քաղաքական կենտրոն՝ Արամէսի յաջորդներից Մինուաս I-ի օրով (VIII դար) որի անմիջական յաջորդը Արզիստիս I-ի հըս-

կայական շինութիւններն են ներկայացնում Վանայ բերդի քարանիստ սրահները և ուրիշ շինութիւններ:

Նրկրի շինութեան և ներքին բարեկարգութեան մասին մտածելուց և աշխատելուց դուրս Տուշպայի հզօր արքունիքի ամբողջ կեանքը կազմում է պատերազմների և աշխարհակալութիւնների անընդհատ մի շարք՝ Ասորեստանի և նրանց անկումից յետոյ (VI դարում Ն. Ք.) բարեկոնացի միապետների ընդդէմ: Արամէս (860—843) արձանագրութիւնների (ասորական և վանեան) մէջ որպէս հզօր և անընկճելի Բիտլիանի Ասորեստանի Սաղմանասար II-ի (860—826), Մեծն Արզիստիսի որդին Շարրիտուրիս II (755—730) անխոնջ հակառակորդ Տիգլեթպէլէսէր II-ի (745—727), Ռուզաս I (730—714) անհանգիստ ոսոխ Սարգոն II-ի (722—705):

Այս անվերջ պատերազմների շարքից երևում է, որ Տուշպայի կամ Ուրարդուի այս ազատասէր և յաւէտ ըմբոստ իշխողները եղել են ամենավտանգաւոր արդեւորներ ասորաբարելաշան լայնածաւալ և կլանող աշխարհակալութեան, Արզիստիս առաջինը մասնաւորապէս (780—755) ամենածանր հարուածներըն է հասցրել նրանց արչաւող ընթացքին: Ուրարդեան թագաւորները իրանց ազատ ժամանակներում զբաղուել են փոխադարձաբար իրանց մերձակայ հպատակ մանր իշխանութիւնները զսպելով, որպիսին եղել են Մաննա (Ուրմիոյ լճի արևմտ. ափը), Տունիբան, Մուսասիր, (Տարոն?), Արսանիաս (Արածանու հովիտ?), Դաիանի (Daiaeni), Էտիունի (Etiuni), Էրիահի (Eriahi) ևայլն, որոնք հանդէս են դալիս արձանագրութիւնների մէջ մերթ ապստամբներ ուրարդեան իշխանական լծից, իսկ յաճախ նուաճուած դաշնակիցներ հանդէպ Ասորեստանայ:

Ուրարդեան քէոնիկների իշխանութիւնը հիւսիսից տարածւում է մինչև Գեղամայ ծովի չրջակայքը, նոյնիսկ մինչև Կովկաս լեռան ստորոտները:

Անդրկովկասում զայսօր գտնուած Դաշքուռունի (ըստ արձ. Luhunini) Կողքի մօտ, Արմաւիրի (ըստ արձ. Argistihinili), Արագած-Ղուլիճանի (Kuliaini), Օրդակլուի (Kiehuni) և տասնից աւելի բննագիր արձանագրութիւններ, զլիաւորաբար Սեանայ լճի հարաւային ափերում ցոյց են տալիս Բիայնայի հզօր ինքնակալների լայնածաւալ աշխարհակալութիւններ և արչաւանքների անջնջելի հետքերը*):

*) Клинообразные надписи Закавказья, исследование М. В. Никольского. Москва, 1896. Տես և սրա քաղաածօրէն թարգմ. պրոֆ. Խաչատրեանի, ի Վենետիկ, «Բազմալեզու», 1897, № 1—2 և առանձին արտատպութ.:

Վանում աւերակներէ տակից, զլիաւորաբար թողնալով Գալիի միջից պեղումներով երևան եկած ուրարդեան կուլտուրայի մնացորդները—զանազան անօթներ, շէնքի կտորներ, կաւ, կիր, հսկայ աղիւսներ, վահաններ և հսկայ շէնքերի պատկանելի բեկորները՝ յատկօրէն ցոյց են տալիս, որ այդ հարստութեան շրջանում Տուշպան եղել է քաղաքակրթութեան զօրեղ կենտրոն, և նրա բնակիչները—որպէս ասորիկաներ այդ իշխանութեան ժամանակի կուլտուրայի բարձրագոյն աստիճանի վերայ գտնուող ժողովուրդ:

Իրանց պաշտած և երկրպագած աստուածները և իրանց անլերջ և յանդուգն պատերազմներին յաղթանակ պարգեւող զիք եղել են—Սաղի, Թէրշապա, Արդինի և ուրիշները, որոնց չեն խնայել Բիսպանի միապետներն իրանց արքայավայել և աստուածապատիւ պարգեւները ու պատարագը յաւերժացնելով քարերի վրայ, անջինջ յիշատակի համար, իրանց սրբազան զուհարերութիւնները*):

Հայկազեան կոչուած հայկակ. հարստութեան Տիգրան Մեծը (535—525 Ն.Ք.), ըստ խոր.՝ որդի հատուածեալ Երուանդի, Վանը բնակեցրել է ըաղմաթիւ հրէայ գերիներով, որոնց տեղափոխել է ի Պաղեստին արած մեծ յաղթական արշաւանքից վերադառնալիս **): Քրիստոսից յետոյ IV դարում Շապուհ պարսից արքան աւերում է և կործանում Վան քաղաքը յունաց դէմ մղած պատերազմների ժամանակ***): Երկրի ղեքը, նրա սմառնի միջնաբերդը և բնական այլ յարմարութիւնները զրլիաւոր պատճառներն են կազմում անշուշտ, որ ամենահին ժամանակներից սկսեալ տեսնում ենք ինքնուրոյնութեան և ըմբոստ անկախութեան ոգին զօրեղ պահուած այս երկրի տիրապետողների և նրա բնակիչների մէջ:

Արծրունիների տոհմը Վան անառիկ մայրաքաղաքով, նոյնիսկ զանազան հարստութիւնների տիրապետութեան ժամանակ երևան է գալիս որպէս կիսանկախ և հզօր իշխողներ իրանց սահմաններում և մերթ որպէս առանձին թագաւորութիւն՝ զլիաւոր իշխողների տկարութեան պահուն, ինչպէս և զաւ. Բաղրատունեաց Սմբատ I-ի օրով, X դարու վերջերում. այդ բաների համար շատ անգամ էլ չեն զգուշացել, չեն քաշուել խորութիւն չը գնելու համար միջոցների մէջ, նրանք

*) Մհերի գոան արձանագրութիւնը՝ Ռուզասի Խաղիսին նուիրած զուհարերութեան արձանագրութիւնը և ուրիշները:

**) Մ. խոր., III—ԼԵ:

***) Նոյն, III. և Փաւստոս, IV—ԾԵ:

միաբանել են մի օտար ոստիկանի և ազգութեան թշնամի արաբ կամ թիւրք բռնակալի հետ և դաւաճանել իրանց տէրերին, որի համար էլ չեն կարող խուսափել այն դատապարտութեան կնիքից, որը դրոշմում է նրանց ճակատին համադգային ամսկողմնակալ պատմութիւնը հակառակ Թովմայի (Արծրունի) հօր, բայց միակողմանի պաշտպանութեան և հովանաւորութեան:

X դարուց սկսեալ Արծրունիների աստղը թեքւում է դէպի արեւմուտքը. Տուշպայի հօր արքաների արիւնը ցամաքում է Վանի իշխողների երակների մէջ, Բիւայնայի ինքնակալներին ոգևորող մուսան քնանում է այլևս: Բարբերը մեղկանում են յունական յոռի ազդող յարաբերութիւնների չնորհիւ բիւզանդական զեղխ և ցով կեանքը իր վնասակար հետեանքներով մուտք է գտնում նրանց արքունիքի մէջ: Սենեքերիմ, Արծրունիների հարստութեան վերջին իշխողը, 1021 թ. յանձնառու է լինում Վասպուրական ընդարձակ աշխարհն իր ծագած հոյակապ մայրաքաղաքով և բազմաթիւ վանքերով ու մենաստաններով փոխանակել ինչ-որ յետ ընկած տեղի—Սըվաղի հետ փոքր Ասիայում*):

Բիւզանդակ. պետութիւնն էլ չի կարող պահպանել այս կարևոր աշխարհը, և յետ այնորիկ Վան-Տոսպը լի շրջականերով և բնակիչներով մինչև 5—6 դար ներկայացնում է անընդհատ արևան, կողոպուտի, և ուերածութեան թատերավայր. ապա փոփոխակի անցնում է սելջուկեանց, թուրքմէնների և պարսից ձեռքը—1387, 1394 թ.թ. գրաււում է Լէնգթէմուրից, ՚ր թողել է Վանում թիւրք տարրին միայն առանձնապատուկ արիւնարբու գործողութիւնների և հրէշային սպանութիւնների տխուր յիշատակներ: 1425 թ. թուրքմէն Իսքէնդէր-բէյի ձեռքն է ընկնում, ապա երկար տարիներ թիւրքերի և պարսիկների մէջ կռածադիկ դաճնալուց յետոյ 1636 թ. օսմանեան թիւրքերի վերջնական տիրապետութեան լուծի տակն է ընկնում, որը շարունակւում է մինչև այսօր: **)

*) Լաստիվերտցի Արիստ. վրդ., Պատմագրութիւն. III.

**) Վան-Տոսպ գաւառի և վանեցիների այս հինգդարեան տառապանքի և նրա պատմութեան արիւնոտ էջերը իրանց մանրամասնութիւններով դրոշմուած տեսնում են վերջին դարերի բազմաթիւ, մեծածառաւ վասպուրականցի, տարեգիրների տարեգրութիւնների մէջ, որոնցից գլխաւորները կարելի է համարել— 1) Միմոն վարդապ. Պալսուանցի 2) Մինասեանց Թովմա վարդապ. Աղթամարցի, 3) Յովհ. կրօնաւոր Արճիշեցի, 4) Բարսեղ վարդապետ Վարազեցի, 5) Գր. դպիր Վանեցի, 6) Բարդուղ. վարդապ. Չուշանցի, 7) անծանօթ մի տարեգիր, Վանեցի, 8) Բէյլար Վանեցի, 9) Մուրատեան Վանեցի 10) անանուն մի տարեգիր, 11) Յար. քահանայ խալֆայ Վանեցի. 12) Յակոբ եպիսկոպոս Թովուզեան, վանահայր Լիմ անապատի, 13) Յովսէփ վարդապետ. Լմեցի և ուրիշները, որոնցից շատերը

Ճակատադրօրէն յաւէտ տառապելու համար զողջեա ըստեղծուած հայը թիւրք փաղիշահների տիրապետութեան ներքոյ էլ Տոսպ զաւառում հանգիստ և ապահով օրեր վայելիլ չի կարողանում: Վան քաղաքը դառնում է իշխողների նահանգական կուսակալանիստ կենտրոն, օսմանեան վերջնական տիրապետութիւնից սկսեալ մինչև ներկայ թւականը Վանում նստող վալիները (կուսակալ), որոնց թիւը հարիւրից անցնում է, իւրաքանչիւրը մի-մի դահիճ, բռնակալ է եղել թշուառ և ստրկացած աղաքնակութեան գլխին*): Այս ընչաքաղց հրէշների համեղ զոհերն էին ներկայանում ամենից աւելի ժամանակի հայ մեծատունները, որոնք խոջա էին կոչւում ընդհանրապէս. այդ աչքի ընկնող խոջաներից, որոնք անշուշտ մեծամեծ ազդեցիկ դերեր են խաղացել վալիների կառավարութեան գործում, աջակցելով և օգնելով նոցա թէ նիւթապէս և թէ բարոյապէս, յիշուում են խոջա Սանամիրն (1637 թ.), խոջա Ամիրխան, խոջա Մարխաս, խոջա Սարուխան, Ռոջան աղէն, Ղարասէֆէրեան Ախիջան աղէն (1741), խոջա Սահակ, (1766): Մի նոր վալի Վան մանելիս, առաջին գործն էր լինում երկրի հարուստներից, գլխաւորաբար հայերից՝ իհարկէ՝ նուէրներ հաւաքել. վնայ այն հարուստին, որ կը համարձակուէր աչքաթող անել կատարելու այդ նուիրագործուած աւանդական պարտականութիւնը, այդ դէպքում իր կարողութեան մեծագոյն մասից ձեռք պիտի քաշէր նա: Տուգանքներին վերջ չէր լինում այնժամ: Տարեգիրները յիշում են յատկապէս խոջա Ալխասի կախաղանի վրայ բարձրանալը (1677 թ.) Վանի Բաքր-փաշայի ձեռքով, որպէս և Ղարասէֆէրենց Յակոբ աղայի անագորոյն մահը իրանց դրան մօտ եղող մի կամուրջի վրայ Բերդաքաղաքում, չը նայելով որ՝ որպէս ասացի՝ այդ հարուստներից չատերը մեծ դիրք և ազատութիւն ունէին տեղական ազգաբնակչութեան վրայ, որպէս և ազդեցիկ կարեւորութիւն կառավարչական չըջանալնեբում

հաւաքիլ էր Վարազայ միաբան մեղուջան Փիլղալէմեան Ղևոնդ վարդապետ, որի նեկայումս Էջմիածին դռնուող թղթերի հաւաքածոնների մէջ (ինքը վախճանուել է 1892 թ. երեսուղէմում) պակասում են մեր նախնեաց պատմութեան և յիշատակների այդ թանգազին մնացորդները: Կարելի չէ որոշ ասել, թէ ուր են դրանք—արդե՞ք Մկրեան աւագ քահանան է պահել Պոլսում իրան պահ տըրուած միջոցին, թէ՞ Աղանեան Գիւտ քահանայի ձեռքով «վասն ի վերուստ»... է եղել Պոլսից Էջմիածին բերելիս: Վերջինս աւելի հաւանական է թըւում ինձ:

*) Վանում նստող փաշաների (կուսակալ) ցանկը տես ի միջի այլոց և Մանանայ, Գ. եպ. Սրուանձտ., Պոլիս., 1881, վերջին յաւելումածը, Գոլոզ վարժապետի ձեռագրից քաղած:

և վալինների աչքում *): Սարսափելի օրեր: Այսպես կաղմակերպուած անօրինակ բռնակալութեան ճնշող խարաղանի տակ հեծող հպատակ, թշուառ ժողովրդի կայութիւնը անտանելի էր. ոչ թէ հպատակ, այլ ստրուկ, բառիս իսկական նշանակութեամբ:

Այդ ստրուկի նիստ ու կայքը չափած, կշռած ու որոշ էր. վնայ այն հային, որ համարձակութիւն կ'ունենար երբեկցէ դուրս գալ ստրուկին վայել վիճակից և չեղունել. վնայ այն վանեցուն, որ կը համարձակուէր ձիու վրայ նստած այգեստանից շուկայ զընայ առևտրի համար և վերադառնալ, նա նոյն բողբէին իր կեանքից ձեռք պիտի վերցնէր: Ի բաց առեալ հոգեորականներու՝ աշխարհական հայը, որպէս ներկայումս էլ, իրաւունք չ'ունէր երկար միջոց թողնելու. այս առթիւ տարեգիրներէր մէկը յիշում է, որ «Մուսլի փաշէն թոյլատրել է հայերին միջոց պահել (1679 թ.)»։ Նորա յաջորդները յետ խլած կը լինեն անշուշտ պետական այդ մեծ շնորհը, որ արել էր Մուսլին. որովհետև՝ որպէս ասացի՝ այսօր էլ Վանում ոչ մի հայ չի համարձակուում երկար միջոց անել, այդ մոնոպոլիան թիւրք տարրին է պատկանում միայն:

Մի ուրիշ տեղ պատահում ենք, որ 1680 թ. Զան-Փոլադ փաշէն հրամայել է հայերին դօտին (գլխակապ վաթաթոցը) առնել գլխից և ֆէս դնել **): Մի ուրիշ անգամ՝ թէ «Հասան փաշէն (1712) դեղին սոյն (կօշիկ) հայուն հասաղ արաց (արգելեց)»։ Եւ եթէ ի նկատի ունենանք այն անտանելի հանգամանքը, որ վալինների իշխանութիւնը տեւում էր ամենից շատ 2—3 տարի Վանում, մեծ գումարներով՝ շատ անգամ էլ արեան դնով ձեռք բերուած, այնժամ պարզ հասկանալի կը լինի, թէ թշուառ ռայան ինչեր քաշած կը լինի այդ մի քանի տարի միայն իշխող և իր յաջորդին միայն ճնշուած արնաքամ և կմալք դարձած հպատակ ժողովուրդը յանձնող վալինների անասնձ և անվերջ կամայականութիւնների ներքոյ:

Այդ պարբերական իշխանական հարստահարութիւններին կը հետեւին անշուշտ անտանելի թանգութիւններ և տնտեսա-

*) Նոյն դերն են կատարել և անցեալ XIX դարի սկզբներում ապրող Վանի հայ հարստաները, որոնցից աչքի են ընկել իրանց ոչ այնքան հարստութեամբ, որչափ աղղեցիկ նշանակութեամբ, Ղաբասէֆէրեան Յակոբ և Ախիջան աղաներ, Սապունձեանները, Սոսոյեանները, Մջէմիսաղոյեանները, Փէրճիլեանները, մասամբ Թէրլէմէզեանները, Ջաբան-բէյ, Կանթարճեանները և ուրիշներ:

**) Փէսի գործածութիւնից առաջ վանեցիները իբրեւ գլխարկ գործածում էին դեռ մինչև անցեալ դարի կէսերն էլ քուլալ կոչուած բրդէ թանձր և շրէշով պնդացրած մի տեսակ թաղիքէ գլխարկ, որի շրջապատը փաթաթում էին Կարապետ-իշի կոչուած կապոյտ թաշկինակներ:

կան տաճնապ, և իրօք ժամանակագիրները յիշում են աղութեան և մեծ սուլերի սոսկալի դէպքեր, ինչպիսին է Սիւլէյման փաշայի օրով, որպէս և 1758 թ. մեծ թանկութիւնները անմոռանալի Վանեցու յիշողութիւնից, որք աւանդուել են սերնդից սերունդ: Այս բոլորը, որպէս և տարեքնների անհաշտ թշնամութիւնը—յաճախ կրկնուող աւերիչ երկրաշարժները *) պատկերացնում են ճշգրիտ պատկեր այն թատերաբեմի, որք վրայ խաղացել է իր դժուարին դերը վան-տոսպեցի տոկուն հայր՝ երկար տարիներ յամառօրէն պահպանել կարողանալով իր վտանգուելու մօտ եղող գոյութիւնը և ազգային առանձնայատկութիւնները, որպէս և իր հաւատը:

Պէտք է աւելացնել նոյնպէս, որ մինչև անցեալ դարու կէսերը (1847) օտտոման կայսրութեան տիրապետութիւնը Վան-Տոսպի և շրջականների վրայ անուանական է եղել միայն. մինչև այդ ժամանակ Վանի իսկական տէրերը եղել են քիւրդերը իրանց դաժան և բռնակալ իշխողներով: Բաղրխան-բէգի, Խան-Մահմուդի, Խան-Աւդալի իշխանութիւնների արիւնոտ օրերը յիշում են մինչև այսօր էլ կենդանի ժամանակակիցներից. միայն 1847 թ. Պոլսից ուղարկուած Օսման-Մահմուդ-փաշային յաջողում է տեղական աղագնակութեան (գլխաւորաբար հայերի) եռանդուն օժանդակութեամբ կալանաւորել ժամանակի հերոսներին—Խան-Մահմուդ, Խան Աւդալ և Մուստաֆա բէկերին, որոնք բռնաբար տիրում էին Վանին իր ընդարձակ շրջականերով, վերջնականապէս ամուր հաստատելով թիւրքական տիրապետութիւնը Վան-Տոսպ զաւառի վրայ**):

ԿԱՐՍԵՑԻ

(Կը շարունակի)

*) Զարժի տարեգրութիւնը հայոց մէջ., Կ. Կոստանեան., Թիֆլիս, 1902, եր. 10—11:

**) Քրդական բարբարոս տիրապետութիւնից ազատուելու այս նշանաւոր դէպքը զրի է առել ժամանակակից ուսեալ Յովհաննէս վարժապետ Քոլոյ մի անհամ ոտանաւորով և զբարբար լեզով:

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՈՈՅՆ ԷԶՄԻԱՅԻՆ
ԴԱՌՆԱԼ ***

(Էջմիածնի հազարվեցհարիւրամեակի առթիւ)

16. Ազգային ընդհանուր ըմբռնման համեմատ, տեղափոխութեան գործին մէջ գեր մը ունի Ս. Լուսաւորչի Աջը, որով կը նուիրագործուի սուրբ միւռոնը, և ուստի կը բաշխեն կաթողիկոսներ իրենց կոնգալներով աստուածային օրհնութիւնը, և որ հայրապետական աթոռին և իշխանութեան նիւթական նըշանը համարուած է, այնպէս որ դրեթէ հնար չէ զազախարել ճշմարիտ հայ հայրապետութիւն մը առանց ճշմարիտ Աջին: Աստի ծաղած է որ Լուսաւորչի Աջը յատուկ պատմութիւն մը ունեցած է մեր եկեղեցական պատմութեան մէջ: Գիւտի նըշխարաց թւականէն Լուսաւորչի Աջը բաժնուելով միւս մասունքներէն, կը լինի հայրապետանոցի մեծ սրբութիւններէն մէկ, և Ներսէս Շինողի ժամանակէն առաւել ևս կը փառաւորուի, երբ մնացեալ նշխարներն և զլուխը կը զետեղուին Զուարթնոց եկեղեցին, և այնուհետեւ Ս. Աջն անբաժան ընկեր կը լինի կաթողիկոսներուն պանդխտութեան և անոնց հետ թափառելով՝ Հռոմկլայ կը հասնի, Ստեփանոս Հռոմկլայեցւոյն հետ գերի կ'երթայ Նդիպտոս, և Հեթումի ձեռքով զերութենէ կ'ազատուի, ըստ պատմութեան Սմբատայ, և այնուհետեւ յանկարծ կ'անհետանայ Վահկացւոյն մահուանէն կամ Մուսաբէգեանցի ընտրութենէն յետոյ, ինչպէս որ գրուած կը գտնենք յիշատակարաններու մէջ: Նոյն յիշատակարաններու համեմատ Վիրապեցւոյն ընտրութեան օրինաւորութիւնն ալ Ս. Աջով

*) Տես «Մուրճ», № 7.

հաստատուած է: Մէկը կը գրէ. «ՁԱՋ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին գողացան ի Սոյո, և բերեալ եղին յիւր սեպհական աթոռին, և այս ի խնամոյն Աստուծոյ» (Փիրղ., 129): Ուրիշ մը կը գրէ. «Սուրբ Լուսաւորչի Աջն կորեալ էր ի Սոյո, և ել համբաւ ի Վաղարշապատ, վասնորոյ ժողովեցան վարդապետք, եպիսկոպոսք, քահանայք, եօթնհարիւր անձն, և հաստատեցին զաթոռն յէջմիածին» (Փիրղ., 133): Յիշատակարաններու գրածը, զոր կը պատմէ ևս Առաքել Դաւրիժեցի, (տես Դաւրիժեցիի պատմութիւնը, երես 336), մինչև այսօր կենդանի կը մնայ ազգային աւանդութեան մէջ: Սակայն զիտելի է, որ Մեծօփեցին՝ աթոռին տեղափոխութեան պատմիչը Աջին կորսուելուն և գտնուելուն պարագայն բնաւ չը յիշեր, և միայն տեղ մը անցողակի կերպով կը գրէ. «ՅԱՋ Լուսաւորչին երդնուին, որ ոչ զԼուսաւորչին ճանաչէին և ոչ զԱՋ Լուսաւորչին գիտէին» (Կոստ., 58), և այսչափն ալ բաւական է Վիրապեցւոյն ընտրութեան ատեն Աջին էջմիածին լինելը հաստատելու: Մեծօփեցիին մանրամասնեալ պատմութիւն չ'ընելը թերևս յորդորած է Սիմոն կաթողիկոսը կարծել թէ Լուսաւորչի Աջը Հռոմիլայի գերութենէն յետոյ (1293-ին) այլևս հայոց ձեռքը չը հասաւ, մինչև Ջահանշահի ձեռքով (1461-ին) տրուեցաւ Ձաքարիա կաթողիկոսին (Ջամբու, 8): Այլ ոչ միայն յիշատակարաններ և ազգային աւանդութիւն (Դաւր., 320), այլ և Սմբատայ պատմութիւնը կ'ընդունեն Աջին գերեզարծը գերուելէն քիչ յետոյ (տես Սմբատայ պատմութիւնը, երես 126), և Սիմոն կաթողիկոսի պատմութիւնը երբէք իրեն հաստատութեան վաստ մը չ'ունի:

17. Կիրակոս Վիրապեցի հաղիւ երկու տարի խաղաղ պաշտօնավարութիւն ունեցաւ, և այդ միջոցին իբրև խղճամիտ վարիչ մը, լոկ ուղղութեան և բարեկարգութեան հոգևով շարժուած, օգտակար զործունէութիւն ալ ունեցաւ, խաթարեալ հայրապետանոցին պայծառութեան և խանդարեալ օրէնքներու վերահաստատութեան աշխատելով: Նորոգեց էջմիածնի կաթողիկէն և Հռիփսիմեանց և Գայիսնեանց տաճարները, գաւառներու մէջ ամեն կողմ վանքերու և եկեղեցիներու նորոգութիւնները քաջալերեց, բարեկարգութեան նախանձախնայիւր լինելով՝ հայրապետագիր կանոնները գործադրութեան վերակոչեց և ժողովուրդին բարեպաշտութիւնը գրգռեց սուրբ աթոռին նըպաստելու արտաքին միջոցներով, և «աստուածապաշտ աղգս Հայկազեան, Արարատ և կողմն վասպուրական՝ մարմնաւոր պիտոյիւք, անասնօք և չորքոտանօք լցին զսուրբ աթոռն» (Կոստ., 75): Կիրակոս անապատէ Հայոց հայրապետութեան կոչուած կը նմանի ըստ իմիջ Կեղեստինոս Մուրրօնի որ դար մը առաջ

ճղնաւորական առանձնութենէ Հռովմայ հայրապետութեան կոչուած էր. այլ անկէ շատ դերագանց եղաւ պաշտօնավարութեան մէջ, որովհետեւ իբրեւ փորձառու անձ մը սխաւ բարձրացրնել իրեն յանձնուած իշխանութիւնը, մինչ Մուրրօն բոլորովին ապիկար գտնուած էր վարչական գործերու մէջ: Կիրակոսին խորհրդատու և գործակից էին իւր հին ծանօթ և ընկեր Վասպուրականցի վարդապետները, որք ազդեցիկ խումբ մը կազմած էին Էջմիածնի մէջ Թովմա Մեծոփեցիի զլսաւորութեամբ, և այս եղաւ հաւանօրէն պատճառը կամ գոնէ պատճառներէն մին, որ հակառակ կուսակցութիւն մը կազմուեցաւ Սիւնեցի վարդապետներէն բաղկացեալ:

18. Նոր կուսակցութեան գլուխ կանգնեցաւ Մարկոս եպիսկոպոս Վրաց, աշակերտ Հերմոնեցի Յովհաննէսի, որ ընտրութեան ժամանակին բացակայ էր գտնուած, և կարծես այս պատճառով եղելութեանց հակառակելու իրաւունք կը ստանար: Իրեն առաջին համախոհներն եղան Աստուածատուր վարդապետ Սաղմոսավանցի, Գաբրիէլ եպիսկոպոս Յովհաննավանցի և Համաղասպ եպիսկոպոս Երևանայ, իսկ անոնց ձեռքի տակէն շարժողն էր Գրիգոր եպիսկոպոս Արտազու, մին անոնցմէ որ ընտրողական ժողովին ժամանակ զլսաւոր գործիչ և կաթողիկոսութեան թեկնածու էին: Այս թիւէն էր նաև Զաքարիա եպիսկոպոս, Հաւուցթառայ եպիսկոպոսներուն երիցադոյնը և Կիրակոսի ձեռնադրողը, որ և սա կաթողիկոսանալու ակնկալութեան մէջ յուսախաբ մնացած էր: Սոքա յաջողեցան իրենց կողմը ձգել ևս Տաթևու Շմաւոն եպիսկոպոսը, և վերջապէս կրցան շահել և Հերմոնսավանցի առաջնորդ կոլոտիկ Յովհաննէս վարդապետը որ արդէն ձերացած էր, և ականջները խլացած (Կոստ., 78): Ասոնց ամենուն նախանձին մեծ շարժառիթը Վասպուրականցոց զօրանալն էր, ինչպէս կ'ականարկէ և Մեծոփեցին. «Դարձեալ ատելութիւն ունէր ընդ կողմանս Վասպուրականի» (Կոստ., 76): Միանգամայն կը յիշէին անոնք, որ եթէ Արտազեցին կամ Հաւուցթառեցին չէին յաջողած կաթողիկոս ընտրուիլ, պատճառն այն էր, «որ ի նոյն օր ձեռնադրութեանն (կաթողիկոսական ընտրութեան) վարդապետն այն (Թովմա Մեծոփեցին) և Զաքարիան (Աղթամարայ կաթողիկոսն) ոչ կամեցան (նմա) լինել կաթողիկոս վասն ատելութեանն, որ առ նա ունէին» (Կոստ., 78): Միով բանիւ յայտնի կը լինի ինչ որ կանխաւ յիշեցուցինք, որ ոչ թէ իրօք կաթողիկոսութեան հետամուտ մէկը չը կայր Վաղարշապատու ժողովին մէջ, այլ բուն հետամուտները պարտաւորուեցան քաշուիլ, և բացէն անձ մը ընտրուեցաւ ի սէր խաղաղութեան, և այս եղաւ մանաւանդ

Վասպուրականցոյ կամ Աղթամարցոյ ազգեցութեամբ, զի երբ անհնար եղաւ Զաքարիա կաթողիկոսը փոխադրել Էջմիածին, զոհացան Աղթամարեան՝ բայց և Արարատցոյ ծանօթ և կիրքերէ հեռու անձ մը կաթողիկոս ընտրել: Մեծոփեցին՝ որ ժողովի զալուն Երևան չը մտած Ակոսի հանգիստած լինելը կը յիշէ (Կոստ., 66), Վիրապեցւոյն հետ կանուխէն յարաբերութեան մը՝ տած լինելը կը մատնէ անուղղակի:

19. Վերոյիշեալ միաբանեալներ, որոց վրայ աւելցան յետոյ Ստեփանոս վարդապետ Եղեղիցեաց և Անատն եպիսկոպոս Խոր վիրապի, հայլ «անուղղայ եպիսկոպոսը և քահանայք աւելի քան զերեսուն և զքառասուն հոգի» (Կոստ., 19), համախումբ եկան Էջմիածին զխաւորութեամբ Հերմոնեցի Յովհաննէս վարդապետի, ժողով ալ կազմեցին և որոշեցին Կիրակոսը մերժել աթոռէն և նորա տեղ կաթողիկոս ընել Արտազու Գրիգոր եպիսկոպոսը: Կիրակոսի անձին դէմ ամբաստանութիւն մը չ'ունէին, «ձգնութեամբ Լուսաւորչին հանգոյն է» կ'ըսէին, միայն թէ ծննդեամբ Աղթամարայ հպատակութենէն է, «որ ի բազում ժամանակաց հետէ քանադրեալք են», և թէ կաթողիկոսէ մը եպիսկոպոս ձեռնադրուած չէ, որ յետոյ եպիսկոպոսներէ կալթողիկոս ձեռնադրուի: Այս պատճառներով անվաւեր կը համարէին Կիրակոսի եպիսկոպոսութիւնն ալ, կաթողիկոսութիւնն ալ, աւելի առաջ երթալով՝ քահանայութիւնն ալ ու մկրտութիւնն ալ: Յայտնի է թէ որչափ անհիմն էին այս կարկատուն պատճառանքները: Աղթամարի քանադրանքը վերցած էր Անաւարդեցւոյն ժամանակ, և յատկապէս Արճէշի քանադրանքը վերցած էր Տաթևացւոյն ժամանակ, և ինքն Կիրակոս 32 տարի առաջ Աղթամարի սահմաններէն հեռանալով Արարատի հպատակութեան ներքեւ կ'ապրէր: Իսկ եպիսկոպոսական ձեռնադրութեան կաթողիկոսէ տրուելը լոկ սովորութիւն մըն էր ազգիս մէջ, մինչ ըստ Նիկիական կանոնաց «երեք եպիսկոպոսք եպիսկոպոս ձեռնադրեն», և նոյնիսկ Հայոց մէջ չատեր եղան որ լոկ քահանայ կամ վարդապետ և մինչև իսկ լոկ աշխարհական լինելով կաթողիկոս ընտրուեցան և եպիսկոպոսներէ ստանալով պէտք եղած ձեռնադրութիւնները կաթողիկոսութիւն վարեցին օրինաւորապէս: Մեծոփեցին կ'ուղէ պատճառաբանելով ցրել մեղադրանքները (Կոստ., 77), սակայն իրողը էին պատճառաբանութիւնք, ուր կիրքեր էին իշխող և թելադրող:

20. Միաբանեալներ կ'ուղէին բռնութեամբ իսկ գործադրել իրենց կամքը, սակայն Կիրակոս առաջին չոխնդը լսելուն հայրապետանոցը թողուց և մասնաւոր տուն մը պահուըտեցաւ: Հակառակորդներ Երևան գացին որ Եաղուր Բէգէ իրենց որոշ-

ման հաստատութիւնը ընդունեն, սակայն Նաղուբ բէգ պատասխանեց թէ նոյն իսկ Յովհաննէս Հերմոնեցին և Զաքարիա Հաւուցթառեցին էին որ ձեռնադրութիւնները տուած և բրաժնուն հաստատութիւնը իրմէ ուղած էին: Հակառակորդներ նոր բաղբաղոցներ կը կրկնէին, երբ Մեծօփեցիին ազգականներէն Ծերուն անուն երիտասարդ մը գոչեց համարձակ, թէ հակառակորդները բացարձակապէս կը ստեն: Ստեփանոս վարդապետ «հար զբերան մանկանն և լցաւ արեամբ», իսկ Նաղուբ բէգ ասեցը մէկէն դուրս հանել տուաւ: Առաջին ձախողութենէն չը կասեցան Կիրակոսի հակառակորդները, և Զաքարիա Հաւուցթառեցին կաշառքով շահեցաւ Նաղուբ բէգը և ուղած հաստատութիւնը ստացաւ: Հակառակորդներ յաղթութեամբ էջմիածին դարձան և մեծահանդէս պատարագի մէջ օծեցին Գրիգոր Արտազկեցին (1443-ին), իսկ կաշառքի վնասը հանեցին Վասպուրականցի վարդապետներէն, զրպարտութեամբ և մատնութեամբ տուգանքի ենթարկելով անոնց գլխաւորները, Կիրակոս Ռշտունիէն 13000 և Սարգիս Սալնապատցիէն 6000 դահեկան առին: Ձենք կրնար ստուգել թէ ինքն Թովմա Մեծօփեցին ալ տուգանքի ենթարկուեցաւ (Փիւրղ., 130), միայն թէ տարի մը ևս զեգերեցաւ Թովմա էջմիածնի կողմերը՝ յուսալով և աշխատելով որ հնար լինի առաջին դիրքը վերահաստատել, բայց տեսնելով որ Գրիգորի դիրքը կ'ամրանայ Արարատոց և Սիւնեցւոց օգնութեամբ, և թէ յոյս չը կայ Կիրակոսի և Վասպուրականցոց ղօրանալուն, թողուց էջմիածինը և դարձաւ իւր Մեծօփայ վանքը վարելով Արճէշի առաջնորդութիւնը, ուր և վախճանուեցաւ չորս տարի յետոյ (1448-ին):

21. Իսկ Կիրակոս ժամանակ մը թաղուստի տան մէջ մընալէ յետոյ հաւանութեամբ նորընտիր կաթողիկոսին ազատութիւն ստացաւ ապրել ինչպէս և ուզէ, և առանձնացաւ վանք մը, որոյ անունը յիշուած չէ, այլ անշուշտ Վաղարշապատի մօտ վանքերէն մէկը եղած է: Կիրակոս որ իր ճգնազգեսց և անապատաստուն կեանքին բերմամբ հայրապետական աթոռին և ծանրութեան սիրող չէր կրնար բլլալ, սիրով և յօժարութեամբ թողուց պաշտօնը նորընտիր Գրիգորին, իսկ սա, որ բաւական ճարտար մի անձ էր, թողուց Կիրակոսի բոլոր կաթողիկոսական պատիւները և նոյն իսկ կաթողիկոսի անունը, և իւր հայրապատիւ ծերունի կը մեծարէր և անուանական կաթողիկոսի ձին ալ չէր զլանար: Զայդ կը գուշակէր զանազան յիշատակարաններէն, յորս Կիրակոս իւր բացարձակապէս կաթողիկոս կը յիշատակուի նոյն իսկ Գրիգորի օժման թւականէն զտքը—1443-ին, 1445-ին, 1446-ին և 1447-ին (Փիւրղ., 132, 135,

151, 153, 154, 157), և երբեմն ալ Կիրակոս և Գրիգոր զոյգ կը յիշատակուին իրարու հետ 1444-ին և 1445-ին (Փիրզ., 133, 148): Եթէ Կիրակոսի միայն յիշատակութիւնը կը ցուցնէ Վասպուրականի կուսակցութեան Կիրակոսի անունին հաւատարիմ մնալը, երկուքին միատեղ յիշատակուիլը կը ցուցնէ թէ սիրաւիբ և բարեկամական յարաբերութիւն կը տիրէր Կիրակոսի և Գրիգորի մէջ, և եթէ երկրորդն էր որ տիրապէս կը վարէր կաթողիկոսութիւնը, Կիրակոս ալ կաթողիկոսութեան արտաքին պատիւները կը վայելէր կատարելապէս, և մօտ ութնամասնայ հասակին մէջ վաճական սիրեցեալ առանձնութեան մէջ աղօթքով և սրբութեամբ կը կնքէր իւր նշխարեալ օրերը: Կիրակոսի մահը հաւանական հաշուով տեղի ունեցաւ 1448-ին իւր պաշտպանին ու բարեկամին՝ Թովմա Մեծօրհնայիին մահուանէն քիչ յետոյ, թողելով սուրբ և խաղաղարար անձի մը անունը: Պատմութեան առջև իւր մեծ պատիւն է որ իւր անունը կապած է հայրապետական աթոռին տեղափոխութեան նշանաւոր և կարևոր դործին հետ: Թէպէտ և օրէն էր Կիրակոսի կաթողիկոսութեան միջոցը դնել եօթը տարի մինչև իւր մահը (1441-էն—1448), սակայն ընկալեալ սովորութեամբ երկու տարուայ միջոց կը տրուի (1441-էն—1443), մինչև իւր պաշտօնավարելէ զադարիլը:

22. Գրիգոր Ժ. կաթողիկոսին նախընթացին վրայ կատարեալ տեղեկութիւններ կը պակսին: Զաւարեցեան մականուն կը կրէ և իշխանի մը զաւակ կամ սերունդ եղած լինել կը տեսնուի: Ծննդեամբ Արարատցի կամ Սիւնեցի եղած ըլլալու է, քանի որ անոնց կուսակցութեան պետն և ընտրելին եղաւ, և Յովհաննէս Հերմոնեցիի աշակերտներէն, քանի որ անոր և անոր աշակերտներուն պաշտպանութեամբը բարձրացաւ: Արարատցի կամ Մակուեցի կամ Սուրբթադէսցի մականունը պարզապէս իւր եպիսկոպոսական վիճակէն առնուած է: Յանկարծ կը տեսնուի նա իբր վաղարշապատու ժողովին նախապատիւ անդամներէն մէկ և իբր կաթողիկոսացու, թէպէտ չը յաջողեցայն ատեն նպատակին հասնել, բայց երկու տարի հոգը Վասպուրականցոց դէմ կազմուած կուսակցութիւնը միաձայնութեամբ կը բարձրացնէ զնա. և թէպէտ հնար չէ դիմքն անմասն կարծել Կիրակոսի դէմ եղած դործներէն, սակայն հարկ է ճանչնալ թէ տգեղ քայլերու մէջ դործօն դեր չը ստանձնեց, և անձամբ մէջտեղ չը նետուեցաւ, դործին աւարտելէն յետոյ ալ իւր հակառակորդին և հրաժարեալ կաթողիկոսին հետ խակական և պատուաւոր ընթացք մը պահեց: Այլ առաւել քան զառաւել կը բարձրանայ Գրիգորի արդիւնքը, երբ դիտեմք, թէ թէպէտ Կիրակոս լաւ սկզբնաւորութիւն էր ըրած, բայց ժամանակին զոչստատ, 1903.

կարճութեամբ մեծ շինութիւններ չէր կարողացած գլուխ հանել: Իսկ Գրիգոր, որ բաւական երկար պաշտօնավարութիւն մը վայելեց, «ունի զաշխատանս ի սուրբ աթոռոջս, քանզի նախապէս սա նորոգեաց զշինուած սրբոյ աթոռոյս ի ներքուստ և արտաքուստ, զմէքատու զիւղօրայս առնելով հաստատուն զիւանական և զատաւորական գրովք տաճկականօք (Ջամբռ, 19):

23. Հակառակ այդ լաւ պայմաններու և օգտակար արգիւնքներու Գրիգոր երջանիկ ժամանակ չ'ունեցաւ ոչ արտաքուստ և ոչ ներքուստ: Արտաքուստ իւր օրով խափանուեցաւ այն միութիւնը և միութենէ յառաջ եկած զօրութիւնը, որ պիտի բարձրացնէր Էջմիածնի աթոռը: Նախ Զաքարիա կաթողիկոս Աղթամարայ ետ կեցաւ այն հսկատակութենէն զոր յայտներ էր առ գահակալն Էջմիածնի: Կիրակոսի անձը և Վասպուրականցոց ազդեցութիւնը զիւրացուցեր էին այդ միութիւնը, որ քանդուեցաւ երբ Կիրակոս աթոռէ հեռացաւ, և Վասպուրականցի վարդապետներ Էջմիածնէ վտարուեցան: Չնչք կարող ճշտել թէ ինչ մաս ունեցան Մեծօփեցին և իրենները Զաքարիայի այդ որոշման մէջ, զի մեզի հասած գրչագիրներ որ Վասպուրականի վանքերուն մէջ պատրաստուած են, Կիրակոսի անունը կը յիշեն իբր կաթողիկոս. այլ մտադրութեան արժանի է որ 1446-ին Վան գրուած յայտաւորք մը Կիրակոսի և Զաքարիայի կաթողիկոսութիւնը միանգամայն կը նշանակէ (Փիրզ., 154): Այս փոքրիկ նշանը առաւել ևս կը լուսաբանէ Զաքարիայի բուն ընթացքը, որ Գրիգորէ բաժնուելով՝ Էջմիածնէ բաժնուել չէր խորհեր, այլ կ'ուզէր, մանաւանդ Էջմիածինը՝ իւր ուղղութեան յարմարացնել, իւր կոչման համար պահել, և արդեամբ ալ 18 տարի յամառ ջանքերէ յետոյ յաջողեցաւ ալ քաղաքական զօրութեամբ Էջմիածնի մէջ իբր կաթողիկոս բաղմել (1461-ին), ինչպէս պիտի պատմենք:

24. Նոյն ձախող հետեանքը ճշմարտուեցաւ Կիլիկիոյ մէջ ալ: Մուսաբէգեանց մեռեր էր Վիրապեցիին ընտրութենէն քիչ յետոյ (1441-ին), Կիլիկեցիք արդէն հաւանած էին Վաղարշապատու Ժողովին, Աջին կորսուելն ալ զօրաւոր և վճռողական փաստ մը նկատուած էր, և բնական կերպով խափանուած կը մնայր Սոոյ աթոռը, և թերեւ չէր ալ վերսկսեր, եթէ Էջմիածնի ներքին շփոթութիւնը միտքերը չը խանգարէին: Այլ երբ երկպառակութիւններ տիրեցին, Կիլիկեցիք իրենց դադարեալ աթոռը վերականգնել ջանացին, Աղթամարի օրինակէն քաջախիռուեցան, և իրենց պլուխը անցաւ Կարապետ եպիսկոպոս Եւզոկիոյ: Մեծօփեցին այս կէտին ակնարկելով կը գրէ,

թէ «գտեալ երէց մի աշխարհի, որ ի նոցանէ էր ձեռնադրեալ, Կարապետ անուն, դարձեալ վերստին հակառակութեամբ կաթողիկոս եղին» (Կոստ., 85): Բայց ի բաց առեալ հակառակ ակթոս մը նորոգելուն պարագայն, Կարապետ իբր կարող և շինարար անձ մը նկատուած է յիշատակարաններու մէջ: Կաթողիկոսութեան առաջին պայմանը Աջն էր, և հետեւեալ Կարապետ ալ Աջին գիւտէն սկսաւ իւր գործը (տես Հ. Ղ. Ալիշանի Սիսուանը, երես 223), և հինգ տարի դատարկ մնալէ յետոյ (1446-ին) Կարապետով նոր ակթոս մը սկսաւ Սսոյ մէջ, ոչ ես ամենայն Հայոց հայրապետութեան օրինաւոր յաջորդութեամբ, այլ իբր ինքնօրէն ստեղծուած նոր ակթոս մը: Կարապետ իւր իշխանութեան հաստատութիւնն ալ ընդունեցաւ Եգիպտոսի սուլթանէն (1447-ին) տարեկան 300 դահեկան տուրք տալու պայմանով, և Պօղոս Գառնեցիի ժամանակ շինուած ս. Աննայի կաթողիկոսարանը վերստին նորոգելով և ճոխացնելով՝ անդ հաստատեց իւր ակթոսը (1448-ին): Կարապետի ձեռքով երկըրորդ Աջ մը երեցաւ Սսոյ մէջ, որ և ցարդ կը պահուի, և ճշմարիտ Աջին խնդիրը զբաղեցուցած է հաւատացելոյ բարեպաշտութիւնը: Սակայն քանի որ երկու կողմերն ալ կ'ընդունեն Աջին անյայտանալը, և քանի որ Աջը առաջին անգամ Էջմիածնի մէջ յայտնուելով ճանչցուած և ընդունուած է, և հինգ տարի ալ անհակառակ պատուուած է, երբ հակառակորդ ակթոս մը ի նպաստ նոր Աջ մը երևան կ'ելնէ, յայտնի է թէ վերջինը մշմարտութենէ զուրկ կը մնայ:

25. Աղթամարայ և Սսոյ ակթոսներուն բաժանելէն զատ ներքին բաժանումներ ալ ունեցաւ Գրիգոր, զի քանի որ փառասիրական ձգտումներու զօրութեամբ և անուղիղ միջոցներու ազդեցութեամբ բարձրացած էր ակթոս, չէր կարող չը զգալ միևնոյն միջոցներու հակազդեցութիւնը: Թերես այդ ազդեցութիւնները մեղմացնելու և վասպուրականցիները շահելու համար պատուաւոր զիրք մը ստեղծեր էր Կիրակոսին, և ինքը զինքը աւելի կաթողիկոսակից քան թէ բուն կաթողիկոս ցուցնել կը ձեռնդէր: Այդ կաթողիկոսի հետ կաթողիկոսակից մը ունենալու դրութիւնը տարապարտ ընդարձակութիւն առաւ ապագային մէջ, և կաթողիկոսներու ձեռքը փառասէր հակառակորդներ շահելու միջոց եղաւ: Կաթողիկոսակցութեան առաջին օրինակը տուաւ Գրիգոր Բ. Վկայասէր, որ առաջ Գեորգ Լոռեցիին և յետոյ Բարսեղ Անեցիին կաթողիկոսական օժուժ և իրեն համահաւասար իշխանութիւն տուաւ առանց իւր կաթողիկոսութիւնը թողելու, և զոր մարթ է մեղ անուանել լիազօր փոխանորդութիւն կամ լիակատար տեղակալութիւն: Անկէ ետ-

քը ուրիշներ չ'ունիմք այդ կերպարանով ճոխացեալ, մինչև որ օրինակը յակամայից կը նորոգուի Վերապեցիին և Զալարէ-գեանին վրայ, և առաջինին մահուանէն յետոյ կը լինի սովորական դարման հակառակութիւններ լռեցնելու, և Զալարէ-գեանի գիւտը այնչափ կ'ընդարձակի, որ մինչև երեք և չորս անգիլի կաթողիկոսներ միանգամայն կը դահակալեն միեւնոյն աթոռի վրայ:

26. Կաթողիկոսներու սովորական յուցակները անխտիր նշանակած են թէ կաթողիկոսներու և թէ կաթողիկոսակիցներու անունները, այլ այս չը կրնար ընդունելի լինել, վասնզի պինդ բռնելով եկեղեցական օրէնքը, որ մէկ աթոռի վրայ մէկէ անգիլի աթոռակալ չը ճանչնար, և նկատելով որ կաթողիկոսակիցներ ինչ ալ լինի իրենց պատւանունը՝ և իրենց վարած իշխանութիւնը, իսկապէս փոխանորդներ և տեղակալներ էին, և բուն կաթողիկոսը հրաժարած և հեռացած էր իւր պաշտօնէն, պէտք է որ գաւազանակիրերու մէջ իւր կաթողիկոս արձանագորութի միայն ու միայն ժամանակին բուն և գլխաւոր աթոռակալը և նա միայն ճանչցուի Ամենայն Հայոց բուն հայրապետը: Վերապեցիին նկատմամբ դիտեցինք այն պարագան, որ փոփոխութիւնը ժողովով կատարուեցաւ և ինքն ալ բարձրովին և յօժարակամ ձեռնթափ եղաւ հայրապետական պաշտօնէն, և հետևաբար նոյն ատենէն (1443-էն) Գրիգոր Ժ. Զալարէգեանը իբրեւ բուն հայրապետ ընդունեցանք: Սակայն անկէ ետքը տեղակալութեամբ կամ բնութեամբ հայրապետական դահը զբաւոյնները չենք կրնար նոյն կերպով ընդունել, վասն զի Զալարէգեան երբեք ձեռնթափ չ'եղաւ իւր իրաւունքէն, և հետևաբար Զալարէգեանի կաթողիկոսութիւնը պէտք է հաշուել 23 տարի մինչև իւր մահը (1466-ին), իսկ ուրիշներուն անունները պատմական դիպուածներուն կարգին յիշել. իսկ գաւազանագիրքի չ'անցներ:

27. Այն միջոցին քաղաքական դիպուածները յիշել օգտակար է եղելութեանց կապերը իմացնելու համար: Հայոց երկիրը բաժնուած էր Գարագոյունլու և Ազգոյունլու Քիւրդերուն մէջ: Առաջիններու կ'իշխէր Զահանջան փաղիշահ (1437-էն) իւր կենտրոնն ունենալով ի Գաւրէժ (Թէվրիզ), և իրեն սահմաններն էին Ատրպատականի, Պարսկահաքի, Վասպուրականի, Արարատի, Սիւնիքի և Արցախի նահանգները իրենց չըջականերով, որոց իւրաքանչիւրին գրեթէ ինքնիշխան ամիրաներ կային իբր կուսակալներ, և ասոնցմէ մէկն էր Երևանի ամիրան Նաղուբ բէգը, որ նշանաւոր դեր ունեցաւ աթոռին տեղափոխութեան մէջ: Ազգոյունլուներուն իշխանն էր Օթման սուլթան (1435-էն), ո-

րուն յաջորդած էր որդին Զահանգիր-սուլթան (1144-էն), և կենտրոնն էր Դևարբեքիր, և իշխանութեան սահմաններն էին Միջագետքի, Ծովքի, Աղձնիքի և Տուրուբերանի նահանգները, որ կը կառավարուէին նոյնպէս կուսակալ ամիրաներով: Երկու ցեղերուն անընդհատ հակառակութիւնները աղետաբեր էին երկրին որ իրենց պատերազմներուն ասպարէզն էր: Զօրաւորագոյն էին Գարազոյունլուները, որք ի վերջոյ Թաթարներուն վրայ ալ զօրացան և Լէնկթէմուրի ցեղէն Բուսայիդի ալ յաղթելով՝ տիրացան բովանդակ Պարսկաստանի (1460-ին), և հարկատու ըրին նոյնիսկ Աղգոյունլուները (1461-ին): Իսկ արեւմտեան նահանգներուն և Կիլիկիայի մէջ տակաւին կը շարունակէր ըստ մասին Եգիպտացիներուն իշխանութիւնը (մինչև 1447), թէպէտև Օսմանեան ինքնակալութիւնը հետզհետէ զօրանալով կը զրաւէր Եգիպտացիներու ձեռքէն փոքր Ասիան և Կիլիկիան ըստ մասին Սուլթան Մուրադ Բ.-ի առաջնորդութեամբ (1421—1451), որոյ յաջորդը սուլթան Մէհմէմէդ Բ. Ֆաթիհը (1451—1481) Յունաց կայսերութեան մնացորդներն ալ կը ջնջէր և Կոստանդնուպոլսոյ մայրաքաղաքին ալ տիրելով (1453 մայիս 29), այնտեղ կը հաստատէր իւր յաղթական ինքնակալութեան կենտրոնը: Այդ ժամանկներէն կը սկսի Հայոց բախան ալ սերտ կերպով կապուել Օսմանեանց հետ, որք յատուկ պաշտպանութիւն մը սկսած էին շնորհել Հայոց, և շնորհիւ այդ պաշտպանութեան Հայերը քաջալերուեցան իրենց երկիրներէն իջնելով գաղթել Օսմանեանց սահմանները, որով զատարեցան դէպ հիւսիս և դէպ հարաւ զիմով գաղթականութիւնները, որք երկրին առաջին արկածներուն ատեն ցրուած էին մէկ կողմէն Խրիմ և Լեհաստան և Մաճառաստան և միւս կողմէն Ասորիք և Եգիպտոս:

28. Էջմիածնի գործերուն դառնալով կը գտնեմք Գրիգոր կաթողիկոսը չինարար ձեռնարկներու զբաղուած Մայր Աթոռին նիւթական բարեղարդութեան համար, թէպէտ բարոյական բարձրութենէն շատ բան կորած էր Աղթամարի և Կիլիկիոյ աթոռներուն նորէն ինքնուրոյն կերպարան առնելովը: Իւր կաթողիկոսութեան մինչև հինգերորդ տարին կենդանի էր Կիրակոս (1448-ին), և երկու կաթողիկոսներու միանգամայն գտնուիլը կարծես թէ սովորական ձև մը առած էր: Հազիւ թէ Կիրակոս կը մեռնի, և ահա Գրիգորի մօտ կաթողիկոսակից մը կը գտնեմք Արխատակէս անուանով, որուն ոչ ով և ոչ ուստից լինելը գիտենք և ձրի ենթադրութիւններու վրայ ալ երկարել չենք ուզեր: Հաւանականագոյն է կարծել թէ Զալալբէգեան զգաց հակառակորդ կուսակցութեան մը կազմուիլը և ուղեց զայն տը-

կարաղնել կաթողիկոսակցութեան պատիւ տալով նոյն խմբակի գլխաւորին: Արիստակէսի անունը իբր կաթողիկոս կը գտնուի քիչուած առաջին անգամ Կիրակոսի մահուան տարին Վանայ գրչագրի մը մէջ (Փիբղ., 158), բայց այսչափէն չենք համարձակիր հետեցնել թէ Արիստակէս Վասպուրականցոյ խումբէն էր և կերպով մը Կիրակոսի դերը վարելու կը կոչուէր: Զալալքէ-գեանի մօտ Արիստակէսի տրուած պաշտօնական անունը «Աթռակալ» ախտղոսը եղած է, որ յետոյ իբրև մականուն ալ սեփականուած է անոր, զի առաջինն եղաւ որ այդ անունը կրեց: Կոչուած է երբեմն և «Եպիսկոպոս Էջմիածնի», իբր զի կաթողիկոսակցին պաշտօնն եղած է յատկապէս Աթռին սեղական և նիւթական գործերը կարգադրել իբր գլուխ ներքին և անտեսական մատակարարութեան: Ունեցած է կաթողիկոսական օծում, և իշխանութիւն կոնդակ արձակելու, եպիսկոպոս ձեռնադրելու և միւռոն օրհնելու իբր իսկապէս կաթողիկոս: Գրիգորի և Արիստակէսի յարաբերութիւնները մինչև վերջ հաշտ և համեմատաբար չեն եղած, զի Արիստակէս ուզած է Գրիգորի վրայ ճախանալ և կերպով մը Գրիգորը մոծանել այն անուանական դիրքին մէջ, զոր կանուխ Գրիգոր կազմած էր Կիրակոսի համար:

29. Բայց Արիստակէսի պաշտօնի կոչուելով չը վերջացան Զալալքէգեանի բոլոր վտանգները: Զաքարիա կաթողիկոս Աղթամարայ չէր մոռցած առաջին ընտրութեան մէջ իւր նպատակին ձախողելը, չէր մոռցած ևս Կիրակոսի փոփոխութեամբ իրեն դէմ ուղղուած հարուածը, և միայն լուած էր յորչափ կենդանի էր Կիրակոս, այլ երբ նա մեռաւ (1448-ին), ինքն սկսաւ գործածել Էջմիածնի կաթողիկոսութեան տիտղոսը, առոչինչ սեպելով Զալալքէգեանի կաթողիկոսութիւնը և ինքզինքը Կիրակոսի յաջորդ հռչակելով: Բայց գործ էր ոչ թէ անունն առնուլ այլ աթոռը գրաւել, որ զիւրին չէր, քանի որ Էջմիածնի մէջ բոլորովին ջնջուած էր Վասպուրականցիներու կամ Աղթամարականներու ազդեցութիւնը: Սովորական պատմութեան համեմատ, Սարգիս վարդապետ մը, զոր հարկ է Զաքարիայի կուսակից ենթադրել, կը յաջողի Ս. Աջը գողանալ Էջմիածնէ և տանել Դաւրէթ, մինչ միւս կողմէ Զաքարիա առատ պարգևներով կ'աշխատի չահել Զահանշահի սիրտը, և իւր բովանդակ ճարտարութիւնն ու հարստութիւնը թափելով, և իհարկէ՝ Գրիգորի և նորա ընկերակից Արիստակէսի դէմ ալ ազդու ամբաստանութիւններ կուտելով, կը յաջողի վերջապէս իւր անուան կաթողիկոսութեան հրովարտակ հանել տալ, և նոյնիսկ Զահանշահի ձեռքէն ընդունելով Ս. Աջը, Զահանշահին մարմնաւոր և Ս.

Աջին հոգևոր ղորութիւններով կու գայ Էջմիածին (1461-ին), ժողովուրդէն ալ մաս մը կը շահի ներքին և արտաքին միջոյններով, և Գրիգորն ու Արիստակէսը Էջմիածնէ վտարելով, ինքը կը գրաւէ Էջմիածնի կաթողիկոսական աթոռը և Աղթամարայ կաթողիկոսութիւնն ալ արդէն իւր վրայ ունենալով կը հռչակուի «Ինքնակալ պատրիարք ընդհանուր ամենայնի քրիստոնէականի ազգիս որք ևն ընդ ամենայն ոլորտս տիեզերաց» (Փիւրգ., 201): Այս է սովորական պատմութիւնը իր էական կէտերուն մէջ (Չամչ., Գ., 503):

30. Այլ Սարգիսի անունը և աջապողովեան պարագայն կը պակսեն Դաւրիթեցիին հաւաքած յիշատակարաններուն մէջ, և ինքն ալ այնպիսի ակնարկ մը չ'ըներ երբէք: Գիտէ Մուսաբէգեանցի օրով Աջին Սիսէ գողցուիլը, այլ չը գիտեր Զաւլբէգեանցի օրով Էջմիածնէ գողցուիլը, թէպէտ երկու պատմութիւններուն մէջ կայ նպատակի համաձայնութիւն մը, որ է նախ քաջութեամբ Աջին տէր լինել, յետոյ անոր վրայ կաթողիկոսութիւն հիմնել: Այս Դաւրիթեցիին լուծիւնն է անշուշտ, որ Երեանցի Սիմէոն կաթողիկոսին հիմ եղած է բոլորովին տարբեր պատմութիւն մը կազմելու Ս. Աջին վրայ: Սա կը պատմէ Աջին գերութիւնը Հռոմիլայի առնուելուն առթիւ (1292-ին, իսկ ըստ Զամբուի 1195-ին), և կը յարէ թէ ոչ ոք կը պատմէ Աջին գերեզարձը, կրկնելով անշուշտ Օրբէլեանի խօսքերը (Օրբէլ, Բ., 192), և անտեսելով Սմբատի պատմութիւնը (Սմբատ., 126): Նոյն թւականէն հայրապետական աթոռը առանց Ս. Լուսաւորչի Աջին կը թողու, և բոլոր կաթողիկոսները Ա. նաւարդեցիէն սկսելով զուրկ այդ հայրապետական նշանէն, հետեաբար պէտք չէր ընդունելու ևս Մուսաբէգեանցի օրով եղած գողութիւնը կամ փոխադրութիւնը, մինչ յանկարծ կը յուցնէ ընդունել զայն և կը գրէ թէ «Ըստ ամենից ճշգրտապատում պատմագրաց յայտնեցաւ սուրբ Աջն Լուսաւորչին ի յէջմիածին... և եզին կաթողիկոս զՏէր Կիրակոս» (Զամբու, 8): Այլ եթէ ոք այդ ենթադրութիւնը չ'ընդունի, Սիմէոն գրած է ևս թէ Ս. Աջը մնաց Եգիպտոս, որով Զահանշահ, որ ժամանակ մը եգիպտոսէ Դաւրէժ եկած էր, կրնար Ս. Աջը Եգիպտոսէ բերած լինել և ինքնաբերաբար ընծայել զայն Զաքարիա կաթողիկոսին հռչակաւոր խաչվառով և ուրարով մէկտեղ, երբ առաւ անոր կաթողիկոսութեան հրովարտակը, (Զամբու, 8, 9): Այդ պարագայն եթէ ստոյգ լինէր, բոլորովին կը խանգարէր Աջին պատմութիւնը, զոր ինչպէս տեսանք, ինքն Սիմէոն կաթողիկոսն ալ

բոլորովին չը մերժեր, և հետևաբար մենք ալ պատճառ չ'ունիմք սովորական պատմութենէն հեռանալու:

31. Թէպէտ դժուարին է միջին պարագաներէն բոլորովին ճշգրիտ պատմութիւն մը քաղել, սակայն մինչև հիմայ յառաջ բերուած պատմական պարագաներ բաւական կը թւին հաստատել ազգային ընդհանրութեան վստահութիւնը էջմիածին գտնուող Ս. Աջին վաւերականութեան վրայ, թէ նոյն ինքն է, որ Կիրակոսի ժամանակ փոխադրուեցաւ Սիսէն թէպէտ գաղտագողի ձկերով, և թէ նոյն այն է, որ Եգիպտացիներէ գերի տարուեցաւ և Հեթումէ փրկանաւորուեցաւ, և որ առաջին դարերէ ի վեր հայրապետական աթոռին նուիրական սրբութիւնն էր: Իսկ այն Աջը որ էջմիածնի մէջ երևան ելնելէն տարիներ ետքը Կարապետ Եւդոկիացիին ձեռքով նորէն երեցաւ Սիսի մէջ, կարող է լինել որեւէ վաւերական մասունք Ս. Լուսաւորչին բազկաձև արծաթեայ պահարանի մը մէջ դրուած, որովհետեւ էջմիածնի մէջ պահուած Աջն ալ ամբողջ ձեռքի և բազուկի մը ոսկրները չը պարունակէր, այլ է մասնաւոր նշխարք մը Ս. Լուսաւորչի աջ ձեռքէն բազկաձև արծաթեայ պահարանի մէջ դրուած: Նոյնպէս են բոլոր ուրիշ սուրբերու ալ աջերը որք կը պահուին էջմիածին և այլուր: Սիսի մէջ գտնուած Աջը ծագում տուաւ Աջապահեանց գերդաստանին, որք ի սկզբանէ անտի ժառանգական պահապանները կը սեպուին Լուսաւորչի Աջին և յետ ժամանակաց (1734-ին) կաթողիկոսութիւն ալ ժառանգական ըրին իրենց ցեղին: Աջապահեանց նահապետը, իրենց տոհմային աւանդութեանց համեմատ, եղաւ Յովհաննէս եպիսկոպոս մը, Հեթում Բ. Թագաւորին եղբայր կարծուած, և Աջին Եգիպտոսէ գերեզարձին ժամանակակից, այլ այո ևնթաղըրութիւնը չը ճշմարտուիր (Սիսուան, 219), և Աջապահեանց նահապետ Յովհաննէս առառաւելն կրնայ բարձրանալ առաջին Աջապահեան կաթողիկոսէն եօթը սերունդ վեր, որոց իւրաքանչիւրը 25 տարի ալ հաշուելով, նա տակաւին ներկայ պատմութեան թւականէն դար մի ևս ոչ կը մնայ, որով և ոչ իսկ Եւդոկիացի Կարապետին հնար է վերագրել իւր գտած Աջին անվտանգ պահպանութիւնը տեղական և ժառանգական պաշտօնեաներու յանձնելու գաղափարը: Մենք դառնալք Աղթամարցի Զաքարիայի բռնակալ կաթողիկոսութեան:

32. Զաքարիա տարի մի մնաց էջմիածնի աթոռին տիրապետութեան մէջ, և այդ պատճառով սովորաբար գաւազանագիրքերու մէջ տեղի գտած է իւր անունն ալ իբր օրինաւոր կաթողիկոս: Սակայն կարճ միջոց մը իրական տիրապետութիւնը չը կրնար օրինաւոր դարձնել Զաքարիայի բռնակալ տի-

րապետութիւնը: Մեզի հասած յիշատակներու մէջ ոչ երբեք և ոչ ուրեք կը գտնուի ազգային ժողովի մը ընտրութիւնը կամ հաստատութիւնը, և ոչ Գրիգորի օրինաւոր կաթողիկոսի պաշտօնանկութիւնը կամ հրաժարումը: Զաքարիա լոկ անուղիղ միջոցներով և արտաքին իշխանութեան զօրութեամբ վտարեց Գրիգորը, և իզուր է իւր բարեկամներուն պնդելը թէ կաթողիկոսութիւն ընդունեցաւ «ոչ զաբալով՝ այլ բաշխելով և չընդհնելով Զհանչայ Դանին» (Փիւրղ., 208), զի եկեղեցական օրէնքին ընդունած ձևերէն օտար է այդ ձևը: Հետեաբար պէտք է Զաքարիայի անունը վերցնել Էջմիածնի կաթողիկոսներուն օրինական ցուցակէն, և ճանչնալ միայն իրօք և ոչ օրինօք կաթողիկոսութիւն վարող մը: Զաքարիայի կաթողիկոսութեան տարիէն ներքին մեծ դործ մը կամ եկեղեցական նըշանաւոր կարգադրութիւն մը չ'ունինք: Ամենամեծ յաջողութիւնն եղաւ Զահանչահի և Զահանգիրի մէջ հաշտութիւն դուրսդնելը, համոզելով այդ երկրորդը որ նուէրների անունով հարկ մը տայ առաջինին և հաշտութիւն զնէ և պատերազմի աղետալի հետեանքէն ազատ մնայ (Դաւր., 326): Այդ դործին ազդեցութիւնը կողմն ալ այն էր, որ երկիրն ու ժողովուրդը ազատ մնային երկու ահարկու ցեղերու մէջ տեղի ունենալիք պատերազմին աղետալի հետեանքներէն:

33. Զաքարիա պարտաւորուած լինելով երկու քիւրդ իշխաններու հաշտութեան դործին համար Էջմիածնէ հեռանալ, իրեն կաթողիկոսակից կամ լիազօր տեղակալ կարգեց նոյն Սարգիսը, որ Աջը Էջմիածնէ դողնալով իրեն աջակցած էր և տուաւ նմին կաթողիկոսական օծումն ալ ըստ նորոգ սովորութեան: Երեք ամիս մնաց Զաքարիա ի Բաղէշ, և առաւել զօրացած և երկու թաղաւորներէ ալ պատուուած Էջմիածին դարձաւ, և ամենայն ինչ տեական յաջողութիւն կը խոստանար իրեն: Այլ Զահանչահ իւր բարեկամը նոյն օրերը պարտաւորուեցաւ վերստին Դաւրէթէ հեռանալ, Պարսկաստանի ներքին կողմերը Թաթարներու դէմ պատերազմելու և այն կողմերու խըլլալուն հետեանքը զսպելու համար, Արարատի կողմերուն վարչութիւնը թողլով իւր Հասան Ալի որդւոյն: Սա կ'երեւի թէ նոյն սերտ յարաբերութիւնները չ'ունէր Զաքարիայի հետ, ուստի և Գրիգոր Զալալքէզեանց և իւր աթոռակալ Արիստակէս յաջողեցան մուտք և ընդունելութիւն գտնել նորա մօտ, ամբաստանութիւններ յարուցանել Զաքարիայի անբաւ հարստութեանց ակնկալութեամբ: Զաքարիա վտանգը զգաց և չը կրցաւ ներհակ ազդեցութեամբ պատրաստուած հակառակութիւնը չիջուցանել, ուստի պարտաւորուեցաւ գաղտնի փախստեամբ ելնել

Հասան Ալիի սահմաններէն, իրեն հետ իբրեւ գրաւական տանելով Լուսաւորչայ Աջը, հայրապետութեան կարծեցեալ վաւերականութիւնը: Ս. Աջին հետ տարաւ նաև Ս. Հոփսիմէի խաչվառը, որ է հին խաչի գրօջ մը նոյն կուսին և ուրիշ պատկերներով, որևցարդ կը տեսնուի Էջմիածնի թանգարանին մէջ: Տարաւ ևս կաթողիկոսական ուրար մը, որ թէ հարստութեան և ճարտարութեան, և թէ հնութեան և յիշատակի առաւելութեամբ նշանաւոր սպաս մը եղած էր ավոտին համար: Չաքարիա ծպտեալ և անճանաչ կերպով ելաւ Էջմիածնէ և դէպ հարաւ երթալով հանդիպեցաւ Բագաւան (Ալաշկերտի Իւչքիլիսէ) և Կողովիտ (Բայազէդ) և հասաւ Բերկրու կամ Տէրյուսկանորդոյ վերին վանքը, որ Արգելան կը կոչուի, և հոն, երբ այլևս ազատ էր Հասան Ալիի երկիւղէն, յայտնեց ինքզինքը և հետը բերած գողօնը:

34. Բերկրիէ Աղթամար յաղթական և փառաւոր ուղևորութիւն մը ունեցաւ Չաքարիա, զի Ս. Աջին անունով բոլոր ժողովուրդներ կը խոնէին ուստի նա պիտի անցնէր: Վան քաղքին մէջ ալ կուսակալն Մահմուդ բէդ չքեղ ընդունելութիւն մը ըրաւ թէ Աջին, թէ Աջը բերողին: Այդպէս Էջմիածնի փախստականը իւր գալուն բուն շարժառիթը ծածկելով՝ մեծադուրդ հանդէսով մտաւ Աղթամար, և Ս. Նշանի կաթողիկէին մէջ զետեղեց Լուսաւորչի Աջը և միւս սպասները ի ԺՁ նաւասարդի ԶԺԱ թւին, որ կ'ըսուի լինել այն տարի Ս. Յակոբայ պահքին ուրբաթ օրը (1462, ղեկտեմբեր 17): Չաքարիա թէպէտ վտարեալ Էջմիածնէ չը դադարեցաւ անուանել զանձն կաթողիկոս Էջմիածնի և Աղթամարայ, բան մը զոր կանուխ ալ ընել սկսած էր տակաւին Էջմիածին չը տեսած և Ջահանշանի հրամանագիրը չը ստացած: Այլ անհաւանական կը կարծեմք յիշատակագրի մը ըսածը թէ Չաքարիա կրցաւ նորէն Էջմիածին դառնալ (Փիրդ, 208), զի այլուստ զիտեմք թէ Աղթամար դալէն յետոյ երկու տարի մնաց շարունակ այնտեղ և ղեզակուր սպանուեցաւ անդէն (1464-ին), չենք զիտեր որ հակառակորդներուն ձեռքով: Իրեն յաջորդեց Աղթամարի մէջ Ստեփանոս, որ նման Չաքարիայի զանձն Էջմիածնի ալ կաթողիկոս կը կարծէր, և Էջմիածին գրաւելու հետամուտ էր, իհարկէ Լուսաւորչի Աջին տէր լինելուն իրաւունքով:

35. Երբ Չաքարիա Աղթամարցին հեռացաւ, Գրիգոր Չալաբէգեանց անհակառակ տիրացաւ իւր ավոտին, ուստից միայն բռնութեամբ հեռացած էր, և հեռանալու ատենը ունեցած էր հարկաւ իրեն հաւատարիմ մնացող ժողովուրդներ, որոնք զինքը միշտ կաթողիկոս կը ճանչնային: Գրիգորի հետ դարձաւ

Արիստակէս Աթոռակալն ալ, իսկ Զաքարիայի աթոռակալ Սարգիսը ոչ միայն չը հետեւեցաւ իւր գլխաւորին փախուստին, այլև շահուեցաւ Գրիգորի կողմը, զույգէ և ինքն եղաւ որ կանուխ շահուած լինելով՝ դիւրացուց Զաքարիայի անկումը: Իւր այս ընթացքին վարձքը եղաւ հարկաւ աստիճանն ու պատիւը և Գրիգորի հետ ալ պահեց նոյն դիրքը, իբր միւս այլ աթոռակալ և կաթողիկոսակից և Արիստակէսի ընկերակից: այդ կերպով չորս անձեր միանգամայն, Գրիգոր և Արիստակէս և Սարգիս և Զաքարիա, միևնոյն ժամանակ Էջմիածնի կաթողիկոսի տիտղոսը կը կրէին և այդ անունով կոնդակներ կ'ուտային թէ առանձինն և թէ ի միասին, եպիսկոպոս կը ձեռնադրէին և միւսոն կ'օրհնէին և իբր կաթողիկոս կ'անուանուէին յիշատակարաններու մէջ: Գրիգոր չառ եւ չ'ապրեցաւ այդ ամէն յուզմանց և նեղութեանց վրայ. իւր մահուան թւականը ամենայն ճշտութեամբ գրուած չենք գտներ, և զարմանք ալ չէ, զի կաթողիկոսներու շատութեան մէջ միոյն մեռնելը աչքի զարնող պարագայ չէր լիներ, քանի որ բնական կարգով աթոռի տէր կայր, և գլխաւոր կը դառնար նա որ նախորդին ատեն անկէ ետքը իբր նախապատիւ ընդունուած էր: Եւ այս մահաւանդ երբ առաջինը վասն ծերութեան հասակին բնական կերպով ալ գործէ քաշուածի պէս կ'ապրէր: Իբր ստոյգ կրնանք ընդունել թէ Գրիգոր աթոռը վերստին զրաւելէն յետոյ երեք տարի եւս ապրեցաւ և խաղաղութեամբ վախճանեցաւ չորրորդին սկիզբները (1466-ին): Առ այս կը յորդորեն զմեզ յիշատակադրի մը խօսքերը ԶԺԴ=1465 թւին գրուած, թէ Արիստակէս «յայտմ ամի նստաւ յաթոռ հայրապետութեան» (Փիւղ., 221), իմա յառաջագոյն և բուն կաթողիկոսութեան աթոռը մահուամբ կամ հրաժարմամբ Գրիգորի, մինչ միւս այլ յիշատակարան գրուած ԶԺԵ=1466 թւին, տակաւին կը յիշէ Գրիգորը իբր «ընդհանուր հայոց կաթողիկոս» (Փիւղ., 266): Գրիգոր խռովութեամբ ու դաւակցութեամբ աթոռ բարձրացաւ, սակայն ըրածին փոխարէնն ալ գտաւ՝ նմանօրինակ արկածներ կրելով ուրիշներէն: Աթոռին բարոյական ոյժը կոտրեց առիթ տալով Աղթամարայ և Կիլիկիոյ զօրանալուն, այլ նիւթական ոյժերով զօրացուց աթոռը ծախսելով այս նպատակին նաև իւր սեփական իշխանավայել հարստութիւնները:

36. Այս միջոցին պատմութեան մէջ հնար չէ զանց ընել Կոստանդնուպոլսոյ ազգային պատրիարքութեան սկզբնաւորութիւնը, որ տեղի ունեցաւ ճիշդ Զաքարիայի Էջմիածինը գրաւելուն տարին (1461-ին), երբ սուլթան Մէհմէդ Փաթիկ Կոստանդնուպոլսոյ տիրեց և Յունաց կայսրութիւնը ջնջեց, և

նոյնիսկ Յունաց հին կենտրոնին մէջ իւր իշխանութիւնը հաստատեց, ծանր պարագայի մը դիմաց գտնուեցաւ, որ էր մի կողմէն այդ քրիստոնեայ մեծ տարրին օրինական կացութիւն մը տալ, և միւս կողմէն անոնց անհատական և ընտանեկան կացութիւնը մահմէդական կրօնի պահանջուններուն չ'ենթարկել: Այդ դժուարութիւնը զգացած էին նաև առաջին մահմէդական իշխանութիւնները, քանի որ իրենց համար բոլոր անհատական և ընտանեկան կացութիւնը սերտ կերպով կապուած էր կրօնական պահանջներու հետ և կը կառավարուէր Շէրիի կրօնական օրէնսդրութեամբ: Այն ասկէն հրապարակ ազգերու զինուորական և եկեղեցական զորքերը մահմէդական կուսակալներու յանձնելով, քրիստոնեայ ժողովուրդներու ներքին վարչութիւնը կը յանձնէին քրիստոնեայ պետի մը: Արաբացւոյ տիրապետութեան ժամանակ ոստիկաններու և պատրիարքներու զոյգ իշխանապետութիւնը հետևանք էր այդ սկզբունքին: Սուլթան Մէհմէդ ապահով չը տեսաւ յատուկ ազգային պետ մը տալ նուաճեալ Յոյներուն, և լաւապէս սեպեց որ այն ամէն արտաքին կացութեան գործերը, որք կրօնականի հետ կապակցութիւն ունենանուն՝ չէին կրնար քրիստոնէից վրայ իսլամական օրէնքով կարգադրուել պէտք է, յանձնուին ուղղակի Յոյներուն կրօնական պետին, որ էր Կոստանդնուպոլսոյ պատրիարքը: Վերջին պատերազմին միջոցին մեռած էր Աթմանա Բ. պատրիարքը, ուստի Կոստանդնուպոլսոյ առնուելէն անմիջապէս ետքը նոր պատրիարք մը ընտրել տուաւ, որ եղաւ Գէորգ Սկուրիոս գիտնական և քաղաքագէտ եկեղեցականը, որ Փլորենտիոյ ժողովին ալ գացած էր, և անունը փոխելով կոչուեցաւ Գևորգիոս Բ.: Սուլթան Մէհմէդ հաստատեց նորա իշխանութիւնը և անոր յանձնեց բոլոր իւր ազգայիններու և կրօնակիցներու անհատական, ընտանեկան, ժառանգական, դպրոցական, եկեղեցական, բարեգործական, միով բանիւ ազգային (միլիէ) կոչուած գործերը կարգադրել հոգևորապէս և քաղաքականապէս համաձայն իւր եկեղեցական կանոնաց և ազգային սովորութեանց, և խոստացաւ իսկ իւր պաշտպանութիւնը միջամտութիւն ընող պաշտօնեաներու դէմ: Այս եղաւ Կոստանդնուպոլսոյ ազգապետական պատրիարքութեան ծագումն ու կազմութիւնը:

37. Երբ սուլթան Մէհմէդ Կոստանդնուպոլիս առաւ, Հայերը քիչ էին քաղաքին մէջ, և այն ալ Գենուացւոյ սեփական մասին մէջ, որ է այժմեան Ղալաթան, ուր յատուկ եկեղեցի ալ չ'իյնած էին Ս. Լուսաւորչի անուամբ (1392-ին): Յաղթական սուլթանը առաջուրէն լաւ գաղափար կազմած էր

հայ տարրին վրայ, և մեծ վստահութիւն կը տածէր անոնց դժբաղդէութեան և հաւատարմութեան վրայ, իրեն նախորդներն ալ մեծ պաշտպանութիւն բրած էին Հայերուն, և իրենց երկիրներուն մէջ անոնց շատնալուն նպաստած էին: Հայերն ալ փոխադարձաբար մեծ յարում ունէին Օսմանեանց, և անոնց տիրապետութեան ետեւ իրենց գաղթականութիւնները կ'ընդարձակէին: Երբ Օսմանեանք Կոստանդնուպոլսոյ տիրացան, խորհեցան իրենց ապահովութեան համար հայ տարրը շատցնել նոր մայրաքաղաքին մէջ և Փոքր-Ասիոյ գաղթականութիւններէն բազմաթիւ խումբեր բերին և բնակեցուցին Կոստանդնուպոլսոյ պարիսպներուն ներքին կողմերը և քաղաքին դուռներուն մօտ, ինչպէս որ ցարգ ևս հայաշատ հին թաղերը պարիսպներուն շուրջն են և դուռներու անուանները կը կրեն (Գում-գափու, Եէնի-գափու, Սամաթիա-գափու, Նուլը-գափու, Թոփ-գափու, Եղիրնէ-գափու, Գալաթ-գափու և այլն): Քանի մը տարիներու մէջ Հայերը շատցան մայրաքաղաքին մէջ և զաւանդու. հետ յարաբերութիւններ հաստատեցին, և Յոյներէ տարբեր, բայց ոչ նուազ կարեոր և նկատողութեան արժանի տարր մը եղան, և անոր ալ Յոյներուն նման ազգային կացութիւն մը տալու հարկը անհրաժեշտ եղաւ, բայց Հայերը Կոստանդնուպոլսոյ մէջ կրօնական պետ մը չ'ունէին: Սուլթան Մէհմէտ Գ զօտարութիւնը լուծեց, և Կոստանդնուպոլսոյ հրաւիրեց Պրուսսացի Հայոց առաջնորդ Յովակիմ եպիսկոպոսը, որ Փոքր-Ասիոյ նոր գաղթականութեանց ընդհանուր առաջնորդ և հոգեոր պետն էր և Կոստանդնուպոլսոյ ալ իրեն վիճակ եղած կը լինէր. սուլթանը կանուխէն ալ նախկին մայրաքաղաքին մէջ Յովակիմի հետ լաւ յարաբերութիւն հաստատած էր իւր պատերազմական ձեռնարկը սկսելէն առաջ: Յովակիմը Կոստանդնուպոլսոյ Հայոց հոգեոր պետ ճանչցուելով, Յունաց պատրիարքին համահաւասար անուն և պատիւ և իրաւունք և իշխանութիւն ստացաւ, միայն կարգով Յունաց պատրիարքէն երկրորդ լինելով: Այսպէս քրիստոնեայ երկրորդ պատրիարքութիւն մը հաստատուեցաւ Օսմանեան կայսրութեան մէջ, առջինէն ութը տարի յետոյ (1461-ին), և իրեն կենտրոնը տրուեցաւ Սամաթիա Մարմարայի և ցամաքի արտաքին պարիսպներուն անկիւնը, ուր Ս. Գէորգ եկեղեցին, Սուլու Մանասթըր կոչուած, եղաւ Հայոց պատրիարքարան կամ պատրիարքական վանք, վասն զի այն ատեն, ինչպէս և այժմ բոլոր մեծ աթոռներ վանական կաղնակերպութիւն ունէին: Այս տեղեկութեանց համեմատ Հայոց պատրիարքութեան ալ ծագումը, կազմակերպութիւնը և իրաւասութիւնը աէրուլթեանը աչքին Յունաց պատրիարքութեան յարեման էր:

Միայն թէ մինչ Յունաց պատրիարքը իւր եկեղեցւոյն կաթողիկոսն ալ էր, Հայոց պատրիարքը պարտաւոր էր հոգեւորապէս Էջմիածնի կաթողիկոսին գերիշխանութիւնը ճանչնալ, միայն թէ Օսմանեան պետութեան մէջ իրաւունք կը ստանայր նոյնիսկ առաջնորդաց վրայ իրաւասութիւն գործածել և կաթողիկոսական իշխանութեան ներկայացուցիչ համարուել:

38. Երբ Կոստանդնուպոլսոյ պատրիարքութիւնը հաստատուեցաւ, Էջմիածնի աթոռը ոչ տեղեկութիւն և ոչ մասնակցութիւն կրցաւ ունենալ անոր կազմութեան, և ոչ իսկ հնար է ենթադրել, որ կարենար ունենալ, զի Աղթամարցի Զաքարիայի բռնի տիրապետութեան տարին էր, յորում ոչ վտարեալ և ոչ գրաւող կաթողիկոսը այդպիսի գործերով զբաղելու ժամանակ ունէին, եթէ լուրն իսկ հասնէր իրենց: Միայն թէ Յովակիմ եպիսկոպոս արդէն Էջմիածնէ ստացած էր իւր աստիճանը և իշխանութիւնը, և Պրուսսայէ Կոստանդնուպոլսի անցնելով լոկ պատահական ընդարձակութիւն մը ստացած կը լինէր իւր պաշտօնը: Ինչչափ ալ Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան սկզբնաւորութիւնը պատահական և արտաքին պարագաներու վերադրուի, սակայն ինչպէս ուրիշ առիթներու մէջ, կատարեալ գործողութիւնը ազգին մէջ դիրք ու դեր սկսաւ վայելել, և ստացեալ իրաւունքը ճանչցուեցաւ և հաստատուեցաւ և հետզհետէ աւելի կարգադրեալ և զօրացեալ հանդամանք ստացաւ, մանաւանդ իրեն կից եղող քաղաքական կամ ազգային իրաւանց ազդեցութեամբ: Թէպէտ և սկիզբները գրեթէ աննշանակ անցած է ազգին մէջ Կոստանդնուպոլսոյ աթոռին կազմակերպութիւնը, սակայն հետըզհետէ այնչափ զօրացաւ, որ նոյնիսկ ազգային կենտրոնը անզգուշարար տեղափոխուեցաւ, և ազգին և եկեղեցւոյն չահերը և գլխաւոր դիպուածներու հանգոյցները Էջմիածնէ Կոստանդնուպոլսի փոխադրուիլ սկսան, և թէպէտ ազգային եկեղեցւոյ կենտրոնը միշտ Էջմիածին ճանչուեցաւ և Էջմիածնի հայրապետները Ամենայն Հայոց գլուխ, սակայն գործողութեանց մէջ ուշադրութեան առնուելու կէտը Կոստանդնուպոլսի սկսաւ լինել:

ՊԱՏՄԱՍԷՐ

ՇՎԷՑՑԱՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ*)

X

Փոքր է Շվեյցարիան, լեռներն ու լճերը բազմաթիւ, մը-
շակութեան համար հողը սակաւ: Մարդը մի անդադրում աշ-
խատանքով լրացնում է այդ պակասը: Գետին է հարկաւոր, և
այդ գետինը ճարում են լեռների կողերը չանգոնելով, ուղղաձիգ
դառիվայրի առաջ քար ու կրով պատ կանգնացնելով, ժայռը
փշրելով: Սննդամթնայնիւ նեղ է ամենքի համար, նեղ է քա-
ղաքներում, ինչպէս և գիւղերում, նեղ է նոյնիսկ մեռելների
համար: Դուրս է գալիս, որ շվեյցարական մեռելները յաւիտե-
նական բնակարան էլ չ'ունին, որովհետեւ ապրողների համար
տեղը նեղ է, գետին քիչ կայ:

Նորերս գիւղական գերեզմանատան մօտով անցնելիս տե-
սայ, թէ ինչպէս գերեզմանապահը մի կատարեալ գերեզմանա-
կան սառնութեամբ քանդում է դարդարուած դամբարանները,
հանդարտութեամբ մի կողմ է դնում պսակները, պոկում է եր-
կաթէ վանդակապատը, վերցնում է կոկ, սիրուն քարը, ուր
դրուած է թաղուածի անունը, և ապա բահով հաւասարեցնում
է հողը: Խստասիրտ, անաստուած մի գործ ըստ երևոյթին, բայց
գերեզմանապահը դրա մասին չի էլ մտածում, մի քիչ յետոյ
աջնտեղ, ուր առաջ երևում էր մի քար, մի թումբ, մի անուն,
մնում է միայն հարթ հաւասար գետին: Թաղուածի և աշխարհի
մէջ յետին կապը կտրւում է, մոռացութիւնն ու յաւիտենակա-
նութիւնը կատարեալ տէր են դառնում մեռելին:

Իմ իրրի արևելցու հետաքրքրութիւնն այս մեղ համար
անսովոր փաստի առաջ քնդ անշուշտ հասկանալի կը լինի, սի-

*) Տես «Մուրճ» № 6.

րելիս: Մօտեցայ գերեզմանապահին, հարցնում եմ, թէ ինչո՞ւ է նա աւերում գերեզմանները, ի՞նչ գործ ունի մեռելների յաւիտեական բնակարանների հետ: Պատասխանի փոխարէն նա իր բահով ցոյց տուեց իմ առաջ ցցուած փայտեայ սիւնը, որի վրայ դրուած էր 1873: Նայեցի առանց լաւ հասկանալու:

— Ես ոչինչ չեմ հասկանում, ասացի:

— Շատ պարզ է, պարոն, այս շարք գերեզմանների համար, որ ես քանդում եմ, երեսուն տարին լրացել է արդէն:

— Ես դարձեալ չեմ հասկանում:

— Դուք օտարական էք, պարոն, երեի ձեր երկրում այլ կարգեր կան, բայց մեզանում այսպէս է. օրէնքով երեսուն տարուց յետոյ ամեն մի գերեզման դառնում է համայնքի սեփականութիւն. այսինքն ինքը մեռելը չէ իհարկէ, այլ կտոր հողը, ուր նա թաղուած է: Ահա ինչպէս տեսնում էք, սիւներին տընկուած իւրաքանչիւր շարքի թաղման թւականներով երեսուն տարին լրանալուց յետոյ համայնական վարչութիւնն իրաւունք ունի յիշատակները վերցնել և գետնին տիրանալ, որը վաճառուած էր միայն երեսուն տարուայ տիրապետութեան իրաւունքով:

— Իսկ մեռելի տէրը:

— Նա կարող է յիշատակարանը, արձանը, վանդակապատը տանել, թէ կամենում է, կամ կարող է նորից գնել գետինը, դարձեալ մի որոշ ժամանակով կամ ընդմիշտ: Բայց քչերն են այդ անում, և ի՞նչ օգուտ այդ բոլորից: Ահա նայեցէք այս տարածութեանը, ուր խոտի կանաչ սիւռոյն այնքան սիրուն է, և սաւկայն այդ սիւռոյի տակ քանի անգամ մեռելներ են թաղուել և էլի քանի անգամ կը թաղուեն: Երեսուն տարուց յետոյ իւրաքանչիւր հին գերեզմանում մի նոր մեռել թաղելու իրաւունք կայ օրէնքով: Տեղ չ'ունենք, պարոն, թէ բոլոր մեռելներն էլ իրանց բռնած գետինը պահեն յաւիտեան, կենդանիներն ուր ապրեն:

Եւ այսպէս մեռելները Շվեյցարիայում իրանց յաւիտենական բնակարանը չ'ունին! Մեզ արեւելիկներիս համար մի սրբապղծութիւն է գերեզմանի տեղը ջնջել, յիշատակն անհետացնել, այստեղ ոչ թէ կրթութեանը, այլ ժողովրդի մարդը, ինչպէս իմ տեսած գերեզմանապահն, այդ փաստի վրայ նայում է իբրեւ ամենասուղորական երեւոյթի վրայ:

Ինչո՞ւ չը խոստովանեմ, ընդունելով հանդերձ՝ որ գերեզմանների մասին չվեյցարական օրէնքն այս երկրի համար անհրաժեշտութեան արգասիք է, այնուամենայնիւ այս երեւոյթն ինձ վրայ ծանր ազդեց: Գերեզմանների կուլտը հնդիկներից

պարսիկներին, և վերջիններից արիական միւս ազգերին, ինչպէս և հայերին հասած մի կրօնական ծէս է եղել ամենահին ժամանակներից: Այդ ժողովուրդների կեանքում նրանց անհատական, ընտանեկան, հասարակական յարաբերութիւնների մէջ օջաղը և գերեզմանի յարգանքը խաղացել են ահագին դեր: Օրէնքներն անգամ ազդուած են հոգեկան աշխարհի արտայայտութիւնը հանդիսացող այդ երկու ֆակտորներով: Մենք սերունդէ սերունդ զատարակուել ենք անհատականաւրի և գերբնականաւրի յարգանքով և սարսափով. ատաւիղմը — շատ, աւելի երկար է ապրում սերունդների մէջ, քան թէ սովորաբար մարդիկ կարծում են: Ինչո՞ւ զարմանալ, որ ինձ վրայ ծանր է ազդում գերեզմանների աւերածը, չը նայելով որ ինքս ինձ որեւէ նախապաշարմունքից միշտ ազատ եմ համարել և ոչ առանց իրաւունքի:

Նախապաշարմունք. ահա մի խօսք, մի հասկացողութիւն, որի սահմանները այնքան առաձգական են, որ որոշելը չափազանց դժուար է: Առօրեայ կեանքը, մեր յարաբերութիւնները, մեր ամենասովորական ժեստերը, հասարակութեան մէջ մեր դիրքը, հագնելու եղանակը, զգեստի ձեր, այս բոլորից որն է ազատ նախապաշարմունքից և որը նախապաշարմունք չէ, եթէ ոչ այսօր մեզ համար, գուցէ վաղը յետագայ սերնդի համար:

Եւ հաւատացած եմ, որ նոյնիսկ նախապաշարմունքից ազատ այն մարդը, որի համար սառած գիւղը նոյնքան խորհրդաւորութիւն է ներկայացնում, որքան կտրուած ծառը, որն ամենայն սառնասրտութեամբ իր մարմինը կը կտակի մի կլի-նիկայի, այնուամենայնիւ չէր կամենայ իր սիրելու, իր ծնողների գերեզմաններից այդ աստիճան բանալ՝ ձեռով հրաժարուել: Հոգեկան աշխարհների կապը պահպանելու համար ստիպուած ենք մեր անկարողութեան մէջ կոչումն անել նիւթին: Ահա յիշատակարանների արժէքն ու բացատրութիւնը:

Խեղճ, ողորմելի մարդ:

Հազարաւոր վերստերով, ահագին ծախսերով դիակներ, նոյնիսկ պարկերով ոսկորներ են տեղափոխում՝ աւելի մօտ, աչքի առաջ թաղելու, այդ ողորմելի մնացորդները վերջին անգամ շօշափելու համար:

Եւ ինչո՞ւ այդ բոլորը, պարզ նախապաշարմունք չէ:

Այո՛, սիրելիս, մարդկային հոգին երեսայի պէս կապրիդներ ունի, որոնք անթիւ դարերի անթիւ մարդկութիւնների նման կապրիդներն մի սինաեզ են. աղատուելն այնպէս հեշտ չէ:

Շվէյցարացին աւելի է առաջ գնացել դարերի յուժը թօթափելու մէջ. այստեղ գիւղը հանդարտ խղճով հարթում է գե-

րեզմանները տեղը կենդանի մարդը աւելի արժէք է ստացել, քան մեռածը. հանդերձեալ կեանքն իրականից այնքան է հեռացել, որ նա էլ չի նշմարւում: Վրան յիշատակարան լինի, թէ չը լինի, բոլոր դիակներն էլ փթելու, ոչնչանալու են, նիւթից վերցուած և մի առժամանակ չեղտուած անհատականութիւնը վերստին ջնջւում է մահով և նիւթի գիրիւ մտնում: Այսպէս է մտածում չվէյցարացին, ավստոս սակայն, որ ընկերական անհատասարութիւնն այստեղ էլ ցցւում է իր վրդովեցուցիչ պատկերով: Հարուստ մեռելը կարող է իր տեղը միշտ պահել. աղքատն ու անտէրն ամենից շուտ է ջնջւում: Կատարեալ արդարութիւնը երբ կը հասնի:

Թողնենք մահն ու մեռելներին և կեանքից ու կենդանի մարդկանցից խօսենք:

Այսօր իմ լուսամուտի տակից երգելով անցան բազմաթիւ զանազան հասակի երեխաներ: Գիւղական զպրոցի աշակերտաշակերտուհիներն են, որոնք իրանց ուսուցիչների և ուսուցչուհիների հետ ամսարային ճանապարհորդութիւններ են կատարում իրանց երկրի այս գեղեցիկ լեռներում ու ձորերում: Նրանք ամենքն էլ ձեռներին երկար ձեռնափայտ ունին, իսկ թիկունքին, կամ կողքից կախուած փոքրիկ ամաններ պաշարով: Հետաքրքիրն այս չէ անշուշտ, երբ ճանապարհորդում են, պէտք է որոշ յարմարութիւններ ունենան: Ինձ գրաւեց մի ուրիշ բան: Երեխաներն առանց խորութեան զարգարուած են ծաղիկներով. նրանք պսակներ ունին գլուխներին, փնջեր ձեռներին: Գրաւիչ տեսարան է, թռչունների պէս ճռուողով այս փոքրիկ ամբոխը գալիս է հեռուից ինչպէս ծաղկազարդ սարալանջի մի կտոր, որ թափ առած՝ խաղում է ճանապարհով:

Քիչ երկիր կայ, ուր այնքան առատ է ծաղիկը, որքան Շվէյցարիայում, և ուր ծաղկի պաշտամունքը, կուլտը կայ: Ես առիթ ունեցել եմ քեզ գրելու արդէն, որ չվէյցարական գիւղական տները ծառերի, ծաղիկների, խոտերի մէջ ծածկուած են: Տեսնելու բան է, թէ ինչպէս աշխատաւոր գիւղացին իր կոշտացած մատներով իր տան առաջ տնկում, ջրում, խնամում է զանազան ծաղիկներ, ինչպէս տան իւրաքանչիւր անդամը հասկանում է ընտելեան այդ սիրուն վարդերի արժէքը, ճաշակում է նրանց պատճառած հաճոյքը: Իմ տանտէրը գիտէ պարտիզի բոլոր ծաղիկների անունները, նա ինքն է դասաւորել նրանց զանազան գեղարուեստական ձևերով, ինքն է պահում

սերմերը՝ դարնանք նորից տնկելու համար և այդ բոլորը նա կատարում է նոյնքան խնամքով, նոյնքան հոգատարութեամբ, որքան իր գաշտային միւս աշխատանքները:

Իւրաքանչիւր ոք, որ գալիս է դաշտերից, սիրում է ծաղիկներով բեռնաւորուած տուն վերադառնալ, իսկ զբօսանքի գնացողների մեծագոյն զուարճութիւնն է փունջեր կազմել՝ սրբան-նրան ընծայելու համար: Ծաղիկների ընծան, դա մի գողտրբիկ սովորութիւն է այս երկրում: Քաղաքից քաղաք, դիւղից դիւղ ծաղիկփնջեր ուղարկելն ամենասովորական երեոյթ է այստեղ: Ճանապարհորդելիս յաճախ կարելի է տեսնել կանայք և մարդիկ գնացքի մէջ, որոնք ահաղին ծաղիկփունջ ունին ձեռներին, խնամքով պահում են թղթի մէջ՝ անշուշտ իրանց հեռաւոր բարեկամին տանելու համար: Մենք միայն մի ծաղկազարդի տուն ունինք, այստեղ դարնանք, ամրանք իւրաքանչիւր տօն օր մի-մի ծաղկազարդ է: Երջանիկ ժողովուրդ, դէպի ծաղիկն այս աստիճան սէր ունենալու համար անհրաժեշտ է հոգեկան որոշ անդորրութիւն, նիւթական ճնշող հոգեբերից ազատ հոգի, որ մենք երբէք չը տեսանք մեր արեւելքի սի երկրների տակ:

Ծաղիկներով են զարդարուած այս երկրում տները, ծաղիկներ ունին իրանց եղջիւրների վրայ մրցանակ ստացող զեղեցիկ եղներն ու կովերը. ապաքինուող թէ մեռնող հիւանդն իր անկողնի մէջ բարեկամներից ծաղիկներ է ստանում, նոր աշխարհ եկած երեխայի ծնունդը նոյնպէս ողջունում է ծաղիկներով: Իսկ սրանց գերեզմանատները, կարծեմ քեզ գրել եմ արդէն, որ մի-մի ծաղկանոցներ են. մեզանում իւրաքանչիւր շաբաթ երեկոյ կանայք գնում են գերեզմանատուն մի բուռն խունկ ծխելու թարմ հոգաթմբերի վրայ, այստեղ խունկի տեղը բռնել է ծաղիկը. երբ շաբաթ երեկոյ կամ կիւրակէ սգազգեստ կին տեսնես ծաղիկփնջեր կամ պսակ ձեռքին, ասել է թէ նա գերեզմանատուն է գնում: Եւ սփռում է ծաղիկները դամբարանի վրայ, նստում է փոքրիկ աթոռի վրայ, մի վայրկեան վերարտադրում յիշողութեան մէջ մեռած սիրելու պատկերը, ապրում է նրա հետ հոգեպէս և կրկին տուն վերադառնում:

Այս բոլորից յետոյ զարմանալի չէ, որ Շվէյցարիայում ծաղիկների բազմաթիւ տեսակներ են մշակուում: Շաբաթը մի քանի անգամ տօնավաճառներին (jour de marché) չրջակայ գիւղերից կանայք ահաղին քանակութեամբ՝ ծաղիկներ են տանում վաճառելու քաղաքներում: Եւ այդ կինը, որ կանգնել է հրապարակում իր ծաղիկներով չրջապատուած, սովորական գեղջիկուհի է, որ հասկացել է սակայն ծաղիկների լեզուն՝ նրանց

մշակութեանը նուիրելով իր կեանքը, սիրում է ծաղիկը և նրանով ապրումն նա ճանաչում է իւրաքանչիւր ծաղիկ, գիտէ նրանց անունները, առաւելութիւնները, մշակելու եղանակը, նրանք իր զաւակներն են. իւրաքանչիւր տանտիկին, որ հրապարակ է իջնում իր սաշարեղէնը գնելու, նա անպատճառ նաև մի փունջ կը տանի հետը տուն և ճաշին նրանով կը զարդարի սեղանը:

Որեւէ ժողովրդի ճաշակի նրբութիւնը, պահանջների բարձրութիւնը, բարքերի մեղմութիւնը որոշելու համար շատ չափեր կարելի է աչքի առաջ ունենալ, բայց իմ կարծիքով բունն սէրը դէպի բնութեան գեղեցկութիւնները, ծաղիկի կուլտը այդ չափերի մէջ վերջիններից չեն: Ինձ թւում է, սիրելիս, որ մարդու մէջ նստած հին դադանը թուլանում, ոչնչանում է, երբ նա քնքշաբար կուսնում է ծաղիկ վրայ, երբ յափշտակւում է նրա գեղեցկութեամբ, երբ նրա հաճոյքը նկատում է որպէս մի պահանջ, մի անհրաժեշտութիւն: Վայրենի քիւրդը, որ միշտ դրաւած ունի գեղեցիկ լեռները, բնութեան տեսարաններով հրճուել չը գիտէ, նա վերջալոյսը և վառ արշալոյսը, ինչպէս և ծաղիկի կուսական գրաւչութիւնը ըմբռնել, հասկանալ չի կարող: Ծաղիկների կուլտը, որպէս գեղեցիկ պաշտամունք՝ պէտք է որ զուգընթաց լինի քաղաքակրթութեանը:

Մեղանում էլ բնութիւնը սիրում են, բայց այդ սէրը իբրև հիմունք գեղեցկութիւնը չ'ունի, այլ օգուտը, չահը: Մայր հողը, մայր բնութիւնը սնուցիչ, կերակրող է, նրա հարուստ կուրծքը նոյնքան դրաւիչ է, որքան մանուկի համար իր մօր ստինքները: Բայց բնութեան մէջ գեղեցիկը վնասելու համար, ծաղկով, տեսարաններով յափշտակուելու համար անհրաժեշտ է որոշ դաստիարակութիւն, ճաշակի և բարքերի որոշ նրբութիւն, մեղմութիւն: Շվէյցարացի մանուկն ամենափոքր հասակից ստանում է այդ դաստիարակութիւնը. նա ծնւում է ծաղիկների մէջ, իր օրօրոցի շուրջը տեսնում է ծաղիկներ, սեղանի վրայ ծաղիկներ, դպրոցում նոյնը, իսկ լեռներն ու ձորերը ողջ ծաղկապատ են: Բնական պայմանները միացած դաստիարակութեանը, հողու մշակութեանը, ընտանիքում և դպրոցում պատրաստում է այն բարքերը, որոնց մասին խօսեցի վերևում: Բնութեան, ծաղիկին, գեղեցկութեան սիրահար այս ժողովուրդը բնական նողկանք է զգում դէպի ամեն ինչ, որ գալիս է վիրաւորելու մարդկային ազնիւ զգացմունքները, որ անասնական է, բիրդ է, բարբարոսական է:

Սէր դէպի ծագիկները և գուրգորանք, քնքշութիւն դէպի կենդանի արարածը, սրանք երկուսն էլ համարեա՝ միենոյն աղբիւրն ունին, ցոյց են տալիս ազնիւ դիւրազգացութիւն, խղճի մշակումն: Եւ երբէք չեմ կարող մոռանալ տանտիկնոջս աղջկայ երկու պատմութիւնը. մէկը մի կատուի, իսկ միւսը մի փոքրիկ զորտի պատմութիւն: Դա մի փոքրիկ, հիւանդ՝ կատուի ձագ էր, որ նա գտել էր փողոցում, փէշի մէջ բռնած տուն բերել: Երկար ժամանակ մօր քնքշութեամբ նրան կերակրել էր և խնամել: «Օ՛, նա երբէք չը մեծացաւ, պարհն, ասում էր նա, չը կաղգուրուեց, միշտ մնաց փոքրիկ, թոյլ ու քնքոյշ, այս պատճառով ես նրան աւելի էի սիրում»: Ապա նա մանրամասն կերպով պատմում էր ունկնդիրներին այդ խղճուկ արարածի զանազան սովորութիւնները, ինչ էր սիրում նա, ինչպէս էր քնում, ուր էր սիրում մնալ հայլն: «Եւ մի օր, վերջացնում էր նա, մեր անշնորք աղախինն անգիտակցաբար տաք ջուր թափեց վրան, և խեղճ անասունը մեռաւ»: Բաղմաթիւ անգամ էր նա կրկնել այդ պատմութիւնը և միշտ վերջացնելիս քիչ էր մնում լաց լինէր:

Իսկ իր փոքրիկ զորտն աւելի եղերական վախճան էր ունեցել: Նա նրան պահում էր փոքրիկ աւաղանի մէջ մի քանի ուրիշ ջրային կենդանիների հետ: «Նա այնպէս կանաչ, սիրուն էր, ասում էր նա, այնպէս լսւ լողում էր, յետոյ հիւանդացաւ, եւ շատ ուշ նկատեցի, որ միւս կենդանիներից, չը գիտեմ որը, նրա թաթերը կրծոտել էր, և նա մեռաւ»:

Ձմեռը, եբք ճնճուկներն ու այլ փոքրիկ թռչունները դժուարանում են պաշար դտնել, բնականապէս խմբերով մօտենում են բնակարաններին: Այն ժամանակ տեղ-տեղ՝ բացօդայ կարելի է տեսնել աղանձիների բների պէս տախտակեայ տնակներ, ուր զրուած է՝ «pour les oiseaux»—թռչունների համար: Անցորդները ձգում են այնտեղ պաշար փոքրիկ թռչունների համար:

Շվէյցարիայում եւ չեմ տեսնել կենդանիների տանջանք, վտիտ եզ կամ ձի, որ հալիւ կարողանար քաշել սայլը, կամ մի մարդ, որ մտրակի հարուածներով պատուէր անասունի մէջքը: Այսպիսի մի երևոյթ ընդհանուր զայրոյթ, բողոք առաջ կը բերէր: Անշուշտ դա այն պատճառով չէ, որ կենդանիներին հովանաւորող ընկերութիւններ կան, այլ որովհետեւ հասարակական և անհատական խիղճն է մշակուած: Մարդիկ մանկութիւնից են սովորում սիրել անասուններին, խնայել, խնամել նրանց: Կենդանիներն այստեղ զիւղերում պաշտպանուած են ոչ միայն ծիծից, այլև մոծակներից: Երբ շող է, և օդի մէջ կծող միջատներ

կան, չվէյցարացիին իր անասունները դաշտ չի հանի ցերեկով, այլ գիշեր ժամանակ, երբ զով է, և երբ մոծակներ չը կան իսկ նրանց գոմերը, նրանց մաքրութիւնը, բազմաթիւ այլ յարմարութիւնները դու գիտես արդէն իմ նախորդ նամակներէց:

Դու գիտես, թէ մեր երկրում մասնաւորապէս կառապաններն ինչպէս են վարւում իրանց ձիերի հետ: Քեզ կը զարմացնեմ երեի, եթէ ասեմ, որ չվէյցարական ձիուն մտրակ չի գիպչում երբէք: Ո՛չ մի գումարով, ո՛չ մի խնդրով կամ սպառնալիքով կարելի չէ չվէյցարացի կառապանին ստիպել, որ նա իր ձին աւելի արագ քշի, քան սովոր է: Մի որոշ ընթացք կայ, որ յատուկ է այս երկրի ձիերին, և որ փոխել տալ անկարելի է: Եթէ կառքը զառիվայրով է իջնում, կառապանն առանց տեղիցը չարժուելու՝ ձեռքի տակ եղած երկաթէ դաստակը կը դարձնի մի քանի անգամ, և ահա մի անիւր կը դադարի պտտելուց, կառքը կ'իջնի հանդարտ. իսկ եթէ բարձրանում է զանոթեր, կառապանը ցած է իջնում և քայլում ձիու կողքով: Առհասարակ ծանր բարձած սայլ քաշող անասուններին միշտ քշում են կողքից և ո՛չ թէ մեր երկրի պէս բազմում խեղճ անասունների պարանոցներին:

Ես կարող էի անթիւ նման օրինակներ բերել. բայց կարծեմ այսքանն էլ բաւական է ապացուցանելու համար, որ չվէյցարական ժողովուրդը վաղուց հասել է այն գիտակցութեան, թէ կենդանի արարածը, լինի նա բանական թէ անբան, արժանի է դժութեան, ուշադրութեան, խնամքի, սիրոյ: Զգայունութիւնը դէպի կենդանի արարածի ցաւը, դէպի նրա տառապանքը ամենալաւ ապացոյցն է մի ժողովրդի հասարակական խղճի զարգացման, նրա կուլտուրականութեան: Այնքան ժամանակ, որ մի ժողովուրդ կարող է անտարբեր աչքով տեսնել իր աչքի տակ կատարուող անգթութիւնները դէպի անասուններն ու մարդիկ, և նրա խիղճը չի ըմբոստանայ՝ տեսնելով թէ ինչպէս հարուածների տակ մէջքեր են կռանում, ցաւից անդօր արցունքներ են թափւում իր նմանների աչքերից, այդ ժողովուրդը չի կարող կուլտուրապէս հասունացած համարուել, թէկուզ ևւրոպական կեանքի բոլոր արեւափնները նրան ծանօթ լինին:

Բնութիւնը, սիրելիս, մարդու կրծքի տակ տեղաւորելով խիղճը՝ ստեղծել է այն զարմանալի շղթան, որ կապում է մարդկութիւնը, և հնար է տալիս զգալ մերձաւորի զգացածը: Միմիայն սպիտութիւնը, խաւար անդիտակցութիւնն է, որ հրնարաւոր է դարձնում գաղանութիւններ, անգթութիւններ դէպի մարդիկ և դէպի անասունները: Այս տեսակէտից ճշգրտ-

քակրթութեամբ մարդը» մի հասկացողութիւն է, որ Եւրոպայում և մասնաւորապէս Շվեյցարիայում ընտանի է, բոլորովին սովորական և որ մեր երկրում տարաբաղդաբար տակաւին խորթ է, անծանօթ: Իմ ճանապարհորդութեան ժամանակ զէպի մեր երկիրը ես գնալքի մէջ պատահեցի բժիշկներին, ինժեներներին, ուսանողներին և այլ այսպէս կոչուած՝ բարձրագոյն կրթութիւն ստացած մարդկանց, բայց և ոչ մի «Եւրոպացի» իրապէս քաղաքակրթութեամբ մարդ, ինչպէս այդ հասկացուած է այստեղ՝ Վրդովեցուցիչ դէպքեր, ամենատեսակ մանր ու մեծ անարդարութիւններ, համարեա յանցանքներ կատարուած էին նրանց աչքի առաջ՝ առանց զայրոյթ, բողոք առաջ բերելու: Ես ուսանող տեսայ, այո՛, իսկական ուսանող, որ տրաքուած էր իր համարը գետտի մէջ մի ապուշ, ողորմելի հպարտութեամբ, որ տարօրինակ էր գտնուի, թէ ինչո՞ւ իրանից դուրս մարդիկ են չարութեամբ աշխարհի երեսին, և այդ ուսանողը ցոյց տուեց, որ ինքը մի զուհի է, մի սղէտ, մի բիրդ արարած է: Նրանից երբեք եւրոպացի չի դուրս գայ, թէկուզ տասն համալսարան աւարտի:

Ես մի քահանայ տեսայ, մի ծեր, խեղճ քահանայ, որ ոչ մի կերպով չէր կարողանում զնաչքի մէջ իր տեղը գտնել, մնացել էր կանգնած, սրան նրան էր դիմում, և «չորերով միայն ևւրուպացիները» հոհուում, և հեգնում էին այդ ծերութիւնը: Ինչո՞ւ երկարացնեմ, դու գիտես, թէ մեր երկրի թուրքը երկաթուղով ճանապարհորդելիս որքան արկածներ է ունենում շնորհիւ իր խեղճութեան, իր տգիտութեան: Եւ կը գտնուի «կրթութեամբ» ճանապարհորդների մէջ զէթ մէկը, որ արդահատանը զգայ, օգնի, բացատրի. ընդհակառակը բոլորն էլ կը գտնեն նրա արկածները զուարճալի և լի թոքերով կը հոհան:

Եւ այս չէ բոլորը, ես էլ ինչե՛ր եմ տեսել:

Եւ ուրիշ կերպ չի էլ կարող լինել: Յիշիր մեր մանկութիւնը: Յիշիր, թէ ինչպէս պիւղերում սովորութիւն կայ «աւելորդ» կատուի ձագերը յանձնել երեսաներին, որ տանեն թաղեն, յիշիր, թէ որպիսի վրդովեցուցիչ, անլուր տանջանքներով այդ փոքրիկ արարածները, որոնք զեռ աչք էլ չեն բացել արեւ տեսնելու, թաղուում են կենդանի-կենդանի: Եւ ես ու դու քահանանք թաղել, Հապա թոշուների բնիք քանդելը: Յիշում ես X... ևնց բարդիների և կաղամախների վրայի աղուանների բնիքը, ամենից շատ աջտեղ էինք գնում, և թոշուների աղիւղորմ ճիշերը, և ձագերի ճաճոցը. կար մէկ հասակաւոր, որ բողոքէր, սաստէր: Մինը կարծեմ վախեցանք միայն այն ժամանակ, երբ մեզանից մէկը բարդիի կատարից վար դուրսեց՝ վարտիքի կէսն այնտեղ թողնելով և ընկաւ գետին ջախջախուած:

Հապառային ծեր քիւրդի աղջիկները միտդ են։ Պատերազմի ժամանակ էր, մենք երեւի կրօնասիրաբար հալածուած էինք քիւրդերին։ Ծերունին երկու փոքրիկ աղջիկների հետ հաց էր հաւաքում դռնէ-դռու ընկած, իսկ մենք խումբ կազմած՝ քարեր էինք չարտում նրանց զլխին։ Դժբաղդ ծերունին նախ աշխատում էր պաշտպանել երկու փոքրիկների մերկ մարմինները մեր քարերից, ապա ճարը կտրած ձեռքերը տարածեց և անիծեց մեզ։ Օ՛, այդ բարձրահասակ, վտիտ, տանջուած ծերունու յուսահատ ժեստը եւ երբէք չեմ մոռանայ։ յիշում եմ, որ եւս փախայ սարսափած, ինձ թւում էր, թէ երկնքից քար կ'ընկնէ իմ գլխին։

Ինչեւր են անում երեխաները մեր երկրի խենթերի հետ, աղքատների հետ։ Փողոցներում ընկած անտէր կատուները, չները, խենթերը, աղքատները, ահա մեր երկրի մանուկների զուարճութեան սովորական առարկաները։ Եւ ինչեւր են կատարում այդ մանուկների աչքի առաջ հասակաւորները։ Յիշում եւս հարսանիքի եղը. դա անգիր ժամանակներից մնացած մի բարբարոսութիւն է, որ այնպէս կենդանի պատկերացնում է մարդ-զաղանը։ Կանգնած է հսկայ եղը բալի մէջտեղում, չորս կողմում ջահիլ աղջիկներ ու տղամարդիկ պար են բռնում, իսկ այդ պարի կենտրոնում հաստավիղ, բիրդ մտադործը սրում է դանակը, մի քանի հոգի կապում են կենդանու ռսները, նա պաշտպանում, ձգձգում է կապերը, իզուր, քաշում են, նա ընկնում է։ Մօտենում են մի քանիսը, բռնում են անասունի գլուխը, և մտադործն իր ահագին դանակը նրա կոկորդն է կոխում պարող հանգիստականների առաջ։ Անասունի զարհուրելի խախտոցը, նրա յորդահոս արեան փչչոցը խառնում է դափ ու զուռնայի ձայնին, և մարդիկ ճիշտ ափրիկական վայրենիների պէս պարում, ցատկոտում են այս նողկալի տեսարանի շուրջը։ Եւ մանուկներն ուրախական աղաղակներով իրանց վեզերը ներկում են եզան արեան մէջ։

Բարբարոսներ...

Մենակ մենք չենք յայտէս, ամբողջ արեւելքն է այս արտասուելի սգիտութեան, այս դազանային անզխտակցութեան մէջ։ Բարբառաւորաբար կարելի է ասել՝ դեռ հայ ժողովուրդը լաւ պայմաններում, չատերից աւելի ընդունակ, աւելի հեշտութեամբ է ձեռք վերցնում այս նախնական բարբերից և շատ աւելի հակամիտ է դէպի իրական քաղաքակրթութիւնը։ Այնուամենայնիւ շատ, չափազանց շատ աշխատանք է հարկաւոր մեր երկիրը Եւրոպա դարձնելու համար այս բռնի իսկական մտքով, սերունդներ և քաղաքակրթական արագիցիւններ են պէտք։

Մեր ժողովուրդը դեռ չառ պիտի բարձրանայ, որպէսզի կարողանայ շվէյցարացու պէս ըմբռնել արարածներէ մեծ եղբայրութիւնը, որպէսզի մայր բնութեան մեծ գաղանիքը թափանցի, և հողին զգայուն դառնայ գէպի ամեն մի ցաւ, ամեն մի տառապանք, ուր և լինի նա: Իրական քաղաքակրթութիւնը՝ արդարութեան գերագոյն յաղթանակն է, իսկ այդ նուիրական յաղթանակը անկարելի է այնտեղ, ուր մարդը տակաւին գիտէ տոկալ ամենավրդովեցուցիչ, ամենաարտասուելի փաստերը առօրեայ կեանքում, ուր նա այնքան հասունացած չէ բարոյապէս, որ կարողանայ անկարելի դարձնել իր շուրջը թափուող անօգուտ արցունքները, իր ականջի տակ հնչուող անզօր հառաչանքները:

XI

Մի քանի անգամ դու ինձ հաբցրել ես, սիրելիս, թէ ինչու ես ոչինչ չեմ գրում շվէյցարական գիւղական դպրոցների մասին: Այդ հաստատութեան հետ մի փոքր աւելի մօտիկից ծանօթանալու համար էր, որ ես մինչև այժմ ուշացրի քեզ հետաքրքրող հարցի պատասխանը. ուրախ եմ, որ այդ յապաղումը օգտակար եղաւ, և ես այժմ կարող եմ գրել քեզ:

Իմ դրօսանքի ժամանակ մի անգամ դաշտում տեսայ մի չիկահեր երիտասարդ կին խոտ հնձելիս մի ահագին գերանդիով: Առողջ ու բարեձև կնոջ այդ աշխատանքը, նրա լիքը բազուկների լայն շարժումները իմ ուշադրութիւնը գրաւեցին: Աշխատանքը՝ մանաւանդ կանաչազարդ ու բուրախից դաշտերում միշտ դրաւիչ է, բայց երբ աշխատողը մի կին է, որ իր գեղեցիկ մարմնակազմի մէջ միացնում է ոյժի և կանացի քնքշութեան կոնտրաստը, տեսարանը դառնում է աւելի գեղեցիկ, աւելի ակնապարար: Այդպէս էր այն հնձող գեղջկուհին, որ իմ ուշադրութիւնը գրաւեց: Շվէյցարական դաշտերում կանայք տղամարդկանցից պակաս չեն աշխատում. բայց այս մէկը իր արտաքինի, իր շարժումների մէջ մի բան ունէր, որ յատուկ չէր ամենքին:

Նայեցի և անցայ:

Երկու օր յետոյ մեր տանտիկինը ծանօթացնում է ինձ մի ջահիլ կնոջ հետ:

— Եղբօրս ամուսինն է, պարոն, և մեր դպրոցի վարժուհին, ինչդեմ ծանօթանալ:

Հնձող կինն էր:

—Վարժուհին... շատ ուրախ եմ, ես ձեզ տեսայ անցեալ օրը...

—Այո, այո, պարոն, ես հնձում էի. արձակուրդի օրերը մենք այդպէս ենք անցկացնում. ժամանակը միշտ կարճ է, պատասխանեց նա ժպտալով:

«Ժամանակը կարճ է, պէտք է աշխատել», սա շվէյցարական դեմիդ կարող է համարուել: Դժուար թէ մի այլ երկրում աշխատանքը իր բոլոր արտայայտութիւնների մէջ այս աստիճան սրբագործուած լինի, որքան Շվէյցարիայում: Այս մտքով շատ հետաքրքիր դիտողութիւններ գուցէ կարողանում քեզ զբրել, բայց առայժմ այդ թողնենք: Վարժուհու վերաբերեալ այս փոքրիկ միջադէպը պատմեցի միայն, որպէսզի տեսնես, թէ մինչև որ աստիճան բարձրի գեղջուկ պարզութիւնը այս երկրում դիմացել է քաղաքակրթութեան հետ ընթացող որոշ համարեա անխուսափելի փոփոխութիւններին: Դու լաւ գիտես, սիրելիս, որ մեր գիւղերում եւրոպական գլխարկ ծածկող, ըզգեստներ հագնող մի ջահիլ աղջիկ, մանաւանդ եթէ հարուստ ծնողների զաւակ է, դժուարութեամբ կամ բնաւ յանձն չի առնի հնձուորների ճաշի կերակուրը ձեռքից կախել և դաշտ դուրս գալ: Հաւատացած եղիր, որ նրան ճնշողը իր գլխարկն է, իր շորերն են. խղճուկ արարածն իր տգիտութեան մէջ կարծում է, որ եւրոպական գլխարկը աշխատանքի թշնամի է և ներկայացնում է ամօթ յարուցանող անպատեհութիւն, երբ պէտք է սովորական դործը կատարել: Միշտ այսպէս է, երբ զգեստների քաղաքակրթութիւնն աւելի վաղ է զարկա, քան զլին և սրտի: Մեր երկրում գլխարկի քաղաքակրթութիւնը արդէն մանում է կարծեմ, զլինը չը դիտեմ երբ կը գայ:

Դառնանք դպրոցին:

Վարժուհուց յետոյ ես ծանօթացայ նաեւ ուսուցչի հետ: Monsieur Գայիօն, գիւղական ուսուցիչը, մի նիհար, բարձրահասակ, բարետես մարդ է, մօտ 35 տարեկան, նա սպրում է զըզրոցի վերին յարկում իր կնոջ հետ: Խեղճ արտաքինով մի կին, որ ինձ բաւական խելացի թւաց: Մարդ ու կին ինձ՝ օտարական այցելուիս ընդունեցին մի ուշադրութեամբ, որ բարեկամական լինելու բոլոր հանգամանքներն ունէր: Երեք սենեակ ունին. խոհանոց, որ միևնոյն ժամանակ սեղանատուն է, բնդուհարան, որ և պարապմունքի սենեակ է, և ննջարան: Ընդունարան մտնելու համար պէտք է անցնել խոհանոցից, շվէյցարական խոհանոց, ուր իշխում է կարգ ու մաքրութիւն. այդ մասին ես քեզ զբրել եմ:

Գայիօ ամուսինները երեխայ չ'ունին, նրանք որդեգրել են մի փոքրիկ աղջիկ, որին փայտալուծ, խնամում են ծաղկի պէս: Երեխան երջանիկ էր, ժպտուն, ուրախ, ծնողները խօսք չէին դանում իրանց գոհութիւնն ու ցնծութիւնն արտայայտելու: Այս տանը, այս բարեկիրթ ընտանիքի մէջ մի մեղմութիւն, մի պարզութիւն կայ, որ վարակիչ է, օտարականն անգամ իրան շատ լաւ է զգում Monsieur Gayot-ի մօտ:

—Մի բաժակ գինի, վօ կանտոնի լաւ գինի, առաջարկում է ինձ տանտէրը:

Համաձայն եմ:

Վօ կանտոնի գինին այստեղ հռչակուած է, բայց անշուշտ շատ վատ է կովկասեան գինիներին:

—Պարոնը հայ է, ասում է մօսիօ Գայիօն իր ամուսնուն, երբ մենք տեղ ենք բռնում սեղանի առաջ մի-մի բաժակ առաջներս:

Անմիջապէս սկսում է խօսակցութիւն malheureux (դժբաղդ) հայերի մասին: Գայիօ ամուսինները գիտեն ամեն ինչ, կարդացել են իրանց լրագրերը, չվէյցարական անկաշառ, մաքուր թերթերը: Գիտեն ամեն ինչ, բայց էլի հարցնում են, հարցնում են հազար ու մի բաներ, որից սոսկում են, անիծում են ժամանակը, եւրոպական պետութիւններին: Թիւրքեր, Աբգիւլ-Համիդ, ջարդեր, քրիստոնեաներ—սովորական նիւթ, սովորական խօսակցութիւն, որ աշխատում եմ կարճ կապել: Գուցէ զարմանում ես, սիրելիս, բայց ես սիրով կ'ուզէի, որ ոչ ոք այդ մասին ինձ հարց չը տար, այն աստիճան այդ անվերջ զթու-թիւնը դառնում է վիրաւորական ազգային զգայմունքի համար. malheureux բառը մեխի պէս ականջ է ծակում:

Զգուշութեամբ խօսքը դարձնում եմ չվէյցարական զբարոյին: Մօսիօ Գայիօն ուսուցիչ է, հետևապէս շատախօս, դա իր արհեստն է: Նա տալիս է ինձ ամենատեսակ տեղեկութիւններ: Յաճ էնք իջնում միասին. նա ցոյց է տալիս ինձ դպրոցը, նրա բաժանմունքները, նստարանների կաղմութիւնը, դասա-ղերքերը, տեսարանները, քարտէզները:

Այս բոլորը սակայն ես քեզ նկարագրելու ցանկութիւն չ'ունիմ, և դա օգուտ էլ չ'ունի: Տեղնուտեղը հաւաքածս տեղեկութիւնների հիման վրայ ես կ'աշխատեմ քեզ պատմել այն ընդհանուր սկզբունքները, որոնցով այստեղ առաջնորդւում է դպրոցը դէպի պետութիւնը, դէպի մարդկային խիղճը, դէպի անհատը՝ որպէս քաղաքացի և որպէս սոսկ մարդ: Այսպիսով քեզ համար էլ պարզ կը լինի այն՝ դերը, որ այս երկրում յատկացուած է դպրոցին, և հասկանալի կը դառնայ այն անօրի-

նակ քննչութիւնը, որ ամբողջ Շվէյցարիան տածում է դէպի մանկութիւնը, դէպի նրա դաստիարակութիւնը: Այս բոլորը, կարծում եմ, չատ աւելի նշանակութիւն ունի, քան նստարանների մանրամասն նկարագրութիւնը:

Շվէյցարիայում ինչպէս ամեն օրէնք, նոյնպէս և կրթական հաստատութիւններին վերաբերեալ օրէնքը հիմնուած է ապակենտրոնացման սիստեմի վրայ: Դաշնակցական Սահմանադրութիւնը ձգում է ընդհանուր հիմունքները, թողնելով իւրաքանչիւր կանտոնին կատարեալ ազատութիւն այդ անհրաժեշտ ու արդար հիմքի վրայ բարձրացնել իրանց ներքին վարչութեան շէնքը՝ համապատասխան տեղական աղագբնակութեան առանձնայատկութիւններին, բարքերին, ճաշակին: Դաշնակցական Սահմանադրութեան 27 յօդուածը, որ նուիրուած է այս երկրի տարրական կրթութեանը (instruction primaire), այսպէս է բնորոշում կանտոնների պարսքը և իրաւունքը այդ խնդրում:

«Կանտոնները պարտաւոր են հոգ տանել տարրական կրթութեան մասին, որը լինելու է բաւարար և դրուելու է բացառապէս քաղաքացիական իշխանութիւնների հրահովութեան ներքոյ: Տարրական կրթութիւնը պարտադիր է և հասարակական դպրոցներում ձրի:

Հասարակական դպրոցները դրուում են սյնալիսի պայմանների մէջ, որ բոլոր դաւանութիւններին պատկանող մանուկները յաճախել կարողանան, և որպէսզի նրանց խղճի և հաւատալիքների ազատութիւնը ոչ մի կերպ չը ճնշուի:

Դաշնակցութիւնը պէտք եղած միջոցները ձեռք կ'առնի այն կանտոնների դէմ, որոնք չեն կատարի այս պարտաւորութիւնները»:

Ահա այն ընդհանուր շրջանակը, որ դաշնակցութիւնը դրել է իւրաքանչիւր կանտոնի առաջ կրթական հարցում, և որից նրանք իրաւունք չ'ունին դուրս գալու: Այդ շրջանակի մէջ նրանք ազատ են կազմել ամենատեսակ ծրագրեր ու կանոններ իրանց դաւանների դաստիարակութեան համար: Եւ արդարև իւրաքանչիւր կանտոն այս ընդհանուր հիմունքների վրայ կազմել է իր առանձին կրթական կանոնադրութիւնն ու ծրագիրը: Այդ բոլոր ըստ երևոյթին ուրոյն կրթական օխտսիմները սակայն իրարից չ'ատ չեն տարբերուում, համարեա նոյնքան, որքան այս գեղեցիկ երկրի որեւէ մասի դիւթիչ Ալպերն ու կապուտակ լճերը մի այլ մասի լեռներից ու լճերից:

Ինչպէս տեսանք, Դաշնակցական Սահմանադրութիւնը ժողո-

վերջական կրթութեան օրէնքի մէջ առանձնապէս շեշտում է երեք խոշոր սկզբունքի վրայ. ա) ձրի և պարտադիր տարրական կրթութիւն, բ) խզճի կատարեալ ազատութիւն և գ) աշխարհական ողու գերիշխանութիւն: Ինքնըստինքեան այս երեք սկզբունքներն էլ թւում են հասկանալի և ճիշտ իրադրոճելի, բայց երբ մի փոքր աւելի մօտիկից ես նայում, խնդիրը երևում է չափ աւելի բարդ: «Պարտադիր կրթութիւն» — բայց ծնողի իրաւունքը կայ, նա աղքատ է, կարօտ, նրա պէտքը չէ, որ իր զաւակը ձրի կրթութիւն է ստանալու, նա կը նախադասէր մի աշխատող ձեռք ունենալ իր հետ տան ցաւը հոգալու, բայց նա «պարտաւոր է» իր որդուն դպրոց տալ: Ահա արդէն մի խոշոր գծաւարութիւն: «Խզճի հաւատալիքների կատարեալ ազատութիւն» — այս էլ դպրոցում իր բազմաթիւ գծաւարութիւններն ունի՝ ինկատի ունենալով հարցի ըջութիւնը և բազմաթիւ դաւանութիւնները: Շվէյցարիայում կողք-կողքի ապրում են կաթոլիկներ ու բողոքականներ. բայց վերջինը ունի իր բազմաթիւ բաժանումները. «ազգային եկեղեցի», «ազատ եկեղեցի», և ուրիշ շատերը, նորերը էլ լոյս է ընկած «իրկութեան բանակը»: Ահա այս ներքին, տեղական գծաւարութիւնները վերացնելը, ապահովելով Դաշնակցութեան Սահմանադրութեան զրաժ երեք խոշոր սկզբունքները, բնկնում է կանտոնների վրայ:

Թէ առանձին կանտոնները իրանց ներքին, տեղական պայմանները ինչպէս են հաշտեցնում Դաշնակցութեան զրաժ ընդհանուր սկզբունքների հետ, այդ ցոյց կը տայ օրինակ Վօ կանտոնի կրթական կանոնադրութիւնն ու ծրագիրը:

Կանոնային սահմանադրութիւնը համակերպուելով դաշնակցական սահմանադրութեան զժաժ հիմունքին՝ որոշում է.

«Պետութիւնը (կանտոնային) և համայնքը պարտաւոր են հասարակական կրթական հոստատութիւններին տալ այն կատարելութիւնը, որ անհրաժեշտ է տեղական պէտքերին և որ հնարաւոր է երկրի ունեցած միջոցներով»:

Կրթութիւնը պէտք է համապատասխան լինի ռամ-կայարական սկզբունքներին»:

Այնուհետեւ 18 յօդուածը բառաբառ կրկնում է դաշնակցական սահմանադրութեան խօսքերը՝ ձրի, պարտադիր կրթութեան և խզճի ազատութեան մասին՝ աւելացնելով հետեւեալը.

«Հասարակական դպրոցներում կրօնի ուսուցումը համապատասխան քրիստոնէական վարդապետութեան

սկզբունքներին աւանդուելու է անկախ միւս առարկաներից»:

Կանտոնային սահմանադրութիւնը կրօնի դասականութիւնը դուրս է թողնում պարտադիր առարկաների կարգից և դարձնում կամաւոր: Այսպիսով դպրոցը միանգամայն ազատ է մնում այս ու այն դասանութիւնների ներկայացուցիչների ազդեցութիւնից, և պատեւորները իրանց մանուկ հօտի կրօնական դաստիարակութիւնը լրացնում են դպրոցից դուրս, մասնաւոր տներում: Իսկ դպրոցներում աւանդուող l'histoire biblique-ը— «աստուածաշնչի պատմութիւնը», ինչպէս անուանուած է ծրագրերի մէջ, երեխաները ազատ են լսել կամ չը լսել: Դպրոցական կանոնադրութեան 14-դ յօդուածը որոշակի չեղտում է այդ հարցի վրայ:

«Իւրաքանչիւր դպրոցում աւանդուում է կրօնի ուսուցում, որ կամաւոր է և անկախ պարտադիր առարկաներից... այդ ուսմունքը այնպէս պիտի դրուած լինի, որ չը հետևող աշակերտների կրթութեան համար խափանաւորութիւն չհանգամանք չը հանդիսանայ»:

Հետաքրքիրն այն է, որ տարրական կրթութիւնը պարտադիր է ոչ միայն տեղացիների, այլև Շվեյցարիայում ապրող օտարականների համար: Մի օտարերկրացի, որ ընտանիքով թէկուզ մի տարի ապրում է այս երկրում և դպրոցական երեխաներ ունի, պարտաւոր է նրանց դպրոց ուղարկել: Այս խնդրի օրէնքը անշուշտ աչքի առաջ է ունեցել այն առաջնակարգ նշանակութիւն ունեցող հանգամանքը, որ իւրաքանչիւր երկրի կարգի, խաղաղութեան, յառաջադիմութեան տեսակէտից չատքիչ բան արժէ հասարակութեան միայն մի մասի ձեռք բերած կրթութիւնը, երբ նրա ծոցում մնում է թէկուզ մի հոգի անկիրթ, որը կարող է միշտ վտանգաւոր տարր հանդիսանալ ընդհանուր բարոյական շահերի դէմ: Դեռ Արիստոտելն իրաւացի կերպով ասել է, որ «մարդը հանրակենցաղ կենդանի է», կատարեալ մեկուսացումը նրան յատուկ չէ, կամայ թէ ակամայ նա ստիպուած է ապրել իր նմանների հետ, կազմել հասարակութիւններ, գիւղեր, քաղաքներ, աղքատ, ուր անհատները իրանց բարոյական և նիւթական անթիւ շահերով երեսառուերես են գալիս, ընդհարւում: Ընդհանուր առողջ դաստիարակութիւնը միայն կարող է հեղափոխել այդ յարաբերութիւնները, հնարաւորութիւն տալ, որ մարդիկ իրապէս հասկանան իրար:

Դու յիշում ես, իմ ընկեր, մեր ընդարձակ խաղողի այգին, որի վրայ խեղճ հայրս այնքան տարի աշխատել էր՝

արիւն, քրտինք թափելով: Որովհետեւ այդ այգին դտնւում էր գիւղից մի փոքր աւելի հեռու, քան միւսները, մեր գիւղի թուրքերը չարունակ կողոպտում էին գիշերները: Մի անգամ գողերի երկու խմբեր իրար հանդիպեցին, զարկուեցին, մէկն սպանուեց, միւսը վիրաւորուեց, և խեղճ ձերունի հայրս արցունքն աչքերին՝ պատւիրեց յաջորդ տարին քանդել այդ այգին, «որովհետեւ, ասում էր նա, մի օր էլ այդ անողորմները կը խփեն, որդիներին կը սպանեն»: Եւ այն գեղեցիկ այգին, այնքան աշխատանքի այնքան քրտինքը, պտուղը քանդուեց, ոչնչացաւ, որովհետեւ մեր հարեան թուրքերն այդպէս կամեցան: Ահա քեզ մի շատ փայլուն օրինակ, թէ մինչև որ աստիճան անհրաժեշտ է մի երկրի բարօրութեան համար, որ բոլոր ազգաբնակչութիւնը անխտիր կրթութիւն ստանայ, պարտադիր կրթութիւն, որպէսզի մէկի չինածը միւսը չը քանդի:

Իւրաքանչիւր համայնք (համայնքներն այստեղ խիստ փոքր են) պարտաւոր է ունենալ գոնէ մի հատ դպրոց, միմիայն այն դէպքում, երբ համայնքում դպրոցական երեխաների թիւը չի հասնում քսանի, կարելի է առանձին դպրոց չը պահել և միանալ հարեան համայնքի հետ: Դրա հակառակ որեւէ մեծ համայնքի մի հեռաւոր մասում, ձորերում ցրուած խրճիթներում եթէ կան քսան դպրոցական երեխաներ, պէտք է մի դըպրոց բանալ: Այդ չէ բոլորը, որեւէ համայնքի մէջ եթէ մի քանի ընտանիքներ, որոնք կարող են 5—7 տարեկան քսան երեխայ ներկայացնել, պահանջ դնեն, համայնական վարչութիւնը պարտաւոր է համայնական դպրոցից դուրս բանալ նաև մի մանկական դպրոց (école enfantine), կամ ինչպէս անգանում անուանում են՝ մանկական պարտէզ:

Այսպիսով ամբողջ Շվեյցարիան ծածկուել է դպրոցներիցանցով, և զրադիտութիւնն ու տարրական բաւարար կրթութիւնը թափանցել են ժողովրդի ամենահեռաւոր, ամենամութ խաւերում: Իմ աչքի առաջն է Վօ կանտոնի 1902—1903 թ. դպրոցական տեղեկագիրը. այս ուսումնական տարում աշակերտների թիւն է 41,547, իսկ ուսուցիչների և ուսուցչուհիների թիւը—1388 այս փոքրիկ կանտոնում, որ ընդամենը 200 հազարից քիչ անց բնակիչներ ունի: Մօտաւորապէս միևնույնն է նաև միւս կանտոններում:

Շվեյցարիայում վաղուց է, որ այլևս անդրադէտ մարդ ճարել չի կարելի. այդպիսի կացութիւնը դարձել է նոյնիսկ անհասկանալի: Լողանում երբ պանսիոնում խօսք էր բացւում՝ դրադիտութեան մասին, իմ պառաւ տանտիկինը սիրում էր պատմել, թէ ինքը իր ջահիլ ժամանակից յիշում էր մի պոստա-

յին ցրիչ իրանց գիւղում, որ անգրագէտ էր և ստիպուած էր ստացած սակաւաթիւ նամակները բաժանել ուրիշների օգնութեամբ: Այդ խեղճ պոստային ցրիչին նա քանի անգամ էր ներկարարել արդէն, բայց ամեն անգամ վերսկսում էր, հէնց որ մի նոր պանսիոներ էր յայտնուում, և նոր առիթ ներկայանում: Եւ այս անգրագէտ մարդուն նա ամեն անգամ նկարագրում էր այնպէս, ինչպէս կենդանաբանը կը նկարագրի որևէ կենդանական անցած ցեղ: Նորերս նա դարձեալ մի նոր գիւտ էր արել. մի երեկոյ յուղուած կերպով հաղորդեց իր պանսիոներներին, որ իրանց իտալացի լուսցարարուհին ոչ գրել գիտէ և ոչ կարդալ: Ես ժպտացի խեղճ չվէյցարուհու միամտութեան վրայ, որ կարծում է, թէ ամբողջ աշխարհը Շվէյցարիա է, էլ չը գիտէ, որ մեր երկրում 5—20 % գրագէտ թէ լինի, գոհ կը լինինք:

Իւրաքանչիւր երեխայ պարտաւոր է դպրոց յաճախել այն տարուայ ապրիլի 15-ից, երբ լրանում է նրա եօթ տարին, մինչև այն տարուայ ապրիլի 15-ը, երբ լրանում է նրա 16 տարին: Այս ժամանակի ընթացքում ծնողները իրաւունք չ'ունին որևէ պատրուակով երեխաներին տանը պահել՝ զրկելով ուսումից: Վերահսկող իշխանութիւնները, որոնց մասին կը խօսեմ յետոյ, այդ դէպքում ուշադիր են և խիստ:

Ծնողները իրաւունք ունին իրանց զաւակներին դպրոց ուղարկելու փոխարէն տանու դաստիարակութիւն տալ, բայց այդ դէպքում նրանք պարտաւոր են ներկայանալ տարեկան քննութիւններին և հաշիւ տալ իրանց սովորածի մասին: Հակառակ դէպքում ծնողները ենթարկուում են 5—10 ֆրանկ տուգանքի:

Դասերից բացակայող աշակերտների ցուցակը ամենայն օր պարբերաբար հաղորդւում է դպրոցական մասնաժողովին, որ բացատրութիւն է պահանջում ծնողներից. երբ պատճառը յարդելի չէ, յայտնում է պրեֆեկտին, որ ենթարկում է ծնողներին նախ 20, ապա 50 սանտիմ տուգանքի իւրաքանչիւր բացակայութեան համար: Միայն այն դէպքում, երբ ապացուցուի, որ բացակայութեան յանցանքը երեխաների վրայ է ընկնում, ծնողներն ազատւում են, և բացակայողն է պատժւում: Հետաքրքիր են աշակերտների համար նշանակուած պատիժները. ինչ ասել կ'ուզի, որ ծեծը իսպառ վերացուած է, և մի այդպիսի փաստ կարող է ամենածանր հետևանքներ ունենալ ուսուցչի համար: Ուսուցիչը կարող է վատ թւանշան դնել, յանդիմանել դասարանի առաջ կամ առանձին, չորս ժամուայ աւելորդ աշխատանք նշանակել, կամ կէս օրով դպրոցից արձակել՝ ծնողներին յայտնելով պատճառը: Ինչպէս տեսնում ես, սիրելիս, խեղճ

ուսուցիչը մեծ զէնք չ'ունի կուելու անկարգ, անհնազանդ աշակերտների զէմ, նրան մնում է միայն բարոյական ներշնչումը, համբերութիւնը, իր անձնական օրինակը։ Շվէյցարիայի ուսուցիչները բաղդից այստեղի մանուկները չատ հնազանդ են, մեղմ, անուշ բնավորութիւն ունին թէ՛ գիւղում և թէ՛ քաղաքում։ Անկարգ աշակերտներին դպրոցից արձակելու իրաւունքը վերապահուած է բացառապէս կրթական դեպարտամենտին, որ իւրաքանչիւր կանտոնի կրթական նախարարութիւնն է։ Բայց այդպիսի զէպը հազիւ տեղի ունենայ, որովհետև դպրոցական ստորին վարչութիւնները հազարումի բարոյական միջոցների կը դիմեն անհնազանդ երեխային փողոց չը ձգելու համար։

Եւ քեզ կարծեմ գրել եմ, որ դպրոցական չէնքերը իւրաքանչիւր դիւղում առաջին տեղն են բռնում իրանց մեծութեամբ, մաքրութեամբ, ճոխութեամբ։ Մի գիւղ մանեկիս, առանց հարցնելու հեռուից կարելի է հմանալ, թէ ո՞րն է դպրոցը, որովհետև նա իշխում է բոլոր միւս չէնքերի վրայ։ Այդ դեռ քիչ է. նրա շրջապատն էլ պէտք է պատշաճ լինի դպրոցի նպատակին. նրա մօտերքում չի կարելի տեսնել ո՛չ կաֆէ, ո՛չ գինեատուն, ո՛չ իջևան, որ կարող էին աշակերտների դաստիարակութեան վրայ վնասակար ազդեցութիւն ունենալ։ Դպրոցական չէնքը ազատ ժամերում կարելի է գործածել որևէ ուրիշ նպատակի, բայց միայն հանրօգուտ նպատակի, օրինակ՝ դասախօսութիւն, որևէ ընկերութեան նիստ, բայց ո՛չ մի պայմանով աշնտեղ չի թոյլ տրուի կազմակերպել խմիչքի վաճառանոց և պարեր։

Այս սոդերը գրելիս միտս եկաւ մեր անցեալ դպրոցական կեանքից երկու դէպք։ Չը դիտեմ դու էլ յիշում ես, թէ ո՛չ, մեր հոգաբարձուն առանց աւագ ուսուցչի համաձայնութիւնն առնելու դպրոցական դահլիճը տուել էր կասկածելի բարոյականի տէր մի խումբ թափառական պարոզների, որոնք դպրոցում պէտք է զանազան խայտառակ խաղեր սարքէին ամբոխի ամենաստոր ինստիտուցիաների համար։ Կանայք էլ կային։ Այդ երեկոն ես երբէք չեմ մոռանայ։ Դպրոցը աւերակ էր դարձել, նոտարանները տակն ու վրայ, ապակիները փշրուած։ Խեղճ աւագ ուսուցիչը եկաւ տեսաւ, մնաց շուարած։ Պատուիրեց անկող հիւրերին դուրս գնալ դպրոցից։ Հետեանքը յիշում ես ինչ եղաւ, քիչ մնաց՝ մարդը բանտ նստէր, էլ զատաստանական ու վարչական իշխանութիւն, էլ բողոք, էլ իրարանցում։ Այս բոլորի հեղինակ հոգաբարձուն էլ խօսի կրակ էր կտրել, նրա անձը նաստիւթիւնը վերաւորուած էր, իսկ ցերեկի վարիչներն էլ մասուժը իրաւացի կերպով իրանց նիւթական վնասն էին պահանջում խեղճ աւագ ուսուցչից։ Օրեր էին մեր գիւղական

ուսուցիչների, այդ ազնիւ, աշխատաւոր դասակարգի համար, որ տքնեց, տառապեց և անցաւ: Ձը պիտեմ՝ այժմ զգո՞ւմ են զո՞նէ, թէ որպիսի մշակներ էին նրանք մեր խաւար ժողովրդի կրթութեան լուսաւորութեան գործում:

Մի անգամ էլ հոգաբարձուներից մէկը, որ երեսփոխ էր միևնոյն ժամանակ, զատկի մատաղի եզը մորթելուց յետոյ ներս էր քաշել դպրոցը և բաժանել: Դասարանների յատակը պատած էր արիւնով, քանի օր պէտք եղաւ բերել, տաշել մաքրելու համար: Դարձեալ որքան անախորժութիւն ուսուցիչների համար:

Շվէյցարիայում իւրաքանչիւր համայնք մօտիկից հետեւում, հսկում է իր դպրոցի ընթացքին մի առանձին պաշտօնական մարմնի միջոցով, որ կոչւում է դպրոցական յանձնաժողով (Commission scolaire): Այդ յանձնաժողովի անդամները նշանակւում են համայնական վարչութեան կողմից չորս կամ աւելի տարով և պարտք ունին յաճախակի այցելել դպրոցները, և հսկել ուսուցիչների և աշակերտների ընթացքի վրայ: Այս յանձնաժողովից զուրս նաև համայնական վարչութիւնը ամբողջապէս կամ պատգամաւորներով պարտական է ներկայ լինել քննութիւններին, դպրոցական զանազան տօներին և առհասարակ հսկել դպրոցի ընթացքի վրայ: Այսպէս, իւրաքանչիւր համայնք, ինչպէս տեսնում ես, իր դպրոցի անմիջական տէրն է, և որը նրա համար իր բոլոր հաստատութիւններից ամենաթանկն է: Դպրոցը որեւէ գիւղում չի նկատւում որպէս ուրոյն հաստատութիւն, անկախ միջավայրից, որը կառավարում են ինչ՞որ հեռաւոր մարդիկ և որոնք երբեմն երբեմն փայլակի պէս յայտնւում են ու անցնում: Շվէյցարական գիւղը գիտէ, թէ դպրոցն ինչ է. նա նախանձուտ սիրով գրկել է իր մանուկ սերունդը պատրաստող այդ հիմնարկութիւնը, գուրգուրում, փայփայում է և բնաւ կարիք չ'ունի աւելորդ միջամտութեան, միշտ միասակար հեռաւոր խնամակալութեան, որ յաճախ արտայայտւում է կամ տարեկան մի այցելութիւնով կամ մի շարք անմիտ կարգադրութիւններով:

Ես դեռ չը վերջացրի. շվէյցարական գիւղական դպրոցի մասին դեռ էլի ասելիք ունիմ: Այն էլ յաջորդ նամակով:

Տ'գրութիւն!
Ընկերդ՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ

*
* *

Էն ամպի նման խուլ որոտումով,—
Սիրաս դարձավ լի՝ կռիւ գնացի.
Էն ամպի նման ժէռուտ սարերով,
Քուրիկ ջան, քեզնէն հեռու գնացի...

Էլ մի որոնիր քու աղիզ եարին
Կուէն յետ դարձող կտրիճների մէջ.
Ախ, մենակ փնտրիր իմ քաջ սևուկին
Անտէր խրխնջող՝ լուռ դաշտերի մէջ...

Էլ մի որոնիր քու աղիզ եարին
Իմ ընկերների ուրախ խնջոյքում,
Բանձրիկ սարերէն օռնացող քամին
Վերաս մի բուռ հող կը գցէ դաշտում...

Ու օտար մէրեր ինձի տես կու գան,
Սե հողիս վերայ արցունք կը թափեն.
Ա՛խ, օտար քուրեր ինձի տես կու գան,
Ու վերաս անուշ ծաղկունք կը թափեն...

Ա.Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ԳԻՄՆԱԶԻՍՏԻ ՕՐԱՏԵՏՐԻՑ ^{*)}

(Մուէր իր հայ ընկերներին)

Յուլիսի 30-ին.

Մանկութիւնից են հնչել իմ ականջին մեր ժողովրդի երգերը, եղանակները, ես սիրում եմ, անչափ սիրում նրանց, որովհետեւ նրանք կարող են շարժել իմ սրտի ամենանուիրական լարերը, նրանք ինձ պատկերացրնում են իմ մանկութիւնը, մայրենի իրականութիւնը իր ամբողջ մերկութեամբ... ժողովրդական երգի, եղանակի ամեն մի տխուր նստայի մէջ ես տեսնում եմ իմ դժբաղդ ազգի ամբողջ, տառապանքներով, լաց ու կսածով լի պատմութիւնը... Յիշում եմ, որպիսի յավիշտակութեամբ էի լսում մեր սազանդարներին, երբ նրանք անցեալ տարի մեզ մօտ էին եկել... ժամերով նստած նրանց կողքին՝ ասես ուղում էի նրանցից հայրենիքիս կարօտը առնել...

^{*)} Տես «Մուրճ» № 9.

Այժմ այստեղի հրաւերներումն եմ լսում մեր երգեցողութիւնը և երաժշտութիւնը, բայց ուր է օտարութեան մէջ ստացածս գեղեցիկ տպաւորութիւնը... Հարբած ամբոխի վրայ աշխատում են սաղանդարները աղգել բղաւկով և անտանելի բարձր ածելով: Ես նըրանց չեմ էլ մեղադրում, որ այդքան անհոգ են վերաբերում գեղարուեստին, կարելի է նրանցից պահանջել աւելին, երբ նրանց երգեցողութիւնը և երաժշտութիւնը զարգանում է հարբեցողութեան շրջանում: Մինչև անգամ երգեցողութիւնն էլ, երաժշտութիւնն էլ սերտ կապ ունեն գինու հետ. սակայն միթէ՞ մենք առհասարակ ամեն վեհ բաներով, ինչպէս և աղգով, չենք հետաքրքրւում գլխաւորապէս գինու բաժակը ձեռներիս, երբ ընդունակ չենք արդէն շատ և շատ բան հասկանալու և անելու...

Շուտով տուն ենք վերադառնալու, դնալու ենք էլի օտարութիւն: Բայց այդ օտարութիւնը այժմ, չը գիտեմ՝ ինչու, քաջում է ինձ գէպի ինքը. ես ուզում եմ շուտով հեռանալ, փախչել այստեղից... Տեղիս մըլմնսորտը չափազանց ճնշում է ինձ. 7—8 տարուայ իմ բացակայութիւնը կարծես մի խորը անդունդ է բացել իմ և հայրենակիցներիս մէջ, և ես այստեղ ինձ օտար մի մարդ եմ զգում: Ն. քաղաքը, ուր ես սովորում եմ այժմ, դառել է իմ երկրորդ հայրենիքը, այնքան եմ ընտելացել նրա կեանքին...

Յգտուի 26-ին, Ն. Բաղաթ.

Երեկ հասանք տեղս. երեկոյեան շտապեցի քաղաքային այգին, ուր կարող էի տեսնուել ընկերներիս և ծանօթներիս հետ և երեք ամսուայ բացակայութեանս կարօտը առնել նրանցից: Դեռ այգին չը հասած՝ պատահեց ընկերներիցս մէկին, որը ինձ հաղորդեց Ա.

ընկերոջս ինքնասպանութեան մասին... այդ ցնցող դէպ-
քը կատարուել է մի շաբաթ առաջ... Ով ցանկանար
ընկերներէս մէջ տեսնել լուրջ և հետաքրքիր անձնաւո-
րութիւններ, անշուշտ ամենից առաջ նրան պիտի գըտ-
նէր: Մի վերին աստիճանի ազնիւ և խելացի երիտա-
սարդ էր հանդուցեալը. միշտ համեստ, հեղ, միշտ քա-
ղաքավարի և ուշադիր դէպի իր ընկերները, նա երբէք
մէկին մի վիրաւորական խօսք անգամ չէր ասել: Եթէ
տանից դուրս էր գալիս, այդ էլ միայն՝ դպրոց գնալու
կամ խմբական ընթերցանութեան ներկայ լինելու հա-
մար, իսկ համարեաւ ամբողջ օրը տանը նստած կամ
կարդում էր կամ նկարում (հիանալի էր նկարում), կամ
եթէ գալիս էր ընկերներից մէկը, և նա ազատ էր, շախ-
մատ էր խաղում...

Գիրքը, վրձինը և չախմատը նրա միակ մտերիմ, ան-
բաժան ընկերներն էին, և նրանց սահմանափակ շրջանում
նա անց էր կացնում իր ոչ-ուրախ օրերը, նրանց հետ
էր բաժանում իր յոյզերը, իր մտքերը, զգացմունքները.
նրանք էին ընդունակ որոշ չափով բաւարարութիւն տալու
նրա հարուստ հոգեկան պահանջներին:

Շրջապատող կեանքը, մանաւանդ ընտանիքը, յետոյ
և դպրոցը մանկութիւնից այնքան էին ճնշել նրա ներ-
քին կեանքի ամեն տեսակ արտայայտութիւնները, որ
վերջիվերջոյ նրանից ստեղծուել էր մի բնաւորութիւն,
որ կծկուել էր իր մէջ, ապրում էր իր ներքին աշխար-
հում, աշխատելով ծածկել նրան շրջապատողների ձանձը-
րացուցիչ հայացքներից... Նա այն մարդկանցից մէկն էր,
որոնց ճակատին բնութիւնը ծննդեան օրից ասես դրոշ-
մել է «մենակ և որք» դաժան անունները...

Ինքնավերլուծող, ինքնամտրակող այդօրինակ մե-
նակ կեանքը բնաւորութեամբ և ձգտումներով միան-
գամայն օտար մարդկանց շրջանում՝ անշուշտ չէր կա-
րող երկար պահպանել իր գոյութիւնը, եթէ նա չէր
գտնի որեւէ յենակէտ կամ արտաքին կամ ներքին աշ-
խարհում... Բայց նա կորցրել էր իր հաւասը թէ դէպի

մարդիկ, թէ դէպի իր սեփական ոյժերը... Ո՞վ կարող էր պահպանել խեղճին, լինել նրա յենակէտը, փրկութիւնը, եթէ ոչ սիրող սիրտը, որը իր ջերմութեամբ կը տաքացնէր նրան և կը վերագարձնէր նրան հաւատ դէպի կեանքը...

Խնչպէս դժբաղդ չ'անուանել մի միջավայր, որ հընարաւորութիւն չի տալիս ծլելու, ծաղկելու բնութիւնից այսպիսի հարուստ ընդունակութիւններով օժտուած իր զաւակներին, որոնց համար հէնց ինքը անդիտակցօրէն դահճի դեր է խաղում...

Սեպտեմբերի 3-ին.

Այսօր սկսուեցին մեր կանոնաւոր պարապմունքները գիմնադիպում: Հայրենիքում ստացած բազմաթիւ տպաւորութիւնները, ամառուայ ազատութիւնս, սիրելի ընկերօջա ինքնասպանութիւնը, միակ յարգելի ուսուցչիս հեռանալը մեր գիմնադիպից՝ այնքան են ազդել ինձ վրայ և կաշկանդել ուշքս ու միտքս, որ թւում է, թէ չը պէտք է կարողանամ այլևս ընտելանալ դպրոցական կեանքին... Ոչ մի ուսումնական տարուայ սկիզբ այնքան դժգոհութիւն, այնքան յուզմունք չէ առաջացրել իմ մէջ, որքան ներկայ տարին. գիմնադիւան կարծես դառել է ինձ համար մի խորթ հիմնարկութիւն, նոյնիսկ մի բանտ... Իմ այս հոգեկան անմխիթար դրութեան մէջ մի միտք է միայն ինձ սփոփում, ոյժ տալիս, դա իննը ամսից յետոյ աւարտելու և դպրոցից ազատուելու քաղցր միտքն է...

Առաջին դասն է, պատմութեան դասը. ուսուցիչը կէս ժամ աշակերտների անուններն է կարդում... մընացած ժամանակն էլ թելադրում է մեզ կարգալու անհրաժեշտ գրքերի վերնագրերը... Ամեն տարի նոյնը և նոյնը. տարուայ սկիզբը ուսուցիչը 30—40 գրքի ա-

նուն է տալիս, իսկ աշակերտը... հազիւհազ մի երեք գիրք է կարդում... Կէս ժամ գրում էինք կարդացուելիք գրքերի ցուցակը, բայց երբ կարդայ այդ բոլորը խեղճ աշակերտը, Տէր Աստուած, չէ որ կը դայ ուսաց լեզուի ուսուցիչը և հինգ անգամ աւելի մեծ ցուցակով կը ծանրաբեռնէ աշակերտին... ոչ ոք կարծես չի ուզում հասկանալ, որ պէտք է աշակերտին մի քիչ էլ ազատ ժամանակ տալ իր ուզած գրքերը կարդալու, իր սիրած զբաղմունքով պարապելու համար... աշակերտը հօ մեքենայ չէ, որին կարելի լինէր ստիպել անպատճառ ծամել ցոյց տուած գրքերը, անթիւ և անհամար ձանձրալի գրքերը...

Յունարէն լեզուի դասն է։ Այդ առարկայի ուսուցիչն ինքը չը հետաքրքրուելով իր առարկայով մեզ ևս վարակում է իր այդ ձևական վերաբերմունքով։

Աշակերտներից մէկը ուսուցչի խնդիրքով բարձրաձայն կարդում է Սոփոկլէսի «Անտիգոնայի» թարգմանութեան առաջաբանը։

Լսել ուղղակի անհնարին է. դասարանում տիրում է բաբելոնեան խառնակութիւն, մի անտանելի աղմուկ, որից միայն գլուխ է ցաւում, և ամբողջ օրը աշակերտը իրան զգում է քնից նոր զարթնածի նման... Սկզբում լարում եմ ուշադրութիւնս, ուզում եմ լսել, բայց իզուր... Սկսում եմ ականայից դիտել դասարանը, ուսուցչին, որ դիտելու այնքան բան ունի, ընկերներին... Դասարանը թէև նոր է, բայց նոյն չորս պատերը, նոյն դրատախտակը, նոյն կափեգրան. նայում եմ ուսուցչիս... Ինչ-որ գործով է զբաղուած, եղունգներն է մաքրում և երբեմն-երբեմն այնպիսի հայեացքներ գցում մեզ վրայ, որ մեզ իսկոյն պատկերացնում է նրա անքուն անցկացրած գիշերը... Սակայն շատ շուտ է բեղարեցնում ինձ իմ ուսուցչի ուռած գէմքը, և ես ականայ դիմում եմ ընկերներին...

Նրանցից մէկը, իմ դրացին, ինչ-որ պատկերազարդ հանդէս է բերել և թերթում է. միւսը ինչ-որ ուրիշ

գերք է կարգում. երրորդը գրեչը ձեռին, չը գիտեմ, գրո՞ւմ է, թէ՞ նկարում, և եթէ նկարում է, անողատճառ մեր ուսուցչի գեղեցիկ արտաքինն է անմահացնում, աշխատելով կոմիկական պողաների մէջ դնել խեղճին. չորրորդը քթի տակ ինչ-որ բոմանս է երգում. հինգերորդը չորս բոլորն է նայում և մի առանձին ակնորժակով յօրանջում. վեցերորդը նայելով ուսուցչի վրայ՝ ծիծաղում է. վերջապէս, երկու հոգի էլ նստած անկիւնում՝ «крестики» են խաղում... Եւ երբ մտածում եմ, որ էլի մի ամբողջ տարի ամեն օր պէտք է անցկացնեմ այսպիսի ձանձրալի դասեր, հազար երանի եմ տալիս Բ.-ի կուսական անտառներում մեր անցկացրած ժամերին, այնտեղ այնքան բան կար սովորելու, այնքան լաւ էինք զգում մեզ...

Վերադառնում եմ տուն դասերից յետոյ այնքան յոգնած, այնքան ջարդուած, կարծես երկու ամիս ոտքով ճանապարհորդած լինեմ վայրենի տեղերում...

Գիմնազիայի 5-6 տաղտկալի ժամերից յետոյ մի քիչ հանդիսա եմ գտնում միմիայն ընթերցանութեան միջոցին:

Հոկտեմբերի 15-ին.

Էլի մի զոհ. երեկ գիշեր բորակական թթուութեամբ ինքնասպանութիւն գործեց եօթերորդ դասարանի մի գիմնազիստ, իսկ երկու շաբաթ առաջ—մի այլ գիմնաստ, որին սակայն կարողացան ազատել ժամանակին...

Ասում են՝ գիմնազիստը վարակուած է եղել վնասարական ակտով, և այդ հիւանդութեան սոսկալի հետեանքների խորը գիտակցութիւնը, ինքնասիրութիւնը, պատւասիրութիւնը այնքան են տանջել խեղճին, որ նա վճռել է վերջովերջոյ կտրել իր մատաղ կեանքի թելը...

Դպրոցում այսօր նկատուում էր մի անսովոր շարժում, տպաւորութիւնների և կարծիքների մի եռանդուն փոխանակութիւն աշակերտների և ուսուցիչների մէջ։ Այս ախուր երևոյթի սլաոճաւ ուսուցիչներից շատերը արամաւիր էին փնտրել հոգեկան հիւանդութեան կամ պետեմիստական գրքերի բացասական ազդեցութեան մէջ. իրրև հիմք իրանց կարծիքի՝ նրանք ի միջի այլոց բերում էին և այն, որ գիմնադիստի սենեակում տեսուչը գտել է այդ ուղղութեամբ մի երկու գիրք։

Բայց միթէ՞ այդ ճիշտ է, միթէ՞ շրջապատող իրականութիւնը, կեանքը չէ, որ իր յոռի կողմերով, իր անիծեալ հարցերով յուսահատութեան է հասցնում պատանի-երիտասարդին, միթէ՞ չոր ու ցամաք գրքերը կարող են այն գործը կատարել, ինչ անում է կեանքը, եսածով, նիւթապաշտ, ոչինչ սրբութիւն չը ճանաչող և մարդկային անհատական ազատութիւնը ճնշող շրջավայրը...

Եթէ շրջանի, ընտանեկան և դպրոցական դաստիարակութեան մէջ չէ իսկական լուրջ սլաոճաւ, ապա ինչո՞ւ մեր մէջ այնքան տարածուած է թղթախաղը, անառակութիւնը, հարբեցողութիւնը և շատ ու շատ ուրիշ ախտեր։ Անցեալ տարի չէր, որ հարբած ընկերներս դբօսանքի ժամանակ հայհոյեցին ամենաընտիր յիշոցներով մեր ուսուցիչներից մի քանիսին. միթէ՞ շատ ժամանակ է անցել այն օրից, երբ մի մեծ խումբ գիմնադիստներ բռնուեցին, որոնք հարբեցողութեան և անառակութեան համար ունէին որոշ կաղմակերպութիւն և հաւաքատեղի... Ո՞ր մէկը ասեմ, որ մէկը խոստովանեմ...

Իսկ այն խեղճ գիմնադիստները, որոնք գժբաղգութիւն ունեն գարշելու այդ բոլորից և որոնք համարձակութիւն ունեն գնալ ընդհանուր հոսանքի դէմ և ինքնուրոյն կեանք վարել այդ խեղդող ախտերի և ապականութեան մէջ, նրանք դատապարպում են իրանց մի

այնպիսի դրութեան, ուր արդէն սոսկալի մենակութիւնըն է իր սուր ճանկերը և իր ամբողջ ծանրութիւնը գցում այդ մատաղ ոյժերի վրայ...

Հոկտեմբերի 18-ին.

Վաղ առաւօտ վեր եմ կենում տեղիցս, իսկոյն բընադգօրէն երկնքին եմ նայում. երկինքը, թէև ոչ բոլորովին պարզ է, սակայն եղանակը ընդհանրապէս լաւ լինելու յոյսեր է տալիս: Երեկուանից յայտնել են, որ այսօր աշակերտական զբօսանք է: Երկնքում թափառող փոքրիկ ամպերն էլ այսօր ինձ անհանգստութիւն են պատճառում: «Յանկարծ եղանակը վատացաւ և անձրև եկաւ, մտածում եմ ես, ի՞նչ անեմ, դասերս էլ չեմ սովորել՝ ամբողջ յոյսս դնելով այս անիրաւ եղանակի վրայ»... Սակայն իմ բազդին երկինքը բոլորովին պարզում է, և ես շտապում եմ դպրոց: Դպրոցում տիրում է մի անսովոր շարժում, աշխոյժ, գոռում-գոչիւն... Բոլորս էլ ուրախ ենք, այսօր ազատ ենք միաւորի և երկուսի ճընշումից, ազատ ենք գիմնազիական թմրեցնող և տաղաւկալի ժամերից—դասերից: Բոլորս էլ անհամբեր և սրբտառորով սպասում ենք ըոպէին, երբ վերջապէս կը թողնենք դպրոցի ձանձրալի շինութեան ձանձրալի պատերը...

Սպասողական այս ախորժելի դրութեան մէջ մի դառն միտք է միայն, որ չի ուզում հեռանալ գլխիցս, ես կ'ուզէի, որ այս բոլոր պատրաստութիւնները միայն մի օրուայ համար չը լինէին, որ վաղը ստիպուած չը լինէի նորից վերադառնալ նոյն տօթ մթնոլորտի մէջ, որպէսզի աւելի ուժեղ կերպով զգամ վերջինիս դառնութիւնը...

Բայց ահա դուրս ենք գալիս գիմնազիայից, շտապ-շտապ քայլերով անցնում փողոցները, ահա արդէն դե-

տի ափին ենք. ահա նստեցինք մակոյկների վրայ, միւս ափը պիտի անցնենք: Ընկերներիս ուրախ և մեղամաղձոտ երգերը, մակոյկների հեռանալը ափից ասես ինձ հեռացնում են մնայլ իրականութիւնից, տանում յիշողութիւնների և անսանձ երեակայութեան քաղցր և դիւթիչ աշխարհը... Մտաբերում եմ ծովը, նրա վրայ անցկայրած հրաշալի գիշերները և այն բոլորը, ինչ կապուած է այդ ծովի և այդ լուսնկայ գիշերների հետ... Իլլիւզիան երկար չի տևում, մենք միւս ափումն ենք. անցնում ենք արդէն ծառերի, թփերի միջով, երգելով, ուրախ-ուրախ խօսելով գնում ենք, ուր տանում են. վերջապէս յոգնեցինք և կանգ առանք մի տեղ, ուր պէտք է անցկացնենք մի քանի ժամ. մեզ հրամայում են չը հեռանալ նշանակած տեղից: Դժգոհութեան ըզգացմունքը մի րոպէ տիրում է. «Տէր Աստուած, այստեղ էլ, բնութեան գրկում», ասում եմ ինքս ինձ, «կապում-կաշկանդում են մեր կամքը. դիտեմ. վախում են, որ էլի կը խմենք, էլի մի չարութիւն, սկանդալ կ'անենք... Այժմ մեզ չեն թողնում անցկացնել գոնէ մի երկու ժամ այնտեղ, ուր մենք ենք ուզում, այնպէս, ինչպէս մեր սիրան է ուզում:—ահա ինչով են մեզ պատժում»...

Հոկտեմբերի 21-ին.

Նոր վերջացրի Դոստոեւսկու «Խեղճ Մարգիկը», որի մէջ ես գտայ նոյն տարրերը, որոնք այնքան ուշագրւաւ, այնքան գեղեցիկ են դարձնում այս հեղինակի բոլոր գրուածքները: Դործող անձինք՝ իրանց թշուառութեամբ, հիւանդութեան հասցրած «տպաւորութեամբ», նրանց մտքերի և զգացմունքների նուրբ և ճշգրիտ հոգեբանական վերլուծումը, — ահա ինչն է ինձ սիրելի դարձնում Դոստոեւսկուն...

Մի խեղճ չինովնիկի, գրագրի միակ մխիթարում թիւնն է նրա որք ազգականութիւն, որին նա աշխատում է օգնել ամեն կերպ, զրկելով իրան իր ամենակարեւոր անգամ պէտքերից. չը նայելով իր աղքատութեան, նա իր վերջին կոպէկները տալիս է թշուառութեան ամենավերջին աստիճանին հասած Գորշկով ընտանիքին...

Այս բոլորը նա անում է առանց որևէ ակնկալութեան. նա չի անում գրգռած զազափարից կամ փառասիրութիւնից, այլ նա կատարում է իր կարեկից սրբոյի բնական և անկեղծ պահանջը. իսկ չը կարեկցել, չը սիրել նա չի կարող, որովհետեւ նրա սեփական չարքաշ կեանքը, նրա անձնական դժբաղդութիւնը տուել են նրան ուրիշի ցաւը հասկանալու անգնահատելի դանձր...

Իսկ ինչ վերաբերում է այդ խեղճի սեփական անել վիճակին, նա այնքան է ընտելացել նրան, որ մեղք է համարում նոյնիսկ երազել ուրիշ, աւելի բարւոք դրութեան մասին:

Խեղճ է այդ մարդը, շատ խեղճ՝ թէ նիւթականի, թէ կրթութեան վերաբերմամբ. բայց շատ հարուստ է նա իր լայն, քրիստոնէական սրտով, խղճով, որ ընդունակ է ներել նոյնիսկ իր սեփական հարստահարիչներին, կեղեքիչներին...

Մեղ, գիմնաղիստներին, մեր փոքր հասակից ծանր-բարեւում են զանազան գիտելիքներով, որոնց շնորհիւ ապագայում մենք պիտի կարողանանք ստեղծել մեր նիւթական ապահովութիւնը. արդեօք աշխատում են զարթեցնել, զարդացնել մեր մէջ այնքան, որքան հնարաւոր է այդ և անհրաժեշտ կեանքի համար, այդ սիրող և կարեկից սիրտը...

Նոյեմբերի 21-ին.

Վերջին օրերս ես ապրում էի Դոստոևսկու „Идиотъ“ գրքով. նրան էի նուիրել իմ ամբողջ ուշքը և միտքը... Վերջացրի նոր, և սրտումս մնաց մի դառնութիւն, որ վերջացրի և զրկուեցի ստացածս հոգեկան բաւականութիւնից, մխիթարութիւնից... Բայց ես չեմ ուզում թողնել այդ գիրքը, բաժանուել նրանից, մինչև որ մի անգամ ևս մտքիցս չանցկացնեմ նրան, որպէս զի երկարացնեմ գոնէ մի երկու ժամով այն ակսորժելի յուզմունքը, որ ինձ պատճառեց այս գեղեցիկ վէպը...

Չափազանց ջղայնօտ, հիւանդութեան հասցրած ջղաշին մի իշխան է վէպի հերոսը: Բնութիւնից արդէն ունեւորով թոյլ կալմուածք, մանուկ հասակում զրկուելով իր ծնողներից, նա բնկնում է հարուստ ազգականի և նրա երկու քոյրերի ձեռքը, որոնց օրինակելի դաստիարակութեան շնորհիւ խեղճ իշխանը ստանում է ներվերի սաստիկ քայքայում, որից մինչև խելագարութիւնը մի փոքրիկ քայլ է... Նրան ուղարկում են արտասահման մի յայտնի բժշկի մօտ: Շվէյցարական առողջ օդը, հրաշալի բնութիւնը, բժշկի խնամքը և խաղաղ գիւղական կեանքը իշխանին բոլորովին առողջացնում են... Շվէյցարական մի գիւղում ամբողջ վեց տարի է նա անցկացնում և վերջապէս ճանապարհւում գէպի հայրենիք...

Հասնելով Պետերբուրգ, նա իսկոյն և ուղղակի գնում է իր միակ ազգականուհու մօտ, որը այժմ գեներալի կին է և շատ հարուստ... Իր բոլորովին հասարակ հագուստով, տարօրինակ շարժումներով, չը տեսնուած անկեղծութեամբ և պարզութեամբ իշխանը գեներալի դռնապանի դիմում կասկած է զարթեցնում: «Եթէ սա իրօք իշխան է և տիրուհուս ազգականը նոյն իսկ, ապա ինչո՞ւ նա սարգ և հասարակ մարդ է երևում, ինչո՞ւ իր, դռնապանի հետ, անկեղծ լեզուով է խօսում, մի խօսքով անգամ չը յիշեցնելով, որ նա իշխան է և այլն», մտածում է դռնապանը...

Իր վերին աստիճանի հեղ, համեստ բնաւորութեամբ, պարզութեամբ, երեխային յատուկ մաքրութեամբ և նախութեամբ, իր կարեկից սրտով և «տպաւորութեամբ» իշխանը հէնց առաջի անգամից գրաւեց իմ համակրութիւնը. նա երեխայի նման անկեղծ է, զուրկ նախապաշարմունքներից, քաղաքավարութեան և վայելչութեան կեղծ կանոններից, ճշմարտախօս և մեծահոգի... ճիշտ է՝ նա աւելի զգացմունքի, քան սառն դատողութեան և անալիզի մարդ է, սակայն նա իր մտաւոր-բարոյական ամբողջ էութեամբ շատ և շատ բարձր է այն չրջանից, որի մէջ դժբաղդաբար ընկնում է նա... Նա չի հասկանում և չի էլ կարող հասկանալ ամբօխի նիւթապաշտ տրամաբանութիւնը և հոգեբանութիւնը, նա չ'ունի ամբօխի ընտրեալներին յատուկ փառասիրութիւնը և գոռողութիւնը, ուստի և տարօրինակ, ցնորուած մարդու, «խղիւտի»-ի տպաւորութիւնն է գործում ամբօխի վրայ։ Միթէնոյնպէս չի հասկանում այդ նոյն անբօխը Գրիբոեդովի անմահ Չացկուն... Սակայն այդ իշխանները, այդ Չացկիները մի-մի փրկիչներ են հէնց այդ ամբօխի մէջ, նրա խեղդող մթնոլորտում տառապող այն դժբաղդ արարածների համար, որոնք զգում են մի անյաղթելի պահանջ փախչել այդ մթնոլորտից, գերմարդկային ճիգ ու ջանք են թափում մի կերպ դուրս գալ իրանց անտանելի վիճակից... Բայց ով ընկնում է այդ ամբօխի ճանկերի մէջ, ոչ միայն ուրիշների, այլ և իր համար փրկիչ դեր անգամ անկարող է այլևս կատարել. երջանիկ կարող է իրան համարել նա, ով իրան անմիաս դուրս կը հանի այդ ամբօխի միջից...

Երկու գեղեցիկ կանայք, որոնք իրանց ստորացնող դրութեան գիտակցութիւնը ունենալու դժբաղդութիւնն ունեն, սիրահարւում են հէնց առաջի տեսնելուց իշխանի վրայ և նրա մէջ փնտրում իրանց երջանկութիւնը և փրկութիւնը...

Մի դժբաղդ, չրջապատողների անասնական կրքերին

զոհ դառած կին փրկելու համար իշխանը համաձայնուում է պսակուել նաստասիայի հետ:

Թողնելով իր մտադրութիւնը պսակուել Ագլայայի հետ, նա երբէք չի ուզում դժբաղդացնել սրան. նա աշխատում է տեսնուել Ագլայայի հետ, պատմել նրան ամեն ինչ, բանալ իր սիրտը նրա առաջ, բացատրել այն կարեկցանքը, որ նա զգում է դէպի մի թշուառացած անառակ կին, որին նա դեռ ազնիւ է համարում և դեռ հնարաւոր է դռնուում փրկել վերջնական անկումից՝ նրա հետ պսակուելով...

Սակայն նաստասիան, որը խանգարեց իշխանի և Ագլայայի պսակը և արդէն պսակուում է իշխանի հետ, հարսանիքի ժամանակ փախաւ մի ուրիշի հետ... Ի՞նչն է ստիպում նաստասիային անել այդ տարօրինակ և դժուար հասկանալի քայլը, չէ՞ որ նա սիրում էր իշխանին... Անձնասէր և կանանց մէջ շատ հազադիւր սէրն է դրա պատճառը և շարժառիթը: Նաստասիան համոզուած է, որ ինքը արդէն անընդունակ է իր սիրած մարդու երջանկութիւնը կազմել, նա հասկանում է, որ միայն Ագլայան կարող է տալ այդ երջանկութիւնը: Նա վաղուց արդէն վճռել էր զիջել իշխանին Ագլայային, որը նոյնքան կարօտ էր իշխանի սիրուն, և հէնց դրա համար էլ կանչել էր իր մօտը երկուսին էլ, բայց իր նշանակած տեսակցութեան ժամանակ նա չը կարողացաւ զսպել իրան, չը կարողացաւ ծածկել իր սէրը դէպի իշխանը, և մի չնչին անզգուշութիւն քանդեց նրա ամբողջ ծրագիրը... Իսկ փախչելով ուրիշ մարդու հետ՝ նա վերջին անգամ փորձում էր՝ զոհելով իր երջանկութիւնը՝ ստեղծել իր սիրած մարդու երջանկութիւնը... Այն մարդը, որի հետ նաստասիան փախաւ, հասկացաւ ամեն ինչ և սպանեց նաստասիային, որի մահը չը կարողացաւ տանել իշխանը, և խեղաքարուեց անյոյս կերպով... Ագլայան մի ուրիշ դազանի զոհ դառաւ...

Իշխանի պէս ազնիւ, մաքուր, անկեղծ, անմեղ,

ճշմարտախօս, լաւատես իդէալիստների համար չէ իրականութիւնը: Ով ընդունակ է յարմարուել նրա ստեղծած դաժան պայմաններին, ով կարող է ենթարկուել նրա կանոններին, պահանջներին, մի խօսքով՝ ով «գործնական» մարդու փրկարար յատկութիւններն ունի, նա է իրականութեան բաղդաւոր և ցանկալի դաւակը...

Իսկ իդէալիստները, կեանքի խորթ և չը սիրուած դաւակները ժամանակ առ ժամանակ երևան են դալիս մի քանի վայրկեան լուսաւորելու համար իրականութեան թանձր խաւարը, որպէսզի այդ խաւարի մէջ դեռ չը մեռած մարդիկ նրանց չքանալուց յետոյ աւելի դառն կերպով զգան այդ խաւարի ամբողջ թանձրութիւնը...

Անսպասելի կերպով իշխանը ստացաւ ահագին ժառանգութիւն: Տեսէք ի՞նչպէս փոխուեց խօլոյն չըրջապատողների վերաբերմունքը դէպի նա, առաջուայ կոպէկանոց «իդիօտը» այժմ դառաւ մի այնպիսի մարդ, որին անհրաժեշտ է շոյել, շողոքորթել, որի յետևից պէտք է սողալ...

Բայց փոխուեց իշխանը հարստանալուց յետոյ. ոչ. նա մինչև վերջ մնաց նոյն հեղ, նոյն անկեղծ և անմեղ, դէպի ուրիշների հօգսերն ու ցաւերը նոյն ուշադիր և կարեկից մարդը...

Վէպի մէջ կայ մի ուրիշ իդէալիստ անձնաւորութիւն, բարակացաւոր ուսանող Իպպոլիտը, որի մահուան սպասողութեան մէջ գրած ամեն մի տողը, ամեն մի բառը ասես արիւնով է շաղախուած... Ո՛րպիսի ցնցող խորութեամբ է զգում և արտայայտում նա մարդկային կեանքի անորմալ կողմերը... «Ժամանակ, ժամանակ! ինչու մարդիկ քո զինը չեն հասկանում, ինչու քեզ այնպէս անմիտ և վրասակար կերպով շոյելում են. չէ որ դու ես մարդու ամենամեծ դանձր: Ախ, եթէ ես նոր սկսէի ապրել՝ ժամանակի այսպիսի գնահատութիւն ձեռք բերելուց յետոյ, ինչքո՞ր չէի անի... Ես նոյն ժամանակ կը համոզէի մարդկանց, որ իզուր են նրանք իրանց զղուելի

«գործնականութեամբ» միմիանց միս ուտում և էլի շա-
րանուկում միշտ դժբաղդ և դժբաղդ լինել...»—Ահա
նրա խոստովանանքի միտքը...

Նստեանում եմ, թէ որքան քիչ բան կարողացայ
ասել. բայց ասի, որովհետեւ զգում էի մի աննահանջելի
պահանջ խօսել այս ազդեցիկ գրքի վրայ...

ՊԱՆԴՈՒԽՏ

(Կը շարունակուի)

Ա Ք Ս Ո Ր Ա Կ Ա Ն Ի Ե Ր Պ Ը

(Իրլանդական մեղեդի)

«Թռչնիկ, թռչնիկ, որ չուել ես հեռաւոր
Հայրենիքիցս,—ինչ ես ուզում ինձ ասել»
—Այնտեղ քո մօր, քո դժբախտ մօրն ամեն օր
Վիճակուած է արտասուել:

«Թռչնիկ, թռչնիկ, որ ապրել ես՝ բուն դրած
Մեր կըտրան տակ,—ինչ ողջոյն ես ինձ բերել»
—Այնտեղ քո տունն անտէր, անլոյս, աւերած,
Այնտեղ ամենքն են մեռել...

«Հողմիկ, հողմիկ իմ հայրենի աշխարհի,
Ի՞նչ լուր ունես, քեզ եմ մընում անհամբեր»
—Այնտեղ կըուում ընդդէմ թոյնի ու չարի
Զոհուում են քո եղբայրներ...

«Հողիկ, հողմիկ, միթէ այնտեղ ոսկեզառ
Արշալոյսը չէ հալածել դեռ խաւար»
—Ո՛չ, ես այնտեղ առաջուայ պէս տեսայ ժանա
Միայն դահիճ ու մութ բանտ...

ԱՆ. ԵՐԱՏՈՒՐԵԱՆ

ՄԱՐ-ՇԻՄՈՆԸ ԵՒ ՄԻՍՍԻՈՆԱՐՆԵՐԸ*)

«Մուրճի» ընթերցողներին և գրեթէ ամբողջ հայ ազգին ծանօթ է արևելեան ասորոց հին եկեղեցու պատրիարք և կաթողիկոսը—Մար-Շիմոնը, որի պաշտօնն է ասորոց հոգևոր և քաղաքական կառավարչութիւնը:

Նրա քաղաքական պաշտօնը վաղուց ընդունել է օսմանեան կառավարութիւնը իր կէս հպատակ և լեռնաբնակ ասորի ցեղերի վրայ, որոնք գլխաւորապէս բնակուում են Թիւրքաքիւրդստանի ապառաժոտ լեռներում, այսինքն Թիւումայ Տեարի, Պազ, Ճիլու և Բէրվէր գաւառներում:

Մենք կարդում ենք նոր կտակարանում, ս. Պետրոսի թղթում, որ Շմաւոն Պետրոս առաքելալը Բաբելոնի եկեղեցու հովիւն էր: Եւ որովհետև ասորոց արևելեան եկեղեցու նախկին կաթողիկոսական աթոռը Բաբելոնում հաստատուեցաւ, դա է պատճառը, որ ասորոց արևելեան եկեղեցու պետը «Մար-Շիմոնի» տիտղոս ունի:

Արիւնարբու Թէյմուր-լէնկի արշաւանքները դէպի Բաղդադ ստիպեցին պատրիարքին և ասորիների մեծ մասին պատսպարուել Զուլամներկի բարձր լեռներում: Գրեթէ միևնոյն ժամանակներում քաղդէական ասորիների մի մասը Հռովմի պրոպագանդիստ միսսիոնարների աշխատութեամբ ընդունեցին պապադաւանու-

*) Ուրախութեամբ տպում ենք այս ասորի հեղինակի յօդուածը և ցանկանում, որ նա շարունակէ ծանօթացնել մեզ իր ազգի ներկայի հետ:

թիւնը և Բաբելոնում մի նոր պատրիարքարան հիմնարկեցին, որ մինչև այժմ կոչւում է բաբելոնեան ասորոց պատրիարքարան:

Որովհետև քաղղէական ասորիները արեւելեան ասորոց ամենահարուստ մասն էին կազմում, այդ պատճառով նրանց բաժանուելը իրանց մայր եկեղեցուց հարուստ հասցրեց իրանց ազդու թեան:

Նրեք դարուց վեր է, որ այդ պապական ասորոց պատրիարքը Վատիկանի թեկադրութեամբ աշխատել է մերթ շուրթական, երբեմն քաղաքական միութիւն տալու յոյսերով հրաւիրել իր եղբօր Մար-Շիմոնին, որ նա ընդունէ պապի գերիշխանութիւնը և միանայ քաղղէական եկեղեցու հետ: Ուրախ ենք տեսնել, որ մինչև օրս՝ թէ Մար-Շիմոնը և թէ նորա էլաթնեւորի բէդերն ու միօրները բացասական պատասխան են տուել և մերժել նրա այդ կոչումը:

Մար-Շիմոնը նրան ուղղած մի շատ հետաքրքիր նամակում հրաւիրում է, որ այդ քաղղէական եկեղեցու պատրիարքը ապաշխարելով դարձի գայ, միանալով իր նախնեաց և հին առաքելական եկեղեցու հետ:

Ասորոց եկեղեցու հիմնական օրէնքներից մէկն այն է, որ եպիսկոպոսը 30 տարեկանից պակաս չը լինի. միևնոյն ժամանակ նրանց եպիսկոպոսները ոչ միայն չեն ամուսնանում, այլ միտ ուտելն անգամ նրանց արգելուած է:

Զը նայելով հին ժամանակներում ասորոց Մար-Շիմոնները ընտրւում էին ազգի կղերական և աշխարհական բարձր դասակարգի հաւանութեամբ, որ ընտանիքից որ լինէր, բայց տասնեօրեայ դարում այդ օրէնքը զանց է առնուած, պատրիարքը պէտք է ընտրուի նախընթաց պատրիարքի ընտանիքից, այն էլ իր ամենամօտ աղագականներից, այսինքն՝ եղբօր, քրոջ որդիներից կային:

Վերոյիշեալ պատճառը առիթ է տալիս, որ երբեմն Մար-Շիմոնները ընտրւում են փոքր հասակում: Եւ որովհետև այս տարի Մար-Շիմոնն վախճանուել է, նա միայն մի կանգիդատ ունէր, այն է՝ իր եղբօրորդին, որին իր մահուանից մի քանի օր առաջ միտրապոլիտ է ընտրում: Ահա այս հանգուցեայ Մար Շիմոնի կենսագրութիւնը ասորերէն «Առաջ ճառագայթներ» (Զահրերա-Ղարա) թերթից, որ 54 տարուց ի վեր Ուրմիայում հրատարակւում է, փոխադրում ենք այսպէս:— «Վեհ Շիմոնն, Ռուբէն, պատրիարք եւ կաթողիկոս ամենայն արեւելեան ասորոց հին եկեղեցոյն. մահը:

«Յաւար և մասլ ամպերը պատել են Կոյճանիսի պատրիարքարանի մթնոլորտը Վեհ Մար-Շիմոնի մահուան համար:

Հանդուցեալ պատրիարքն վերջին երկու տարիներում միշտ հիւանդ է եղել, և նրա մօտ ազգականները նրա սուղջութեան մասին միշտ երկմիտ անձկութեան մէջ ընկղմուած են եղել: Հանգաւ 'ի Տէր, մարմնաւոր տանջանքներից ազատուելով մարտի 18-ին 1903 թ. Կողչանիս դիւղում: Վեհ պատրիարքն Ռուբէն Բենիամին բարձրացաւ յաթոռ կաթուղիկոսական ասորոց արևելեան հին եկեղեցոյն՝ իր հօրեղբօր տեղը բռնելով 40 տարի սրանից առաջ քսան տարեկան հասակում: Եկեղեցու հոգևոր և քաղաքական գործերի կառավարչութեան գործը մի հեշտ բան չէր նրա համար, մանաւանդ վերջին տասը տարիների ընթացքում, որ շրջապատուած է եղել արիւնհարբու և քրիստոնեաների արեան ծարաւ եղող քրդերով: այսուամենայնիւ նա կարողացաւ շատ խոհեմ և խելացի կերպով թէ կառավարել իր էլիբաթները, որոնք միշտ լարուած են գտնուած քրդերի դէմ, եթէ համարձակուեն յարձակում գործել նրանց վրայ, և թէ պահել օսմանեան կառավարութեան իր վրայ ունեցած գոհութիւնն ու վստահութիւնը: Բոլոր այն խռովութեանց մէջ, որ պատահեցին վերջին տարիներում Թիւրքիայում, հանդուցեալը աշխատեց սպասել պահել իր ազգը, չը նայելով որ շատ անգամ վիճաբանութիւններ և 'երկպառակութիւններ տեղի ունեցան թէ իր և թէ իր հպատակ էլիբաթների վերաբերեալ, բայց այսուամենայնիւ քաջ հերոսի նման յաղթեց այդ բոլոր փորձութիւններին իր հանճարով և կատարեալ բանականութեամբ:»

«Հանդուցեալի անկեղծ սէրը» և եռանդոտ նախանձը բոլորովին յայտնի է իր ազգին հետեւեալ դէպքում:—2 տարի սրանից առաջ, երբ որ քիւրդերի ամբաստանութեամբը Տեարի գաւառի ասորիների դէմ արած՝ նրանցից մի քանի անձնաւորութիւններ Զուլթանլիի գայմաղամը ձերբակալել, բանտարկել էր և սաստիկ տանջանքների ու նեղութիւնների ենթարկել, Մար-Շիմոնը անմիջապէս հասնում է նրանց օգնութեան, ամբողջ 8 ամիս Զուլթանլիում չարչարում է. և վերջապէս սուլթանից հեռագրով հրաման է հասնում, և նրանց ազատելով, իր հետ վերադարձնում է իրանց տները բոլորովին ապահով: Այդ անելով նա մի լաւ դաս տուաւ քիւրդ ցեղապետներին, որ երկրորդ անգամ չը համարձակուեն նեղացնելու իր հպատակներին: Վեհ Մար-Շիմոնը իր 40 տարուայ պատրիարքութեան ժամանակամիջոցում միշտ բարեկամութիւն է արել Ամերիկայի միսսիոնարների հետ, որոնք յաճախ գնում էին քարոզելու լեռնաբնակ էլիբաթներին: Փոխադարձաբար թէ միսսիոնարները և թէ բողոքական ասորիները խորին յար-

դանքով են վերաբերուել զէպի Մար-Շիմոնը և իրանց եկեղեցու հոգևոր պետ են համարել նրան: Այժմ անխտիր կերպով ասորի բողոքական հասարակութիւնը հին եկեղեցու ասորիների հետ միասին ողբում են իրանց երջանկայիշատակ պատրիարքի վրայ: Նոր պատրիարքի ընտրութիւնը շատ պարզ և հեշտ կերպով է գլուխ եկել: Հանդուցեալ Մար-Շիմոնի մահուանից մի շաբաթ առաջ էլերաթներէց 500 հոգի, կղերական և աշխարհական ազնականներից, Մար-Շիմոնին այցելութեան են գալիս. տեսնելով որ պատրիարքը մեկնելու վրայ է, խնդրում են նրանից, որ իր եղբորորդի Բենեամինին միտրապոլիտ ձեռնադրէ, որը և նրա մահից յետոյ, Մաղկազարդի օրն Նաւէի եպիսկոպոսի ձեռքով օծւում է պատրիարք: Արդէն վերոյիշեալները երգուել են Մար-Շիմոնին, որ նրանք հաւատարիմ պիտի դառնան թէ՛ նոր պատրիարքին և թէ՛ իրանց եկեղեցուն: Նոր օծուած Մար-Շիմոնը 18 տարեկան մի շատ գեղեցկադէմ, խելացի ու զարգացած պատանի է, նա ունեցել է մի անգլիացի ուսուցիչ և դաստիարակ, որ 8 տարուց ի վեր Մար-Շիմոնի հրամանով ապրում էր նրա տանը, կողջանիս: Նոր պատրիարքից կրթութեամբ աւելի բարձր է նրա քոյր Սուրմին, որ լաւ ծանօթ է անգլիերէնի և շատ խելացի լինելով, հանգուցեալ Մար-Շիմոնի խորհրդականներից մէկն էր: Աստուած գիտէ, թէ ինչ պէտք է լինի արևելեան ասորիների մի փոքրիկ մասը, որ երկար ժամանակ ապրելով արևելեան Գիւրջաստանի բարձրագագաթ և ձիւնապատ լեռներում, հերոսաբար պահել է հին եկեղեցու հաւատը և նրա նահապետական սովորութիւնները և աւանդութիւնները: Աստուած տայ, որ այդ հին քրիստոնեայ ազգի ապագան անցեալից աւելի փայլուն լինի:»

75 տարուց վեր է, որ ամերիկացի բողոքական միսսիոնարները սկսել են զործել ասորիների մէջ: Շատ անգամ այնպիսի մարդիկ, որոնք երբէք տեղեակ չեն այդ միսսիոնարների գործողութեան, սկսում են գրել անհիմն, խղճի դէմ բաներ:

Շատ լաւ յայտնի է, որ երբ ամերիկացի միսսիոնարները գործ սկսեցին ասորիների մէջ Ուրմիայում և նրա շրջակայքում գտնուող փոքր գաւառներում, ուր որ բնակւում են ասորիները, մի տպուած ասորերէն գիրք անգամ գոյութիւն չ'ունէր, ասորոց եկեղեցու բոլոր եկեղեցական գրքերը ձեռքով էին գրուած, այն էլ հազւագիւտ: Իհարկէ՝ ամենուրեք գտնւում էին եպիսկոպոսներ, քահանաներ, սարկաւաղներ, որոնք միայն հասարակ կարգալ ու զրեւ գիտէին:

Մի հատ ուսումնարան չէր կարելի գտնել ամբողջ 60,000 ասորի հասարակութեան մէջ: Երբեմն պատահում էր, որ այսօր չնչ նշանաւոր մելիքը կամ այնինչ հարուստ մեծատունը խնդրում էր գիւղի քահանայից, որ իր որդուն սաղմոս կարգալ սովորեցնէ և մի քանի եկեղեցական երգեր հայն: Հաստատ կարող ենք ասել, որ 75 տարի սրանից առաջ միայն ամբողջ վերոյիշեալ հասարակութեան $\frac{1}{1000}$ -ը կարող էր գրել-կարգալ, իսկ իզական սեռը բոլորովին տգէտ էր, այնպէս որ պատմում են, որ միայն այն ժամանակուայ Մար-Շիմոնի քոյր Հեղինէն կարող էր հասարակ գրել-կարգալ:

Իսկ այժմ Ուրմիայում շնորհիւ ամերիկացի միսսիոնարներին կայ մի կողէջ, ուր աւանդւում են չորս լեզուներ—ասորերէն, անգլիերէն, պարսկերէն և օսմանեան թիւրքերէն (իհարկէ վերջինը անհրաժեշտ է Մար-Շիմոնի գաւառներից ուսանող երիտասարդներին): Բացի այդ լեզուներից աւանդւում են գիտութեան վերաբերեալ հիմնական գրեթէ բոլոր առարկաները: Մի մեծ ուսումնարան էլ կայ իզական սեռի համար, մի սեմինար, որում աւանդւում են վերոյիշեալ լեզուները և գիտութեան վերաբերեալ գրեթէ բոլոր առարկաները, և երեք նախապատրաստական ուսումնարաններ, ուր պատրաստւում են աշակերտներ կողէջի և սեմինարի համար, բացի գիւղական ուսումնարաններից, որ գրեթէ Ուրմիոյ ամեն մի գիւղում գտնւում են երկսեռ ուսումնարաններ: Մինչդեռ Սուլղուղում, Սալմաստում, Սովուճ-Բուլաղում, Մար-Շիմոնի 5 վերոյիշեալ գաւառներում, ուր գտնւում են բնիկ քարոզիչներ, միայն մի ուսումնարան կայ: Շնորհիւ ամերիկացի միսսիոնարների տպարանի, որ 70 տարի է բացուել է, սուրբ գիրք և գիտութեան վերաբերեալ գրքերն ասորերէն լեզուով այնքան շատ են, որ 70 տարի առաջ ձեռքով գրուած մի հատոր ս. գիրք արժէր 10—15 թուման, իսկ այսօր ոսկեզօծ գեղեցիկ տառերով տպուած մի հատորը արժէ 10 դրան:

Քսան տարույ վեր է, որ ասորի բողոքական երիտասարդներն, Ուրմիոյ կողէջի աւարտողներն այնտեղի առած ուսումից բաւականութիւն չ'ունենալով՝ գնում են Անգլիա, և մեծամասնութիւնը Ամերիկա, և կրկին անգամ այնտեղի կողէջն աւարտելով, բժշկութիւն են սովորում, ոմանք մտնում են այնտեղի համալսարանները, բարձր կրթութիւն առնելուց յետոյ միևնոյն համալսարանի արեւելեան լեզուների պրոֆեսսորութեան են հասնում կամ միսսիոնար գաղնալով՝ ուղարկւում են կոապաչտ երկրներ: Նիւ-Նորկ Կոլումբեան համալսարանի արեւելեան լեզուների պրոֆեսսոր Աբրահամ Իոհաննան Ուրմիոյ բողոքական ասո-

րիններից է: Վերջին տարիներում նա ուսումնասիրեց ասորեցիքն հին սեպագծն տառերը, այս տառի նա ստացաւ փխլիսոփայութեան գոկտորի տիտղոսը:

Նրա ընկերներից մէկը Իսահակ Դոռման այժմ ճապոնում բողոք. եպիսկոպոսական եկեղեցու միասինարութեան զլխաւոր անդամներից մէկն է. նա իր պաշտօնում հմուտ և հաւատարիմ է և այնտեղ մեծ դեր է խաղում: Այժմ բողոքական ասորի բժիշկները, որոնց մեծամասնութիւնը Ամերիկայումն է սովորել, սիրուած են Ատրպատականի զանազան քաղաքներում. Դաւրէժ գանուոզ 2 օրիորդ բժշկուհիներից մէկը, Աննա Եակոբը ասորի բողոքական է, որ Ասերիկայում է սովորել իր բժշկութիւնը և այժմ Դաւրէժում գործում է: Միջին հաշուով տարեկան 50-ից ոչ պակաս երիտասարդներ, երբեմն օրիորդներ գնում են նոր աշխարհ, ուր շատերը գործարաններում աշխատում են և դրամ վաստակելով՝ հարուստ վերադառնում իրանց հայրենիքը: Այժմ չնորհիւ ամերիկացի միասինարների ոչ միայն Ուրմիոյ ասորի հասարակութեան $\frac{3}{4}$ -ը ուսնալ և զարգացած է, այլ գրեթէ նրանց ամենահարուստ դասակարգը ասորի բողոքականներ են:

Կաթոլիկ միասինարները մուտք են գտել Ուրմի 60 տարի սրանից առաջ. նրանք էլ աշխատել են մասնաւոր կրթութիւն տարածել և ֆրանսերէն լեզուն սովորեցնել: Պարզ է, որ դրանց տուած կրթութիւնն ու զարգացումը չէ կախելի համեմատութեան դնել ամերիկայիների տուած կրթութեան և զարգացման հետ: Նրանք Ուրմիում ունեն մի մեծ ուսումնարան, որ կոչւում է «ս. Յովսէփայ» ուսումնարան. գիւղօրայքում ունեն մի քանի շատ հասարակ դիւղական ուսումնարաններ. այլ ուսումնարաններում աւանդում են ասորերէն, ֆրանսերէն և պարսկերէն լեզուներ, բացի այդ՝ աշխարհագրութիւն, թւարանութիւն: Սալմաստի Խոսրովայ գիւղում ունեն աստուածաբանական ուսումնարան. դրա ընթացքն աւարտող կղերականներից մի քանիսը Հոռմի պրոպագանդայի կողմէջում բարձր ուսում առած, հայոց Մխիթարեան միաբանութեան դերն են խաղում՝ ասորոց հին եկեղեցու գրքերը հրատարակելով, նրա քնած գրականութիւնը արժնոյցնելով: Ամենանշանաւորը Պաուլ-Բեջան անունով խոսրովայի մի կղերական կաթոլիկ ասորի է. նրան ասորոց Այիւշանը կարելի է անուանել, որովհետ 30 տարուց վեր նա թողել է Լազարիստ միաբանութիւնը և Լայպցիգ քաղաքում իր բազմաթիւ և գնահատելի աշատութիւններն է հրատարակում, ասորոց թանգազին և շատ հին գրքերը թէ գրաբար և թէ աշխարհաբար լեզուներով տպել է տալիս: Նա ընկերներից մէկն

է Սուրմոնը՝ բուն Թխումայ զաւառից, զրա փոքր եղբայրը հանգուցեալ Մար-Շիմոնի քարտուղար և ատենապետն էր: Սուրմոնը «Գալադաշբարա» թերթի խմբագիրն է: Այդ թերթի միջոցով նա էլ մեծ դեր է խաղում ասորոց գրականութեան մէջ:

Համառօտ կերպով յիշատակենք անգլիական High Church եկեղեցու միսսիոնարների մասին, որ այս վերջին 20 տարիներում դործում են ասորիների մէջ: Նրանք ևս սկսեցին ուսումնարաններ բանալ, եկեղեցական հին գրքերից հրատարակել ևայլն: 2 տարի չ'անցած՝ այդ գրքերում նկատուեցաւ, որ ասորոց հին եկեղեցու 2 նշանաւոր հայրապետների՝ Թիոդորէթ և Թիոդորոսի անունները հանել են այդ գրքերից, քանի որ այդ երկու անուններն նոյնքան քաղցր, նոյնքան նուիրական են ասորոց համար, որքան Սահակի և Մեսրովբի անուններն ամեն մի հայի համար: Այդ բանը առիթ բաց արեց, որ թէ Մար-Շիմոնը և թէ հոգեորականութիւնը զրանց զէմ ձայն բարձրացրին, սկսեցին բողոքել և այդ հրատարակուած գրքերը մերժել:

Ռուս միսսիոնարները 4 տարի սրանից առաջ Ուրմի հասան, և շատ ասորիներ ռուսադաւանութիւն ընդունեցին: Ստիպողները մասամբ անգլիացի միսսիոնարներն էին:

ՄԵՍՐՈՎԲ-ԽԱՆ ՔԱՐԱՄ

ՎՐԱՑ ԿԵԱՆՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԻՑ

Երկու գիտնական յօդուած հայերի մասին:—Հայ-կաթոլիկներէ հարցի շուրջը:—
Վրացի ուսանողութիւնը:—Մի հրապարակախօսի «առասպելական ուրացումը»:
—Մայրենի լեզուի սէրը վրաց մէջ:

«Մոամբէ» ամսագրի վերջին (6) և «Իւերիա» լրագրի 146 համարներում լոյս տեսան միաժամանակ մի-մի գիտնական յօդուած մեր անցեալ կեանքի մասին: Ինչպէս «Մուրճի» յունիս ամսուայ համարում հաղորդել էինք, վերոյիշեալ ամսագրում տպագրւում է այս տարի վրաց պատմաբան պ. Մ. Ջանաշվիլու յօդուածների շարքը «Վրաց տարեգրութիւնները» վերնագրով: «Մոամբէի» վերջին համարում պ. Ջանաշվիլին քննում է «Քարթլիս-Յխովրեբա»-ի առասպելները և տեղեկութիւններ տալիս Վրաստանի դրացի տէրութիւնների սկզբնաւորութեան մասին: Մեր անցեալին նա բաժին է հանել այդտեղ $4\frac{1}{2}$ երես և այն կարծիքն է յայտնում, որ հայոց տէրութիւնը հիմնուած պէտք է լինի Տիգրան Ա.-ի ժամանակ՝ Կիւրոս Թաղաւորի ձեռքով: «Վրաստանի և Պարսկաստանի միջի սահմանը պնդացնելու համար՝ այդ սահմանում մի նոր տէրութիւն հիմնելը,—ասում է յօդուածագիրը—պէտք է Կիւրոսի ջերմ ցանկութիւնը եղած լինէր. դրանով նա կը պաշտպանէր Պարսկաստանը պատերազմասէր վրացիների արշաւանքներից»: Կիւրոսը այդ նպատակով տուել է հայերին նաև քաղզէացոց երկրի մի մասը: Բերելով այնուհետև մի քանի տեղեկութիւններ Քսենոփոնից հայոց և քաղզէացոց այն ժամանակուայ փոխադարձ յարաբերութիւննե-

րի մասին, պ. Զանաշվիլին անցնում է լեզուի կազմութեան հարցին: Այստեղ նա նորից կրկնում է իր և վրացի ուրիշ գրող-ների մի մասի վաղուց շատ փայփայած, յամառ կերպով պաշտպանած, բայց գիտնականօրէն ապացուցուելուց դուրս շատ հեռու այն մտքերը, թէ Վանի սեպածն արձանագրութիւնները գրուած են հին վրացերէն լեզուով, թէ ուրարդացիք՝ նախնի վրացիքն են, թէ հայերը Ուրարդու դալով և վրացիների հետ ապրելով՝ նրանցից այլևայլ փոխառութիւններ են արել և այլն: Եւ վրաց լեզուի մէջ հին դարերից ի վեր գործածուող հարկւրաւոր հայերէն բառերի գոյութիւնը լռելեայն հերքելու համար մեր հնագէտ պարոնը անում է այսպիսի մի դատողութիւն. «Հայ ազգը սամարացիների նման մի խառնուրդ ազգ է. նրանց լեզուն առաջ է եկել երկի մի որեւէ եկուոր ցեղի (Վասպուրականում) և բնիկ րէմէն—արմէն (ըստ քննադրերի) ժողովըրդի լեզուների միաւորութիւնից: Եւ որովհետեւ այդ րէմէն-արմէններին մենք վրացի ենք համարում, ուստի և հայերի լեզուն պէտք է լիքը լինի վրացերէն բառերով, և նրա քերականութիւնն էլ պէտք է մշակուած լինի վրաց քերականութեան ազդեցութեան տակ: Նոյն ազդեցութիւնը պէտք է կրած լինի նաև նրանց քաղաքական կազմակերպութիւնը»: Այդպիսով՝ ուրեմն պ. Զ. «հերքում է» նաև ի միջի այլոց պրոֆեսսոր Մարրի այն հետազոտութիւնը, թէ վրացիք հայերէն բառերը փոխ են առել մեզանից Աստուածաշունչ և այլ հոգևոր ու պատմական գրուածներ թարգմանելիս (հայերէն բնագիրներից): Սակայն նա այդքանով էլ չէ բաւականանում և իր յօդուածի վերջում անում է ուրիշ, մի աւելի համարձակ ենթադրութիւն: Դեռ ևս իր գրուածքի մէջ տեղում նա յայտնել էր իր այն «համոզումը», թէ վրացիք պէտք է մի ժամանակ իշխած լինեն հին Պարսկաստանում կամ Մեդացոց երկրում: Այժմ իր այդ համոզմունքին աւելացնում է հետեւալ նոր համոզմունքը. «Որովհետեւ Մեդացոց երկրում՝ ընդհանրապէս՝ մինչև արիացիների դալը իշխում էին վրացիք և առաջինների տիրապետութիւնից յետոյ էլ երկար ժամանակ մնացին այդ աշխարհում, և շատերը նրանցից նոյնիսկ ձուլուեցան արիացիների հետ,—ուստի պարսկերէն—վրացերէն բառարանում նկատուած անհամար նման բառերի նշանաւոր մասը պէտք է առաջացած լինի զուտ վրացերէնի արմատներից»...

Ուշադրութեան արժանի է, որ այդ նոյն պ. Զանաշվիլին վիճելով պ. Վ. Գաբ-կանցի հետ «Новое Обозрѣніе» լրագրում հայագիտութեան և վրացագիտութեան վերաբերեալ մի քանի հարցերի մասին՝ «Մոամբէի» վերոյիշեալ յօդուածի լոյս

տեսնելուց ճիշտ մի շաբաթ առաջ՝ ասում էր. «Իզուր է այն աշխատանքը (հայ գիտնականների կողմից), որ զործ են դնում վրացիների իբր թէ հայերէնից փոխ առած բառերի ցուցակը պատրաստելու վրայ. ժամանակ է վերջ դնելու կանխակալ նը-պատակներով հնու-թիւնները հետազոտելու գործին *)»:

Ուրեմն այն, ինչ որ պ. Ջ. արգելում է անել ուրիշներին զուտ գիտնական և անաչառ հոգի վրայ, ասում է ինքը լոկ հէքրաթական հիմքի վրայ և այն էլ հաղիւ թէ ոչ-կանխակալ նպատակով... Կամ դուցէ միայն վրացերէն լեզուով կարելի է յայտնել այդպիսի «լաւ» մտքեր...

Միւս «գիտնական» յօդուածը հայերի մասին, ինչպէս ասացինք, տուած է «Իվերիայում»։ Նրա հեղինակ պ. Կլիաւ-ն ասում է, որ հայերի և վրացիների ծագման, նրանց փոխա-ղարձ յարաբերութեան և հին քաղաքակրթութեան մասին դա-տելուց առաջ պէտք է ինկատի առնել մի քանի այլ հարցեր։ Բերենք այստեղ նրա այդ քմայական, ծիծաղելի լեզուաբանա-կան քաջքշումների և անհամոզեցուցիչ ենթադրութիւնների վրայ հիմնուած աշխատանքի շատ համառօտ ամփոփումը. — Հին քաղղէսացիք պէտք է վրացի եղած լինէին, որովհետեւ քաղղի և քարթուկի (վրացի) բառեր նման են միմիսնց. նմանապէս վանի բնակապիւրների մէջ պատահող կարգու-իւր բառը, որ գիտնական-ների կարծիքով նշանակում է քաղղէսացի, պէտք է նշանակէ՝ վրացու որդի։ Ս. Գրքում յիշուած Մեչեխ կամ Մոսոխ նշանա-ւոր ազգը նոյնպէս վրացիքը պէտք է լինեն։ Ի՞նչով պէտք է բացատրել վրաց լեզուի բառերի պրեֆիկսների (սկզբի և վերջի մասնիկների) նմանութիւնը եւրոպականներին և հնդկա-եւրո-պական բառերի արմատների գոյութիւնը վրացերէնի մէջ։ «Մ'ի՛թէ չը պէտք է մերժուի հայոց լեզուի հնդկա-եւրոպա-կան լեզուների խմբին պատկանելու թէորիան, քանի որ հայե-րէն բայերը չ'ունին յիշեալ լեզուներին յատուկ պրեֆիկս-ները»... Ի՞նչով բացատրել հայերէնի և վրացերէնի մէջ միա-ժամանակ գործածուող նման բառերը (բերում է դրանց մի մասի ցուցակը առանց փոխառութեան մասին յիշատակելու)։ Հայերը վրացիներին և նրանց հայրենիքին տալիս են՝ վրացի, վիրք, վիրական, Վրաստան անունները, մի՞թէ այդ վիր կամ վըր մասնիկը չէ ցոյց տալիս Ուրուարդու բառի ուր արմատը։

*) Տես «Нов. Об.» №№ 6440 և 6454. այդտեղ յօդուածները ստորա-գրուած են Մ. Ջ. տառերով, բայց հեղինակը բաց է ասում իր ծածկանունը, խորհուրդ տալով հակառակորդին կարդալու իր յօդուածները «Մոամբէում»։

«Հայոց Վրաստան ասածը բառ առ բառ (?) նշանակում է ուրերի աշխարհ»:

Երևի այս վերջին երևելի գիւտից չափազանց զգացուած՝ պ. Կլքիան ի նշան խորին շնորհակալութեան մեր լեզուին՝ նրան մատուցած այդ ահագին ծառայութեան համար մի շատ կարեւոր սիւրբարիւղ է անում մեզ: Ինչպէս յայտնի է, նախնի հայերի օրրանում՝ Վասպուրականում՝ և նրա սահմաններից դուրս ապրելիս են եղել մի ժամանակ, բոս քնեռագրերի, ուրարդական և հեթական քաջ, նշանաւոր ազգերը: Գիտութիւնը այդ ազգերի սերունդների մասին մինչև օրս չեն վճռական կարծիք չ'ունի, բայց վրացի գրողների մի մասը՝ առաջնորդ ունենալով իշխ. Իլիա Ճաւճաւաձէին և պ. Մ. Ջանաչվիլուն՝ ահա մի քանի տարի է, որ պինդ կերպով կպել են այդ երանելի և մի տեսակ երևակայական ազգերին և նրանց երկուսին էլ միաժամանակ վրաց ազգի նախահայրեր համարում, վախենալով, որ մի գուցէ հայերը խլեն դրանց ձեռքից մէկին կամ միւսին... Այժմ պ. Կլքիան մի յանգուզն յեղափոխութիւն է մտցնում վրաց գրականութեան մէջ, մեծահոգութեամբ ընդունելով, որ հեթերը ոչ այլ ոք են, բայց եթէ հայերի նախնիքը... Ինչպէս որ հայերը, ասում է նա, վրաց հայրենիք Ուրարդուն կոչել են Վրաստան (վըր—ուր), այնպէս էլ վրացիք իրանց դրացի հայերի հայրենիք Հայաստանը կոչել են Հեթ, Խեթ, Սոմ-խեթ, իսկ հայերին—խի, սոմե-խի, որպիսի բառերում հայ բառը վերածուել է խն կամ խի բառերի...

«Իվերիայի» № 128-ում տպուած է մի բաւական ընդարձակ յօդուած «Թիֆլիսի կաթողիկոսները և հայոց լրագիրները» վերնագրով: Իրա հեղինակ ունի «Թիֆլիսեցի կաթողիկոս» աշտում է ապացուցանել, որ Թիֆլիսի Միջին փողոցում գտնուած կաթողիկական Վերափոխման եկեղեցին պատկանում է ոչ թէ հայ կաթողիկոսներին, «ինչպէս ամեն ճիշդ դորձ դնելով ուզում են հաստատել հայ լրագիրները», այլ հռոմէական կաթողիկոսներին, և որ նա կառուցուած է ոչ թէ 1830 թւից յետոյ, այլ դարեր առաջ, երբ դեռևս կաթողիկ հայեր չը կային Թիֆլիսում: Իր կարծիքները բերելուց յետոյ յօդուածագիրը քաջազանչում է. «Յափշտակելու և ուրիշից մի բան պոկելու աւագակային գաղափարը տարածում են Վենեցիայում ձեռնադրած հայ-կաթողիկ քահանաներն ու Թիֆլիսի հայ-լուսաւորչականների լրագիրնե-

րը»: Նա խորհուրդ է տալիս այստեղի հայ-կաթողիկոսներին չինել իրանց համար նոր, սեպհական եկեղեցի և գերադասել այդպիսով՝ «խաղաղ աշխատանքով ձեռք բերած կայքը յափշտակութեամբ ու աւագակութեամբ ճարածից»: Նա առհասարակ չափազանց զգուշ է մխիթարեան վարդապետներից և հաւատացնում է իր րնթերցողներին, որ իբր թէ նրանք ամեն տեղ ասում են, թէ Կովկասի բոլոր կաթողիկոսները ազդով հայ են, և նրանց եկեղեցիներն ու վանքերը՝ իրանց բոլոր անշարժ կալուածներով պէտք է անցնեն հայերի ձեռքը, և որ նոյնիսկ ամբողջ Վրաստանն ու Կովկասը նախկին Հայաստանն են կալմում...

Յօդուածի վերջում պ. Թիֆլիսեցի կաթողիկոսը զարմանք է յայտնում, որ հայերն առհասարակ երազում են օտար հողի վրայ, Վրաստանում, իրանց ազգութիւնը պահպանելու: Նա համոզուած է, որ հայերն էլ «պէտք է ենթարկուեն պատմութեան անխուսափելի դատաստանին», այսինքն պէտք է ձուլուեն տեղացիներին հետ, վրացիանան... «Հասկանում են արդեօք հայ լրագրողների Մխիթարեան և Ղարաբաղցի հրապարակախօսները, թէ ինչ բան է այդ պատմական դատաստանը», — բայց պանդուխտ է գոռողաբար պ. յօդուածագիրը և փակում իր գրուածքը...

Այս տողերին մենք կ'աւելացնենք այժմ մի քանի ուրիշ տեղեկութիւններ, որ դարձեալ վերաբերում են Վրաստանի հայ կաթողիկոսներին: Նոյն «Իվերիա» լրագրի մի ուրիշ համարում հաղորդում է, որ իբր թէ Մխիթարեան Գաբրիէլ վ. Նահապետեանը վերջերս Թիֆլիսից ուղևորուել է Հոռոմ, որպէսզի վատիկանի արքիւից գովումենաներ ջոկի՝ հայր Միք. Թամարաշվիլիւ «Վրացի-կաթողիկոսներ» զբքի իմաստը ոչնչացնող մի նոր գիրք շարադրելու համար, և որ իբր թէ Հոռոմի բարձրագոյն իշխանութիւնը արգելել է նրան այդ բանն անելու:

Ինչպէս յայտնի է, Անդրկովկասի կաթողիկոսների հոգևոր կառավարութիւնը գտնուում է Ախալցխայում: «Իվերիան» իր № 143-ում հաւատացնում է, որ իբր թէ ամբողջ 200 տարի է, ինչ Կովկասի հայ-կաթողիկոսները աշխատում են այդ կառավարութիւնը իրանց ձեռքը ձգելու, բայց նրանց այդ չէր յաջողւում, և յիշեալ կառավարութեան ղեկը անցնում էր միշտ կապուցիներին և վրացի կաթողիկոսների ձեռքը: Սակայն հայերի երկարամեայ ջանքերը և «քաղաքացիական հնարները» վերջ ի վերջոյ յաղթող հանդիսացան. Տիրասպոլի եպիսկոպոս բարոն Ռոսպը ներկայ յունիս ամսին յիշեալ հոգևոր կառավարութեան գլուխ կարգեց Մխիթարեան հայազգի Հ. Սափա-

րեան և Դ. Կալատողեան վարդապետներին: Հաղորդելով այդ մասին մի տեսակ չկամութեամբ և հեղեղութեամբ, լրագիրը բացագանչում է. «այժմ թող հայերն ասեն. «ու՜մն որ սպասում էինք, եկաւ. ուրախացիր, սիրտ խմ»:

Բայց լրագրի այդ սրտի դաւը մի քանի օրից յետոյ (№ 151) փորձեց փարատել նրա մշտական աշխատակից պ. Զ. Ժ. իր մի «պատմական» ուսումնասիրութեամբ: Բանից դուրս է գալիս, որ պ. Ժ. շատ անքուն զիչերներ է անցկացրել և լիովին ուսումնասիրել աշխարհին դեռևս շատ քիչ յայտնի Սափարեան և Կալատողեան վարդապետների տոհմաբանութիւնը: Նա այժմ, երևակայեցէք, ճանաչում է Սափարեանի նախնիներին մինչև... VI դարը Քրիստոսից յետոյ: Նա զիտէ նոյնպէս, որ Կալատողեանը ունի ազգակիցներ Ախալցխայում, Մեսխեթում, Գուլիստում և Կախեթում... Եւ այդ զիտութեան հիման վրայ պ. Ժ. յայտարարում է, որ «իրանց հայ կարծող և Վենետիկի վանքում ուսում ստացած Սափարեան և Կալատողեան հայերը զուտ վրացիք են»...

Պ. Ժ.-ի (ամենքին բաց կերպով յայտնի Զաքար ձիճինաձէի) այդ տեսակ երեկի «պատմական հետազոտութիւնների» մասին մենք դեռ շատ առիթներ կ'ունենանք խօսելու մեր ընթերցողների հետ: Այդ արտասովոր, կանոնաւոր ուսում չը ստացած մարդու սիրած բանն է՝ անգագրում նուաճումներ անել յօգուտ վրացիներին... իր գրչի թեթեւ շարժումով...

Նոյն «Իվերիայի» № 145-ում սպուած է մի առաջնորդող, որ սկսում է այսպէս. «Երբորդ օրը «Մշակ» լրագրում սպուած էր, որ հայ-կաթողիկէները Թիֆլիսում ունենալու են մշտական հայ եպիսկոպոս—առաջնորդ»: Վրաց լրագիրը ցաւալի է զրտնում այդ կարգադրութիւնը և աւելացնում, որ ինքը չէ հաւատում, «որ վրացի-կաթողիկէները համաձայնեն առաջուայ նրման հպատակուելու հայ հոգևորականներին: Վրացիք կամենում են բաժանուել նրանցից և ունենալ լատինական ծէսի ժամա. կարգութիւն»: Յօդուածի վերջում լրագիրը դիմում է անում Տիրասպոլի եպիսկոպոսին, որ նա աշխատի նշանակել տալ Կովկասում «յանուն աշխարհի խաղաղութեան»՝ առանձին-առանձին եպիսկոպոս—հայ, վրացի և ասորի կաթողիկէների համար:

Այսքան առատ նիւթ կայ տհաւասիկ վրաց մամուլի էջերում այս վերջին ամսում հայ-կաթողիկէների մասին...

Վերջին ժամանակներս վրաց մամուլը շատ է զբաղւում վրացի ուսանողների հարցով: Գրւում են առաջնորդողներ, ֆելիետոններ, յօդուածներ, թղթակցութիւններ: Բարձրացել է մի ահագին չիֆթ ու վայնասուն. վրացի ուսանողութիւնը առհասարակ և Օդեսսայինը մասնաւորապէս սաստիկ ընկել է բարոյապէս ու մտաւորապէս: Յօդուածագիրները վկայում են, որ Օդեսսայի վրացի ուսանողութեան ահագին մեծամասութիւնը իր ամբողջ ժամանակն անց է կացնում բլիլիարդ խաղալով, անառակ կանանց հետ զուարճանալով և ամեն տեսակ զբոսատեղեր այցելելով. նրանք չեն հետաքրքրւում ոչ գիտութեամբ, ոչ գրականութեամբ, ոչ գեղարուեստով և ամբողջ ամիսներով չեն անցնում համալսարանի շէնքից՝ դասախօսութիւնները լսելու: Դասախօսութիւնները նրանք մի տեսակ անդիր են անում տարուայ վերջը՝ քննութիւն տալու կամ աւարտման վկայական ձեռք բերելու համար: Այդ պատճառով դրանցից 90%, ինչպէս վկայում է մի օդեսսացի ուսանող իր «ուսանողի ձայնը» («Ցնոբիս-ֆուրցելի», № 2172) յօդուածում, մտնում են կեանքը գրեթէ նոյնութեամբ, ինչպէս որ եկել էին գիմնազիայից համալսարան:

«Այս օտարութեան մէջ—շարունակում է երեք տարի Օդեսսայում ապրող յօդուածագիրը—մեզ մինչև իսկ չէ հետաքրքրում, թէ ինչ են անում Վրաստանում: Լրագիրները գոյութիւն ունեն միայն ուսանողների մի փոքրիկ շրջանակի համար: Վրացի ուսանողները ամենին չեն աշխատում որևէ կապ պահպանել իրանց պրոֆեսսորների հետ. նրանք փախչում են վերջիններից, ինչպէս ժանտախտից, և կան ուսանողներ, որոնց երեսը պրոֆեսսորը տեսնում է միայն քննութիւնների ժամանակ: Վրացի ուսանողը և համալսարանի աուդիտորիան մի տեսակ չեն կարողանում հաշտուել իրար հետ: Եւ եթէ պատահում են դարձեալ մի-մի պրոֆեսսորներ, որ յարգանք են տածում դէպի վրացի ուսանողը,—այդ լինում է միայն տրադիցիայի զօրութեամբ... Հայրենի պատմութեամբ և գրականութեամբ վրացի ուսանողները չեն զբաղւում, և սխալուած չենք լինի, եթէ ասենք, որ նրանցից 90% նոյնիսկ գաղափար չ'ունի մեր անցիակի և գրականութեան մասին»...

«Իվերիան» իր առաջնորդողներից մէկում (№ 121) ասում է, որ այժմեան վրացի ընկած ուսանողութիւնը ոչ միայն անպէպ է հայրենիքի (Վրաստանի) համար, այլ և կոտորում է նրա վարկը այն օտար հասարակութիւնների աչքում, որտեղ նա ապրում է:

Ուսանողների այդ ընդհանուր պատկերն ունի, ի հարկէ և

բացատրութիւններ, և այդպիսիների շարքում մենք առանձին սիրով դասում ենք նորաւարտ երաժշտադէտ պ. Ջ. Փալիւշիլուն, որ սովորում էր Մոսկուայի կոնսերվատորիայում վրաց «Գրբազիտութիւն Տարածող Լճերութեան» հաշուի: Շնորհակալութիւն յայտնելով մօտերս իր բարերարներին լրագիրների միջոցով, նա վերջացնում է իր նամակը հետեւեալ սրտառու խօսքերով. «Կ'աշխատեմ, որ նրանց երախտիքը չը մոռանամ և բոլոր ոյժերս գործ կը դնեմ ծառայելու այսուհետև իմ հայրենի երաժշտութեան»: Եւ այդ տողերը լոյս էին տեսնում նրանից յետոյ, երբ նա արդէն՝ Մոսկուայից Թիֆլիս հասնելուն պէս՝ շտապել էր ուղևորուելու Սփանէթ՝ տեղական երգերը ձայնապնդելու համար...

Մեր ընթերցողներին արդէն ծանօթ «Մոզզաուրի» խումբազիր և մանկավարժ պ. Ի. Ռոստոմաշվիլին թոյլ տուեց իրան՝ իբրև հրապարակախօսի՝ այնպիսի մի անվայել վարմունք, որի նմանը չատ քիչ կարելի է գտնել հրապարակախօսական տարեգրութիւնների մէջ:

Ներկայ թւի յունուար ամսին, ինչպէս յայտնի է, Թիֆլիսի Գիւղատնտեսական Լճերութեան դահլիճում, մի շատ բազմամարդ ինտելլիգենտ հասարակութեան ներկայութեամբ, յայտնի աստիճանաւոր պ. Սուլթան-Կրիմ-Գիրէյը կարգաց մի զեկուցում մայրենի լեզուի նշանակութեան մասին՝ ուսումը ժողովրդականացնելու գործում: Ձեկուցման գլխաւոր միտքը կայանում էր նրանում, որ Կովկասի բոլոր տարրական-ժողովրդական ուսումնարաններում գիտութեան բոլոր առարկաները պէտք է աւանդուեն մայրենի լեզուով, իսկ պետական լեզուն—իբրև մի առանձին առարկայ: Հանդիսական պ. Ռոստոմաշվիլին տեղից վեր կենալով՝ ասում է՝ ի մեծ դարմացում մանաւանդ այնտեղ գտնուած հայ և վրացի ինտելլիգենտների՝ հետեւեալը. «Ձեկուցման մէջ չափազանց մեծ տեղ է տուած մայրենի լեզուին: Դասատուութեան առաջարկուած ձևը ես համարում եմ վնասակար պետական լեզուի շահի համար: Մեզ ամենիս յայտնի է, որ միջնակարգ դպրոցներում աշակերտները լաւ չեն կարողանում իւրացնել ֆրանսերէն և գերմաներէն լեզուները: Դրա պատճառն այն է, որ այնտեղ այդ լեզուներով չեն անցնում միւս ուսումնական առարկաները: Նոյն վտանգը կարող է սպառնալ ուսաց լեզուին ժողովրդական դպրոցներում, եթէ նրանցում բոլոր առարկաները դաս չը տրուին այդ լեզուով»: Պ. մանկավարժի այդ տարօրինակ դատողութեանը

խելոյն հիմնաւոր պատասխան են տալիս վրաց յայտնի մանկավարժ Գողերաշվիլին և ուրիշ վրացիք, ինչպէս նաև այլազգիք։ Սակայն զործն այդպէս չուտ չէ վերջանում. վրաց մամուլն ու հասարակութիւնը մի քանի ամիս շարունակում են արտայայտել իրանց դժգոհութիւնը, հեղնութիւնն ու յանդիմանութիւնը Ռոստոմաշվիլու հասցէին։ Վերջինս, գոնէ հասարակութեան մի մասի առաջ անմեղ երեւոյլ յուսով, տպում է իր ամսագրում այսպիսի մի դատապարտելի ձևի հերքում. «Գիւղատնտեսական Ընկերութեան դահլիճում ես այն կարծիքը յայտնեցի, որ ռուսաց լեզուի ուսումը ժողովրդական դպրոցներում պէտք է սկսուէր ոչ թէ առաջին տարուանից, ինչպէս գեղուցման մէջն էր առաջարկում, այլ—երկրորդից։ Միւս առարկաները մայրենի լեզուով դաս տալու մասին ես ասացի, որ այդ պէտք է անել ոչ թէ միայն երեք կամ չորս, այլ հինգ կամ վեց տարի։ Եւ այն ահագին հասարակութեան մէջ չը գտնուեց մայրենի լեզուի գոնէ մի սրտոտ պաշտպան, որ կարողանար իմ այս համարձակ մտքին ձայնակցելու»...

Վաթսուն տարուց աւել է,—ասում է այդ ատիթով իր «Առասպելական ուրացում» յօդուածում («Իվերիա», № 150) մի հանրածանօթ ուսուցիչ—վաթսուն տարուց աւել է, որ ես ապրում եմ այս յանցաւոր աշխարհում և մինչև օրս ո՛չ իմ ականջն է լսել և ո՛չ աչքս կարդացել մի տեղ այդքան հեշտ կերպով կատարուած մի հերքում... Այդ խաղի շնորհիւ—շարունակում է նա—մեր քաջ խմբակիրը մի կողմից ցոյց տուեց իրան պոլիտիկաների առաջ իբրև ամենահաւատարիմ պաշտպան պետական լեզուի շահերի, իսկ միւս կողմից ուզում է հռչակուել վրաց հասարակութեան աչքում իբրև մի աննման պաշտպան վրաց լեզուի, մեղադրելով միաժամանակ ուրիշ վրացիներին՝ ազգային այդ գանձը պաշտպանելու սառնասրտութեան և անփութութեան մէջ...

Պ. Ռոստոմաշվիլին մի ժամանակ դրած է եղել, թէ «Վրաց դժբաղդութիւնը կայանում է նրանում, որ նրանք դիպլոմատիան (դիւանագիտութիւնը) լաւ չեն հասկանում», և ահա այժմ, ինչպէս իրաւամբ նկատում է պ. յօդուածագիրը, մենք ականատես ենք պ. Ռոստոմաշվիլու դիպլոմատիայի մի նշանաւոր դասին...

Վերջին տարիներս վրաց մէջ նկատելի կերպով դարգանում է սէր դէպի մայրենի լեզուն, մայրենի գրականութիւնը, անցեալը և առհասարակ դէպի նախորդների թողած մտաւոր—հոգեկան ժառանգութիւնը։ Դրա մի արտայայտութիւնը կարող է համարուել այն ահագին իրարանցումը, որ առաջ բերեց

այս ամառս վրաց մամուլում Բուլթայիսի մի խումբ ազնւականների տարօրինակ վարմունքը: Բանը նրանումն է, որ այդ քաղաքի տղանք անուանի ազնւականներ խնդիր են տուել միասին տեղական արական և իգական գիմնազիաների վարչութիւններին, որ իրանց որդոց վրացերէն լեզուի ուսումից ազատեն... Այդ առիթով գրուած բազմաթիւ յարձակողական յօդուածներէն մէնք կը բերենք այստեղ միայն մի կտոր, որ պատկանում է բանաստեղծ Դուտու Միգրելու գրչին. «Դրանից այն կողմը դնալ—ասում է նա—այլիս անկարելի է բարոյական անկման ճանապարհի վրայ: Դա այն վերջին կէտն է, որից դէնը սպառում է ամեն մարդկայինը. իրանց ծագումն ուրանում են միմիայն հողով ստորացածները և աւազակները: Ինչ ուզում էք, պարոններ, արէք ձեր անձին, բայց լինէ իրաւունք ունէք յաւիտենակապէս այլանդակելու և դժբաղդացնելու ձեր որդոցը, որոնք, իմացած եղէք, չնորհակալութիւն չեն յայտնի ձեզ դրա համար»:

Տ. ՓԻՐՈՒՄԵԱՆ

ՎԵՑ ՕՐ Ս. ԹԱԴԵԻ ՎԱՆՔՈՒՄ

(Այցելուի դիտողութիւններէց)

I

Վանքի դիւքը:—Նրա անցեալից:—Նրա կալուածները, զիւղերը:—Սիմէոն ալքի-
սիսկոպոսը և նորոգութիւններ:

Բռնութեան աւերող և անխիղճ ձեռքը անցեալի շատ մը-
նացորդներ ու յիշատակներ քարուքանդ է արել, հաւասարե-
ցրել է հողին, շատ-շատ մնացել են միայն նրանց բեկորները
ցրուած զանազան կողմերում: Բայց ս. Թագէի փառաւոր վան-
քը, որի վրայով անցել է զարնր ամբողջ մի շղթայ, ենթար-
կուել է աւերումների, նա այժմ էլ կանգնած է որպէս կենդա-
նի վկայ և արթուն կերպով հսկում է շրջակայքի վրայ: Նա չի
կորցրել իր հմայքը և վեհութիւնը. այցելուն մի տեսակ հպար-
տութեամբ է նայում դարերի այս մնացորդի վրայ, և մարդի
սիրտը արագ բաբախում է, և նա համակոււմ է մի շարք քաղ-
ցրը, պատմութիւնից մնացած յիշողութիւններով:

Այս հռչակաւոր վանքը ծանր նստած է մի փոս տեղ, ձո-
րի մէջ, և երեք կողմերից բարձրանում են լեռները, միայն ա-
ռաջն է բաց: Ծանր և մերկ են այդ լեռները. նրանք կազմում
են մի-մի յարմար և ապահով, բայց վանքի համար շատ վտան-
գաւոր դիրքեր: Այս դիրքերը բռնուած գէպքում գրեթէ ոչ մի
չարժոււմ անհնարին կը լինի վանքի մէջ: Վանքի սլաքսօլի տա-

կից հոսում է Մակուայ գետի մի փոքրիկ վտակը: Իսկ վանքի առաջ տարածւում է գաշտավայրը, մեծ և ընդարձակ է այդ հարթութիւնը, նա ծածկուած է կանաչ, բարձր խոտով և ցորենի արտերով: Նայում ես, և քամին, բարակ և ախորժելի քամին շրնկշնկալէն դալիս չոյում է կուրծքդ և անցնում գնում: Միշտ էլ կայ այդ քամին, սառն և դուրեկսն, և մաքուր կանաչ գաշտավայրը օրօրում է ինչպէս ծովի ալիքները: Բարձր է վանքի շրջակայքի դիրքը, մանաւանդ խոյ գաւառի հետ համեմատած: Այժմ թէն յուլիսի 10-ն է, և խոյ գաւառում հունձը և կալսելը կանոնաւոր սկսուել է, բայց այստեղ ցորենը դեռ կանաչ է: Ամարանոց է այստեղ, օդը սառն, մրդեր, խաղող կայն չի հասնում այստեղ:

Իսկ վանքի հարաւային կողմում, լերան լանջում թառած ապրում են մի բուն հայեր: Դա մի փոքրիկ գիւղ է, մօտ 30 տուն հայեր, որը թէն կոչւում է վանքի գիւղ, բայց պատկանում է Մակուի խաներից մէկին, Իզն խանին:

Ահա հէնց այստեղ այցելուն կանգ է առնում և նրա սիրտը լցւում է տխուր զգացմունքով: Վանքի գիւղը այժմ պատկանում է մի խանի, ահա ինչ: Ծիշտ է, ս. Թագէի վանքը թէն կանգուն է և պահպանել է իր հմայքը և վեհութիւնը, բայց չ'ունի նա իր անցեալի հոշակը և գիւղը: Ո՛ւր է, չը կայ նրա հին և փառաւոր անցեալը, ուր են այնքան հարստութիւնները և կալուածները, ուր է նրա ընդարձակ իշխանութիւնը: Այժմ չը կայ դրանցից և ոչ մէկը, և նա վերածուել է մի հասարակ վանահայրութեան: Ահա այս սեպակէտից շատ տխուր, շատ անմխիթար է վանքի տպաւորութիւնը:

Չը կայ ոչ մի գրաւոր տեղեկութիւն նրա այդ փառաւոր շրջանի վերաբերմամբ, եթէ չը հաշւենք մի քանի արձանագրութիւնները, վանքում չը գտայ և ոչ մի թուղթ այս կամ այն առաջնորդի, այս կամ այն վանահայրի գործունէութեան մասին: Զարմանալի է, այնքան վանահայրեր են եկել գնացել, բայց ոչ մէկը չի թողել իրանից յետոյ իր նախորդի մասին մի փոքրիկ և համառօտ տեղեկագիր: Եւ այցելուն մի բան իմանալու համար ստիպուած գիւմում է գիւղացիների մէջ դեռ վառ պահուած յիշողութիւններին, օգտուում է այս և այն արձանագրութիւնից:

Արձանագրութիւններից մենք իմանում ենք, որ վանքը նորոգուել է երկու անգամ: Վանքի արեւելեան մասը, ուր դրանքում է Թագէոս առաքեալի զերեզմանը և կաղմում է սեղանը և խորանները, շինուած է հայկական ՉՀԸ թւին, այսինքն

մօտ 590 տարի սրանից առաջ. և դրա վերաբերմամբ գտնուում ենք հետևեալ արձանագրութիւնը.

«Այս տաճար լուսաւիր և երկնամասն, առկայացել, հաստատագոյն հիմամբք ի վերայ աստուածաբնակ շիրիմին ս. առաքելոյ Թադէոսի, որ ըստ բազմատեսակ յանցանաց մեր ըզկործանուամն էառ ի չարժէ. իսկ ես նուազտ սպասաւոր մին, Չաքարիա եպ. որդի պարոն Մանուէլայ, կարողութեամբ Աստուծոյ սկիզբն արարի կրկին նորոգութիւն առաւել քան զառաջինն, ի ժամանակին սաստիկ նեղութեան և հալածանաց քրիստոնէից, որ և բազում եկեղեցիք քակտին. յասն որոյ արձանագրեցաք զյիշատակս մեր առ ի յիշատակել զմեզ առաջի մեծին Աստուծոյ և անարիւն զենման զառինն Աստուծոյ հանդերձ ծնողօք և զարմիւք և զաջորդն մեր աղբաւր որդին, զտէր Տիրացուն և զհարազատ եղբայրս մեր զՊետրոս և զՍարգիս, որք հիմնարկութեան նպաստաւորք եղեն ընչիւք կոտարումնութիւն ՉՀԼ»:

Իսկ վանքի միւս մասի նորոգութիւնը սերտ կերպով կապուած է երջանկայիշատակ Սիմէոն արքեպիսկոպոսի հետ: Ամեն մի գիւղացի երկիւղածութեամբ և օրհնանքով է յիշում այդ անունը, այս անուան հետ կապուած են շատ քաղցր յիշողութիւններ: Սիմէոն արքեպիսկոպոսը համարուում է ամենաչինարարը, նա է՝ չինել վանքի արեւմտեան մասը, որը կազմում է ամբողջ վանքի-տաճարի մեծագոյն բաժինը: Սպիտակ և յգլուած քարերից է շինուած այդ մասը, կանգնեցրած են հաստ և կայուն սիւներ և դրսի կողմից, պատերի վրայ քանդակուած են առաքելաների պատկերները, զանազան տեսակի կենդանիներ: Մի տեղ ահա կուում են երկու առիւծներ, մի ուրիշ տեղ հըրեշտակն է յաղթական կերպով կանգնած, վանքի մուտքի առաջ, սիւների վրայ զոյգ առիւծները... Թէև այնքան նուրբ չեն այդ քանդակագործութիւնները, բայց շատ կոպիտ էլ չեն, և պէտք է ենթադրել, որ ահագին աշխատանք և ծախս է գործ դրուել:

Բացի այդ քանդակագործութիւններից, պատերի, ամեն մի սեան վրայ կան արձանագրութիւններ, ուր յիշատակուած են, թէ այս սիւնը, այս քարը ով է տուել կաշին: Տաճարի ըսպիտակ մասի վրայ եղած արձանագրութիւններից զերթէ իւրաքանչիւրի մէջ յիշատակուած է Սիմէոն արքեպիսկոպոսի անունը: Ի միջի այլոց տաճարի առաջ դրան վրայ գտնուում է մի արձանագրութիւն, որը անհրաժեշտ եմ համարում առաջ բերել, որովհետեւ վերաբերում է արեւմտեան մասի շէնքին, չը նայած մի երկու բառ որոշ չի կարդացւում:

«Արքադան Սիմէոն արքեպիսկոպոսիս սրբոյ էջմիածնեցի, երբեմն լաթուակալ տէրութեան (մի բառ չի կարգացում), նստուլին յաթոռոյս առաջնորդ, շինեցաւ Հնորհիւ Ամենակալին Աստուծոյ չքնեղ դեղ (որոշ չէ) և լուսակիր տաճարս և զանգակատունս ի հիմանէ կարի աշխատութեամբ և հողածութեամբ առաջնորդ Սիմէոն արքեպիսկոպոսիս, յիշատակ և ծնողացս Մուրատին և Գայիանին *)»:

Ինչպէս այս, նոյնպէս և այն բոլոր արձանագրութիւնները, որոնց մէջ յիշատակուած է Սիմէոն արքադանի անունը, կրում են ՌՄԿ հայկական թուականը, շատ-շատ մի երկու տարով աւել կամ պակաս Ուստի սրանից կարելի է, կարծում եմ, ենթադրել, որ Սիմէոն արքադանը առաջնորդ է եղել Արտազ գաւառում XIX դարի սկզբներում:

Բայց տաճարի նորոգութիւններից, Սիմէոն արքեպիսկոպոսը չի նշել է վանքի բակում առաջնորդարան, զանազան խուցեր, որովհետեւ նրա ժամանակ, ինչպէս և առաջ, բայց առաջնորդից եղել են և վարդապետներ, ուրիշ խօսքով վանքը եղել է մի միաբանութիւն: Այդ թւականներին թագաժառանգ է եղել Ատրպատականում Նայիր Սալթանէն, Աբաս շահը, և մինչև այժմ էլ ցոյց են տալիս այն խուցը, ուր մի անգամ գիշերել է թագաժառանգը: Թէ առաջնորդարանը և թէ միւս շէնքերը ամբողջապէս քարից են չինուած: Շատ է ծախսուած անշուշտ, մեծ աշխատանք գործ դրուած, բայց շէնքերը շատ հասարակ են, շատ ցածր, խոնաւ, մութ, գրեթէ միանգամայն անյարմար բնակութեան համար: Բայց այդ մասին մանրամասն յետոյ:

Սիմէոն արքեպիսկոպոսի ժամանակ, ինչպէս և որոշ ժամանակ նրանից յետոյ. ս. Թադէի վանքը համարւում էր Ատրպատականի առաջնորդարանը. բաւականին յետոյ միայն առաջնորդարանը փոխուեց Թաւրիզ. Հարուստ, միանգամայն ապահով էր նիւթականի կողմից Ատրպատականի առաջնորդարանը: Արտազ գաւառը, ինչպէս և ամբողջ Ատրպատականի Նահանգը լիքն էր հայերով, ստացւում էր առատ հասոյթ. բայց այդ հասոյթից վանքը—առաջնորդարանը ունէր իր սեփական դիւղերը և կալուածները, որոնցից ստացուած արդիւնքը կարող էր լիովին բաւարարութիւն տալ թեմի բոլոր պահանջներին: Նա ուրիշ խօսքով եղել է մի հարուստ և ընդարձակ միաբա-

*) Արձանագրութիւնների մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ ցանկացողները թող թերթին «Արարատի» 1898 թի համարները. Խաչիկ վարդապետը գրեթէ բոլոր արձանագրութիւնները առաջ է բերել:

նութիւն, իր բոլոր պարագաներով և յարմարութիւններով: Վանքը ունեցել է թւով 15 գիւղ, որոնք գտնուում են Մակու և Խոյ գաւառներում, և մինչև այժմ էլ այդ գիւղերի վերաբերմամբ— որպէս վանքի սեփականութիւններ— եղած բոլոր վաւերացրերը — ֆիրմանները պահուում են Էջմիածնում, իսկ անունները ես կարողացայ ստանալ ներկայ վանահօրից: Ահա նրանք.

1) Մըզրա, արևմուտք, վանքից 4 ժ. հեռաւորութեան վրայ:

2) Իւմրի-դաշ, արեւելք, 3—4 ժ.:

3) Ղարաքիլիսա (վանքի գիւղ), կապծ է վանքին:

4) Դիպակ-դաշ:

5) Աղբուլաղ:

6) Ղարաթուլքի, արեւելք, $\frac{1}{2}$ ժամ:

7) Սոնա-բուլաղ, հարաւ, $1\frac{1}{2}$ ժ.:

8) Աղդաշ:

9) Մահլաղան, Խոյ գաւառում:

10) Ղորուղ, վանքից 3 ժամ հեռաւորութեան վրայ:

11) Նուշիկ, մէկ օրուայ ճանապարհ.

12) Քեոհրեվան, Խոյ գաւառում, Սէյդաւարի մօտ:

13) Չորս, մօտ Շուքուկ, Մակուում:

14) Ռահան, հարաւ, 1 ժ. հեռ. վրայ:

Այս 14 գիւղերից զատ, վանքը ունեցել է զանազան տեղերում մի արտ, մի այգի, մի տուն և այլն, ինչպէս օրինակ՝ Դի-դա գիւղում (Խոյ գաւառ) ունէր մի տուն և մի այգի, Չորս գիւղում «բաստի» հողը, Փեռա գիւղի մէջ մի անտառ, Խոյ քաղաքում մի այգի և տուն (այդու մէջ է այժմ չինած եկեղեցին և դպրոցը), Հաֆթվանում (Սալմաստի գաւառ) մի քանի արտեր, Խոյում, ինչպէս և Մակուում ունեցել է մի քանի ձիթհան դործարաններ: Եւ այս բոլոր կալուածների համար կան այժմ «ղաբալաներ». բայց արդեօք այդ վաւերաթղթերը և ֆիրմանները ունեն այժմ այնքան զօրութիւն, որ հնարաւոր լինի յետ ստանալ կալուածները, այդ թողնում եմ Էջմիածնին մտածելու: Բայց յամենայն դէպս այս բոլորը սրբող ցոյց է տալիս, թէ ժամանակին վանքը որքան հարստութիւն, որքան կալուածներ և գիւղեր է ունեցել:

Բացի վերև առաջ բերուած գիւղերից և սեփականութիւններից՝ վանքը ունէր լծկան մի քանի զոյգ եղներ և գոմէշներ, դուլթաններ, սայլեր, ջրաղաց, նախիրներով տուար, հօտերով ոչխարն էր դուրս գալիս վանքից: Որ խսկապէս վանքը ունեցել է մի քանի հօտ ոչխարներ, որպէս վաստ կարող է ծառայել և այն, որ վերոյիշեալ վաւերաթղթերի մէջ յիշատա-

կուած է, թէ վանքը ունէր զանազան լեռներում երեք «մա-
ղալ»-ի տեղեր:

—Ձանոմ, առանձին չեւտով նկատեց զիւղի ուէս Թաթոսը,
ուրիշ բան է եղել մեր վանքը, ամբողջ մի գիւղ, ինչքան մար-
դիկ են լիացել նրա սեղանից:

—Հէյ զիտի երանելի ժամանակ, հառաչեց զիւղի տէր-
տէրը: Էն ժամանակները, վարժապետ ջան, ուրիշ բաներ էին,
էլ էն օրերը չենք տեսնելու. մենակ երեսուն, քառասուն հո-
տաղ ունէր, էդքան էլ տնտեսներ: Էս խուցերը տենում ես,
սորանք լիքն էին վարդապետներով. հէջ հաշիւ կար, վարժա-
պետ, մեր վանքի գեալուլին: Է՛յ, էլ էնենց բան տնտալու չենք,
թող փիւս մարդի տունը քանդուի:

Գիւղի բոլոր մարդիկ մի տեսակ յափշտակութեամբ և միև-
նոյն ժամանակ հպարտութեամբ են պատմում վանքի այդ փա-
ռաւոր շրջանի ժառին: Այդ յիշողութիւնները անցնում են բերնէ
բերան, սերնդից սերունդ և շատ վառ, շատ թարմ պահպան-
ւում են ժողովրդի մէջ: Ամենքը զիտեն այդ. պատմում են միշտ,
առանց ձանձրանալու, պատմում են որպէս մի նոր դէպք, որ-
պէս մի օրուայ յիշողութիւն լինի: Վեց օր փնայի նրանց մէջ,
վանքում, բայց նոյն պատմութիւնը մի բանի անգամ լսելի. գա-
լիս, նստում են վանքի պատի տակ և սկսում զրուցել, խօսել
վանքի երանելի ժամանակներից: Ամենահետաքրքիրը այդ պատ-
մութիւնների մէջ զիւղացիների ոգևորութեան և յափշտակու-
թեան չեւտն է, որ նկատելի է բոլորի մէջ, և մարդ լսում է
սրանց առանց յոգնելու կամ ձանձրանալու, որովհետև նրանք
հոգի, կեանք են դնում պատմութիւնների մէջ:

—Տէր հայր, այդքան որ պատմում էք նոյն բանը, բը չէք
ձանձրանում, գիմնցի ես:

Բոլորի գէմքերին երեսց մի ուրախ ծիծաղ:

—Է՛հ, տնաչէն, ձանձրանալս ձրն ա: Ես չորս քսան և
հինգ տարեկան եմ, բայց միշտ էլ պատմել եմ, իսկի ձանձրա-
նալ կայ: Ռէս, տարեկան քանի անգամ եմ պատմում:

—Ես ինչ գիտեմ, տէրտէր: Պ. վարժապետ, օրեկան եր-
կու անգամ հաշիւը գնայ, դեռ քիչ եմ աւտում:

—Էտենց ա բ՞ը, ես եմ գիտում է, հաշուել չի լինի, ջանոմ,
ժպտալով վրայ բերեց տէրտէրը:

Օրիժինալ և հետաքրքիր են զիւղացիների զրոյցները, նրանց
յիշողութիւնները, մենք այդ կը լսենք կամայ-կամայ, աստի-
ձանաբար: Այժմ մենք անցնենք բուն խնդրին:

Մի փոքր վերև ասացի, որ այդ ժամանակ Աստղատականի
առաջնորդարանը ս. Թադէի վանքն էր. այս միայն մի քանի

տասնեակ տարի է, որ առաջնորդարանը փոխուել է Թաւրիզ: Վանքում նստած առաջնորդը ոչ միայն համարւում էր հոգեւոր պետ Ատրպատականի հայ ժողովրդի համար և հոգեւոր գործերն էր վարում, այլև նա համարւում էր միևնոյն ժամանակ աշխարհիկ պետ: Նա էր ղեկավարում հոգեւոր, հասարակական և քաղաքական խնդիրները: Ծիշտ է, այժմ էլ նոյն իրաւունքները վայելում են Ատրպատականի առաջնորդները, բայց առհասարակ թոյլ են դնւում և չեն կարողանում լիովին օգտուել իրանց ընդարձակ իրաւունքներին: Իհարկէ՝ մեր խօսքը բացառութիւնների մասին չէ:

Այն շրջանում, անցելու մտայնական թեմը, զանազան յիշողութիւնների և վանահօր տուած տեղեկութիւններ վրայ հիմնուած, աւելի մեծ և ընդարձակ է եղել, առաջնորդի իրաւասութիւնը շատ հեռուն էր տարածւում, քան այժմ է: Դեռ ուսուցարսական պատերազմից առաջ Ատրպատականի թեմի վրայ էր Սուրմալուի ընդարձակ գաւառը, Բայազետը, Աղբակը, Բարդուղիմէոսի վանահայրութիւնը: Այս բոլորը մի կողմից, իսկ միւս կողմից էլ նրա իշխանութիւնը դէպի Պարսկա-Հնդկաստանի թեմը աւելի հեռուն, աւելի լայն չափով էր տարածւում:

—Նւ իսկապէս, նկատեց վանահայրը, այն ժամանակ եղել է մի մեծ թեմ, ընդարձակ իրաւունքներով, հայաշատ, հարուստ կալուածներ, առատ արդիւնք, իհարկէ՝ այդպիսի պայմանների մէջ կարող էր վանքը բարդաւածել, դիրք և փայլ ստեղծել իր համար: Բայց ի՞նչ կայ այժմ. գրեթէ ոչինչ. այժմ վեր է ածուել միայն մի խեղճ վանահայրութեան շնորհիւ մի չարք պատճառներով:

Բայց այժմ անցյնէնք այդ «մի չարք պատճառներին»:

II

Հայերի դադլթը:—Կողոպուտներ թիւրքերի և քիւրդերի կողմից:—Առաջնորդարանի տեղափոխութիւնը:—Եռայի վարդապետ և ուրիշ վանահայրեր:

Վրայ է հասնում 1828 թւականը: Տեղի է ունենում ուսուցարսական պատերազմը, իսկ այս պատերազմի անմիջական հետեանքը և արդիւնքը լինում է պարսկահայերի դադլթը: Ատր-

սլատականի ընդարձակ և հայաշատ նահանգը կամաց-կամաց, օր-առ-օր սկսում է դատարկուել: Ամբողջ Արտազ գաւառը, այժմեան Մակուի խանութիւնը, որը բռնուած էր գրեթէ միմիայն հայերով, և միակ հայերն են եղել տիրողները, տարէցտարի նուազում է գաւառը, հայերը վաղթում և բնակութիւն են հաստատում Կովկասի և Ռուսաստանի զանազան մասերում:

Հարուածը չատ մեծ էր թեմի համար: Ատրպատականի առաջնորդարանի—վանքի դիրքը խախտուած է. նրա հեղինակութիւնը թուլանում և իջնում է իր բարձրութիւնից: Ամբողջ թեմը կորցնում է իր ուժը հայերի պակասելու պատճառով:

Բացւում է կողոպուտների և աւարառութիւնների մի լայն ասպարէզ: Պարսկա-տաճկական սահմանադիւսի սարերի վրայ թառած քիւրդերը ախորժակները բացած և ժանիքները սրած յած են գալիս իրանց բարձրութիւններից, և առանձին-առանձին հրոսախմբեր կազմում, յարձակւում են հայաբնակ գիւղերի վրայ և զարկում տանում: Թալան-թառաշը քիւրդերի պապենական և միեւնոյն ժամանակ սրբազործուած սովորութիւնն է: Քանի-քանի անգամ քիւրդերը յարձակումներ են գործել վանքի վրայ, աւար, թալան վերցրել և հեռացել: Նրանց յարձակումները, այս վերջին 10—15 տարիներում աւելի յաճախակի էին տեղի ունենում և աւելի վայրագ բնաւորութիւն էին կրում, այդ էլ պիտի բացատրել մեր կեանքում տեղի ունեցած «յայտնի դէպքերով», որ մի տեսակ դժգոհութիւններ առաջ բերին և լարեցին քիւրդերին հայ ազգաբնակչութեան դէմ, կամ աւելի ճիշտ է ասել, որ քիւրդերի վերաբերմունքը մի փոքր խրատացրին, քանի որ առանց այդ «յայտնի դէպքերի» էլ հաշտ չէին հայերի հետ, և միշտ էլ յարձակումներն անսպաւառ էին:

Այս այսպէս լինելով հանդերձ հէնց այդ քիւրդերը գալիս են վանք ուխտի, այն էլ ընտանիքներով, մեծ խմբերով: Գուցէ առարկի ընթերցողը, թէ նրանք գալիս են, որ ցերեկով ծանօթանան վանքին, տեսնեն նրա ոյժը, ճանաչեն մօտիկից, թէ նրանց վերաբերմունքը կեղծ է, չինձու: Բայց չեմ կարծում. ինչպէս նաև ուրիշներն են պատմում, նրանք, այդ վայրենի քիւրդերը մօտենում են վանքին մեծ երկիւղածութեամբ, մաքուր, անկեղծ սրտով: Բայց դժուար թէ հնարաւոր լինի մի կերպով հաշտեցնել այս երկու ծայրայեղ—թալանել և պաշտել—և իրար հակասող վերաբերմունքները, թէև իրական կեանքը երկուսի վերաբերմամբ էլ տալիս է անթիւ և կատարուած փաստեր:

Հետաքրքիր է այս էլ յիշատակել, որ վերջին 3—4 տարիներում վանքը սպառնում է նշլել և միանգամայն ազատ քիւրդական յարձակումներից: Նւ հայերին աջողուել է վերացնել քիւրդերի և իրանց մէջ եղած ատելութիւնը և բարեկամական յարաբերութիւն ստեղծել: Այդ աջողուել է, իհարկէ, մեծ դժուարութեամբ և տարիների ընթացքում, այն էլ միմիայն Կարէինի և նրա շրջակայքում եղած քիւրդերի հետ, որոնց պետն է Մուստաֆա բէյը, որն այժմ մի քանի կալուածական խնդիրների առիթով միանգամայն լարուել է Մակուի սարդարի դէմ և զուցէ, ինչպէս լսում ենք, շուտով մի իրստ կռիւ տեղի ունենայ այդ երկու պետերի մէջ: Մուստաֆա բէյը պատրաստութիւնների մէջ է, և նրան աջողուել է իրան միացնել և մի քանի մանր յեղերի *):

Այսպէս ահա, քիւրդերի յարձակումները, ալան-թալանը մի կողմից, ասեա այս հերիք չէր, միւս կողմից էլ թիւրք խսաներն ու բէգերն են գալիս, իրանց ժողովրդի հետ միասին էլ աւելի վատթարացնելու հայ ազգաբնակչութեան վիճակը, էլ աւելի դառնացնելու նրա կեանքը: Ատրպատականի, ինչպէս և Արտազ դաւառի դատարի և բացուած տեղերը լցում են թիւրքերը, տարէցտարի այնքան են լցում, որ կազմում են ազգաբնակչութեան մեծագոյն մասը: Բնականաբար նրանք սկսում են մի շարք ոսնձգութիւններ հայերի վերաբերմամբ, երկրի իշխանութիւնը և կառավարութիւնն անցնում է նրանց ձեռքը, սկսում են ճնշել և հալածել հայ ժողովրդին, աչք են սնկում վանքի կալուածների և սեփականութիւնների վրայ և կամայ-կամայ, ժամանակի ընթացքում օրում են այդ բոլորին: Նւ մէկ էլ յանկարծ սթափւում է վանքը, նայում է շուրջը, մնում է դժբեթ է ոչինչ, տեսնում է միմիայն ամայի և դառն իրականութիւնը:

Ասեա հէնց այդ ժամանակներում, այդ ցաւալի իրականութեան միջոցին Ատրպատականի առաջնորդարանի տեղափոխութիւնը գալիս է հոչակաւոր վանքի անկումը էլ աւելի արագացնելու և կատարեալ կացուցանելու իրերի այդպիսի խառն վիճակում, որ անհրաժեշտ էր մի ուժեղ ձեռք, շատ

*) Հէնց վերջին պահուն, երբ արդէն յօղուածս բոլորովին պատրաստ էր, նամակ ստացայ Կարէինից, որ Մուստաֆա բէյի մարդիկը յարձակուել են Կարէինի մի ջրաղացի վրայ, կտրել են շուրս քիւրդի դուլս և էլի գիշերով բարձրացել լեռները: Այժմ բէյը իր «էլսի» գտնում է սարերի վրայ, դրութիւնը շատ անապահով է և խառն:

մօտիկից հսկող մի զօրեղ առաջնորդ՝ վանքը անկումից պահպանելու, յանկարծ եղածն էլ հեռանում է։ Թէ ճիշտ որ թւին է եղել առաջնորդարանի տեղափոխութիւնը ս. Թադէի վանքից Թաւրիզ, յայտնի էէ զոնէ ինձ համար, ոչ էլ հնարաւորութիւն ունեւմ ստուգելու, բայց այսքանս պարզ է, որ այդ տեղի է ունեցել մօտ քառասնական թւականներին և Սահակ եպիսկոպոս Սաթուհեանի օրով, որին գիւղացիք Սաթուհեով են կոչում։

—Ձէ, ջանմ, վիճում են գիւղացիք, երբ տէրտէրը ձայնը բարձրացրեց. ևս էնպէս եմ յիշում սրտազան Սաթուհեովին, ասես երեկ լինի։ Նա փախաւ, դնաց Սալմաստի, Թաւրիզի կողմերը որպէս թէ պտուղը հաւաքելու, մնաց Թաւրիզ, էլ չեկաւ։ Էդ կը լինի դուզ 3 քօան տարուայ խօսք, կամ հինգ տարի զրանից պակաս, էն ժամանակ, պ. վարժապետ, ևս քո հապակի կը լինէի հա...:

—Հա, էդպէս կը լինի. 60 կամ 55 տարի սրանից առաջ, նկատեցին ոէս Թաթոսը և մի ծերունի։

Քիւրդերի և թիւրքերի կողոպուտները և ասպատակութիւնները, առաջնորդարանի տեղափոխութիւնը և պարսկահաւերի գաղթը վանքի վիճակը դարձնում են անմխիթար և աննախանձելի. պակաս մնացած տեղն էլ գալիս են լրացնելու վանքի վանահայրերը։ Իրար յետեից դալիս են մի քանի վանահայրեր, մէկը միւսից ապիկար, մէկը միւսից ընչաքաղց և խայտառակ։ Ճգմում, հիւժում են հարուստ վանքը և թողնում են դատարկ և չոր քարերը, որոնք ողբում են ցաւալի իրականութիւնը։ Մարդ ակամայ մտածում է, լաւ է որ քարերն էլ չեն կերել։

—Է՛հ, վարժապետ, սրտի խորքերից հառաչեց տէրտէրը, փիս մարդիկ էին մեր վարդապետները, փիս, այ նրանց տունը քանդուի, ինչպէս մեր վանքը ընդորովին քանդելին։

—Տէր հայր, գիմեց վանահայրը, Եսայի վարդապետի պատմութիւններից արա, որ պ. Երուանդը լսի։

Տէրտէրի երեսը փայլեց, և սկսեց իրան հաւաքել, որ սկսի։

—Է՛հ, պ. վարժապետ, էնքան պատմելու բաներ կան, չը գիտեմ որը պատմեմ։ Եսայի վարդապետ, այ նրա օջաղը այրուի, ասում եմ. Եսայի վարդապետը 39 տարի էստեղ հայր սուրբ էր (պէտք է հասկանալ վանահայր)։ Էն ժամանակ էլ վանքը շատ հարուստ էր, ունէր լծկան եղներ, գոմէշներ, կըթան կովեր և մատակներ, մի քանի սայլեր, գոթաններ, սուրուններով ոչխարներ և նախիրներով տաւար, ջրաղաց, ինչ զը-

լուսդ ցաւացնեմ, շատ մեծ հարստութիւն, բայց էդ տնաքանդ վարդապետը ամենը տկանց արեց բոլորը...

Լսեց նա, զգուշութեամբ նայեց շուրջը, գլուխը մօտեցրեց ինձ, խորհրդաւոր կերպով և ցածր ձայնով փափսաց. «բոլորը տնաւեր հայր սուրբը լցրեց իր աղբօր տունը, որը հէնց հիմայ էլ մեր դեղումն ա»։ «Բ'ր, էտենց ա հա», բարձրացրեց ձայնը տէր հայրը և ժպիտը երեսին նայեց ոէս Թաթոսին և վանահօրը։

—Ոչ միայն այդ, աւելացրեց վանահայրը. ինչպէս պատմում են, զողացել է նաև վանքի իրերից, ինչպէս խաչ կային, և խկապէս այժմ զրոանցից չատերը չը կանս Այժմ նրա բարեկամը մեծ հարստութեան տէր է։

—Հըմ, քմծիծաղ տուեց ոէս Թաթոսը և ձեռքը ամուր խփեց վանքի պատին.—ստրա զօրութեանը մեռնեմ, իսկի կը թողնի, որ իր շօրը հալալ ուանն, քթնւրից դուրս կը բերի։ Ինչպէս երեւում է հայր սուրբը բանի եղելութիւնը դեռ չի իմացել։

—Ոչ, ինչ է պատահել։

—Ինչ է պատահել, երեք-չորս օր առաջ Աւետիսից (Եսայի վարդապետի բարեկամը) զողացել են փողերը, ասում է ինքը, որ եղել է 28 հատ տաճկական ոսկի, 30 հատ ուսական տաս մանէթանոց, 200 մէկ մանէթանոց, դեռ ուրիշ բան էլ կայ, բայց չի ասում։

—Էդպէս էս մեր վանքը ոչ մէկին անպատիժ չի թողնում, վրայ բերեց մի գիւղացի և խաչակնքեց երեսը։

Առհասարակ այստեղի ժողովուրդը շատ երկիւղածութեամբ է վերաբերում դէպի վանքը։ Եղել են դէպքեր, որ յանցաւորները պատիժ են կրել, այս կամ այն կերպ շլատուել են, և ժամանակի ընթացքում այդ հաւատքը աւելի ու աւելի արմատացել է ժողովրդի մէջ։ Նոյն այդ երկիւղածութիւնը և հաւատը նկատելի է և թուրքերի մէջ։ Թէև ևս վեց օր մնացի վանքում, բայց մի քանի անգամ թուրքեր կիսն վանք ուխտի. նրանք աւելի հաւատում են, մօտենում վանքին, քան հայ դիւղացիները։ Մեծ հաւատ ունի մանաւանդ Մակուի այժմեան սարգարը և մի քանի անգամ առաջարկել է, որ իր ծախսով մի բան չինուի վանքում, որպէս իր հաւատի նշան։ Շատ անգամ թուրքերը նախատում են հայերին և ասում. «գուք ունէք շատ զօրաւոր վանք, կարող սուրը ունէք, բայց չէք կարողանում նրան արժանի կերպով պատուել»։

Ինչ որ է. գալով Եսայի վարդապետին, պիտի ասեմ, որ ոչ ոք մի լաւ յիշողութիւն չը պատմեց նրա 39 տարուայ կեանքից։ Բոլոր գիւղացիների բերնից անէծք, միայն անէծք էր

լսում նրա հասցէին: Սիմէոն արքեպիսկոպոս և Նսայի վարդապետ, այս երկու անձնաւորութիւնները հակապատկեր են ներկայացնում վանքի տարեգրութեան մէջ: Մէկը որքան շինարար, միւսը նոյնքան աւերող, մէկը այժմ սուրբի հռչակ ունի ժողովրդի մէջ և միշտ էլ փառաբանում է, իսկ միւսը մի ակրիժ է կազմում վանքի տարեգրութեան մէջ, և անէծք է թափւում նրա գլխին:

— Հէնց բոլոր վանահայրերը որպէս աւերող և թոյլ են կոչել, դիմեցի ես:

— Հա, պ. վարժապետ, վրայ բերեց մի գիւղացի, շինարար հայր սուրբ շատ քիչ ենք ունեցել, բոլորն էլ կերել, փրկացրել են:

— Յիշում ես, տէրտէր, փրկապոս հայր սուրբին, սկսեց ռէս թաթոսը. նա շատ ֆաղիւր (խեղճ) մարդ էր, անճար, ուտել էր չը գիտէր: Ամբողջ օրը փակուած էր ներսը. նա մընում էր այն էն օթախում, խեղճը էնքան էր մնում փիս օդի և ծխի մէջ, որ զուլսը գժւում էր, և չէր կարողանում դուրս դալ, յետոյ մենք էինք քաշում դուրս հանում: Քանի անգամ հազար զուլսը խփել է էն դրան քարերին, և ուռել է:

— Էհ, նա շատ անճար և ողորմելի մարդ էր, աւելացրեց տէրտէր. նա թէն շատ թոյլ էր, անպէտք, բայց էնքան վնաս էլ չէր տալիս վանքին: Էտենց վարդապետներ ենք ունեցել, տեսնում ես, վարժապետ, էն շինութիւնները (նա ցոյց է տալիս գոմերը, մարազը կայն), դրանց բոլոր գերանները քանդել, հանել և վառել են. այն էտենց վարդապետներ ենք տեսել: Տնաւերները հէջ իրանց ետին օրուայ մասին չէին մտածում, միայն քանդում, աւերում և ուտում էին, էն էր մնացել, որ պատերն էլ ուտէին: Իսկ Բազունին-Մազունին, ամենին էլ մատներին պէս ճանաչում եմ. ոչ մէկն էլ բարի պտուղ չէր, մանաւանդ էդ Բազունին: Էս էլ ասեմ, պ. վարժապետ, որ էդ Բազունին լաւ հայ էլ չէր, շատ ալա-բալա (կասկածելի) էր երևում մեր աչքին:

— Չէ, տէրտէր, ժպիտով նկատեց ռէս թաթոսը, մեր վարժապետը, ինչպէս երևում է, լաւ ականջ ունի, լաւ լսող է:

— Հա, երևում ա, մենք էլ հէնց էտենց մարդի ենք ման գալիս, դեռ էնքան պատմութիւններ կան. էսօր էսքան հերիք ա:

Գիւղացիները ոտքի կանգնեցին և մէկ-մէկ, իրար յետեից հեռացանք. ես մնացի հազար տեսակի ճնշող պատմութիւնների և զրոյցների աշխարհում:

III

Վանքի արդի վիճակը. լինչ էր մնացել, այժմեան վանահայրը և բարենորոգումները. ուրիշ մնացորդներ:

—

Բազումնի վարդապետից յետոյ վանքը կարճ ժամանակ համարեա թէ թափուր մնաց. կառավարում էր մի աշխարհական մարդ, որից անմիջապէս յետոյ նշանակւում է այժմեան վանահայր՝ Գէորգ Ժ. Վ. Նալբանդեանը: Այնպէս որ այս մօտաւորապէս երկու տարի է, գուցէ և մի քիչ աւելի, որ ս. Թադէի վանահայրութիւնը յանձնուել է Գէորգ վարդապետին:

Բայց լինչ գտաւ նա վանքում, երբ նա եկաւ, ունէր վանքը գէթ ապրելու միջոցներ:

Իրականութիւնը շատ տխուր էր, նոյնիսկ սղանիչ: Չը կար կալուածներից և ոչ մէկը. դեռ այդ ոչինչ: Չը կային լըծկան գոմէջներ կամ եղներ, որպէսզի վարուցանին սկսուի, չը կար սայլ և գութան, աւերակ էր դարձել և ջրաղացը: Եղած մի քանի հատ կովերը և ոչխարները չեն տալիս բաւարար բան, ցորեն գրեթէ չը կայ: Ահա այս աստիճան յուսահատական էր երկրի դրութիւնը: Գէորգ վարդապետը ստանձնում է պաշտօնը, գալիս է վանք, տեսնում է դառն իրականութիւնը և բոլորովին շշմում և չվար է մնում: Ամբողջ շաբաթներ են գալիս ու անցընում, և հնարաւորութիւն չ'ունեն մի տաք կերակրի երես տեսնել, շատ անգամ յամաք հացով են օրեր սպանել:

Այս ապրուստը. իսկ լինչ էր ներկայացնում վանահօր բընականը: Շատ հետաքրքիր է այդ խուցը: Դա մէկն է այն սենեակներից, որ չինել է Սիմէոն արքեպիսկոպոսը սրանից մօտ 90 տարի առաջ, թէև յանցանք է այդ խուցերին սենեակ անուն տալը: Յածլիկ և խոնաւ են այդ խուցերը, դեռ այդ, ասենք, տանիքի է. ապա ողորմելի և խղճուկ լոյսը: Վանահօր խուցը, որը համարւում է առաջնորդարան և ամենալաւը, երբ մարդ խարխալելով մտնում է, մի քանի րոպէ ոչինչ չի կարողանում տեսնել, սպասում, սպասում է և յետոյ հնարաւոր է լինում նշմարել խուցի իրերը: Եւ այդ ասում ենք առանց ծայրայեղութիւնների մէջ ընկնելու: Դեռ սա համարւում է ամենալաւը, հասկանում էք: Այդ խուցը ստանում է լոյսի մի քանի ողորմելի շողեր—ճառագայթներ իր խեղճ ու կրած լուսամուտ-

ներքից: Երկու հատ են այդ «լուսամուտները» և դրանք բռնում են, գիտե՞ք ինչքան տեղ, միմիայն, այն, միմիայն մի-մի քառակուսի ոտնաչափ տարածութիւն: Եւ սա ամենից ընտրելին է, չը մոռանա՞ք: Սրանք մի-մի խիստ հեղուկութիւններ են: Այս էլ ասեմ, որ միայն վանահօր խուցի «լուսամուտները» ունեն ապակիներ, այն էլ ներկայ վանահայրն է գցել տուել, միւսները այդ բախտից էլ զրկուած են: Փոշի, անձրև անարգել լցւում են ներս. կամ հակառակ դէպքում պիտի շորով բռնեն, այն ժամանակ լոյսի կողմից էլ աւելի անտանելի կը դառնայ:

Մի խօսքով միանգամայն անյարմար և վնասակար են ապրուստի համար, խոնաւ օդը մարդի խեղդում է և իսկոյն մարդ բեմատիղմ կարող է ստանալ: Չարմանալի է, այնքան ծախս է արուած, ահազին աշխատանք դործ են դրել և շինել են այսպիսի անպէտք բնակարաններ, կրկնակի զարմանալին այն է, որ այնքան վանահայրեր են եկել և դնացել, բայց ոչ ոք չի մտածել իր համար մի կարգին բնակարան շինել, այլ միայն ոյժ են տուել շորթելուն: Ահա ձեզ հսկայ անհողութիւն և անտարբերութիւն:

Բայց դեռ այս չէ ամենը խուցերի վերաբերմամբ, ամենահետաքրքիրը մնում է: Մի գիշեր, ընթրիքի միջոցին նկատուցի, որ սպիտակ թևի է թափւում առաստաղից հացի վրայ: Ընդհատեցի ճաշելը և սկսեցի նայել վեր:

— Ի՞նչ էք նայում, հարցրեց ժպտալով վանահայրը, դա փա՛ծ տախտակի թևին է: Ահա այսպիսի օրեր ենք քաշում, պ. Երուանդ:

Եւ իսկապէս. ես ուղեցի ստուգել այդ, հովանոցի ծայրով կամացուկ շօշափեցի տախտակը, և յանկարծ կոտորուց և ընկաւ մի կտոր փա՛ծ, միանգամայն լիկուած, քրքրուած տախտակ:

— Բոլորն էլ այդպէս է, նկատեց Գէորգ վարդապետը, ի՞նչուր տեղը ձեռք մի առէք. միշտ էլ թափւում է, չէք տեսնում, մի քանի տեղ նոր տախտակներ եմ դրել:

Կրկին յիշեցնում եմ, չը մոռանա՞ք, որ սա ամենալաւն է: Եթէ այս բոլորի վրայ աւելացնենք և այն, որ տաճարի այս կամ այն մասը աւերուել, փուլ էր եկել և անհրաժեշտ էր նորոգութեան, կարծում եմ, պատկերը այլևս թերի կողմ չի ունենայ:

Ահա ինչպիսի ողբալի վիճակի մէջ էր ս. Թադէի հոգակաւոր վանքը, երբ Գէորգ վարդապետը ստանձնում է նրա վանահայրութիւնը:

Նա թէև սկզբում չվարում է՝ տեսնելով վանքի թշուառ

դրութիւնը, բայց յետոյ սթափւում է և սկսում է կամաց-կամաց դործել: Հէնց առաջին անգամ նա ձեռնարկում է ջրաղացի խնդիրը, և նրան կարճ ժամանակում աջողւում է վերաշինել ջրաղացը, որն սկսում է կանոնաւոր դործել: Իսկ այդ անագին ապահովութիւն էր վանքի համար: Դա այնպիսի մի աջողութիւն էր, որ ոչ ոք, ինչպէս դեղացիք են խոստովանւում, չէր կարողանում հաւատալ, որ նորից վանքը ջրաղաց է ունենալու: Այժմ ջրաղացը տալիս է վանքի գրեթէ տարեկան պարէնը, իսկ այդ քիչ բան չէ:

Այս մի կողմից, միւս կողմից որոշ չափով օգնութեան է հասնում վեհ. կաթողիկոսը՝ որոշ դումարներ տալով վանքի նորոգութիւնների համար. տեսնելով վանքի ընկած, աննախանձելի կացութիւնը, ինչ դաւառն էլ միացնում է վանքին: Ծիշտ է, ինչ դաւառի հայ ազգաբնակչութիւնը տնտեսապէս ընկած լինելով, չէր կարող խոշոր դումար ապա տարեկան, յամենայն դէպս տուածն էլ մի փոքր բացուած կարող էր ծածկել: Այնպէս որ այս երեք հոնգամանքների շնորհիւ վանահայրն սկսում է մի փոքր ազատ շունչ քաշել և սառնութեամբ դիտել շուրջը:

Ներկայ վանահայրը, ճիշտ է, չ'ունի մեծ զարգացում և կրթութիւն, բայց բռնուած է գործելու տենչով. նա ունի լաւ ձգտումներ և անկեղծ կերպով աշխատում է օգուտ տալ վանքին, մի բան անել. եւ պետք է ասել, նա գործ է շինում, իզուր օրեր չի սպանում:

Ջրաղացը գործի դնելուց յետոյ նա ձեռնարկում է վանքի նորոգութեանը: Զաքարիա եպիսկոպոսի շինած բաժնի մի փոքր մասը քանդուել էր, այդ մասն է նա շինում, փոքր եմասում, բայց մեծ աշխատանք և ծախս է պահանջում: Այժմ թէև վանքը շատ նորոգութեան տեղեր ունի, ինչպէս օր. դանգալատունը, տաճարի դռան վերերը, որ Սիմէոն արքեպիսկոպոսը կիսատ է թողել և այժմ անձրև է գալիս, քարերի արանքով լցւում է պատերի մէջ և փչացնում է. ասում եմ, նորոգելու շատ տեղեր կան, բայց փող, փող չը կայ:

Այս երկու տարուայ ընթացքում շինում է նաև մի քանի լաւ սենեակներ, իհարկէ, կանոնաւոր սենեակներ, բայց մինչև այժմ դեռ չի ծածկել, թէև ամեն ինչ պատրաստ է. առնում է դութան, լծկան եղներ և դոմէշներ, առնում է սայլ և սկսում է կանոնաւոր մշակել վանքի մնացած մի քանի կտոր արտերը և կարգի բերել վանքի քայքայուած տնտեսական դրութիւնը:

— Հ'ը, ոէս Թաթոս, բ'ը Գէորգ վարդապետը իսկի բան չի կերել վանքից, դիմեցի ես:

— Լաւ կ'ուտէր, համա ուշ հասաւ, հէջ մի չոփ էլ չէին թողել տնաքանդները էս ֆաղրի համար:

— Ձէ, պ. վարժապետ, պիտի Աստծով խօսենք, էս մարդից շատ գոհ ենք, մարդը շինարար է. էդ ջաղացը ինչ ա, մէկ միլլիոն արժի մեղ համար, ասաց տէրտէրը:

Իմ մշտական այցելուները և խօսակիցներն էին տէրտէրը, ոէս Թաթոսը և մի ևրկու գիւղացի, իհարկէ և վանահայրը, և մեծ մասով մեր խօսակցութիւնը պտտում էր վանքի շուրջը:

— Դրուստ է ասում տէրտէրը, աւելացրեց մի գիւղացի, էս մարդը շատ գործող է. տնաչէնը բերնից կտրում է, որպէսզի վանքը կարգի բերի:

Շատ գիւղացիների խօսեցրի, բոլորն էլ գրեթէ, անշան բացառութեամբ, գոհ էին վանահօրից: Այնպէս որ այժմ չնորհիւ Գէորգ վարդապետի՝ վանքը մի փոքր բարելաւ վիճակի մէջ է: Վանքը այժմ ունի 32 ոչխար, տասը կթան, 15 տաւար, 4-ը իթան կով և մատակ, 4 եղ, 4 գոմէշ, մի գուլթան, մի սայլ, ջրաղաց, մօտ 30 խալվար հող, ևրկու հատ ձէթհան դործարան, նոյնպէս և հաւեր, բաղեր ևայլն: Մի փոքրիկ միաբանութիւն, այնպէս որ այժմ վանքի վիճակը բաւականին բարւոք կարելի է համարել և կարելի է յուսալ, որ հետզհետէ, ժամանակի ընթացքում աւելի ու աւելի կը բարելաւուի:

Բայց վանքի միայնութիւնը սարսափելի է, ապրելը ուղղակի անտանելի: Ընկած մի անկիւն, լեռների մէջ, միանդամայն բացակայում են կանոնաւոր ճանապարհներ, չը կայ փոստ և հեռագիր, գրեթէ ոչինչ: Եւ իսկապէս շատ ծանր է վանական կեանքը, մանաւանդ այսպիսի պայմանների մէջ: Խնդները հընարաւորութիւն չ'ունեն գէթ թերթ ստանալ, իմանալ ինչ է կատարւում արտաքին աշխարհում, ինչ է անցնում-դառնում, և եթէ թերթ էլ ստանում են, իհարկէ սուրհանդակի միջոցով, այն էլ բաւականին ուշ, որ իրանց թարմութիւնը կորցնում են, թէև նրանց համար էլի թարմ, նոր են լինում:

Այսպէս է վանքի կեանքը. թէև ես վեց օր մնացի վանքում, և ամեն ինչ նորութիւնն էր ինձ համար, բայց էլի շատ տաղտկալի էին անցնում օրերը, և շատ սրտնեղում էի:

Վանքի շուրջը, լեռների վրայ կան փոքրիկ եկեղեցիներ, և ենթադրւում է, որ դրանք Թագէոս առաքելալի շարչարանաց վայրերն են: Վանքի առաջ, ընդարձակ դաշտի մէջ, մի ցածր բլրի վրայ երևում է ս. Սանդուխտ կոյսի մատուռը: Փոքր և անպաճոյճ է այդ մատուռը: Եւ երբ մարդ մտածում է, որ մի շարք դարեր է անցել սրանց վրայով, ահամայ բացաբանչում է, որ յամենայն դէպս շատ մեծ է եղել հայ ժողովրդի հաւատը

և ջերմնաանդութիւնը, որ կանգուն է պահել իր սուրբ վայրերը. և այդ պատիւ է բերում հայ ժողովրդին:

Իսկ վանքից աւելի հեռուն, ամբողջ Մակուի խանութեան մէջ պրուած են և աչքի խփում եկեղեցու բեկորներ, քաղաքի մնացորդներ, փլուած շէնքեր, որոնք մի-մի կենդանի վկաներ են հայ ժողովրդի անցեալ փառքի, մի-մի պերճախօս փաստեր են, որ անցեալում այս կողմերը տիրապետող տարրը եղել է հայ ազգաբնակչութիւնը: Տխուր է այդ բեկորների, հնութեան այդ մնացորդների թողած տպաւորութիւնը: Եւ ընդհանրապէս ես հեռացայ վանքից աւելի տխուր յիշողութիւնների և տպաւորութիւնների տակ...

Ե. ՖՐԱՆԳԵԱՆ

ՄԱԿԱՐԻ ԵՐԱԶԸ

(Վլադիմիր Կորոլենկո)

Այս երազը տեսել է խեղճ Մակարը, որն ստիպուած էր քաշուել գնալ հեռաւոր, մոռյլ աշխարհներ, հէնց այն Մակարը, որի գլխին են կոտորում կռժն ու կուլան:

Նրա հայրենիքը—խուլ Չալդան չէնը—թաղուած էր մի հեռաւոր եակուտեան անտառում: Մակարի հայրերն ու պապերը ձեռք էին բերել անտառի մօտ սառած հողի մի կտոր, և թէև մոռյլ թաւուտը աակաւին պատում էր չորս կողմը թշնամի պատի պէս, սակայն նրանք չէին յուսահատուում: Ծառերից մաքրած տեղում շարուեցին ցանկապատերը, կանգնեցին կուտակներն ու գէղերը, բազմանում էին ծխոտ հիւղիկները, վերջապէս յաղթական դրօշակի նման՝ փոքրիկ դիւղի մէջտեղի բլրակի վրայից գէպի երկինք ցցուեց զանգակատունը: Չալդանը դարձաւ մեծ գիւղ:

Բայց մինչդեռ Մակարի հայրերն ու պապերը կռնում էին անտառի հետ, կրակ էին տալիս այն, կոտորում էին երկաթով, նրանք իրանք աննկատելի կերպով վայրենանում էին: Եակուտուհիներին կին առնելով՝ նրանք նրանցից առնում իւրացնում էին եակուտական լեզուն ու եակուտական բարքերը: Մեծ ուռս ցեղի բնորոշ գծերը ջնջւում ու անհետանում էին:

Ինչ էլ լինէր, այնուամենայնիւ մեր Մակարը չատ լաւ հասկանում էր, որ նա չալդանցի բուն շինական է: Նա այդտեղ

էր ծնունդ, այդտեղ ապրել, այդտեղ էլ միտք ունէր մեռնելու: Նա շատ էր պարծնում իր ծագումով և երբեմն էլ միւսներին հայհոյում էր «գարշելի եակուսներ» խօսքերով, թէ՛ ուղիղն ասած՝ ինքը եակուսներից չէր տարբերւում ոչ սովորութիւններով, ոչ վարած կեանքով: Ռսերէն նա խօսում էր քիչ և բաւական վատ, հաղնում էր զաղանի մորթիներ, ոտներին հագնում էր «տորբասա», կերակրւում էր սովորական ժամանակ միայն նկանակներով աղիւսած թէյի հետ, իսկ տօն օրերը և ուրիշ արտաքոյ կարգի գէպերում նա հալած իւղ էր ուտում այնքան, որքան դրած էր լինում նրա առաջը սեղանի վրայ: Նա շատ վարպետօրէն կը էր հեծնում, իսկ հիւանդ ժամանակ կանչում էր շամանին (վհուկ), որը կատաղելով, ատամները կրճտացնելով յարձակւում էր նրա վրայ, աշխատելով վախեցնել և վանել Մակարից նրանում բուն դրած հիւանդութիւնը:

Բանում էր նա սարսափելի շատ, ապրում էր աղքատ, ենթարկւում էր սովի ու ջրաբի: Ունէր նա արդեօք որեէ մտքեր բացի նկանակի և թէյի մասին ունեցած անընդհատ հոգսերից:—Այո, ունէր:

Հարբած ժամանակ նա լաց էր լինում: «Ի՞նչ է մեր օրը,—ասում էր նա,—Տէր Աստուած:» Բացի այդ նա կրբումն ասում էր, որ կը կամենար ամեն ինչ թողնել և հեռանալ զընայ «բարձունք»: Այնտեղ նա ոչ կը հերկի, ոչ կը ցանի, ոչ փայտ կը կտրի ու կը կրի, ոչ էլ մինչև անգամ հատիկ կ'աղայ երկանքով: Նա միայն փրկուելու համար կ'ապրի: Թէ ինչ բարձունք էր այդ, որտեղ էր, նա հաստատ չը գիտէր. գիտէր միայն, որ այդ բարձունքը կայ նախառաջ, իսկ երկրորդ՝ որ այն էի հեռու տեղ է,—այնքան հեռու, որ այնտեղից նա անհասանելի է նոյնիսկ սոյո՞ոն—ոստիկանի *) համար... Հարկեր էլ՝ հասկանալի է որ նա նոյնպէս չի վճարել:

Սթափ ժամանակ նա թողնում էր այդ մտքերը՝ գուցէ գիտակցելով այդպիսի հրաշալի բարձունք գտնելու անկարելիութիւնը, բայց հարբած ժամանակ աւելի սրտոտ էր դառնում: Նա ընդունում էր, որ կարող է չը գտնել իսկական բարձունքը և ընկնել մի ուրիշ բարձունք: «Այն ժամանակ կը կորչեմ», ասում էր նա, բայց այնուամենայնիւ պատրաստւում էր, իսկ եթէ ի կատար չէր ածում այդ մտադրութիւնը, այդ էլ երեխ

*) Տոյոն—տէր, պարոն իշխան:

այն պատճառով, որ դադլթական-թուրքերը նրա վրայ ծախում էին միշտ գարշելի օղի, որն աւելի թունդ դարձնելու համար՝ հետը մախորկայի ջուր էին խառնում, որից նա շուտով ուշաթափութեան մէջ էր ընկնում և հիւանդանում:

Ծննդեան նախընթերց էր, և Մակարին յայտնի էր, որ վաղը մեծ տօն է: Այդ առիթով նա տանջւում էր խմելու ցանկութեամբ, բայց դնելու համար ոչինչ չ'ունէր. հացը վերջանալու վրայ էր. Մակարն արդէն պարտք էր արել տեղացի վաճառականներից ու թուրքերից: Մինչդեռ վաղը մեծ տօն է, բանել չէ կարելի,—նա ի՞նչ պէտք է անի, եթէ չը խմի: Այդ միտքը նրան դժբախտ էր դարձնում: Ի՞նչ է նրա օրը: Մինչև անգամ ձմրան այդ մեծ տօնին նա չէ խմելու մի շիշ օղի!

Նրա գլխում մի լաւ միտք ծագեց: Նա վեր կացաւ, հազաւ իր պատռտուն սոնաշն (մուշտակը): Նրա կինը, ամբա-կազմ, ջլոտ, խիստ ուժեղ և նոյնքան խիստ անճոռնի մի կին, որը նրա պարզ մտածումների տակն ու գլուխը գիտէր, այս անգամ էլ հասկացաւ նրա մտադրութիւնը:

—Ո՞ւր, դե՛: Էլի մենակ ես ուղում օղի խմել:

—Լո՛ր: Մի շիշ կը գնեմ: Էլ ուր միասին կը խմենք:

Նա կնոջ ուսին այնպէս ուժգին չրմկացրեց, որ՝ նա երեւոյց և խորամանկութեամբ աչքով արաւ: Այդպէս է կնոջ սիրտը! Նա գիտէր, որ Մակարն անպատճառ նրան խաբելու է, բայց ենթարկուեց ամուսնական փաղաքշանքի գիւթանքին:

Մակարը դուրս եկաւ, ալաւսում՝ բռնեց պառաւած դաշխա ձին, բաշից բռնած բերեց սահնակի մօտ և լծեց: Շուտով դաշխան իր տիրոջը դարպասից դուրս բերաւ: Այդտեղ նա կանգ առաւ և գլուխը դարձնելով՝ հարցական կերպով մտիկ տուաւ մտքերի մէջ խորասուզուած Մակարին: Այն ժամանակ Մակարը քաշեց ձախ կողմի սանձը և ձիին ուղղեց դէպի գիւղի ծայրը:

Գիւղի բոլորովին ծայրում կար մի փոքրիկ իւրտա: Նրանից, որպէս և միւս իւրտաներից, բարձրանում էր կրակարանի ծուխը բարձր-բարձր, ճերմակ ու ալեկոծ չերտով ծածկում էր սառն աստղերն ու պայծառ լուսինը: Կրակը գուարթ ցոլցւում էր՝ կիսաթափանց սառուցների միջով լոյս արձակելով: Դուրսը խաղաղ էր:

Այդտեղ սպրում էին օտար, հեռաւոր տեղից եկած մար-

դիկ: Թէ ինչպէս էին նրանք այդտեղ ընկել, ինչ ձախորդութիւն էր նրանց գցել այդ հեռաւոր անտառապատ վիերը, Մակարը չը գիտէր և չէր էլ հետաքրքրուում, բայց նա սիրում էր նրանց հետ գործեր ունենալ, որովհետև նրանք չէին նեղացընում նրան և շատ էլ չէին խօսում վարձի համար:

Մանկով հիւզը՝ Մակարն իսկոյն մօտեցաւ բուխարուն և իր սառած ձեռները դէմ արաւ կրակին:

—Չա՛, —ասաց նա՝ այդպիսով արտայայտելով ցրտի զգացում:

Օտարականները տանն էին: Սեղանի վրայ վառուում էր մօմը, թէև նրանք չէին բանում: Մէկը պառկած էր անկողնում և բերանից բաց թողնելով ծխի օղակները՝ մտախօհ հետևում էր նրա քուլաներին, ըստ երևոյթին կապելով նրան հետ իր խոհների երկայն թելերը: Միւսը նստած էր կրակարանի դիմաց և նոյնպէս մտախօհ հետևում էր, թէ ինչպէս էին բոցերը վազվզում այրուած փայտի վրայով:

—Բարե՛, —ասաց Մակարը՝ իրան նեղող լուսթիւնն ընդհատելու համար:

Իհարկէ՛ նա չը գիտէր, թէ ինչ վիշտ կար բուն գրած օտարականների սրտում, ինչպիսի յիշողութիւններ էին խառնուում նրանց գլխներում այդ երեկոյ, ինչպիսի պատկերներ էին երևում նրանց՝ կրակի ու ծխի ֆանտաստիկական խաղերի մէջ: Բացի այդ՝ նա ունէր իր հոգսը:

Կրակարանի մօտ նստած երիտասարդ մարդը գլուխը բարձրացրեց և Մակարին նայեց պղտոր հայեացքով՝ կարծես չը ճանաչելով նրան: Ապա գլուխը թափ տուաւ և արագ վեր կացաւ աթոռից:

—Հա՛, բարե՛, բարե՛, Մակար: Ի՞նչ լաւ եղաւ: Մեզ հետ թէյ կը խմես:

Այդ առաջարկութիւնը դուր եկաւ Մակարին:

—Թէյ, —նորից հարցրեց նա:—Այդ լաւ է... Ա՛յ, աղբէր, լաւ է, շատ լաւ:

Նա սկսեց արագ հանուել: Հանելով մուշտակն ու գլխարկը, նա զգաց իրան աւելի ազատ, իսկ երբ տեսաւ, որ ինքնաշնորհում արդէն բոցավառում են տաքացած ածուխները, նա դարձաւ երիտասարդ մարդուն՝ սիրտը բաց անելով:

—Ես ձեզ սիրում եմ, ճշմարիտ... Այնպէս եմ սիրում, այնպէս եմ սիրում: Գիշերները քուես չի տանում ձեզ համար...

Օտարականը շուռ եկաւ, և նրա դէմքին դառը ժպիտ երևաց:

—Հն, սիրո՞ւմ ես,—ասաց նա—Դէ, ի՞նչ ես ուզում:

Մակարը չհղուեց:

—Բան ունե՞մ,—պատասխանեց նա—Բայց դու ի՞նչպէս իմացար:

—Լաւ: Յետոյ, թէյ կը խմեմ, կ'սեսեմ:

Որովհետեւ թէյը տանտէրերն էին առաջարկել Մակարին, ուստի նա տեղին համարեց աւելի հեռուն գնալ:

—Տապակած միս հօ չ'ունէ՞ք: Ես սիրում եմ,—ասաց նա:

—Չէ:

—Է', ոչ'ինչ, ասաց Մակարը հանդստացնող տոնով,—մի ուրիշ անգամ կ'ուտեմ... Ճիշտ է,—նորից հարցրեց նա,—մի ուրիշ անգամ:

—Լաւ:

Այժմ Մակարն այնպէս էր համարում, որ օտարական մարդիկը տապակած մսի մի կտոր են պարտ մնում իրան, իսկ նրա այդօրինակ պարտքերը երբէք չէին կորչում:

Մի ժամից յետոյ նա նորից նստեց իր սահնակը: Նա մի սմբողջ րուբլի էր ձեռք բերել՝ նախօրօք ծախելով հինգ բևեփայտ՝ համեմատաբար ձեռնտու պայմաններով: Ճիշտ է, նա երդւում էր, որ այդ փողերը խմբիքի վրայ չի փչացնիլ այդօր, բայց ինքը մտադրւում էր հէնց անմիջապէս այդպէս անել: Ի՞նչ կայ որ: Առաջիկայ հաճոյքը խլացնում էր խղճի յանդիմանութիւնները: Նա մինչև անգամ չէր մտածում այն մասին, որ իրան—հարբածին սպասում է խարուած հաւատարիմ ամուսնու անողորմ տուրուգմբոցը:

—Ապա այդ ուր ես գնում, Մակար,—ծիծաղելով կանչեց օտար մարդը, տեսնելով որ Մակարի ձին փոխանակ ուղիղ գընալու՝ ծռուել է դէպի ձախ՝ դէպի թուրքերը:

—Թիսիւ... Թիսիւ... Սրան տես, ի՞նչ անիծածն է... տես ուր է գնում,—արդարանում էր Մակարը՝ այնուամենայնիւ ամուր քաշելով ձախ սանձը և աննկատելի հարուածելով ձիին աջ սանձով:

Խելօք ձին յանդիմանաբար շարժելով պոչը՝ հանդարտ քարշ էր գալիս ուղած ուղղութեամբ, այնպէս որ չուտով սահնակի ձողերի ճոռոցը դադարեց թուրքերի դարպասների մօտ:

Թուրքերի դարպասների մօտ մի քանի ձի կար կապած՝ եակուտեան բարձր թամբերով:

Նեղ խրճթում օդը հեղձուցիչ էր։ Մախորկայի կծու ծուխը կանգնել էր ամպի նման, որ բուխարին դանդաղօրէն դէպի իր ներսն էր քաշում։ Սեղանների առաջ և նստարանների վրայ նստոտած էին եկուոր եակուտները, սեղանների վրայ շարուած էին օղիով լի գաւաթներ, տեղ-տեղ նստոտել էին թուղթ խաղացողների խմբակներ։ Դէմքերը քրանած ու կարմրած էին։ Սաղացողների աչքերը կառաղարար հետևում էին խաղաթղթերին։ Փողերը հանւում և խփոյն թագցնւում էին դրպաններում։ Մի անկիւնում յարդի վրայ մի հարբած եակուտ օրօրւում էր նստած տեղը և ծոր էր տալիս մի անվերջ երգ։ Նա կոկորդով հանում էր վայրենի, ճոճող հնչիւններ, կրկնելով զանազան ձևով՝ թէ վաղը մեծ տօն է, իսկ այսօր նա հարբած է։

Մակարը փողը վճարեց, և նրան մի չիչ օղի տուին։ Նա չիչը կոխեց ծոցը և ուրիշներին աննկատելի քաշուեց մի մութ անկիւն։ Այնտեղ նա բաժակը բաժակի ետեից ածում էր և մէկը միւսի ետեից կոնծում։ Օղին դառն էր՝ տօնի առթիւ թով խառնած աւելի քան երեք քառորդ մաս ջրի հետ։ Բայց և երևում էր, որ մախորկան էլ չէին խնայել։ Մակարի շունչն ամեն անգամ կտրւում էր, և աչքերին երևում էին մի տեսակ բոսորային չրջաններ։

Շուտով նա հարբեց։ Նա էլ նստեց յարդի վրայ և ձևաները սլատ տալով ծնկներին՝ նրանց վրայ դրաւ ծանրացած զլուխը։ Նրա կոկորդից իրանք իրանց թափւում էին նոյն անմիտ ճոճաւ հնչիւնները։ Նա երգում էր, որ վաղը տօն է, և որ նա խմել է հինգ բեռ փայտ։

Մինչ այս մինչ այն՝ սենեակին աւելի ու աւելի էր նեղուածքանում։ Մանում էին նոր այցելու եակուտներ, որոնք եկել էին աղօթելու և թուրքական օղի խմելու։ Տանտէրը տեսաւ, որ չուտով ամենքին տեղ չի լինի, վեր կացաւ սեղանից և հայեացք դրեց ժողովուածների վրայ։ Այդ հայեացքը թափանցեց մութ անկիւնը և տեսաւ այնտեղ եակուտին ու Մակարին։

Նա մօտեցաւ եակուտին և վզակոթից բռնելով՝ խրճթից դուրս չալրեց։ Յետոյ մօտեցաւ Մակարին։ Նրա հետ, որպէս տեղական բնակիչի, թուրքն աւելի յարգանքով վարուեց։ Դուռը լայն բանալով՝ նա խեղճի ետեից ոտով այնպիսի աքացի տուաւ, որ Մակարը դուրս թռաւ խրճթից և քիթը խրեց ուղղակի ձընակոյտի մէջ։

Դժուար է ասել, թէ նա վերադարձուեց այդ վարմունքից։ Նա զգում էր թեքերում ձիւն, երեօին ձիւն։ Մի կերպ դուրս գալով ձնակոյտից՝ նա քաշքուելով դնաց իր դաշխայի մօտ։

Կուսինն արդէն բարձրացել էր։ Մեծ-Արջ համաստեղու-

Թիւնն սկսել էր պոչը վար իջեցնել: Սառնամանիքը սաստկանում էր: Ժամանակ առժամանակ հիւսիսում կիսաբոլոր մութ ամպի ետևից բարձրանում էին թոյլ խաղալով՝ սկսուող հիւսիսափայլի հրեղէն սիւները:

Ձին, որ ըստ կրեոյթին հասկանում էր իր տիրոջ դրու-
թիւնը, զգոյշ և խելացի կերպով սկսեց քարշ դալ գէպի տուն: Մակարը նստած էր սահնակում ճօճուելով և շարունակում էր իր երգը: Նա երգում էր, թէ խմել է հինգ բեռ փայտ, և թէ պառաւը նրան դնքսելու է: Նրա կոկորդից դուրս եկող հնչիւն-
ները ճոռում ու հառաչում էին երեկոյեան օդում այնպէս ար-
խուր ու սղբագին, որ այդ ժամանակ բռնաբերին ծածկելու հա-
մար հիւզը ելած օտարական մարդու սիրտն աւելի ծանրացաւ: Մակարի երգից: Մինչ այս մինչ այն դաշխան սահնակը դուրս բե-
րաւ բլուրը, որտեղից երևում էր չրջակայքը: Ձիւները պայ-
ծառ չողչողում էին՝ լուսաւորուած լուսնի փայլով: Ժամանակ
առ ժամանակ լուսնի լոյսը կարծես չքանում էր, ձիւները մթնում
էին, և իսկոյն նրանց վրայ էր ընկնում հիւսիսափայլի ցոլացումը:
Այն ժամանակ թւում էր, թէ ձիւնի բլուրներն ու նրանց վե-
րնի անտառը մերթ մօտենում էին, մերթ նորից հեռանում:
Մակարը պարզ կերպով տեսնում էր հէնց անտառի տակ Եա-
մալախեան բլրի ձիւնային մերկութիւնը, որի ետևն անտառում
նա ծուղակներ էր լարել ամեն տեսակ անտառային զազանի
և թռչունի համար:

Այդ հանգամանքը փոխեց նրա մաքերի ընթացքը: Նա
սկսեց երգել, որ նրա ծուղակն աղուէս է ընկել: Նա վաղը կը
ծախէ մորթին, և պառաւը նրան չի դնքսիլ:

Սառնամանիքային օդում տարածուեց զանգակի առաջին
դարկի հնչիւնը, երբ Մակարը մտաւ իր խրճիթը: Նրա առաջին
խօսքն այն էր, որ պառաւին հաղորդեց, թէ նրանց թակարդն ա-
ղուէս է ընկել: Նա բոլորովին մոռացել էր, որ պառաւն իր
հետ օղի չէ խմել, և սաստիկ զարմացած մնաց, երբ չը նայած
ուրախ լուրին՝ կիսն անմիջապէս ոտով նրան անգութ հա-
րուած հասցրեց: Ապա մինչդեռ նա կը զլորուէր մահճի վրայ,
կիսը կարողացաւ մի անգամ ևս բռունցքով բռնել նրա մէջ-
քին:

Մինչ այս մինչ այն, Չալգանի վրայ հնչեց տօնական հան-
դիսաւոր զանգի ձայնը՝ տարածուելով հեռու, հեռու...

Նա պառկած էր անկողնում: Նրա գլուխն այրում էր: Ներսը կարծես կրակով դաղում էին: Երակների միջով հոսում էր օդի և ծխախտաւ հեղուկի թունդ խառնուրդը: Դէմքի վերայով հոսում էին հալուած ձիւնի սառը կոհակները. այդպիսի կոհակներ հոսում էին և՛ մէջքի վրայով:

Պառաւ կարծում էր, թէ նա քնած է: Բայց նա քնած չէր: Նրա գլխից դուրս չէր գալիս աղուէսը: Նա արդէն լիովին հաւատացած էր, որ աղուէսն ընկել է ծուղակը. նա մինչև անդամ գիտէր, թէ որ ծուղակը: Նա աղուէսին տեսնում էր, — տեսնում էր, թէ ինչպէս նա՝ ծանր կոճղը նրան ճակած՝ քանդում է ձիւնը ճանկերով և աշխատում է դուրս պրծնել: Կուսնի շողերը թաւուտի արանքներով անցնելով՝ խաղում էին նրա ոսկեպոյն բրդի վրայ: Գազանի աչքերը փայլում էին նրա դէմահանդիման:

Նա չը համբերեց և տեղից վեր կենալով՝ ուղևորուեց դէպի իր հաւատարիմ ձին, որպէսզի դնայ անտառը:

Այս ինչ է: Միթէ՞ պառաւի ուժեղ ձեռները բռնել էին նրա սոնայի օձիքից, և նա կրկին է գլորուած մահճի վրայ:

Ոչ, ահա նա արդէն գիւղից դուրս է: Սահնակի ձողերը համաչափ ճռճում են ամուր ձիւնի վրայով գնալիս: Չալգանը ետ է մնացել: Ետից լսում է եկեղեցու զանգի հանդիսաւոր ղօղանջիւնը, իսկ հորիզոնի մութ գծի վրայ՝ լուսափայլ երկրնաքում երևում-կորչում են երկար սրածայր գլակներով եակուտ ձիաւորների սև ստուէրների ամբողջ շարքեր: Եակուտները եկեղեցի են շտապում:

Այդ ժամանակ լուսինը ցածրացաւ, իսկ վերը, իսկիսկ զենիթում՝ կանգնեց սպիտակագոյն ամպիկը և շողաց ֆոսֆորային հեղհեղուկ փայլով: Ապա կարծես թէ պատռուեց, լայնացաւ, չաղ եկաւ, և արագութեամբ ձգուեցին նրանից դէպի դանաղան կողմեր բաղմերանգ կրակների շառաւիղներ, մինչդեռ կիսաբոլորակ մութ ամպիկը հիւսիսում էլ աւելի մթնեց: Նա դարձաւ սև, աւելի սև, քան անտառը, որին մօտենում էր Մակարը:

Ճանապարհը ոլոր-մոլոր անցնում էր մանր, խիտ բողբոջների միջով: Աջ ու ձախ բարձրանում էին ըլուրներ: Քանի գրնում, այնքան շատանում էին ծառերը: Անտառը խառնում էր: Նա կանգնած էր անմոռնչ և խորհրդաւորութեամբ լի: Կուսնիների մերկ ճիւղերը զարգարուած էին արծաթէ եղեամով: Փափուկ լոյսն անցնելով նրանց կատարների արանքով՝ տարածւում էր անտառում, տեղ-տեղ բանալով մերթ ձիւնադաշտը,

մերթ ձիւնածածկ անտառային ջարդուած հսկաների ընկած դիակները: Մի վայրկեան—և էլի ամեն ինչ կրկին կորչում էր լուսթեամբ ու խորհրդաւորութեամբ լի խաւարում:

Մակարը կանգ առաւ: Այդ տեղը, համարեա ճանապարհի վրայ գտնուած էր ծուղակների մի ամբողջ շարքի սկիզբը: Փոսփորային լուսով նա պարզ տեսնում էր ցախից գոյացած մի ցածրիկ ցանկապատ. նա տեսնում էր մինչև անգամ առաջին թակարդը—երեք ծանր երկար զերաններ յենուած ուղղահայեաց ցցին, որոնց պահում էր բաւական խելացի ձևով մազէ պարաններից շինուած լծակների մի ամբողջ շարք:

Ճիշտ է, այդ ուրիշի ծուղակներն էին. բայց չէ՞ որ աղուէսը կարող էր ընկնել և՛ ուրիշինը: Մակարն շտապով իջաւ սահնակից, խելօք ձին թողեց ճանապարհին և ուշադրութեամբ աւանջ դրաւ:

Անտառում ոչ մի ձայն: Միայն հեռու, այժմ անտեսանելի զիւղից առաջուայ պէս դալիս էր հանդիսաւոր զօղանջիւնը:

Կարելի էր չը վախենալ: Թակարդների տէրը, չալգանցի Ալեռչկան, Մակարի հարեանն ու ոխերիմ թշնամին, երեի այժմ եկեղեցումն էր: Նոր եկած ձիւնի հարթ մակերեսի վրայ ոչ մի հետք չէր երևում:

Նա մտաւ թաւուտը,—ոչինչ չը կայ: Ոտների տակ ճոռում է ձիւնը: Կոճղերը շարուած են իրար մօտ՝ բերանաբայ թնդանոթների շարքերի նման՝ անմոռնջ սպասելով մի բանի:

Նա անցաւ ետ ու առաջ,—սպարդիւն: Նա նորից ուղևորուեց դէպի ճանապարհը:

Բայց չ՛չ՛... Թեթե խշշոց լսուեց... Անտառում երևաց կարմրաւուն բուրդը, այս անգամ յուսաւորուած տեղում, այնպէս մօտիկ: Մակարը պարզ տեսնում էր աղուէսի սրածայր աւկանջները. նրա թաւալսչը շարժւում էր այս կողմից այն կողմ՝ կարծես Մակարին թաւուտը հրաւիրելով: Աղուէսը կորաւ ծառերի բներին մէջ, Մակարի թակարդների ուղղութեամբ, և շուտով անտառի մէջ բարձրացաւ խուլ, բայց ուժգին հարուած: Նա հնչեց սկզբում ընդհատ, խուլ, յետոյ կարծես լսուեց անտառի հովանու տակ ն մեղմօրէն մարեց հեռու ձորում:

Մակարի սիրտը թնդաց: Այդ թակարդն էր փակուել:

Նա սկսեց վազել՝ անցնելով թաւուտի արանքներով: Սառը ձղները խփում էին նրա աչքերին, երեսին ձիւն էին թափում: Նա սայթաքում էր. նրա շունչը կտրւում էր:

Ահա նա դուրս եկաւ անտառի կոտորած մասը, որը մի ժամանակ ինքն էր կոտորել: Ծառերը եղեամբից սպիտակած՝ շարուած էին երկու կողմից, իսկ ներքեւում չաւիղը նեղա-

նալով նշուլում էր, և նրա ծայրին երևում էր մեծ թակարդի բերանը... Հեռու չէ...

Բայց այն ճանապարհի վրայ թակարդի մօտ երևաց մի դէմք,—երեսաց ու անյայտացաւ: Մակարը ճանաչեց չալպանցի Ալեոշկային. նրան պարզ երևում էր նրա փոքրիկ, հաստիկ մարմինը՝ դէպի առաջ կոացած, արջի քայլուածքով: Մակարին այնպէս թւաց, թէ Ալեոշկայի մոտ զէւքն աւելի մթնեց, իսկ մեծ-մեծ ատամներն աւելի բացուեցին զայրացած, քան սովորաբար:

Մակարն զգում էր արդար բարկութիւն. «Ա՛յ անպիտան... Նա իմ ծուղակներս է մտնում»: Ճիշտ է, Մակարն ինքն էլ հէնց նոր մտել էր Ալեոշկայի թակարդները, բայց այդ տարբեր բան էր... Տարբերութիւնը հէնց նրանում էր կայանում, որ նա վախում էր, թէ կը բռնուի. իսկ երբ նրա թակարդներն էին մտնում ուրիշները, նա զգում էր ցամուռնք և ցանկութիւն, որ ինքը բռնի իր իրաւունքները խախտողին:

Նա կտրուկ վազեց փակուած թակարդի մօտ: Այնտեղ էր ազուէսը: Ալեոշկան իր լայնարձակ, արջային քայլուածքը նոյն տեղն էր ուղղում: Պէտք էր աւելի շուտ հասնել:

Ահա և փակուած թակարդը: Նրա վրայ կարմրին է տալիս բռնուած դազանի բուրդը: Ազուէսը փորում էր ձիւնը ճանկերով իսկ և իսկ այնպէս, ինչպէս նա Մակարին թւում էր առաջ, և նրան դիմաւորում էր հէնց այնպէս, նայելով իր սուր, վառ-վրռուն աչքերով:

—Տըրտըրիմն (ձեռք չը տան)... էդ իմն է, դուռաց Մակարն Ալեոշկայի վրայ:

—Տըրտըրիմն,—հնչեց՝ որպէս արձագանգ՝ Ալեոշկայի ձայնը:—Ի՛մն է:

Նրանք երկուսն էլ միաժամանակ և փութկոտ վազեցին իրար հակառակ, սկսեցին բարձրացնել թակարդը՝ նրա տակից ազատելով գազանին: Երբ թակարդը բարձրացրուած էր, ազուէսը նոյնպէս վեր կացաւ: Նա մի թռիչք գործեց, ապա կանգ առաւ, նայեց երկու չալպանցիներին մի տեսակ ծաղրական հայեացքով, ապա դունչը կռացնելով՝ լիզեց կոճղի կամթած տեղը և ուրախ-ուրախ առաջ վազեց՝ երջանիկ շարժելով պոչը:

Ալեոշկան ուղում էր նրա ետքից ընկնել, բայց Մակարը նրա ետքից բռնեց սոնայի փեշից:

—Տըրտըրիմն—դուռաց նա:—էդ իմն է,—և ինքը վազեց ազուէսի ետքից:

—Տըրտըրիմն—նորից արձագանգ տուաւ Ալեոշկայի ձայնը:

նը, և Մակարն զգաց, որ նա իր կարգին բռնեց նրա սոնայից և մի վայրկեանում նորից առաջ վազեց:

Մակարը կատաղեց: Նա մոռացաւ աղուէսին և ընկաւ Ալեոշկայի ետքից, որը փախուստ էր տալիս:

Նրանք վազում էին աւելի ու աւելի արագ: Կուենու ճիւղը Ալեոշկայի զլխից դաակը թոցրեց, բայց Ալեոշկան ժամանակ չ'ունէր վերցնելու. Մակարն արդէն վրայ էր հասնում կատաղի աղաղակով: Բայց Ալեոշկան միշտ աւելի խորամանկ էր եղած խեղճ Մակարից: Նա յանկարծ կանգ առաւ, շուռ եկաւ և զլուխը թեքեց: Մակարն իր փորը զխկացրեց նրա զըլխին և թաւալազլոր եղաւ ձիւնի մէջ: Մինչդեռ նա ընկնում էր, անիծած Ալեոշկան Մակարի զլխից թոցրեց նրա գլուխը և անյայտացաւ անտառում:

Մակարը կամաց-կամաց վեր կացաւ: Նա իրան զգում էր վերջնականապէս ընկճուած և անբախտ: Նրա հալը շատ վատ էր... Աղուէսը նրա ձեռումն էր, իսկ այժմ... Նրան թւում էր, թէ քիչ միջնած թաւուտում աղուէսը ծաղրաբար մի անգամ ևս շարժեց պոչը և վերջնականապէս անյայտացաւ:

Մթնում էր: Շողշողուն ամպիկը հազիւ էր նշմարւում զննիթում: Նա կարծես հալւում էր, և նրանից մի տեսակ յոդնած ու թոյլ թափւում էին հիւսիսափայլի տակաւին մարող ճառագայթները:

Մակարի տաքացած մարմնի վրայով վազում էին հալուած ձիւնի սառ կոհակների ամբողջ շիթեր: Զիւնը թափւում էր նրա թեքերը, սոնայի օձիքի տակ, հոսում էր մէջքի վրայով, թափւում էր տորքասայի տակ: Անիծած Ալեոշկան տարել էր իր հետ նրա զլխաւիր: Թաթմանները նա վազելու ժամանակ կորցրել էր մի տեղ: Բանը բուրգ էր: Մակարը գիտէր, որ կատաղի սառնամանիքը հանաք չէ անում այն մարդկանց հետ, որոնք գնում են անտառը առանց թաթմանների ու զլխարկի:

Նա արդէն երկար ժամանակ գնում էր: Նրա հաչում նա արդէն վաղուց պէտք է դուրս եկած լինէր Եամալախից և պիտի տեսնէր զանդակատունը, բայց նա դեռ դուրս չէր գալիս անտառից: Թաւուսը կարծես կախարդուած՝ բռնել էր նրան իր գրկում: Հեռուից անընդհատ լսում էր նոյն հանդիսաւոր զողանջիւնը: Մակարին թւում էր, թէ նա նրա վրայ է գնում, բայց այդ ձայնը քանի գնում, այնքան հեռանում էր, և որքան նրա ելնէջերն աւելի ու աւելի մեղմ էին լսում, այնքան Մակարի սիրտը բուր յուսահատութեան մէջ էր ընկնում:

Նա յոգնեց: Նա ընկճուած էր: Ոտները ծալւում էին: Նրա ջարդոտուած մարմինը մոլուտում էր բուրթ ցաւից: Կրծքում

չնչառութիւնը կտրուում էր: Ձեռներն ու ստները փէտանում էին: Մերկացած զլուխը ճնշւում էր կարծես ջեռուցած օղակներով:

«Կորչելու համ, հաւատաս»,—աւելի ու աւելի յաճախ էր դալիս այս միտքը նրա գլուխը: Բայց նա գնում էր:

Անտառը լուռ էր: Նա միայն հուզ էր դալիս նրա ետեից մի տեսակ թշնամական յամառութեամբ և ոչ մի տեղ չէր տալիս ոչ լուսի նշոյլ, ոչ յոյս:

«Կորչելու համ, ինչ էլ որ լինի»,—անընդհատ մտածում էր Մակարը:

Նա բոլորովին թուլացաւ: Այժմ մատաղ ծառերն ուղղակի, առանց քաշուկու խփում էին նրա երեսին՝ ծաղրելով նրա անօգնական դրութիւնը: Մի ծառերից ազատ տեղ դուրս վազեց մի սպիտակ նապաստակ, նստեց ետեի թաթերին, ծայրը սկզբաւոր երկար ականջները խլչեց՝ և սկսեց լուացուել՝ քիթ ու մոտթը խիստ յանդգնաբար ծոմուելով Մակարի առաջ: Նա ուզում էր նրան հասկացնել, որ նա շատ լաւ է ճանաչում նրան, Մակարին,—գիտէ, որ նա հէնց այնիսկ Մակարն է, որը սարքել է անտառում խորամանկ մեքենաներ նրան՝ նապաստակին՝ կործատի մատնելու համար: Բայց այժմ նա նրա վրայ ծիծաղում էր:

Մակարը սաստիկ վշտացաւ: Անտառը քանի դնում՝ կենդանանում էր, բայց կենդանանում էր թշնամաբար: Այժմ մինչև անգամ հեռաւոր ծառերն էլ էին մեկնում իրանց երկար ճիւղերը դէպի նրա ճանապարհը և բռնում նրա մագերից, խփում աչքերին, երեսին: Փայտմորիկները դուրս էին դալիս զաղանի խոռոչներից և շահագրգիռ կլոր աչքները յառում նրա վրայ, իսկ մեծ մորիկները վազում էին նրանց միջով՝ պոչները խոնարհեցրած ու թևերը զայրազին տարածած և էգերին լափձրածայն պատում էին նրա—Մակարի և նրա դաւադրութիւնների մասին: Վերջապէս հեռաւոր թաւուտներում երևացին հազարաւոր աղուէսային դնչեր: Նրանք ներս էին քաշում օդը և ծաղրաբար նայում Մակարի վրայ՝ սուր-սուր ականջները խլչած: Իսկ նապաստակները կանգնում էին նրանց առաջ ետեի թաթերի վրայ և քրքում էին՝ զեկուցանելով Մակարի չարադործութիւնները:

Այդ արդէն չափազանց էր:

«Կորչելու համ»,—մտածեց Մակարը և վճռեց այդ անել անմիջապէս:

Նա պառկեց ձիւնի մէջ:

Սառնամանիքը խստանում էր: Հիւսիսարևելի վերջին շա-

ոսուիզները թոյլ ցոլցւում էին և ձգւում երկնքի վրայ՝ Մակարին գիտելով ատառի ծառերի կատարների արանքով: Չանդի վերջին հնչիւնները լսում էին հեռաւոր Չալգանից:

Հիւսիսափայլը ցոլաց և մարեց: Չանգահարութիւնը լը-
ռեց:

Եւ Մակարը մեռաւ:

Թէ այդ ինչպէս պատահեց, նա չը նկատեց: Նա գիտէր, որ նրանից ինչ-որ բան պէտք է դուրս գայ, և սպասում էր, որ հրէս դուրս կը գայ... Բայց ոչինչ չէր դուրս գալիս:

Սակայն նա գիտակցում էր, որ արդէն մեռել է, ուստի և հանդարտ, անշարժ պառկել էր: Պառկեց նա երկար, — այն-
քան երկար, որ ձանձրացաւ:

Բոլորովին մութ էր, երբ Մակարն զգաց, որ մէկը նրան ոտով հրեց: Նա գլուխը դարձրեց և բացաւ փակ աչքերը:

Այժմ կուէնիները նրա գլխին կանգնած էին հեղ, խաղաղ, կարծես ամաչելով իրանց առաջուայ կատակներից: Թաւոտ եղնիները երկարել էին իրանց լայն, ձիւնածածկ թաթերը և մեղմիկ-մեղմիկ ճօճւում էին: Օդի միջով նոյնպէս հանդարտ իջնում էին ձիւնի ճառագայթածև հատիկները:

Բարի վառ աստղերը կապոյտ երկնքից նայում էին խիտ ձիւղերի արանքով և կարծես ասում էին. «այ, տեսէք, խեղճ մարդը մեռել է»:

Մակարի գիտիլի վրայ՝ նրան ոտքով հրելով՝ կանգնել էր ծեր տէրտէրը — Իվանը: Նրա երկար ֆարաջան ծածկուած էր ձիւնով. ձիւնը երևում էր տէր Իվանի մորթի ընդգեսի (գլխարկ) վրայ, ուսերի վրայ, երկար միւրուքի մէջ: Աւելի դար-
մանալին այն հանդամանքն էր, որ այդ հէնց նոյն տէր Իվանն էր, որ մեռել էր դրանից չորս տարի առաջ:

Այդ մի բարի տէրտէր էր: Նա երբեք չէր նեղացնում Մա-
կարին բուզայի *) համար, երբեք փող անդամ չէր ուզում զո-
հադին: Մակարն ինքն էր նշանակում կնուէրի ու մաղթանքի
վճարը և այժմ ամաչելով էր յիշում, որ երբեմն սաստիկ քիչ էր

*) Քահանաներին տրուող տուրք փողով կամ պողով, Հիւսիսային Սի-
բիրում:

վճարում, իսկ երբեմն էլ բողոքովին չէր վճարում: Տէր Իվանը չէր էլ նեղանում, նրան միայն մի բան էր հարկաւոր, ամեն անգամ պէտք էր մի շիշ օղի դնել սեղանին: Եթէ Մակարը փող չէր ունենում, տէր Իվանն ինքն էր ուղարկում մի շիշ օղի բերելու, և նրանք միասին խմում էին: Տէրտէրը խմում էր անպատճառ այնքան, որ սաստիկ հարբում էր, բայց միևնոյն ժամանակ շատ քիչ էր կուռում և այն էլ ոչ թունդ: Մակարն այդ անօղնական ու անսպաշտպան մարդուն հասցնում էր տուն և յանձնում մայր-տիրուհու խնամքին:

Այո, այդ մի բարի տէրտէր էր, բայց մեռաւ ոչ լաւ մահով: Մի անգամ, երբ բոլորը դուրս էին եկել անից, և հարբած տէրտէրը մենակ մնացած՝ պառկած էր անկողնում, մտազրուեց քիչ ծխել: Նա վեր կացաւ և օրօրուելով մօտեցաւ ահագին, խիստ վառուած բռնարուն, որպէսզի ծխամորչը վառէ կրակից: Նա արդէն չափազանց հարբած էր, ճօճուեց և ընկաւ կրակը: Երբ եկան անեցիները, տէրտէրի միայն ոտներն էին մնացել:

Բոլորն ախտոսում էին բարի տէր Իվանին, բայց որովհետեւ նրա միայն ոտներն էին մնացել, ուստի նրան բժշկել չը կարողացաւ էլ ոչ մէկ բժիշկ աշխարհիս երեսին: Ոտները թաղեցին, իսկ տէր Իվանի տեղ ուրիշին կարգեցին:

Այժմ այդ տէրտէրը ողջ-առողջ կանգնած էր Մակարի դուրսին և ոտով հրում էր նրան:

—Վեր կաց, Մակարուշկա,—ասում էր նա:—Ե՛կ դնանք:

—Ո՛ւր դնամ,—հարցրեց Մակարը դժգոհութեամբ:

Նա ենթադրում էր, որ քանի որ նա «կորած է», նրա պարտականութիւնն է—հանդիստ պառկել, և նա կարիք չ'ունի նորից չրջել անտառում՝ թափառելով անճանապարհ: Թէ չէ էլ նա ինչո՞ւ պէտք է մեռնէր:

—Գնանք մեծ Տոյոնի մօտ:

—Ես ինչո՞ւ պէտք է նրա մօտ դնամ,—հարցրեց Մակարը:

—Նա քեզ պէտք է դատէ,—ասաց տէրտէրը վշտոտ և մի տեսակ խղճահար ձայնով:

Մակարը յիշեց, որ յիշուի մահից յետոյ պէտք է ներկայանալ ինչ-որ մի տեղ դատաստանի: Նա այդ լսել էր մի ժամանակ եկեղեցում: Նշանակում է՝ տէրտէրն իրաւացի էր: Ստիպուած պէտք էր վեր կենար:

Եւ Մակարը վեր կացաւ ինքն իրան մրթմրթալով, որ մինչև անգամ մահից յետոյ էլ մարդուն հանդիստ չեն տալիս:

Տէրտէրը դնում էր սուաջից, Մակարը ետևից: Նրանք միշտ ուղիղ էին գնում: Կուսնիները հեղօրէն մի կողմ էին քաշուում՝ ճանապարհ տալով: Գնում էին արեւելք:

Մակարը զարմանքով նկատեց, որ տէր Իվանի հետքերը՝ չեն մնում ձիւնի վրայ: Իր ոտներին տակին մտիկ տալով՝ նա նոյնպէս հետքեր չը տեսաւ. ձիւնը մաքուր էր և հարթ, ինչպէս սփռոց:

Նա մտածեց, որ այժմ շատ յարմար էր մտնել ուրիշների ծուղակները, որովհետեւ ոչ ոք այդ մասին չէր կարող իմանալ. բայց տէրտէրը հաւանօրէն դուշակելով նրա թաղուն միտքը՝ դարձաւ գէպի նա և ասաց.

— Կարճիս՝ (թոյ) Դու չը գիտես, թէ ինչպէս կը պատժուես իւրաքանչիւր այդպիսի մտքիդ համար:

— Լաւ, լաւ, — դժգոհ պատասխանեց Մակարը: — Կարծես չի էլ կարելի մտածել: Էդ ինչ ևս հիմա էդպէս խստացել: Ձէնրդ կտրիր գնա...

Տէրտէրը գլուխը չարժեց և շարունակեց գնալ:

— Դեռ շատ ենք գնալու, — հարցրեց Մակարը:

— Շատ, — պատասխանեց տէրտէրը լքուած:

— Բայց ինչ ենք ուտելու, — կրկին հարցրեց Մակարն անհանգստութեամբ:

— Դու մոռացել ես, — պատասխանեց տէրտէրը՝ դառնալով գէպի նա, — որ մեռած ես, և որ այժմ կարիք չ'ունես ոչ ուտելու, ոչ խմելու:

Մակարին այդ շատ էլ դուր չ'եկաւ: Իհարկէ, այդ լաւ է այն դէպքում, երբ ուտելու ոչինչ չը կայ, բայց այդ դէպքում էլ պէտք էր պառկել այնպէս, ինչպէս նա պառկած էր իր մահից անմիջապէս յետոյ: Իսկ գնալ, և այն էլ հեռու տեղ դրնալ և չ'ուտել ոչինչ, այդ նրան թւում էր անմիտ բան: Նա կրկին փրնթփրնթաց:

— Մի տրտնջալ, — ասաց տէրտէրը:

— Լաւ, — պատասխանեց նա վիրաւորուած տոնով, բայց ինքը շարունակեց ինքն իրան գանգատուել և դժգոհանալ անպիտան կարգերից: «Մարդուն ստիպում են գնալ, բայց ուտել հարկաւոր չէ նրան: Էդ ո՞րտեղ է լսուած»:

Նա միանգամայն դժգոհ էր ամբողջ ժամանակ՝ հետեւելով տէրտէրին: Նրանք ըստ երևոյթին բաւական երկար ժամանակ գնում էին: Ճիշտ է, Մակարը դեռ լուսանալը չէր տեսնում, բայց տարածութեանը նայած՝ նրան թւում էր, թէ նրանք արդէն մի ամբողջ շաբաթ գնում էին. այնքան շատ էին նրանք թողել իրանց ետնից պաղ'ներ ու սոսկաններ *), գետեր ու

*) Պաղ՝ — կիրճ, սարերի մէջ գտնուող ձոր. սոսկա — սրածայր լեռ:

լճեր, այնքան չափ անտառներ ու հարթավայրեր էին անցել: Երբ Մակարը շուրջն էր նայում, նրան թւում էր, թէ անտառն ինքն է նրանցից փախչում, իսկ ձիւնապատ բարձր լեռներն ասես հալչում էին զիշերային խաւարում, և արագ անյայտանում հորիզոնի ետեւում:

Նրանք կարծես աւելի ու աւելի բարձր էին գնում: Առօրեղերն աւելի բազմանում ու սրայծառնում էին: Ապա այն լեռնաբլրի բաշի ետեւից, ուր բարձրանում էին նրանք, երևաց մայր մոռնող լուսնին ծայրը: Նա կարծես չտապում էր հեռանալ, բայց Մակարը աէրթէրի հետ միասին վրայ էին հասնում նրան: Վերջապէս լուսինն սկսեց նորից բարձրանալ հորիզոնի վրայ: Նրանք սկսեցին գնալ հարթ, խիստ բարձր մի տեղով:

Այդ ժամանակ լուսացաւ,—աւելի լոյս էր, քան զիշերուայ սկզբին: Այդ առաջ էր գալիս նրանից իհարկէ, որ նրանք աւելի մօտ էին աստղերին: Աստղերն ամեն մէկը մի խնձորի չափ՝ այնպէս էին փայլում, իսկ լուսինն ասես ոսկի մեծ տակաւի յատակ լինի՝ արևի պէս լուսաւորելիս աշխարհի մի ծայրից միւս ծայրը:

Հարթավայրի վրայ միանգամայն պարզ երևում էր ձիւնի ամեն մի հատիկը: Նրա վրայով անցնում էին ահագին քանակութեամբ ճանապարհներ և նրանք բոլորը միանում էին մի մի տեղ արեւելքում: Ծանապարհներով գնում էին հետիւտն ու ու հեծեալ մարդիկ զանազան հագուստներով և զանազան տեսքի:

Յանկարծ Մակարն ուշադրութեամբ դիտելով մի ձիւնորի՝ ճանապարհը ծուկ և վաղեց նրա ետեւից:

—Կանգնիր, կանգնիր,—կանչում էր տէրտէրը, բայց Մակարը մինչև անդամ չէր էլ լսում: Նա ճանաչեց ծանօթ թուրքին, որը դրանից վեց տարի առաջ գողացել էր նրա խալդար (խայտաբղետ) ձին, իսկ հինգ տարի առաջ մեռել էր: Այժմ թուրքը գնում էր նոյն խալդար ձիւ վրայ: Ձին այնպէս էր ծառս լինում: Նրա սմբակների տակից թռչում էին ձիւնի փոշու ահագին ամպեր, որոնք չողչողում էին աստղերի ճառագայթների բազմերանդ ցոլքերով: Մակարը զարմանում էր՝ տեսնելով այդ կատաղի արշաւանքը, թէ ինչպէս նա կարողացաւ աշդպէս հեշտութեամբ ոտով հասնել թուրքին: Սակայն թուրքը Մակարին տեսնելով մի քանի քայլ հեռու՝ մեծ պատրաստակամութեամբ կանգ առաւ: Մակարը կատաղած յարձակուեց նրա վրայ:

—Գնանք զիւղապետի մօտ,—դուաց նա: Էդ իմ ձին է: Նրա աջ ականջը կտրտած է... սրան տես, ինչ զոչաղն է...

Ուրիշի ձին հեծել է, իսկ տէրը ոտով է գնում, ասես աղքատ լինի:

—Կանց,—այդ ժամանակ ասաց թուրքը:—Հարկաւոր չէ գիւղապետի մօտ գնալ: Ասում եմ քո ձին է... է՛, վերցրու ուրեմն: Անիծեալ անասունն է: Հինդերորդ տարին է հեծած զընում եմ, և դեռ տեղից կարծես չի շարժուել... Հետիոտն մարդիկ հէնց էն է հա առաջս կտրում են, թուրք մարդու համար ամօթ է մինչև անգամ:

Եւ նա ոտը սկստ բերաւ, որպէսզի իջնէ թամբից, բայց այդ ժամանակ հեացող տէրտէրը նրանց մօտ վազեց և բռնեց Մակարի ձեռից:

—Թշուառական,—ճչաց նա,—այդ լինչ ես անում: Միթէ՞ չես տեսնում, որ թուրքն ուղում է քեզ խաբել:

—Իհարկէ, խաբում է,—ճչում էր Մակարը՝ ձեռները դէս ու դէն շարժելով.—ձիւ լաւ ձի էր, իսկական անտես մարդու ձի... Նրան բառասուն բուրլի էլին տալիս դեռ աշխատումին... Ձէ-է, աղբէր: Եթէ դու փչացրել ես ձիս, ես նրան կը մորթեմ, միւսը կ'ուտեմ, դու էլ ողջ գինը կը վճարես ինձ: Կարծում ես, թէ թուրք ես, հէնց ինչ որ ուզես՝ կարող ես անել:

Մակարը տաքանում էր և գիտամբ գորգոռում, որպէսզի չուրջը շատ մարդ հաւաքի, որովհետեւ նա սովորել էր վախենալ թուրքերից: Բայց տէրտէրն ընդհատեց նրա բռնկումները:

—Հանդարտ, հանդարտ կաց, Մակար: Դու միշտ մոռանում ես, որ արդէն մեռել ես... Ինչի՞ք է հարկաւոր ձին: Եւ յետոյ՝ չես տեսնում, որ դու ոտով գնում ես աւելի արագ թուրքից: Ուղում ես, որ ամբողջ հազար դար ճանապարհ գնաս ձիով:

Մակարը գլխի ընկաւ, թէ ինչու թուրքն այնպէս պատրաստակամութեամբ զիջում էր ձին նրան:

«Խորամանկ մարդիկ»,—մտածեց նա և դարձաւ թուրքին.

—Դէ լաւ: Գնան ձիով, իսկ ես, աղբէր, ես քեզանից դանդաղ գրել կը տամ:

Թուրքը բարկացած ծուռ դրաւ գլխարկը և ձին մարտիկաց: Ձին ծառս եղաւ, ձիւնի քուլաները թափթփուեցին սմբակների տակից, բայց մինչև Մակարն ու տէրտէրը չը շարժուեցին, թուրքը նրանցից մի թիւղ անգամ չը հեռացաւ:

Նա բարկացած թքեց և դարձաւ Մակարին.

—Ի՛նձ լսի՛ր, դոգմոր (բարեկամ), մի թերթիկ մախորկա չ'ունեն: Սաստիկ ծխել եմ ուղում, իսկ իմ ծխախոտը ես վերջացրել եմ արդէն չորս տարի առաջ:

—Շունն է քո բարեկամը, ոչ թէ ես,—սրտմտանքով պատասխանեց Մակարը։—Սրան տես մէկ. ձիս դողացել է, հերիք չի, դեռ ծխախոտ էլ է ուղճւմ։ Թէկուզ ջհաննամը դնաս, էլի չեմ ավառուսալ։

Եւ այս խօսքերից յետոյ Մակարը շարունակեց ճանապարհը։

—Բայց ասէր դու իզուր չը տուիր նրան մի թերթիկ ժախորկա,—ասաց նրան տէր Իվանը։ Դրա համար դատաստանի ժամանակ Տոյոնը կը ներէր քեզ ոչ պակաս քան հարիւր մեղք։

—Ապա ինչո՞ւ էդ ինձ առաջ չ'ասացիր,—հեղացաւ Մակարը։

—Է՛, այժմ արդէն ուշ է քեզ սովորեցնելու համար։ Դու պարտաւոր էիր իմանալ այդ մասին քո տէրտէրներից կենդանի ժամանակդ։

Մակարը զայրացաւ. տէրտէրներից նա երբէք ոչ մի խէր չէր տեսել. տուրքն ստանում են, բայց չեն էլ սովորեցրել մինչեւ անգամ, թէ երբ պէտք է թուրքերին մի թերթիկ ծտախոտ տալ, որպէսզի մեղքերիդ թողուլիւն ստանաս։ Հանած բան է. հարիւր մեղք... և այդ բոլորի համար մի թերթիկ միայն... Չէ որ այդ մի բան արժէ։

—Կայց,—ասաց նա։—Մեզ մի թերթն էլ բաւական է, իսկ մնացած չորս թերթն էս բոպէիս թուրքին կը տամ։ Էդ կ'անի չորսհարիւր մեղք։

—Շնորհը նայիր,—ասաց տէրտէրը։

Մակարը շուրջը նայեց։ Ետեւ տարածուած էր միայն ճերմակ ամայի հարթութիւնը։ Թուրքը մի վայրկեան աչքի ընկաւ սև կէտի պէս։ Մակարին թւաց, որ նա տեսաւ, թէ ինչպիսի սպիտակ փոշի է դուրս թռչում իր խալիքարի սմբակների տակից, բայց մի վայրկեանից յետոյ այդ կէտն էլ անյայտացաւ։

—Լսւ, լսւ,—ասաց Մակարը։—Թուրքն առանց ծխախոտի էլ ետլա կը դնայ։ Տես դու, ինչպէս է փչացրել ձիս, անխիճան։

—Ոչ,—ասաց տէրտէրը,—նա քո ձին չէ փչացրել, բայց այդ ձին գողացած է։ Միթէ՞ դու չես լսել ձերերից, որ գողացած ձիով շատ հեռու գնալ չես կարող։

Մակարն իսկապէս այդ լսել էր ձերերից, բայց որովհետև իր կեանքի ընթացքում նա քիչ չէր տեսել, որ թուրքերը գողացած ձիերով գնում էին նոյնիսկ մինչև քաղաք, ուստի հասկանալի է, որ նա ձերերին հաւատ չէր ընծայել։ Իսկ այժմ

նա եկաւ այն համոզման, որ ծերերն էլ երբեմն ճշմարիտ են խօսում:

Եւ նա սկսեց հարթավայրով գնացող շատ ձիաւորներից առաջ ընկնել: Նրանք բոլորն էլ սլանում էին նոյնպէս արագ, ինչպէս և առաջինը: Զիւրքը թռչում էին թռչունների պէս, հեծեալները քրտնքում կորած էին, մինչդեռ Մակարը մի զլուխ կտրում էր նրանց առաջը և նրանց իր ետևը թողնում:

Մեծաւ մասամբ զրանք թուրքեր էին, բայց պատահում էին և՛ ընդիլ չալգանցիներ, վերջիններիցս մի քանիսը նստած էին գողացած եղջերի վրայ և նրանց քշում էին ուռի ճիպոտներով:

Մակարը թուրքերին թշնամաբար էր նայում և իւրաքանչիւր անգամ մրթմրթում էր, որ այդ դեռ քիչ է նրանց, Իսկ երբ պատահում էր չալգանցիների, այն ժամանակ կանգ էր առնում և բարևարտօրէն զրոյց էր անում նրանց հետ. ինչքան չը վնի, էլի նրանք բարեկամներ են կղել, թէ և գողեր են: Երբեմն նա մինչև անգամ իր կարեկցութիւնն էր արտայայտում նրանով, որ ճանապարհին մի ուռի ճիպոտ գտնելով՝ եռանդով քշում էր ետևից եղջերն ու ձիերը. բայց ինքը մի քանի քայլ էր անում՝ թէ չէ, հեծեալներն արդէն ետևն էին մնում և երևում էին հաղիւ նկատելի կէտի պէս:

Հարթավայրը թւում էր թէ անվերջ է: Նրանք հեծեալ և հիտիոտն մարդկանց առաջն էին կտրում մի զլուխ, սակայն և այնպէս չորս կողմը միշտ թւում էր գատարի Իւրաքանչիւր երկու ճանապարհորդների արանքը կարծես ամբողջ հարիւրաւոր կամ մինչևիսկ հազարաւոր վերստեր էին:

Բոլոր այդ գէմբերի մէջ Մակարի աչքին ընկաւ մի անծանօթ ծեր, նա հաւանորէն չալգանցի էր. այդ երևում էր գէմբից, չորից, մինչև անգամ քայլուածքից, բայց Մակարը չը կարողացաւ յիշել, թէ առաջ երբեիցէ տեսել է նրան: Ծերը հագած էր պատռոտած սոնա, ականջաւոր մեծ ընդգետ, նոյնպէս պատռոտած հորթի կաշից սորբասա: Բայց ինչ որ ամենից վառն էր, այդ այն էր, որ չը նայելով իր ծերութեանը՝ նա ուսերի վրայ տանում էր աւելի զառամած մի պառաւ, որի ոտները քարչ էին գալիս գետնի վրայով: Ծերը զգուարութեամբ էր չընչում, երբեւում էր և ծանրութեամբ յենում վայտին: Մակարի խեղճը եկաւ նրա վրայ: Նա կանգ առաւ: Ծերը նոյնպէս կանգ առաւ:

— Կապսէ՛ (խօսիւր),—ասաց Մակարը մտերմաբար:

— Ոչ,—պատասխանեց ծերը:

— Ի՞նչ լսեցիր:

—Ոչինչ չեմ լսել:

—Ի՞նչ տեսար:

—Ոչինչ չեմ տեսել:

Մակարը քիչ լուռ մնաց, ապա միայն հնարաւոր համարեց հարցութորձ անել ծերին, թէ ով է նա և որտեղից է բարչ գալիս:

Ծերն ասաց իր տնունը: Վաղուց արդէն,—ինքն էլ չը դիտէ՝ քանի տարի առաջ, նա թողեց Չալգանը և գնաց «սարը» փրկուելու: Այնտեղ նա ոչինչ չէր տեսնում, ուտում էր միայն հազարձ և արմատներ, չէր վարում, չէր ցանում, երկանքով ալիւր չէր աղում և հարկ չէր տալիս: Երբ նա մեռաւ, ևկաւ Տոյոնի մօտ գատուելու: Տոյոնը հարցրեց, թէ ով է նա և ինչ է արել: Նա պատմեց, որ «սարն» էր գնացել և փրկուում էր: «Լաւ,—ասաց Տոյոնը,—բայց ուր է քո պառաւը: Գնահ բեր քո պառաւին»: Եւ նա գնաց պառաւի ետեից, իսկ պառաւը մահից առաջ ողորմութիւն է եղել հաւաքելիս և կերակրող չէ՝ ունեցել, և աուն, կով, հաց չէ ունեցել: Նա թուլացել է և չէ կարողանում քարչ գալ: Եւ այժմ իր վրայ պէտք է քաշ տայ պառաւին Տոյոնի մօտ:

Ծերը լաց եղաւ, իսկ պառաւը հարուածեց նրան ոտով՝ ինչպէս եղան և ասաց թոյլ, բայց սրտմտած ձայնով.

—Տա՛ր:

Մակարի խեղճն աւելի եկաւ ծերի վրայ, և նա ուրախացաւ բոլոր սրտից, որ իրան չ'աջողուեց «սարը» գնալ: Նրա պառաւն ահագին, երկարահասակ պառաւ էր, և նրան տանելն աւելի դժուար կը լինէր: Իսկ եթէ նա սկսէր և՛ ոտով հարուածել նրան՝ որպէս եղան, այն ժամանակ երեւի չուտով նրան երկրորդ մահուան կը հասցնէր:

Խղճալուց նա ուզում էր բռնել պառաւի ոտներից, որպէսզի օգնէ դողորին, բայց հաղիւ էր երկու-երեք քայլ արել, որ հարկադրուեց բաց թողնել պառաւի ոտները, որպէսզի նրանք չը մնան իր ձեռներում: Մի րոպէում ծերն իր բնուով աչքից կտրաւ:

Մնացած ճանապարհին այլեւ չէին պատահում այնպիսի մարդկանց, որոնց Մակարն արժանացնէր իր առանձին ուշադրութեանը: Այդտեղ կային գողեր բեռնաւորուած՝ որպէս բեռնակիր տնասուն՝ գողացած իրեղէններով, որոնք սաստիկ դանդաղ էին քայլում. եակուտեան հաստ տոյոնները լիկլիկում էին՝ նստած բարձր թամբերի վրայ, աշտարակների նման բարձր զլխարկներն ամպերին էին հասնում: Դրանց հետ միասին՝ ցատկոտելով վազում էին կոմ'նոչիտները (բանուորները), վը-

տիտ ու թեթև, որպէս նապաստակներ: Գնուս էր մի մոայլ մարդասպան ամբողջովին արեան մէջ, կատաղի-պտրտող աչքերով: Զուր էր նա իրան դրում մաքուր ձիւնի մէջ, որպէսզի լուանայ արեան բծերը: Զիւնը վայրկենապէս կարմիր էր ներկըւում արիւնով՝ ինչպէս քափով, և մարդասպանի վրայ բծերն աւելի պարզ էին երևում, և նրա հայեացքում երևում էին վայրենի յուսահատութիւն ու սարսափ: Եւ նա անընդհատ դնում էր՝ խուսափելով օտար, վախեցած աչքերից:

Իսկ մանկական փոքրիկ հոգիներն անվերջ երևան էին դալիս օդում ու անյայտանում թռչունների պէս: Նրանք թռչում էին մեծ երամներ կազմած, և Մակարին այդ դարմայնում էր: Վատ, կոպիտ կերակուրը, կեղտը, բուխարիների կրակն ու իւրտանների ցուրտ ընդմիջանց քամին կոտորում էին նրանց միայն ջալլանում համարեա հարիւրներով: Հաւասարուելով մարդասպանին՝ նրանք վախեցած երամով հեռու մի կողմ էին թռչում, և դրանից յետոյ դեռ երկար լսում էր օդում նրանց փոքրիկ թևերի արագ, անհանգիստ խշշոցը:

Մակարը չէր կարող չը նկատել, որ նա ուրիշներից համեմատաբար արագ է դնում, և շտապեց վերադրելու այդ իր առաքինութիւններին:

—Ի՛նձ լսիր, ագաքը՛րիտ (հայր),—ասաց նա,—ի՛նչ ես կարծում: Ես թէն կենդանութեանս ժամանակ սիրում էի խմել, բայց լաւ մարդ էի: Աստուած ինձ սիրում է...

Նա հարցական կերպով նայեց աէր Իվանին: Նա յետին միտք ունէր—մի բան դուրս քաշել ձեր տէրտէրից: Բայց նա ասաց հակիրճ.

—Մի հպարտանալ: Արդէն մօտ է: Ծուռով ինքդ կ'իմանաս:

Մակարը չէր էլ նկատել առաջ, որ հարթավայրում սկսել էր լուսանալ: Ամենից առաջ՝ ուժգին նուազախմբի առաջին հարուածների պէս՝ հորիզոնի ետքից դուրս վազեցին մի քանի յուսաւոր ճառագայթներ: Նրանք արագութեամբ անցան երկնքի վրայով և հանդիպին վառ աստղերը: Եւ աստղերը մարեցին, իսկ լուսինը մայր մտաւ: Եւ ձիւնափայլ հարթավայրը քիչ միջնեց:

Այն ժամանակ նրա գլխի վրայ մառախուղներ բարձրացան և պատեցին հարթավայրի շուրջը՝ որպէս յարդանք մատուցող պահակախումբ:

Եւ ահա մի տեղ, արեւըլում, մառախուղները դարձան աւելի լուսաւոր, ասես ոսկի հալած զինուորներ:

Եւ ապա մառախուղները երերացին, ոսկի զինուորները ցած իջան:

Եւ նրանց ետքից դուրս եկաւ արեւը և կանգնեց նրանց ոսկեգոյն շղթաների վրայ և դիտեց հարթավայրը:

Եւ հարթավայրն ամբողջապէս պսպղաց չը տեսնուած շլա-
յուցիչ լուսով:

Եւ մատախուղները հանդիսաւոր կերպով բարձրացան ա-
հագին խմբով, ցրիւ եկան արեւմուտքում և տատանուելով՝ վեր
սլացին:

Եւ Մակարին թւաց, թէ նա լսում է մի հրաշալի երգ:
Այդ կարծես թէ հէնց նոյն, վաղուց ծանօթ երգն էր, որով եր-
կիրն ամեն անգամ դիմաւորում է արեւին: Բայց Մակարը դեռ
երբէք սլարտուպաշաճ ուշադրութիւն չէր դարձրել նրա վրայ
և միայն առաջին անգամը հասկացաւ, թէ այդ ինչ հրաշալի
երգ է:

Նա կանգնել, լսում էր և չէր ուզում առաջ գնալ, այլ
ուզում էր յաւիտեան կանգնած մնալ այդտեղ ու լսել

Բայց տէր Իվանը քաշեց նրա թիկը:

— Մտնենք, — ասաց նա: — Հասել ենք:

Այն ժամանակ Մակարը տեսաւ, որ նրանք կանգնած են
մի մեծ դրան մօտ, որն առաջ ծածկում էին մատախուղները:

Նա շատ էր ուզում չը գնալ, սակայն ստիպուած եղաւ
հնազանդուել:

Նրանք մտան մի գեղեցիկ, լայնարձակ խրճիթ, և այդտեղ
մտնելուց միայն Մակարը նկատեց, որ դուրսը խիստ սառնամա-
նիք է եղել: Խրճիթի մէջ տեղում գտնւում էր կրակարանը՝ հրա-
շալի քանդակներով զարդարուած, զուտ արծաթից, և նրա մէջ
վառւում էին ոսկի փայտերը՝ տալով միապաղաղ ջերմութիւն,
որը միանգամից թափանցում էր ամբողջ մարմինը: Այդ հրաշա-
լի կրակարանի կրակը աչք չէր ծակում, չէր այրում, այլ միայն
տաքացնում էր, և Մակարը կրկին ցանկացաւ յաւիտեան կանգ-
նած մնալ այդտեղ և տաքանալ: Տէր Իվանը նոյնպէս մօտեցաւ
կրակարանին և սառած ձեռները դէմ արաւ նրան:

Խրճիթը չորս դուռ ունէր, որոնցից միայն մէկն էր գէպի
դուրսը տանում, իսկ միւսներով անընդհատ ներս ու դուրս էին
անում ինչ-որ ջահիլ մարդիկ՝ երկար ճերմակ շապիկներ հագած:
Մակարը մտածեց, որ դրանք այդտեղի Տոյոնի բանուորները
պէտք է լինեն: Նրան թւաց, թէ նա նրանց մի տեղ տեսել է

մի ժամանակ, բայց չէր կարողանում յիշել, թէ իսկապէս որտեղ: Ո՛չ քիչ զարմացնում էր նրան այն հանգամանքը, որ իւրաքանչիւր մշակի մէջքին ձերմակ մեծ թևեր են չարժւում, և նա մտածեց, որ երևի Տոյոնն ուրիշ մշակներ էլ ունի, որովհետև սրանք հաւանականաբար չէին կարող իրանց թևերով անցընել անտառի թաւուտով փայտ կամ ձող կտրելու:

Բանուորներից մէկը նոյնպէս մօտեցաւ կրակարանին և մէջքը դէպի նա դարձնելով՝ խօսեց տէր Իվանի հետ:

— Ասա:

— Ոչինչ չ'ունեմ ասելու, — պատասխանեց տէրտէրը:

— Ի՞նչ լսեցիր աշխարհում:

— Ոչինչ չեմ լսել:

— Ի՞նչ տեսար:

— Ոչինչ չեմ տեսել:

Երկուսն էլ քիչ լուռ մնացին, և այն ժամանակ տէրտէրն ասաց.

— Բերել եմ, այ, մէկին:

— Դա չալգանցի՞ է, — հարցրեց մշակը:

— Այո, չալգանցի է:

— Է՛, նշանակում է՝ պէտք է մեծ կշեռքը պատրաստել:

Եւ նա դուրս գնաց դռներից մէկով, որպէսզի կարգադրութիւն անէ, իսկ Մակարը հարցրեց տէրտէրից, թէ կշեռքն ինչ պէտք է անեն, և ինչո՞ւ անպատճառ մեծ կշեռք է հարկաւոր:

— Գիտես, — պատասխանեց տէրտէրը քիչ չփոթուած, — կշեռքը պէտք է կշռելու համար այն բարին ու չարը, ինչ որ արել ես կեանքումդ: Մնացած բոլոր մարդկանց չարն ու բարին մօտաւորապէս հաւասարակշռութեան մէջ են դնում նժարները. միայն չալգանցիների մեղքերն են այնքան շատ, որ նրանց համար Տոյոնը հրամայել է չինել առանձին կշեռք՝ մեղքերի համար ահագին նժարով:

Այդ խօսքերից Մակարի սիրտը կարծես կտոր-կտոր եղաւ, նա վախ զգաց:

Մշակները ներս բերին և այնտեղ դրին մեծ կշեռքը: Մի նժարը ոսկի էր և փոքր, միւսը — փայտի, ահագին մեծութեամբ: Վերջինի տակից յանկարծ բացուեց խոր սև ծակ:

Մակարը մօտեցաւ և մեծ խնամքով տնտղեց կշեռքը, որպէսզի կեղծիք չը լինի: Բայց կեղծիք չը կար: Նժարները հաւասարակշռութիւն էին պահպանում, առանց ճօճուելու:

Ասեւք նա շատ էլ զլխի չէր ընկնում նրանց կազմութիւնը և նա կը գերադասէր գործ ունենալ զանթարի հետ, որով

նա իր երկար կեանքի ընթացքում սովորել էր և՛ ծախել, և՛ առնել՝ իր համար մեծ օգտով:

—Տոյոնը գալիս է,—յանկարծ ասաց տէր Իվանը և սկսեց շատով ուղղել իր ֆարաջան:

Միջին դուռը բացուեց, և մտաւ ծեր-ղառամած Տոյոնը՝ մեծ արծաթագոյն միրուքով, որ հասնում էր մինչև դատին: Նա հագած էր ճոխ՝ Մակարին անձանօթ մորթիներու գործուածքներ, իսկ ոտներին տաք կօշիկներ՝ պլիսով չորս կողմից կարած, որպիսին Մակարը տեսել էր ծեր պատկերասկարի ոտներին:

Եւ Տոյոնի վրայ հէնց առաջին անգամ նայելուց Մակարը ճանաչեց, որ այդ այն միկնոյն ծերն է, որին նա տեսել է եկեղեցում նկարուած: Միայն թէ այստեղ որդին մօտը չէր: Մակարը մտածեց, որ վերջինս հաւանականաբար բան է ունեցել և դուրս է եկել: Մակայն աղաւնին սենեակը ներս թաւ և ծերի գլխին պտտուելով՝ նստեց նրա ծնկանը: Եւ ծեր Տոյոնը ձեռքով սկսեց շոյել աղաւնուն՝ նստած իր համար յատուկ պատրաստած աթոռի վրայ:

Ծեր Տոյոնի դէմքը բարի էր, և երբ Մակարի սիրտը շատ նեղանում էր, նա նայում էր այդ դէմքին և թեթեւութիւն ըստանում:

Իսկ նրա սիրտը ճմլւում էր այն պատճառով, որ նա յանկարծ յիշեց իր ամբողջ կեանքը մինչև վերջին մանրամասնութիւնները, յիշեց իր ամեն մի քայլը—և՛ կայնի իւրաքանչիւր հարուածը, և՛ ամեն-մի կտրած ծառը, և՛ ամեն մի խարէութիւնը, և՛ խմած օղու իւրաքանչիւր բաժակը:

Եւ նա զգաց ամօթանք և ահ: Բայց նայելով ծեր Տոյոնի դէմքին՝ նա սիրտ առաւ:

Եւ սիրտ առնելով՝ մտածեց, որ գուցէ կ'աջողուի մի քանի բան էլ թագցնել:

Ծեր Տոյոնը նայեց նրան և հարցրեց, թէ ով է նա և որտեղացի, և ինչ է նրա անունը, քանի տարեկան է:

Երբ Մակարը պատասխանեց, ծեր Տոյոնը հարցրեց.

—Ի՞նչ ես արել դու կեանքումդ:

—Ինքզի գիտես,—պատասխանեց Մակարը:—Դու երեի զբօսած կ'ոտնենաս:

Մակարը փորձում էր ծեր Տոյոնին՝ կամենալով իմանալ, թէ իսկապէս նրա մօտ ամեն ինչ զրուած է, թէ չէ:

—Ի՞նքզի ասա,—ասաց ծեր Տոյոնը:

Եւ Մակարը սիրտ առաւ:

Նա սկսեց մէկ-մէկ թւել իր գործերը, և թէև նա յիշում էր կայնի իւրաքանչիւր հարուածը և՛ իւրաքանչիւր կտրած ձո-

ղը, և՛ արօրով պատռած իւրաքանչիւր ակօսը, սակայն նա աւելացնում էր ամբողջ հաղարաւոր ձողեր և՛ հարիւրաւոր բեռներ փայտ, և՛ հարիւրաւոր գերաններ, և՛ ցանկաւ հարիւրաւոր փութեր:

Երբ նա բոլորը թւեց, ծեր Տոյոնը դարձաւ տէր Իվանին.

—Ապա մէկ այստեղ բեր գիրքը:

Այն ժամանակ Մակարը տեսաւ, որ տէր Իվանը Տոյոնի սուրուկսուտն (զրագիր) է, և շատ նեղացաւ, որ նա ընկերաբար չէր յայտնել նրան այդ մասին առաջուց:

Տէր Իվանը բերաւ մի մեծ գիրք, բաց արաւ ու սկսեց կարդալ:

—Մէկ մտիկ տուր,—ասաց ծեր Տոյոնը,—թէ քանի ձող է նշանակուած:

Տէր Իվանը նայեց և ասաց վշտացած.

—Նա աւելացրել է ամբողջ երեքհազար հատ:

—Սուտ է ասում,—զոչեց Մակարը տաքացած:—Նա երկի սխալուել է, որովհետեւ նա հարեցող է և մեռել է վատ մահով!

—Ձէնդ կտրիր,—ասաց ծեր Տոյոնը:—Քեզանից նա աւելորդ վերցրել է արդեօք կնուռքի կամ հարսանիքի համար: Կորզել է քեզանից եկեղեցական տուրքը:

—Սուտ ինչն է խօսում,—պատասխանեց Մակարը:

—Տեսնում ես,—ասաց Տոյոնը,—ես ինքս էլ գիտեմ, որ նա սիրում էր խմել...

Եւ ծեր Տոյոնը սրտմտեց:

—Կարդա՛ այժմ նրա մեղքերը, ինչպէս գրուած են գրքում, որովհետեւ նա խաբեբայ է, և ես նրան չեմ հաւատում,—ասաց նա տէր Իվանին:

Մինչ այս մինչ այն՝ մշակները դցել էին ոսկի նժարի մէջ Մակարի և՛ ձողերը, և՛ նրա փայտը, և՛ նրա հերկածը, և՛ նրա ամբողջ աշխատանքը: Եւ այնքան շատ էր երեսում այդ բոլորը, որ կշռքի ոսկի նժարն իջաւ, իսկ փայտի նժարը բարձրացաւ վեր ու վեր, այնպէս որ ձեռք չէր հասնիլ, և աստուածային մոտազահաս մշակները վրայ թռան իրանց թևերով, և մշակների մի ամբողջ հարիւրեակ պարաններով ցած էր քաշում այն:

Ծանր էր չալգանցու աշխատանքը:

Բայց տէր Իվանն սկսեց թւել խաբէութիւնները, և բանից դուրս եկաւ, որ խաբէութիւնը—քսանութեկ հազար իննհարիւր երեսուներեք հատ էր, և տէրտէրն սկսեց թւել, թէ Մակարը քանի չի՛ր օղի է խմել, և չորսհարիւր չի՛ր դուրս եկաւ,— և տէրտէրը չարունակեց կարդալ, իսկ Մակարը տեսաւ,—որ

կշռքի փայտի նժարն աւելի է ծանրանում ոսկի նժարից և որ նա արդէն իջնում է փոսը, և քանի դեռ տէրտէրը կարգում էր, նա աւելի ու աւելի էր ցածրանում:

Այն ժամանակ Մակարը միտք արաւ ինքն իրան, որ նրա բանը բուրդ է, և մօտենալով կշռքին՝ փորձեց աննկատելի կերպով նժարի տակից ոտը դէմ տալ: Բայց մշակներից մէկը տեսաւ այդ, և նրանց մէջ աղմուկ բարձրացաւ:

—Այդ ինչ է,—հարցրեց ծեր Տոյոնը:

—Սա ուղում էր ոտը դէմ տալ կշռքին,—պատասխանեց մշակը:

Այն ժամանակ Տոյոնը ցամառնքով դարձաւ Մակարին և ասաց.

—Տեսնում եմ, որ դու խաբեբայ ես, ծոյլ ու հարբեցող... Եւ վրադ ապառիկ է մնացել, տէրտէրն էլ վրադ ապառիկ է հաշւում եկեղեցական տուրքը, ոստիկանն էլ մեղք է գործում քո պատճառով՝ ամեն անգամ հայհոյելով պիղծ խօսքերով!..

Եւ զանալով տէր Իվանին՝ ծեր Տոյոնը հարցրեց.

—Ձալգանում ո՞վ է ամենից շատ բեռ դնում ձիերի վրայ, ո՞վ է ամենից շատ քշում նրանց:

Տէր Իվանը պատասխանեց.

—Եկեղեցու մատակարարը: Նա է տանում փոստը և ման ածում ոստիկանին:

Այն ժամանակ ծեր Տոյոնն ասաց.

—Այս ծոյլին դարձնել մատակարարի զրաստը, և թո՛ղ նա ման ածէ սրա վրայ ոստիկանին, մինչև որ հեծնելուց սպանէ... Իսկ յետոյ մենք կը տեսնենք...

Եւ հէնց որ ծեր Տոյոնն ասաց այս խօսքը, դուռը բացուեց, և խրճիթը մտաւ ծեր Տոյոնի որդին ու նստեց նրա աջ կողմը:

Եւ որդին ասաց.

—Ես լսեցի քո զատավճիռը... Ես երկար ժամանակ ապրել եմ երկրի վրայ և դիտեմ այնտեղի բաները. ծանր կը լինի խեղճ մարդու համար ման ածել ոստիկանին: Բայց... Եղիցի՛... Միայն գուցէ նա դեռ մի բան կ'ասէ: Խօսի՛ր, քարախսամի (թշուառական):

Այն ժամանակ մի արտաքոյ կարգի բան պատահեց: Մակարը, հէնց նոյն Մակարը, որն իր կեանքում երբէք տառ խօսքից աւել չէր արտասանել իրար ևտեից, յանկարծ իր մէջ խօսելու ձիրք զգաց: Նա սկսեց խօսել և ինքն էլ զարմացաւ: Կարծես երկու Մակար եղաւ. մէկը խօսում էր, միւսը լսում ու զարմանում: Նա չէր հաւատում իր ականջներին: Խօսքը նրա

բերանից թափում էր սահուն ու բուռն խանդով, բառերը մէկը միւսից առաջ էին ընկնում և ապա շարում երկար, կանոնաւոր շարքերով: Նա չէր քաշւում: Եթէ նա զէմ էլ էր ընկնում, անմիջապէս ուղղւում էր և գոչում աւելի բարձր: Իսկ որ վիսաւորն է—ինքն զգում էր, որ համոզեցուցիչ կեդարով է խօսում:

Ծեր Տոյոնը, որ սկզբում մի քիչ բարկացել էր նրա յանդգնութեան համար, յետոյ սկսեց լսել մեծ ուշադրութեամբ՝ ասես համոզուելով, որ Մակարն այնքան էլ յիմար չէ, ինչպէս թւում էր սկզբից: Տէր Իվանն առաջին վայրկեանին մինչև անգամ վախեց և սկսեց քաշել Մակարի սոնայի փեշից, բայց Մակարը ձեռքը թափ տուաւ և շարունակեց առաջուայ նման: Յետոյ տէրտէրն էլ դադարեց վախկուց և մինչև անգամ ուրախ ժպտաց, տեսնելով որ իր ծխականը արդարութիւնն է խօսում, և որ այդ արդարութիւնը ձեր Տոյոնի սրտովն է: Մինչև անգամ երկար շաղկաւոր և ճերմակ թիւաւոր ջահիլ մարդիկը, որոնք ձեր Տոյոնի մօտ մշակութիւն էին անում, իրանց բաժանմութից պալիս էին դրան մօտ և զարմանքով լսում Մակարի ձաւը՝ արմունկներով հրհրելով իրար:

Նա սկսեց նրանից, որ չէ կամենում մատակարարի գրաստը գառնալ: Եւ ոչ թէ այն պատճառով չէ կամենում, որ վախում է ծանր աշխատանքից, այլ այն պատճառով, որ այդ վճիռն անկանոն է: Բայց որովհետև այդ վճիռն անկանոն է, ուստի և նա չի հնազանդուիլ նրան և իսկի այնուամէն էլ չի զոյգիլ, ոտն էլ չի դնիլ ոտի առաջին: Ինչ որ ուզում են՝ թող անեն նրան: Թող նրան նոյն իսկ սատանաներին մշտնջենական կոմիսցիա դարձնեն,—նա ոստիկանի գրաստը չի գառնալ այն պատճառով, որ այդ անկանոն է: Եւ թող չը կարծեն, թէ նրա համար սարսափելի է գրաստի գրութիւնը, մատակարարը քշում է գրաստին, բայց և այնպէս նրան դարի է տալիս, իսկ նրան քշել են ամբողջ կեանքում, բայց երբէք դարով չեն կերակրել:

—Քեզ ո՞վ է քշել,—հարցրեց ձեր Տոյոնը սրամտութեամբ:

Այո, նրանք էլ են ողջ կեանքում: Քշել են զիւղապետերն ու տանուտէրերը, գաւառական ժողովի անպաճիներն ու ոստիկանները՝ հարկ պահանջելով: Քշել են տէրտէրները՝ եկեղեցական տուրք պահանջելով: Քշել են նրան կարիքն ու սովը, քշել են նրան սանամանիքներն ու շողերը, անձրևներն ու երաշտները, քշել է սառած հողն ու չար անտառը... Անասունն առաջ է ընթանում և յաժ է նայում՝ չ'իմանալով թէ ուր են քշում նրան... Նա էլ հէնց նոյնպէս... Միթէ նա զիտէր, թէ ինչ է կարգում տէրտէրը ժամում, և ինչի համար հասցիթ է տալիս: Միթէ նա զիտէր, թէ ինչի համար և որտեղ տարան նրա աւագ որդուն,

որին վերցրին գինուորութեան, և որտեղ մեռաւ, և որտեղ են այժմ նրա խղճալի ոսկորներն ընկած:

Ասում են, նա շատ օղի է խմել: Իհարկէ՝ ճիշտ է. նրա սիրան ուզում էր...

—Բանի՛ չիչ ես խմել, ասում ես:

—Չորսհարիւր,—պատասխանեց տէր Իվանը՝ մտիկ տալով գրքին:

—Լաւ: Բայց միթէ այդ օղի էր: Երեք քառորդը ջուր էր, և միայն մի քառորդն էր խակական օղի, նրա մի մասն էլ ծխախոտի հիւթ: Նշանակում է երեքհարիւր չիչ չը պէտք է հաշուել:

—Նա այդ բոլորը, ինչ որ ասում է, ճշմարիտ է,—հարցըրեց ծեր Տոյոնը տէր Իվանից, և երևում էր, որ նա դեռ բարկացած է:

—Չուտ ճշմարտութիւն է,—չտապով պատասխանեց տէր-տէրը, իսկ Մակարը շարունակեց:

Նա աւելցրել է երեքհազար ձող: Թող այդպէս լինի: Թող նա կոտորած լինի տասնութեց հազար հաւ միայն! Միթէ այդ քիչ է: Երկու հազարն էլ նա կոտորել է, երբ հիւանդ էր նրա առաջին կինը... Եւ նրա սիրտը խիստ վշտացած էր, և նա ուզում էր կնոջ մօտ նստել, բայց կարիքը նրան քչում էր անտառ... Եւ նա անտառում արտասուք թափեց, և արտասուքը սառաւ կոպերին, և ցաւից՝ ցուրտը սիրտը թափանցեց... Բայց կոտորում էր:

Իսկ յետոյ նրա պառաւը մեռաւ: Նրան պէտք էր թաղել, բայց նա փող չ'ունէր: Եւ վարձով մտաւ փայտ կոտորելու, որ հանդերձեալում իր պառաւի տան գինը վճարէ... Վաճառակա-նը երբ տեսաւ, որ նա մեծ կարիք ունի, ամեն-մի բեռի գինը միմիայն տաւ կոպէկ հաշուեց... Պառաւն էլ մենակ պառկած չը վառած, սառած խրճիթում, իսկ նա նորից էր և՛ փայտ կոտորում և՛ արցունք չափում: Նա ենթադրում է, որ այդ բեռները պէտք է հինգ անգամ և մինչև անգամ աւելի հաշուել:

Ծեր Տոյոնի աչքերում արցունքներ երևացին, և Մակարը տեսաւ, որ կռքի նժարները տատանուեցին, և փայտի նժարը բարձրացաւ, իսկ ոսկի նժարը ցած իջաւ:

Իսկ Մակարը շարունակեց: Ամեն բան նրանց մօտ գրուած է գրքում... Թող ուրեմն նրանք ման դան ու գտնեն, թէ երբ է մէկից նա տեսել զգուանք կամ մտերմութիւն կամ ուրախութիւն: Թող ասեն, ուր են նրա զաւակները: Այն ժամանակ, երբ նրանք մեռնում էին, ծանրացած ու դառն էր նրա հոգին, իսկ երբ որ նրանք մեծանում էին, նրան թողնում ու հեռա-

նուժ էին, որ մեն-միայնակ պայքարեն ծանր կարիքների դէմ: Եւ նա ծերացաւ մենակ իր երկրորդ պառաւ կնոջ հետ և տեսնում էր, թէ ինչպէս թողնում են նրան ոյժերը, և մօտենում էր չար, անտուն-անտէր զառամութիւնը: Նրանք մնացել էին մեն-մենակ, ինչպէս ամայի դաշտի մէջ երկու որբ և զինիններ, որոնց խտտագին բուքն ամեն կողմից ծնծում է ծնծում:

—Ծշմարիտ է արդեօք,—կրկին հարցրեց ծեր Տոյոնը:

Եւ տէրտէքն շտապեց պատասխանել.

—Զո՛ւտ ճշմարտութիւն է:

Եւ այն ժամանակ կշեռքը կրկին ցնցուեց... Բայց ծեր Տոյոնը մտածմունքի մէջ ընկաւ:

—Այդ ի՞նչ ասել է,—ասաց նա.—չէ որ ևս աշխարհում ունեմ իսկական արդարներ... Նրանց աչքերը վճիտ են, և դէմքերը պայծառ, իսկ զգեստներն անբիծ... Նրանց սրտերը քնքոյշ են, ինչպէս փափուկ հողը. ընդունում են բարի սերմերը և զրախտային բոյսեր ու անուշահոտ ընձիւղներ տալիս, որոնց բոյրը հաճոյ է ինձ: Բայց դու նայիր վրադ...

Եւ բոլոր հայեացքներն ուղղուեցին Մակարի վրայ, և նա ամաչեց: Նա զգաց, որ իր աչքերը պղտոր են, և դէմքը մոայլ, մազերն ու միւրուքը զգգգուած են, հագուստը պատռտոտած: Եւ թէև մահից դեռ շատ առաջ նա մտադրուել էր կօշիկներ վընել՝ դատաստանին ներկայանալու համար, ինչպէս սաղում է իսկական շինականին, բայց միշտ փողը տալիս էր խմիչքի, և այժմ կանգնել էր Տոյոնի առաջ՝ ինչպէս վերջին եակուտը՝ ծակոտուած անպիտան տորբասաներով... Եւ նա ուզեց դեռինը մտնի:

—Քո դէմքը սև է,—չարունակեց ծեր Տոյոնը,—աչքերդ պղտոր, և հագուստդ պատռտորուած: Իսկ քո սիրտը բռնուած է մոլախոտով, տատասկով ու դառն օշինդրով: Ահա թէ ինչու եմ սիրում իմ արդարներին և երես դարձնում քեզ նման անբարիշտներեց...

Մակարի սիրտը կծկուեց: Նա իր գոյութեան համար ամօթանք զգաց: Հէնց ուղում էր զլուխը քաշ դցել, բայց մէկ էլ յանկարծ բարձրացրեց այն և կրկին խօսեց:

Էդ ո՞ր արդարների մասին է խօսում Տոյոնը: Եթէ նրանց մասին, որ Մակարի հետ միաժամանակ սուրբ են փարթամ ապարանքներում, Մակարը նրանց լաւ է ճանաչում... Նրանց աչքերը այն պատճառով են յստակ, որ նրանք այնքան ուրտասուք չեն թափել, որքան Մակարն է թափել, և նրանց դէմքերն այն պատճառով են այնպէս լուսավայլ, որ անուշահոտ

իւղով են օծուած, իսկ նրանց մաքրափայլ զգեստներն ուրիշի ձեռքով են գործուած:

Մակարը կրկին խոնարհեց գլուխը, բայց իսկոյն կրկին բարձրացրեց:

Սակայն միթէ՞ նա չէ տեսնում, որ նա՝ ինչպէս միւսները՝ ծնուել էր վճիռ ու բաց աչքերով, սրանց մէջ նոյնպէս երկիր ու երկինք յոլանում էին, և մաքուր սրտով, պատրաստ աշխարհիս ամեն դեղեցիկին իր մէջ ընդունելու եւ եթէ որ նա կամենում է այժմ թաղել գետնի տակ իր կերպարանքը մռայլ, նշաւակ, մեղն իրանը չէ... Ապա ում մեղն է:—Այդ նա չը գիտէ... Սակայն նա գիտէ մի բան, որ նրա սրտում հասել է համբերութիւնը:

Իհարկէ՝ եթէ Մակարը կարողանար տեսնել, թէ նրա ճառըն ինչպիսի տպաւորութիւն գործեց ծեր Տոյոնի վրայ, եթէ նա տեսէր, որ նրա ամեն մի զայրադին խօսքն ընկնում էր ոսկի նժարի վրայ՝ ինչպէս արծճի կշռաքար, նա կը զսպէր իր սիրտը: Բայց նա այդ բոլորը չէր տեսնում, որովհետեւ նրա սիրտն էր հոսում կոյր յուսահատութիւնը:

Ահա նա հայեացք գցեց իր ամբողջ դառը կեանքի վրայ: Ինչպէս էր նա կարողանում մինչև այժմ տանել՝ այդ անուշի լուծը: Նա այն տանում էր այն պատճառով, որ առջև՝ մշուշի միջից փայլող աստղիկի պէս միշտ յոյցլում էր յոյսը: Նա կենդանի է, հետևապէս նա կարող է, պարտաւոր է դեռ լաւ օր տեսնել... Այժմ նա կանգնած էր ծայրում, և յոյսը մարել էր...

Այն ժամանակ նրա հոգում խաւար տիրեց, և նրա մէջ եռաց կատաղութիւնը, ինչպէս փոթորիկն ամայի դաշտում խուլ զիչերին: Նա մոռացել էր, թէ որտեղ է նա, ում առաջ կանգնած, մոռացել էր ամեն բան, բացի իր զայրոյթից...

Բայց ծեր Տոյոնն ասաց նրան.

—Սպասիր, ըարախսամն: Դու աշխարհում չես... Այստեղ քեզ համար էլ կը դառնուի արդարութիւն...

Եւ Մակարը սարսեց: Նրա սիրտը մտաւ այն գիտակցութիւնը, թէ նրան խղճում են, և սիրտը մեղմացաւ. բայց որովհետեւ նրա աչքի առաջ կանգնած էր նրա թշուառ կեանքը ծայրէիծայր, ուստի նա էլ սկսեց ինքն իրան սաստիկ խլղճալ: Եւ նա լաց եղաւ...

Եւ ծեր Տոյոնը նոյնպէս լալիս էր... Եւ լալիս էր ծեր

աւերաւոր, Իվանը, և՛ աստուածային մատաղ մշակներն արցունք
էին թափում՝ նրանց սրբելով ճերմակ լայն թեքերով:

Իսկ կշեռքն անընդհատ տատանւում էր, և փայտի նժարը
բարձրանում էր աւելի վեր, ու աւելի վեր
.

Թարգմ. Ա. ԱՔԱՅԵԱՆ

ՅՈՅՆԵՐԸ ԵՒ ՄԱԿԵԴՈՆԻԱՆ

Փառանգականութեան օրէնքը երեւի ժողովուրդների համար էլ նոյնքան բնաւորիչ է, որքան անհատներին: Յոյների մասին խօսելիս, ակամայ յիշում եմ Քսենոփոնի «Նահանջի» մի գլուխը, որի մէջ նկարագրուած է մի գէպը, ըստ երևոյթին ամենաանշանը մնացած բոլոր արկածների մէջ, որը սակայն այլ փաստերի մի ամբողջ շարքի հետ համադրուելով ընդունում է խիստ նշանակալից կերպարանք: Քսենոփոն իր գնդով իջևանում է մի հայ գիւղում, որի գիւղապետը՝ հարուստ և հիւրասէր, սիրով ընդունում է օտարականներին, կերակրում է նրանց բանալով իր շտեմարանները: Յայն պատմիչը խօսք չի գտնում մեծատուն հայի լայնասիրտ հիւրասիրութիւնը, առատաձեռն մեծահոգութիւնը դրուատելու: Մեկնելիս էլ բարեմիտ տանաէրը իր 16—17 տարեկան որդու հետ յանձն է առնում առաջնորդել յոյն բանակը մինչև հայկական սահմաններից դուրս: Ըստ երևոյթին ահա մի մարդ, որ արժանի պիտի լինէր յոյների երախտագիտութեանը: Բայց ճանապարհին բարեբարութեամբ հելլենները չարաչար տանջում են իրանց բարերար հային անիրաւացի տեղը վերադրելով նրան նենգամիտ ծրագիրներ. նրանց սև ապերախտութիւնը հասնում է այն աստիճանի, որ հայը թողնում է յոյն բանակը և փախչում գլուխն աղատելու համար: Որդին չի կարողանում երեւի հետեւել հօր օրինակին, յոյները պահում են նրան և տանում իրանց հետ: Յունաստան: «Նրան ստրուկ դարձրինք, և հաւատարմութեամբ ծառայում էր»:

վերջացնում է Քսենոֆոն այս խիստ հետաքրքիր պատմութիւնը:

Փաստն ինքնըստինքեան հրէշաւոր է, բայց յոյնը օտարի վերաբերմամբ երախտագիտութեան ուրիշ եղանակ ու չափ չի ճանաչել: Հին յոյների համար իրանցից դուրս բոլոր ժողովուրդները բարբարոսներ էին, որոնց կարելի էր չահագործել, տրորել, քամել և ոչ մի պարտք չը դրալ: Քիչ ժողովուրդ իր պատմութեան ընթացքում այնքան խորապէս զգացել է յոյների այս անմարդասէր, անողորմ մեծամտութեան բոլոր դառնութիւնը, որքան հայերը: Մի անաչառ ու հմուտ պատմագիր շատ դափնիններ կը խլէր յոյների գոռոզ ճակատից, եթէ հեղինակաւոր կերպով մի օր յետ քաշէր հայ-յունական յարաբերութիւնները ծածկող պատմական քողը: Որչափ նենգութիւն, դաւ, քէն, նախանձ դէպի մի նոյնպէս քրիստոնեայ, նոյնպէս քաղաքակրթական ձիրքերով օժտուած, մի անղօր ժողովուրդ: Սակայն յօդուածիս վերնագիրը «Յոյները և Հայերը» չէ, ես դառնում եմ բուն հարցին:

Այսպէս էին հին յոյները:

Սակայն դա մի սերունդ էր, որ ճակատամարտի ասպարէզում Մարաթոն, Միկալ և Սալամին ունէր, իսկ գեղարուեստի և փիլիսոփայութեան ասպարիզում Սոկրատ, Պլատոն, Արիստոտել և Թիդիաս: Մեծ սերունդ, որին կը պատշաճէր աւելի լայն սիրտ, լայն հայեացք, բայց ժամանակներն էին այնպէս, տիեզերական եղբայրութեան փոխարէն յոյնն ստեղծել էր իր փոքրիկ «իդէան» և աւելի հեռուն չէր ուզում տեսնել: Պատմութիւնը Հոմեր հետ եկաւ ասելու դոռող յոյնին, որ կայուն ոչինչ չը կայ աշխարհում, և որ յունական «իդէան», որքան և նա մեծ լինի, հեշտութեամբ կարող է պարտկուել նաև այլ աղդերի զլիւում: Մաքի էվոլուցիան և ոչ մի ժողովրդի յաւիտենական մենաշնորհը չէ:

Նոր յոյնի համար սակայն կարծէք մի պատմութիւն միայն կայ—յունականը, և այդ պատմութիւնն էլ միայն մի չրջան ունի՝ հոմերական—արիստոտելեան: Իւրաքանչիւր յոյն այս ինդրի մէջ մի երազող է. կարճահասակ ու ջլուտ այդ պոռոտախոսները խորամանկ աչքերը տրորելով դարերի մառախուղի միջից շարունակում են նայել դէպի անցեալը: Սրանք նման են այն երևիւմներին, որոնք չեն նկատում, որ հայրերի վերաբերմունքի մէջ իրանց փոքրիկ մարմինը շատ ծիծաղելի է և քայլում են հրապարակներում յոխորդոնքով: Անյեալ դարու քսանական թւականները, Միսոլոնդին, Նաւարինը, ինչպէս և 1869 թ. Դամոկոսը և կարմիր ֆէսերի հեղեղը մոռացել են իսպառ,

բայց Մարաթոնն ու Սալամինը չեն մոռանում երբէք: Իրանը նոր են, դասական մեծ սերունդից և արտաքին բաղմապիսի խառնուրդից առաջացած մի ողորմելի զաճաճ սերունդ, որի մէջքը ծուռում է նախնիների փառքի ծանրութեան տակ, բայց իրանց վերաբերմունքի չափը դէպի օտարները, դէպի իրանց հարեանները մնացել է նոյնը, հինը:

Ժամանակակից յոյնը նոյնքան հպարտ, նոյնքան մեծամիտ է, որքան հինը:

Դամոկոսից փախչողները կ'ասես Մարաթոնից են դալիս: Թիկունքների վէրքերի ցաւը չի կարողանում ջնջել դէմքերի հեղնական, դոռող ժպիտը: Չէ որ Քրիստոսից հինգ դար առաջ Թերմոպիլէում ընկած Լէոնիդասը յոյն էր և Պերիկլէսի Աթէնքը յոյների գործ...

Այսպէս են ժամանակակից յոյները:

Այսպէս է նրանց վերաբերմունքը նաև դէպի մակեդոնացիները և մակեդոնական հարցը: Բուլղարները (մակեդոնացի) կուռում են տիրող սարսափելի բեժիմի դէմ, իսկ յոյները (թէ Մակեդոնիայի և թէ դրսի) դործում են նրանց դէմ ամենացած, ամեանաանարգ եղանակով: Դաւ, քէն, նենդութիւն, մատնութիւն—հին զէնքեր, որ մեզ հայերիս էլ լաւ ծանօթ են, այժմ ուղղուած են բուլղար-մակեդոնացիների դէմ յօգուտ թիւրքի, ի հաճոյս Աբդուլ-Համիդի:

Բուլղարները Մակեդոնիայում թւով, ազդեցութեամբ, դպրոցներով, աշխատանքով շատ աւելի գերազանց են, քան յոյները, բայց Դամոկոսի հերոսների փոյթը չէ, նրանց համար ներկայ պատմութիւնն ու աշխարհադրութիւնն չը կայ, նրանք ճանաչում են միայն հինը: Մակեդոնիայում յոյներ կան, թիւն ինչ նշանակութիւն ունի, ուրեմն նա Յունաստանի մի մասն է, հին մակեդոնացիք նոյնպէս յոյներ էին, Ալեքսանդրը յոյն էր, ուրեմն իրանցից բացի ոչ ոք իրաւունք չ'ունի Մակեդոնիայի վրայ, իսկ բուլղարները... Նրանք բնաւ իրաւունք չ'ունին, նրանք բարբարոսներ են:

Այսպէս են դատում ժամանակակից յոյները:

Իսկ «բարբարոս» բուլղարները կուռում են կատաղութեամբ և մեռնում են հերոսաբար յանուն իրանց նուիրական ազատութեան:

Անցեալ տարի Պարիզում տեղի ունեցաւ օտտոմանների կոնգրեսը, ուր հրաւիրուած էին Թիւրքիայի լծի տակ հեծող բոլոր ժողովուրդների ներկայացուցիչները: Ինչ ասել կ'ուզի, կային և յոյներ, թէև նրանք շատ լաւ են զգում իրանց թիւրքիայում: Ականատեսի պատմելով երբ հարց ծագեց հրաւիրել

նաև մակեդոնացիներին, յոյն պատգամաւորները բացաղան-
չեցին:

—Մակեդոնիա չը կայ, մակեդոնական հարց չը կայ!

—Իսկ Բերլինի կոնգրեսի 23-րդ յօդուածը, լսուեց մի
ձայն:

—Այնուամենայնիւ մակեդոնական հարց չը կայ!

Եւ այսպէս այն հարցը, որով այժմ ամբողջ աշխարհն է
ղրադուած, յոյնի համար գոյութիւն չ'ունի:

Մակեդոնացիք հրաժարուեցին մասնակցել այդ կոնգրեսին,
յոյներն ուրախ եղան իհարկէ: Այդ չէ բոլորը, կոնգրեսի բո-
լոր ընթացքում նրանք նենգաբար միացան թիւրքերի հետ ընդ-
դէմ... թիւրքահայերի: Յայնը կ'ուզի, որ իրանից բացի թիւր-
քիայի լծից ոչ ոք չ'ազատուի, նրա կարծիքով միայն յոյնը ի-
րաւունք ունի կուել թիւրքի դէմ, ազատ կեանք վայելել, մնա-
ցած ժողովուրդները իրանց վիճակին արժանի են:

Մակեդոնական հարցի բարեյաջող լուծումով անշուտ եր-
ջանիկ կը լինին նաև մակեդոնացի յոյները, որոնց թիւը փոքր
չէ: Այս հանգամանքը չի արդելում սակայն յոյն ժողովրդին ա-
մենատեսակ խափանառիթ հանգամանքներ ստեղծել կուող մա-
կեդոնացիների դէմ յօդուած թիւրքի:

Թող Մակեդոնիայի յոյներն էլ մնան թիւրքի լծի տակ,
մտածում են յոյները, միայն թէ բուլղարները չ'ազատուեն:
Նրանք պատրաստ են երկնքում մարել արեւը, թէ հնար լինի,
զրկուել լոյսից, միայն թէ ուրիշների վրայ էլ լոյս չը ծագի:

Նախանձնա, քինոտ ժողովուրդ!

Մինչև այժմ եւրոպական թերթերում եւ ոչինչ չ'եմ կար-
դացել յոյների դէմ, որ բուլղարի գրչի արգիւնք լինէր, իսկ
յոյները ամենայն օր ինչ ցեխ ասեա չեն թափում ազնիւ
կուլի մէջ մեռնող այդ հերոսների վրայ: Աւաղակներ, մարդա-
սպաններ, սրիկաներ—ամենատոբորական ածականներն են, որ
յոյները տալիս են մակեդոնացի մարտիկներին: Պարիզում մի
պարոն կայ, թիւրքական նախկին յոյն պաշտօնեայ, որին ան-
ձամբ ճանաչելու դժբաղդութիւնն եմ ունեցել ամենատիւր
հանգամանքներում: Նա աշխատակցում է մի քանի լրագրերի
(եւրոպային մարդ ճանաչելու մէջ շատ կոյր է, մանաւանդ
արեւելցու հանդէպ), ի միջի այլոց այդ պարոնը կարողացել է
տեղ գտնել Gazette de Lausanne-ի պէս մաքուր թերթում:
Ահա այս մարդն է, որ պարբերաբար աշխատում է սեպնել
Եւրոպայում մակեդոնացի բուլղարներին եւ միւս կողմից իր
հայրենակիցների ստոր արարքները քողարկել կամ բացա-
սել:

Սալոնիկիի վերջին անցքերը, անհաւասար կուլի մէջ յուսահատուած մարդկանց խելագարութեան հասնող այդ ծայրայեղութիւնները լաւ առիթ տուին Պարիզի պարոնին ամենաստորինսինուացիաներ տարածել եւրոպական մամուլի մէջ մակեդոնացիներ վրայ: Օգտուելով Եւրոպայում թողած այն ծանր տպաւորութեամբ, որ առաջ բերին Սալոնիկիի անցքերը, այդ յոյնը աջուձախ յօդուածներ է գրում բուլղարների դէմ, այդ բաւական չէ, նոյն անպատկառութիւնն այն աստիճանի է հասցըրել, որ թիւրքերի «մեծահոգութիւնը և մեղմութիւնը» հակադրում է բուլղարների «գաղանթեանը»: Եւ նա մենակ չէ. նրա հայրենակիցներից շատերն են նոյն աշխատանքը կատարում: Այսպիսով Թիւրքիայում և Յունաստանում ապրող յոյները մատնում են խեղճ բուլղարներին, իսկ Եւրոպայում նրանց հայրենակիցները աշխատում են ամեն կերպ մոլորեցնել հասարակական կարծիքը բուլղարական կառավարութեան ինտրիգաներին վերադրելով ամբողջ մակեդոնական շարժումը:

Իսկ «բարբարոս» բուլղարները ի պատասխան այս բոլոր անարգ խաղին կռուում են հերոսաբար և ինչ որ աւելի տրագիկական է, կռոււմ են նաև իրանց թշնամի յոյների համար, որովհետև վերջիվերջոյ ազատ Մակեդոնիայում ապերախտ յոյնն էլ ազատ կը լինի:

Թէ մինչև որ աստիճանի ստորութեան է ընդունակ յոյնը օտարի, մանաւանդ թէ չը սիրած օտարի վերաբերմամբ, պերճախօս կերպով ապացուցանում է հետեւեալ փաստը:—Ֆրանսիական յայտնի Temps թերթում այս տարուայ յունիսի 5-ին տպուած էր հետեւեալը.

«Մի լուր այստեղ (Սալոնիկում) թողեց ամենածանր տպաւորութիւն: Վոյում (Յունաստան) բանտարկել են երեսուն կոմիտաշիներ (բուլղար յեղափոխականներ). Հաջի-Դաւուդ ընկերութեան չոգենաւով նրանց տարել են, հաւատացնելով թէ հասցնելու են իրանց երկիրը, բայց իրօք բերել են և յանձնել Սալոնիկիի թիւրք ոստիկանութեանը: Այս փաստը բացատրութեան կարօտ չէ», վերջացնում է ֆրանսիական թերթը:

Այս չէ բոլորը:

Նորերս եւրոպական թերթերը զգուանքով արձանագրեցին այն փաստը, որ յոյն սպաներ իրանց ծառայութիւնն են առաջարկել թիւրք կառավարութեանը մակեդոնացիների դէմ կռուելու համար: Յոյն ուսանողների ամբողջ խմբեր պաարաստում են կամաւոր գրուել թիւրք զօրքերի շարքում կռուելու համար, եթէ Բուլղարիայի հետ պատերազմ ծագի: Իդէպ է այստեղ յիշել և անցեալ տարի Շվեյցարիայում և Պարիզի մամուլում այն-

քան աղմուկ հանող մի ոչ պակաս ամօթալի փաստ յոյն ուսանողների կեանքից: Ժընևի համալսարանի չորս յոյն ուսանողներ սուլթանից չքանչան և դրամական վարձատրութիւն ստացան իրանց կատարած լրտեսութեան համար: Փաստը յայտնի եղաւ թիւրք թերթերից:

Անցեալները Լոզանում երկու բուլղար ուսանողի հարցը՝ նում էի, թէ ինչո՞ւ իրանք թոյլ են տալիս, որ հակառակորդ յոյները այսքան ցեխ ու աղը չպրտեն իրանց բարի համբաւին Եւրոպայում:

— Ի՞նչ անենք:

— Հերքեցէք, դո՛ւք էլ դրեցէք:

— Ձի արժի, թո՛ղ դրեն որքան ուզում են, մեր գործը կըսւեն է, նրանցը բամբասելը: Եւ ժպտացին, ինքնավստահ, բարեմիտ ժպտով:

Դա մի լաւ ժպիտ էր և մի լաւ պատասխան: Ծճարիտ որ «թո՛ղ դրեն», իրաւունքը և յաղթանակը վաղ թէ ուշ արդարութեան համար մարանչողինն է: Բամբասանքները, դաւերը, խարդախութիւնները անզօր են ճճարտութեան և իդէայի մեծութեան հանդէս:

Այնուամենայնիւ այս օրերս ևս մեծ հաճոյքով կարդացի Արևելեան խնդրին և Արևելքին լաւ ծանօթ ֆրանսիացի Վիկտոր Բերարի մի հեղինակաւոր յօդուածը Մակեդոնիայի մասին, ուր ի միջի այլոց շօշափուած է և՛ յունա-մակեդոնական յարաբերութիւնների հարցը: Ամբողջ յօդուածը կրում է նոյն անուշադուրեան ոգին, տարուած է նոյն զօրեղ լոգիկայով ու հըմտութեամբ, որ յատուկ է համակրելի և ճճարտասէր Բերարին:

«Յոյների համար, ասում է Վիկտոր Բերար, մակեդոնացին ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի անկիրթ թրակիացի, անլեզու մի բարբարոս, մի վայրենի, մի ստրուկ: Տարօրինակ արհամարհանք, որ ուժով ծանրանում է բալկանեան դորձերի վրայ և որ ապագայում աւելի ծանրութեամբ կը ճնշի հելլենիզմը: Յոյները շարունակում են հաւատալ (և իզուր տեղը) որ իրանք արևելեքում միակն են ընդունակ կուլտուրայի և «իդէայի»: Նրանք կարծում են, որ մենակ իրանք են կարող պաշտպանել քաղաքակրթութիւնն ու յառաջագիմութիւնը: Նրանք երևակայում են (կարդացել են Հերոդոտում), որ միայն իրանք կարող են միջնորդ լինել Եւրոպայի և Ասիայի մէջ: Վստահ իրանց ունեցած այն երեակայական միևնաշնորհով, յոյները նիրհում են խաբուսիկ յոյսերով: Երբ նրանց լաւագոյն բարեկամները խորհուրդ են տալիս զգուշանալ, երբ նրանց խօսում են բուլղարական կուլ-

տուրայի, մակեդոնական իդէայի մասին, նրանք պատասխանում են ուսերը թօթուելով և կամ վիրաւորական ակնարկներով: Այսօրուայ աթէնացիներին մի խօսէք բուլղարների մասին (ես անձամբ փորձել եմ) առանց վայրենի և զազան ածականների, այլապէս դուք կը նկատուիք մի «բուլղարասէր», մի «վաճառուած»:

Իրանց կոյր, ստոր ատելութիւնը դէպի բուլղարները, յոյներն արգարացնում են նրանով, որ իբր թէ մակեդոնական կոմիտէները մասնաւոր ու ունին իրանց հայրենակիցների դէմ, որոնց յաճախ նրանք ենթարկում են սարսափների: Ըստ երեւոյթին փաստը ճշմարիտ է, շատ յոյներ են ընկել մակեդոնացի բուլղարների ձեռքով, բայց պատճառը ցեղական թշնամութիւնը չէ, այլ յոյների վերաբերմունքը, նրանց թշնամական դիրքը: «Մեզ սլաշտպանելու համար, ասում են մակեդոնացի բուլղարները, մենք ստիպուած ենք լինել անողորմ դէպի լրտեսները, թիւրք ոստիկանութեան գործակալները, և մենք կոտորում ենք առանց ազգային խտրութեան բոլոր մատնիչներին: Սպանուածների մեծամասնութիւնը դուրս են եկել յոյներ, և դա հասկանալի է, որովհետեւ յոյները կուրացած ազգայնական պրոպանդանդայով, դարձել են թիւրքերի սատարիչները, Աթէնքի կառավարութիւնը դարձել է Արդուլ-Համիդի աջ ձեռքը»:

Եւ Ֆրանսիական Դեղին Գիրքը պաշտօնապէս ապացուցանում է, որ բուլղարները իրաւունք ունին, որ յոյներն են յանցաւորները:

«Տարարադդարաբ. ճշմարիտ է, չարունակում է Վիկտոր Բերար, որ հելլենիզմի փարիչները նրան տանում են մի այնպիսի ճանապարհով, որ առաջնորդում է միայն դէպի անարգանքը»:

«Աթէնքը, ուր լինց տարի սրանից առաջ թափւում էին Թեսալիայի և Կրէտէի փախստականները, այսօր թիւրք զեապանի ոսքերն է ընկած: Թագաւոր, արքայազներ և մինիստրներ երջանիկ են զգում իրանց Արդուլ-Համիդից չքանչան ստանալիս: Աթէնքի ուսանողները ուղղում են սուլթանին իրանց ամենախոնարհ շնորհաւորութիւնները: Յոյն սպաներ գնացել են միանալու թիւրքական բանակին, որի ոյժը այնպէս լաւ ճանաչել են Թեսալիայում: Համիայում իրանց անկախութեան մի հերոսի արձան կանգնեցնելիս յոյներն զգուշանում են իրանց ճառերով հին ոգիորութիւնը և հին զայրոյթը յարուցանել (թիւրքերի դէմ). սրանց լսելիս մարդ կարող էր կարծել ճշմարիտ, որ Դիակոսը, Կոլոկոտրոնիսը, Ողիսսը և Կանարիսը Բարձրագոյն Դրան ամենա-

հաւատարիմ բարեկամները և դահճի ամենաեռանդուն ծառաներն են եղել»:

«Յունա-թիւրքական դաշնը, որ նորերս կռեցին, բարոյական մի կատարեալ անանկութիւն է: Մենք տեսանք արդէն, թէ ինչպէս Հարաւ-Աֆրիկեան պատերազմի ժամանակ Լէոնիդասի սերունդը մաղթանքներ էր կատարում անգլիական զէնքի յաջողութեան համար: Հասկանում են արդեօք այս յոյները, որ քաղաքակիրթ աշխարհի առաջ աւելի և աւելի դժուարին է դառնում պաշտպանել նրանց դասը: Մի օր, և այդ օրը դուցէ աւելի մօտ է, քան կարծում են յոյները, երբ ընդհանրապէս կը վերադառնան Անատոլիա Մակեդոնիան ընկճելուց յետոյ և կը կամենան վրէժխնդիր լինել այնտեղի քրիստոնեաներից իրանց կրած նեղութիւնների համար, երբ սուլթան Աբդուլ-Համիդը ձեռք կ'առնի Զմիւռնիայի, Փոքր-Ասիայի և կղզիների նրանց եղբայրների դէմ այն միջոցները, ինչ որ նա յաջողեցրեց հայերի դէմ, յոյները հաւատացած են, որ իրանց ներկայ ընթացքը կը կարողանայ այն ժամանակ տալ նրանց աշխարհի համակրանքը և գութը...»:

Եւ այս տողերի հեղինակը մի բուլղար, մի սերբ կամ մի այլ չահաղբագուած բալկանացի է: Այլ մի ֆրանսիացի, բարեխիղճ, հմուտ ֆրանսիացի, որ միշտ իր ձայնը բարձրացրել է յօգուտ ճշդութեան, հալածութեան, որ միշտ ասել է՝ ինչ մտածում է և որ դէպի հելլենականութիւնը կարծէք թուլութիւն էլ ունի: Բայց յոյների ներկայ ընթացքը ուրիշ դատաստան ունենալ չի կարող: Անցեալ դարու սկզբներին իրանց անկախութեան արիւնոտ արշալոյսին, երբ եզրպտական ահռելի նուատորմիդը մօտենում էր որպէս մի սարերային ոյժ յունական Արշիպելագը Պելոպոնէսի հետ ջրերի տակ թաղելու համար, երբ բազմամարդ կղզիները մի օրում անմարդաբնակ էին դառնում թիւրքերի ձեռքով, երբ Միսսոլոնգին օդն էր բարձրանում աւերակների տակ հազարներին թողնելով, այն ժամանակ յոյների լեզուն և ընթացքը այլ էր. Եւրոպայի մի ծայրից միւսը հնչում էր նրանց ձիւղ և յանուն քրիստոնէութեան, քաղաքակրթութեան, մեծ անցեալի, ազգերի եղբայրութեան՝ դուժ, օգնութիւն էին աղերսում: Հիւգոն գրում էր իր կրակոտ օղաները և Oriental-ները, իսկ Բայրընը իր ըմբոստ հոգին էր տանում միացնելու Բոցարիսների և Կանարիսների ազնիւ հոգիների թոխչքին: Մոսպոլթիւն, թէ՞ սե, արտասուելի ապերախտութիւն դէպի սրտով, զգացմունքով լի այդ ոչ չառ հեռու ժամանակները, դէպի այն մեծ հոգիները՝ Հիւգոն երեւի կը

փշրէր գրիչը Oriental-ների վրայ, և Բայրընը չէր դնայ Յունաստանում իր աղնիւ չունչը փչելու, եթէ նախատեսէին այս բուրբը, եթէ գիտենային, որ մի դար չը լրացած կռուող սերնդի թոռները կը գրկուեն արեւելքի արիւնոտ բարբարոսների հետ և միասին կը տրորեն միւս քրիստոնեայ եղբայրների տաք գիակները:

Ի՞նչ են ուզում մակեդոնացիք, որն է մակեդոնական իդէան, որին չեն ուզում հաւատալ յոյները, և որի դէմ կռոււմ են աշխատելով նրա տեղը դնել Մեծ Յունաստանի, հելլենիզմի երազները: Մակեդոնացիք շատ անգամ են ի լուր աշխարհի յայտարարել, որ իրանց վերջին նպատակն է՝ «Մակեդոնիան՝ մակեդոնացիների համար»: Գեղեցիկ իդէա, որ եթէ իրադրութեւնը Բալկանների սրտում, իրար քաջքշող, բզկատող այդ մանր ազգութիւնների մէջ կը լինէր մի սիրուն նմուշ տարբեր ցեղերի համաքաղաքացիական եղբայրութեան միեւնոյն մայր հայրենիքի մէջ: Բալկանեան մանր պետութիւններից և ոչ մէկի գերշխանութիւնը միւսների վրայ այնքան բարերար, այնպէս մեղմացուցիչ ազդեցութիւն չէ կարող թողնել, որքան մակեդոնական հեռաւոր իդէայի իրականացումը—հիմնել մի փոքրիկ դաշնակցական պետութիւն, որ կարողանար կորիզ լինել բալկանեան աւելի մեծ դաշնակցութեան: Վիկտոր Բերար մէկն է եւրոպացի մտածողների մէջ, որ ծափահարում է այդ քաղաքական գաղափարը, որ հաւատում, քաջախրում է նրա հետեւողներին: «Մենք չենք հաւատում, սուտ է, խիմերա է», բացառանշում են յոյները: Բայց իրանք այդ բողոքներն ինչ են առաջարկում դժբաղդ մակեդոնացիներին նրանց այդ գեղեցիկ իդէայի փոխարէն, ցոյց տալիս են մի այլ ճանապարհ փրկութեան, օգնում են թեթեւացնելու տառապող եղբայրների օր-աւուր ծանրացող բեռը: Առաջարկում են, այո: Բայց զուտ յունական մի միջոց—«Մակեդոնիան Յունաստանին կամ... թիւրքին»: Եւ որովհետեւ Մակեդոնիան Յունաստանին երբէք չի լինի, ապա ուրեմն—թիւրքին: Եւ թիւրքը աւերում է Մակեդոնիան սրով ու կրակով, հազարներով դժբաղդ փախըստականները անցնում են սահմանը և տանում իրանց եղբայր-բուլղարներին ցոյց տալու իրանց վէրքերն ու ցաւերը, ուրիշները արիւնոտ լեռներում ու ձորերում բաղկնում են բաշխողուկների և թիւրք զօրքերի հետ և ընկնում. ամբողջ աշխարհը նայում է Բալկաններին, և յոյները չարունակում են կրկնել, թէ Մակեդոնիա և մակեդոնական հարց չը կայ!

Բարեբաղդարար այդ հարցը կայ, և նրա լուծումը հեռու
չէ: Գոնէ այսպէս ևն մտածում արդարութեան գործի բոլոր
բարեկամները:

Ա. Ա.

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Վերջին տարիներս մի տեսակ պահանջ էր դարձել ունենալ Ատրպատականի հայերի համար մի կանոնադրութիւն, որով կառավարուէր այդ ընդարձակ թիւը: Զուրկ լինելով որեւէ օրէնքից և կանոնադրութիւնից՝ այդ երկրի հայկական հիմնարկութիւնները, դրանց պաշտօնեաները չէին զեկալարուում մի ընդհանուր ուղղութեամբ, որոչ չէր առաջնորդի, հոգաբարձութիւնների, զորակալների և այլ զանազան հասարակական պաշտօնեաների իրաւասութեան սահմանը:

Այլապեան արքեպիսկոպոսի օրով փորձեր եղան մի կանոնադրութիւն կազմելու, բայց զանազան պատճառներով այդ փորձերը այնպէս էլ մնացին: Ինչպէս յայտնի է, այս տարի փետրուարի 7-ին Վեհափառ Կաթողիկոսից հաստատութիւն ստացաւ «Ատրպատականի Հայոց թեմի հիմնական կանոնադրութիւնը», որի նախապիծը կազմուած է եղել Թաւրիզում:

Դժբախտաբար մինչև այսօր էլ (օգոստոսի 15) այդ կանոնադրութիւնը դեռ հրատարակուած չէ *): Միակ ծանօթութիւնը, որ կարելի է կազմել այդ կանոնադրութեան մասին, դա «Մշակի» № 14 և «Մուրճ» № 1, 5, 6 և 7 յօդուածներն են, որոնց նայելով՝ Ատրպատականի կանոնադրութիւնը կազմուած է ժողո-

*) Խմբագրութիւնս նոր ստացաւ տպուած այդ կանոնադրութիւնը: Առհասարակ ցանկալի է լսել այս յօդուածի առիթով հակառակ կողմից փաստական բացատրութիւններ:

վերջական ոգով, ամեն բան ընտրողական սկզբունքի վրայ է դրուած, որ հասարակական բոլոր գործերը պիտի վարեն ժողովրդի ընտրած և նրա ցանկացած պաշտօնականները, բոլոր խնդիրները ուղղութիւն և ծրագիր տուողը ներկայանում է պատգամաւորական ժողովը և թեմական խորհուրդը: Այգպիսով պիտի ոչնչանար այս կամ այն միջամտութիւնը և վերջ տրուէր բոլոր անձնապատան ոտնձգութիւններին: Սակայն գրուածը և գործադրուողը այլ բաներ են...

Երբ Կովկասից վերադարձաւ իր պաշտօնատեղին Ասորպատականի թեմի առաջնորդ Եղիշէ ծայրագոյն վարդապետ Մուրադեանը, ցանկութիւն յայտնուեց, որ «կանոնադրութիւնը» մի կիրակի կամ եկեղեցում կարգացուի ժողովուրդին և կամ Լսարանական ընկերութեան դահլիճում, որտեղ ժողովուրդը կարողանար ծանօթանալ կանոնադրութեան այս կամ այն կէտի հետ: Անցան օրեր ու ամիսներ, ոչ այդ կատարուեց, ոչ պատգամաւորական ժողով եղաւ և ոչ էլ թեմական խորհուրդ, և Թաւրիզը, ինչպէս և բովանդակ Ասորպատականը դարձեալ կառավարում էր իր հին, նահապետական ձևով...

*
* *

Գարնան, ուսումնական տարուայ վերջը, առաջ եկան մի շարք խնդիրներ, որոնք իբանց անյետաձգելի լուծումն էին պահանջում: Ամենաառաջին տեղը դրանցից դպրոցական խնդիրն էր բռնում, որի ժամանակ յանկարծ սկսւում է կանոնադրութեան գործադրութիւնը:

Թաւրիզի երկու թաղերի դպրոցների համար էլ պիտի հոգաբարձուներ ընտրուէին:

Առաջնորդի կողմից մի յայտարարութիւն է տրուում, որով երկու թաղերի հասարակութիւնը հրաւիրւում է խորհրդակցել կրթական գործի մասին և կատարել հոգաբարձական ընտրութիւն: Երկրորդ անգամն է հրաւէր լինում, դարձեալ ժողով չէ կայանում: Մի շաբաթ յետոյ առաջնորդը մի տպած յայտարարութիւնով ժողովի է հրաւիրում դարձեալ երկու թաղեցիներին: Այդ յայտարարութեան մէջ գրուած էր և մի յօդուած նոր կանոնադրութիւնից, որով ընտրութիւններին կարող են մասնակցել բոլոր չափահաս տղամարդիկ (21 տարեկանից սկսած) և այն օտարականները, որոնք վեց ամիս ապրել են Թաւրիզում. ներկայ եղողները պիտի վճարած լինեն թեմական տուրքը:

Տուած յայտարարութիւնը շփոթութիւն է առաջ բերում հասարակութեան մէջ. գրուած է—«Ժողովին կը մասնակցի նա,

ու վճարել է թեմական տուրքը»։ Ընչ բան է այդ տուրքը, որքան է, երբ պիտի վճարուէր, և ո՞վ է հաւաքել այդ տուրքը, յայտնի չէ։ Ժողովուրդը չէ հասկանում բանն ինչու՞ն է և չը գիտէ՝ ինքը վճարել է այդ տուրքը, թէ ոչ, և որովհետեւ յայտարարութեան մէջ ասուած է, որ առաջնորդի կողմից տպած հրաւէտներ կ'ուղարկուեն այն ընտանիքներին, որոնք տուրքը վճարել են և հետեապէս պիտի ժողովին ներկայ լինեն,—ուստի իւրաքանչիւրը սպասում էր այդ հրաւէրին, յետոյ իմացուեց, որ այդ թեմական տուրք ասուած բանը պտղին է եղել, որը շատ թիւրիմացութիւններ պատճառ եղաւ և ընտրուած հոգաբարձութիւնը բեկանելու համար սուած բողոքի մէջ յիշուած էր այդ կէտը։

Պաղինները շատ անկանոն են հաւաքուում Թաւրիղում, քահանան որ տնից որ ստանում է տուրքը, ստորագրել է տալիս մի մատենանում, շատ անգամ պատահում է, որ անգրագէտների փոխարէն ինքը քահանան է ստորագրում և շատ դէպքերումն էլ մոռանալով՝ չէ գրում, լինում են շատ տներ, որոնց տղամարդիկ օտարութեան մէջ են լինում և չեն կարող վճարել, կամ վճարում են, և ստորագրում է տանը եղած աշակերտը։ Ահա այսպիսի անկանոն ցուցակով են ուղարկուած հրաւէրները, որոնք սոսաջ էին բերում թիւրիմացութիւններ և նոյնիսկ ծիծաղելի դէպքեր։ Հրաւէր են ստանում յանկարծ գտնուող աշակերտները, հրաւէր է ստանում ժողովին ներկայ լինելու տասը տարի առաջ մեռած մի մարդ, Բաբաջան Ստեփանեան անունով։ Վերջապէս, երբ քուէ տուողները պիտի նրանք լինեն, որոնք տուրքը վճարել են, այդ դէպքում դոնէ մի երկու շաբաթ առաջ այդ ցուցակը պիտի եկեղեցու դռանը կախուած լինի, որ ուղղուի, լրացուի։

Նւ վերջապէս պէտք էր նախօրօք տպագրել բաժանել կանոնադրութիւնը, ծանօթացնել ժողովրդին նրա հետ և ապա գիմել գործադրութեան։

Ահապէն քանակութեամբ ընտանիքներ զրկուել էին ձայն տալու իրաւունքից (օր. Լիւաւա թաղը 400 տուն է, հրաւիրուել էին միայն 280, նոյն համեմատութիւնը և միւս թաղի վերաբերմամբ)։ Կանոնադրութեանը հակասում էր առաջնորդի մասնաւոր հրաւէրը—որով միմիայն իւրաքանչիւր ընտանիքից մէկն ումէկը կարող էր ներկայ լինել ժողովին, որովհետեւ իւրաքանչիւր ընտանիքին միայն մի հրաւէր էր ուղարկուում, և ամեն մի հրաւէրով միայն մի մարդ կարող էր ժողովի սրահը մտնել։ Եթէ ընդունենք նոյնիսկ, որ կանոնադրութիւնը չէր գործում, այլ առաջնորդի հրաւէրը, դարձեալ նա ինքը հակասել էր և իրան,

որովհետև եղել էին ընտանիքներ, որ ոչ բաժան կղբայրները առանձին-առանձին հրաւերներ էին ստացել իրանց անուններով և մասնաձկեղ ժողովին:

Ընդամենը հաւաքուել են 90—100 մարդ. Լիլաւա Թաղի 280 հրաւիրուածներից եկել են միմիայն 42—43 հոգի: Ժողովը դռնփակ է, ներկայ եղողների թիւը օրինաւոր է համարուած, և ժողովը բացւում է առաջնորդի մի ճառով: Քարաուղարութիւնը առաջարկում է առաջնորդը ներսը կողմ այս կամ այն ուսուցչին, չէ ընդունուում հրաւիրում է իր անձնական քարաուղարին. թըղթեր է բաժանում և ձեռնարկում հոգաբարձուների ընտրութեան. հասարակութեանը ընտրել չը տուեց քննիչներ, որոնք պիտի կարգային քուէաթղթերը, չ'ընտրուեցին ոչ քուէն համարողները, ոչ անգրագէտների փոխարէն բուէ գրողները, այլ ինքնակամ այս կամ այն անհատը մէջ էր ընկել և գրում ու գրել տալիս իր ցանկացածին. կարգապահական կատարեալ բացակայութիւն: Ընտրութիւնը վերջացաւ, կազմուեց արձանագրութիւն և վաւերական համարուեց:

Այս ընտրութեան դէմ հասարակութիւնը բողոք ներկայացրեց և առաջարկեց առաջնորդին բեկանել և նոր ընտրութիւն նշանակել: Նշանակուում է նոր ընտրութիւն, այս անգամ առաջնորդը չէ ուզում ներկայ լինել ժողովին, երկրորդ անգամուայ ընտրուածներին էլ ինքը չէ հաստատում, որովհետև հասարակութիւնը ընտրել է «ոչ վստահելի» մարդկանց: Դա քմահաճոյք է... «Կանոնադրութիւնը» դառնում է մեռած տառ, ձեռնարկ մի բան, եթէ հասարակութեան ձայնը պէտք է ինքզուրի առաջնորդի մի veto-ով...

*
* *
*

Եկել է օգոստոսը, դեռ հոգաբարձութիւն չը կայ, ուսուցչական խումբ կազմուած չէ, յայտնի չէ, թէ գլխոյը ինչ կազմով պիտի պահուի:

Լիլաւայում չը կայ հոգաբարձութիւն, բայց առաջնորդը ահա ինքը միայն իր անունից տեսուչ է հրաւիրում, որ ուսուցչական խումբ կազմէ: Բնորոշ է նրա պաշտօնական տոնը, որ հեռու է «առհմանադրական» ոգուց... (Ձ 272) «Կարգելով ձեզ՝ տեսուչ (ս. Տիգրան Ռաշմաճեանին) Լիլաւայի Հայկազեան և Թամարեան դպրոցների մի տարի ժամանակով առաջիկայ (1903—1904) ուսուումն. տարուայ համար տարեկան 500 թուման վարձատրութեամբ, առաջարկում ենք ձեզ կազմել ուսուցչական խումբ»...

Ապա տալիս է իր հրահանգները, որով պիտի ղեկավարուի

տեսուչը, «Ուսուցիչներն Վարձատրութեան հաւասարութեան համար որոշելու է դասագին գլխաւոր և երկրորդական առարկաներն համար Դպրոցների նպատակն է տարածել հայ մատաղ սերնդի մէջ կրօնական, բարոյական-ազգային դաստիարակութիւն, որ և ինկատի պէտք է ունենայ հրաւիրուած իւրաքանչիւր տաշտօնեան: Կրօնի և երգեցողութեան ուսուցիչները պէտք է լինեն հմուտ իրանց աւանդելիք առարկաներին, ինչպէս և միւս ուսուցիչները: Երգեցողութեան ուսուցիչը պէտք է ներկայ լինի ասօններն նախընթաց երեկոններին, կիրակի և եկեղեցական-ազգային ասօնների պատարագի ժամանակ երգի իր խմբով: Ուսուցչի ղանցաւութեան ղէպքում կը ղեղձուի նրա ուժեղից բացակայ ժամի վարձատրութիւնը, որը և առաջարկում ենք մտնել այս պայմանագրի մէջ»: «Պէտք է առաջարկել կազմած խումբը ի հաստատութիւն առաջնորդարանիս: Կարևոր եմ համարում աւելացնել նաև, որ պատշաճաւոր իշխանութիւնից չը հաստատուած ուսուցիչը ոչ մի իրաւաբանական հիմունք չ'ունի դպրոցներից որեւէ պահանջ անելու, ինկատի ունենալով ստացած հրաւերն ու տուած համաձայնութիւնը»:

Այլևս ինչի՞ համար է հոգաբարձութիւնը...

Ս. Գ.

ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐԿԻՑ

ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԺԱՌԱԴԱՅԹՆԵՐԸ *)

Ելեկտրական կամ հեռցեան:—Ջերմական կամ ենթակարմիր (infrarouge):—
Քիմիական կամ տնդրամանիշակաղոյն (ultraviolet):—Քաթոդական:—X կամ
Ռենտգենեան:—Բէկքըրէլեան, Լայն:

Ա.

Անտեսանելի ճառագայթները, որոնց մեծ մասը վերջին տասնեակնից տարիների մէջ ի յայտ եկած է, արդէն իսկ մի խիստ զեղեցիկ ամբողջութիւն կը կազմեն, և մի յոյժ պատուաբեր տեղ կը գրաւեն գիտութեան մէջ:

Անոնցմէ ոմանք պորձնականօրէն մեծապէս օգտակար եղած են արդէն: Օրինակ, ելեկտրական ճառագայթները կամ թրթռացումները (vibration) ծնունդ տուած են անթել հեռադրի հիանալի զիւտին, որը մեծ ապագայ կը խոստանայ: Քաթոդականները ծնունդ տուած են Ռենտգենեաններին, ասոնց ալ կարեւորութիւնը ընդհանուր բժշկութեան և վիրաբուժութեան մէջ՝ միշտ կը մեծնայ: Այս վերջինների չնորհիւ կարող

*) Տպում ենք իբրեւ լրացում և շարունակութիւն նոյն հարցի մասին «Մուրճի» № 4-ում լոյս տեսած գրութիւն:

ենք տեսնել մեր մարմինն ներսն անցած դարձածը, զննել ներքին այլևայլ գործարանների վիճակը, որոշել գիտամամբ կամ պատահմամբ ներս մույտուած կամ առնուած մի հաստատուն առարկայի չէրքն ու տեղը, լուսանկարել մեր կմախքն և ներքին գործարաններէն շատերը, որոշել կոտորուած կամ խախտած ոսկորները, հետևաբար մեծապէս զիւրացնել բժշկութեան և վիրաբուժութեան գործը:

X ճառագայթներն են նաև որ մէկ-երկու տարիներէ ի վեր յոյսի ամենաթանկագին նշոյլը կու տան իր զոհերի թիւովը՝ մարդկութեան վրայ խուժող աղէտների զարհուրելիներէն մէկին, քաղցկեղին (cancer), բուժման համար, մինչ ամեն տեսակ դեղ և ալդակ (agent), քիմիական թէ ֆիզիկական, տնկարող դանուած էին մինչև հիմա այդ մասին: Եթէ նկատի ունենանք սա կէտը թէ X ճառագայթները միայն եօթ տարուան կեանք ունին, շատ արդարանալի պիտի դառնենք անոնց վրայ դրուած յոյսերը:

Վերջերս մի դանիացի բժիշկ, դոքտ. Նիէլ Ֆինդէն, ջերմական ճառագայթները ի դործ կ'ածէր ծաղիկի դէմ, և ցոյց կու տար որ ծաղիկը բնաւ սպի չի ձգեր եթէ այդ հիւանդութեամբ բռնուողը միայն կարմիր կամ ենթակարմիր ճառագայթների ենթարկուի:

Միևնոյն բժիշկին կը պարտինք նաև երեսի և քթի վրայ երեցող անբուժելի վէրքերը—լրալիւսը—քիմիական ճառագայթների միջոցով ապաքինելու օգտակար գիւտը:

Այս հարեանցի ակնարկը անտեսանելի ճառագայթների գործնական կիրարկութիւնների վրայ՝ բաւական է ցոյց տալու անոնց արդէն իսկ ստացած կարեւորութիւնը գիտական աշխատանոցներէն դուրս:

*
* *

Տեսականին մէջ անոնց կարեւորութիւնը ահագին է: Արդարև անոնք մեզի կարելի կ'ընեն սչ միայն մանկ մարմինների ներքը, քննել և լուսապատկերել այն, այլ և միտուել նոյնիսկ նիւթին բնագրքներին մէջ, և ձևոնարկել մեզի հարկադրուող դադանիքների, խորհրդաւոր խնդիրների եթէ ոչ բոլորին, գոնէ մի մեծ մասին լուծմանը:

Անոնք են որ մեզ բերած հասուցած են այն սահմանադրվին, ուր Նիւթն ու Զօրութիւնը միմեանց հետ կը չլիթին, միմեանց կը փոխանցին, այն սահմանագծին, ուր կը գտնուին վերջնական իրականութիւնները, որոնք որքան անհուն են, որ-

քան հրաշալի, ինչպէս կը յայտարարէր անգլիացի մի մեծանուն գիտուն, Սըր Ուիլիւմ Կրուքս (Crookes) վերջերս Բերլինի մէջ գումարուած քիմիկոսների համաժողովին մէջ:

Արդի գիտութեան փառքերէն մին է ձգողութեան, ջերմութեան, լոյսի, մագնիսականութեան և էլեկտրականութեան անուններին տակ ճանչցուած զօրութիւնները մէկի վերածած լինելը: Շօշափելի ապացոյցներով հաստատած է գիտութիւնը, թէ անոնք տիեզերական գոյացութեան (substance) էական յատկութիւններէն մէկին՝ չարժումին այլեայլ ձևափոխումներն (transformation) են: Այս իրողութեան փորձը շարունակ նոյն խի անձամբ կը կատարենք: Այստեղ ջերմութիւն կը սպառենք՝ լոյս, էլեկտրականութիւն և կամ մեքենական ոյժ ձեռք բերելու համար, այնտեղ, օրինակի համար, էլեկտրականութիւն կը գործածենք՝ ջերմութիւն արտադրելու, մեր սենեակները լուսաւորելու կամ մեր զանազան մեքենաները շարժման մէջ գնելու համար:

Միւս կողմանէ կենսաբանները (biologiste) և քննախօսները (physiologiste), հակառակ Լորդ Կելվինի վերջին յայտարարութիւններին, կ'ընդունեն թէ գործարանաւոր (organique) աշխարհի մէջ գործող զօրութիւնները նոյնն են անգործարանաւոր աշխարհի մէջ գործողների հետ: Կենսական ոյժը (force vitale), որ կը ծառայէր միայն սպիտութիւնը պարտիկուլ, շատոնց է վեր վերջնականապէս մահուան դատապարտուած է:

Այսպէս ուրեմն բնութեան մէջ այլեայլ ձևերի և սլայմանների տակ գործող միակ Զօրութիւն ցոյց կու տայ մեզ գիտութիւնը:

Այս միակ Զօրութիւնը իրեն յենարան ունի տիեզերական գոյացութիւնը, ուրիշ կը բլիսի և որի չնորհիւ կարող է դանաղան վիճակների մէջ արտայայտուել և տարածուել, ծաւալել ամեն կողմ:

Տիեզերական գոյացութիւնը, իր կարգին, կը բաղկանայ կշռելի նիւթէն, որը մեզ չըմպատող բոլոր էակներն ու ստարկաները կը կաղմէ, մի անկշռելի, — գոնէ ծանրութիւնը չափելու ծառայող մեր արդի միջոցներին համար անկշռելի — գոյացութիւն, որը կը լեցնէ ամբողջ տիեզերքը, աստղերի միջև պանուած անհուն տարածութիւնները, ինչպէս և մարմինների հիւլէներին (molécule) և անհատներին (atôme) միջև պանուածները: Այդ բոլորովին առաձգական և կատարեալ հոսանուտին, եթերին մէջ է որ կը շարժին, կ'հոռզեռան նիւթական մարմինները, ասոնց հիւլէներն ու անհատները, ինչպէս ձուկերը ջուրին մէջ, ինչպէս նաև կենդանիները միջնոլորտին մէջ:

Եթերին գոյութիւնը, որքան որ ալ ենթադրական, քանի որ կարելի է, գոնէ առայժմ, ուղղակի փաստերով ցոյց տալ այն, ոչ միայն բանաւոր է, այլև մի անհրաժեշտ պէտքէ լուսեղէն երևոյթները մեկնելու համար ֆրանսացի մի նշանաւոր դիտուն, Ֆաենել, ստիպուեցաւ ընդունել անոր գոյութիւնը: Նոր ճառագայթներն ալ կու գան կը հաստատեն մի բոլորովին առաձգական, կատարեալ և տիեզերական հոսանուտի պէտքը, այնպէս որ եթէ արդէն ստեղծուած է՝ ըլլար եթերը դիտութեան մէջ, հարկ պիտի ըլլար ստեղծել այն: Տարբեր ճանապարհներով կը հասնենք այդ մեծ անծանօթին, որի գոյութիւնը տակաւ առ տակաւ մի ստուգութիւն կը դառնայ:

Անկարելի է, բոլորովին անբանաւոր է ընդունել թէ մի բացարձակ պարապութիւն կը գտնուի աստղերի ձգած անհուն անջրպետների մէջ, ուր սակայն բազմաթիւ երևոյթներ տեղի կ'ունենան: Արգարի պէտք էր որ երբ միջնորդային վերին սահմաններէն անդին տարածուի ոչ թէ բացարձակ ոչնչութիւնը, այլ մի անկողելի, առաձգական և կատարեալ հոսանուտ, որպէսզի արեգակն ու աստղերը կարող լինին իրենց լուսեղէն, ջերմական և ուրիշ ազդեցութիւններն ի գործ դնել միմեանց, ինչպէս և մեր երկրին վրայ: Անկարող ենք ըմբռնելու զօրութիւնը առանց նիւթեղէն յենարանի, ծաւալող միջավայրի, կամ թէ, ուրիշ բառերով, անկարող ենք ընբռնելու զօրութիւնը որ ինքնին գոյութիւն պիտի ունենար և պիտի ազդէր ուրիշ մարմինների վրայ նիւթէն բացարձակապէս անկախ կերպով:

Եւ որովհետև լուսեղէն, ջերմական և ուրիշ երևոյթներ տեղի կ'ունենան նաև, մի քիչ փոփոխութիւն կրելով միայն, կշռելի նիւթին մէջ, որը իր ինքնսիւյ յատկութեամբ, չարժուքի, փոփոխութեան դիմադրելու իր մեծ ձգտումովը երբէք կարող պիտի չը լինէր յառաջ բերել այն տեսակ երևոյթներ, որոնք մէկ վայրկեանի մէջ միլլիոն, եռիլլիոն անդամներ կը կրկնուին, շնական կերպով կը հետեցնենք թէ եթերը կը լեցնէ նաև այդ կշռելի նիւթը, և թէ եթերն է իսկական միջավայրը, ուր վերայիչեալ երևոյթները տեղի կ'ունենան, առաւել կամ նուազ ազդուելով շրջակայ նիւթէն:

Եթերը, որի գոյութիւնը այսպէս բոլորովին անհրաժեշտ դարձած է, նիւթական մասնիկների թելադրութեան տակ, առաձր-կականութեան շնորհիւ կրնայ թրթռալ կամ ճօճալ (vibrer) մէկ վայրկեանի մէջ ահաղին թիւով: Խաղաղ ջուրի երեսին կը նստէք մի քար, և ահա ջուրը կը սկսի ճօճալ, ալիքներ կը դոյսնան անոր երեսին վրայ, մինչև որ իյնող քարին ոյժը, որ ջուրին փոխանցուեցաւ, սպառի: Եթերի թրթռացումները, սաստկու-

թեան և չուտութեան կամ յաճախութեան (fréquence) կողմանէ իրարմէ չաա կը տարբերին: Երբ անոնք հանդիպին նիւթին, ասոր վրայ զանազան ազդեցութիւններ և ներգործութիւններ կ'ընեն. օրինակ, կան որ մարմիններ թարեխառնութեան աստիճանը կ'աւելցնեն, ուրիշներ ելեկտրական ներգործութիւններ կ'ընեն, ոմանք ալ տեսողական ջիւղին վրայ մի քիմիական ուրոշ ազդեցութիւն ի գործ կը դնեն, որը լոյս կը կոչենք:

Շարժումի այս ամեն ձեւփոխումներն ալ, եթերին կատարեալ առաձգականութեան չնորհիւ, ահագին արագութեամբ կը փոխանցին մի կէտէ միւսին, կը ծաւալին, կը ճամբորդին, արագութիւն, որ ֆիզիկական պարապութեան (օդահան գործիքով կատարուածը), ինչպէս և օդին մէջ միկնոյնն է բոլորին համար: Այդ արագութիւնն է երեք հարիւր հազար կիլօմէտր մէկ վայրկեանի մէջ: Այս ահուկ արագութեամբ սուրացող մի շոգեկառք, ժամանակի միկնոյն տեսութեան մէջ, եօթ և կէս անգամ երկրի շրջանը պիտի կարողանար ընել, բեկնորէն անցընելով, մէկ վայրկեանէն մի քիչ աւելի ժամանակ պիտի դնէր Ղուսին հասնելու համար, և ութ բոպէ և տասներեք վայրկեան՝ արեգակին համար: Ահուկ արագութիւն արդարեւ, որ սակայն մի իրականութիւն է, քանի որ լոյսը արեւէն երկիր գալու համար միայն 8 բոպէ և 13 վայրկեան կը դնէ: Միկնոյն արագութեամբ կ'ընթանան նաև ջերմական, քիմիական, հեռոգեան և սէօնտիէնեան ճառագայթները:

Այս կէտերը մի օրինակով լուսաբանելու համար վերջնենք մի գաշնամուր: Երբ ասոր բազմաթիւ աւելի կամ նուազ ուժղընութեամբ պրկուած և երկար թելերը արտաքին պատճառների թեղադրութեան տակ շարժման մէջ մանեն, իրենց սեփական թրթռացումները կը հաղորդեն օդին, որը կ'սկսի իր կարգին թրթռալ. այսպէս զանազան ձայներ յառաջ կու գան և օդին չնորհիւ ամեն կողմ կը տարածուին: Եթէ կարելի լինէր գաշնամուրին մէջէն օդահան գործիքով օդը պարպել, ի դուր տեսչներին (touche) վրայ պիտի դարնէինք, այսինքն թելերը շարժման մէջ պիտի գնէինք, ոչ մի ձայն լսելի պիտի չը լինէր: Օգի ալիքները գոյութիւն չ'ունենալով, պիտի չը կրնային գալ ազդել լսողական ջիւղին վրայ: Լոյսը այդ պարապէն բնաւ չ'ազդուիր:

Չայնի բոլոր նօտերն ալ միկոյն արագութեամբ կը ճամբորդին. այս իրողութեան փորձը ամեն ոք անձամբ կատարած է: Մի նուազախումբի միաժամանակ արտաբերած ձայները, ամենէն թաւերէն մինչև ամենէն սուրերը, միկնոյն ատեն կը լսենք. հակառակ պարագային ներգաշնակութիւն պիտի չը կե-

նար: Ջայնի արագութիւնն է, օդին մէջ, 340 մէտր միայն, այսինքն լոյսի արագութիւնէն զրեթէ մէկ միլլիոն անգամ նուազ: Այս ահագին տարբերութիւնը կրնայ մի որոշ գաղափար տալ եթերին առաձգականութեան վրայ ու նոյնիսկ մասամբ ալ արդարացնել անոր գոյութեան մասին տեղի ունեցած հաւատքը:

Ինչպէս որ մեր ականջները, իրենց կազմութեան շնորհիւ, օդին ամէն կարելի թրթռացումներէն մի որոշ մաս միայն կարող են լսել, մինչդեռ ձայների մի անհուն զանազանութիւն կըրնայ չըջապատած լինել մեզ, նոյնպէս ալ աչքը կարող է տեսնել թրթռացումներէն մի մաս միայն, որը բաղդատմամբ անոնց, որոնք անտեսանելի կը մնան, շատ փոքր է:

Կարող ենք գաշնամուրի ստեղնաշարը (clavier) անսահման կերպով երկարել, թաւ ձայների կողմը հետզհետէ աւելի և հաստ երկար թելեր, իսկ հակառակ ծայրին վրայ ալ, անվերջանալի կերպով, հետզհետէ աւելի բարակ և կարճ թելեր աւելցնելով: Եւ սակայն միշտ որոշ թիւով կամաներ միայն պիտի կըրնանք լսել:

Եթերի թրթռացումներէն անոնք որոնք կարող են տեսողական ջիղին վրայ ազդել, կարմիրէն մանիշակագոյնը, մի հընդեակ (quinse) կը կազմեն: Ասոր երկու կողմերը կը տարարածուին բաղմաթիւ. կամաներ, որոնք մեզ անտեսանելի կը մնան: Այդ կամաները կազմող թրթռացումներն են անտեսանելի ճառագայթները:

Տեսանելի և անտեսանելի ճառագայթների ստեղնաշարը մէկէ աւելի խորմատներ կը ներկայացնէ, որոնք տակաւ առ տակաւ կը լեցունին զիտական նորանոր խուզարկութիւնների շնորհիւ:

Եթերի թրթռացումների ստեղնաշարին ամէնէն ցած նօտերը կը կազմեն ելեկտրականները, որոնք բաղմաթիւ քիլօմէտրներէ մինչև 4 միլլիմէտր երկայնութեամբ ալիքներ ունին: Հեռցի մեծ գործիքը 6 մէտր, իսկ փոքրը 60 սանտիմէտր երկայնութեամբ ալիքներ կ'արտադրէին: Գերմանացի մեծանուն գիտունին յաջորդները յաջողած են հետզհետէ կարճցնել ալիքների երկայնութիւնը, կամ, ինչ որ նոյնն է, մեծցնել մի վայրկեանի մէջ կատարուած թրթռացումների թիւը: Պ. Լէբէտէվ յաջողած է արտադրել 4 միլլիմէտր երկայնութեամբ ալիքներ, ինչ որ կը նշանակէ ութսուն երկիլլիոն թրթռացում մէկ վայրկեանի մէջ: Ելեկտրական ամէնէն բարձր նօտն է այս, որը կարելի լինի առայժմ ձեռք ձգել: Պէտք է ըսել թէ տակաւին շատ հեռու կը գտնուինք լուսեղէն թրթռա-

ցումներէն, որոնք մէկ վայրկեանի մէջ հարիւրաւոր եռիլլիոններով տեղի կ'ունենան:

Ելեկտրական այդ բարձր նստէն վերջ կու գայ մի պարապ, որը կը տարածուի մօտ վեց կումայի վրայ: Այս խրամատը կարելի պիտի լինի լեցնել մէկ կողմէն աւելի սուր ելեկտրական նստեր, միւս կողմէն ալ ջերմական աւելի թաւ նստեր արտադրելով:

Երբ այդ պարապը անցնինք, պիտի գտնենք եթերական թրթռացումների մի երկար շարք, որը ջերմական ազդեցութիւններ ընելով աւելի, ջերմական կը կոչուի կարմիր ճառագայթների հետ: Պ. Ռուբէնսի վերջին փորձերէն հետեցնելով, ձեռք բերելը կարելի եղած ջերմական ամէնաթաւ նստը ունի 0,06 միլլիմէտր երկայնութեամբ ալիքներ, կամ 5 եռիլլիոն թրթռացում մէկ վայրկեանի մէջ: Ամէնէն սուրը կը գտնուի կարմիրին քով: Ջերմական կամ ենթակարմիր ճառագայթները գրեթէ եօթ կամ տեղ կը գրաւեն եթերային թրթռացումների ստեղնաշարին վրայ:

Ջերմականներէն անդին, առանց որեւէ խրամատի, կը տարածուին եթերի այն թրթռացումները, որոնք կարող են տեսողական ջիղին վրայ ազդել, այսինքն լուսեղէնները, կարմիրէն մինչև մանիշակագոյնը: Որպէսզի եթերի թրթռացումները կարենան ազդել մեր աչքին վրայ, պէտք է որ ունենան 0,800-էն 0,375 հազարերորդ միլլիմէտր երկայնութեամբ ալիքներ, կամ 375-էն 800 եռիլլիոն թրթռացում մէկ վայրկեանի մէջ: Առաջին թիւերը կը վերաբերեն կարմիրին, երկրորդները մանիշակագոյնին:

Մանիշակագոյնէն վերջ կու գան անգրամանիշակագոյնները, որոնք, քիմիական գորաւոր ազդեցութիւններ կ'արեւնալ ընելնուն համար, կը կոչուին նաև մանիշակագոյնների հետ քիմիական ճառագայթներ: Ընդարձակօրէն կը տարածուին անոնք եթերային թրթռացումների ստեղնաշարին վրայ, ուր հետզհետէ աւելի մեծ տեղ կը գրաւեն նոր խուզարկութիւնների շրջանի:

Վերջապէս X ճառագայթները, որոնք եթերային ամէնաարագ թրթռացումները լինել կը թւին, կը տարածուին անգրամանիշակագոյններէն անդին, մի խրամատ ձգելով իրենց և այս վերջինների միջև:

Յոյժ պատաւեր յաղթանակ պիտի տանի դիատթիւնը, երբ եթերական թրթռացումների ահազին ստեղնաշարին երկու խրամատները յաջողի լեցնել:

Եթէ գիտութիւնը յաջողած է միութեան վերածել Զօրութիւնը ու կապել այն՝ եթերին հետ, միենոյն փայլուն յաջողութիւնը ունեցած է, գոնէ մինչև հիմա, Նիւթին հետ: Այսօր մեր արամադրութեան տակ զսնուող վերլուծական (analytique) միջոցները մեզ կ'ըսեն թէ 70-է աւելի պարզ մարմիններ, կամ տարրեր (èlèmente) կան, այսինքն մարմիններ, որոնք մի տեսակ նիւթէ կազմուած են: Հակառակ իրենց արդէն իսկ մեծ թիւին, անոնք միշտ չափնալու վրայ են: Ըսել է թէ 70-է աւելի տեսակ նիւթ կայ, և ոչ թէ միմիայն նիւթ, որ իր այլազան վիճակներով և բազադրութիւններովը յառաջ բերած լինէր այդ պարզ տարրերը, որոնք, իրենց կարգին, միմեանց հետ այլևայլ կերպով բազադրուելով, յառաջ կը բերեն մեզ շրջապատող բոլոր էակներն և առարկաները:

Շատ հին առեւտներէ ի վեր սակայն մի նախնական, սկզբընական կամ մայր նիւթի գոյութեան հաւատքն ունեցած է մարդ, հաւատք որ ինքնին շատ բանաւոր և բնական է: Երբ տլքիմիկոսները, գորերի ընթացքին մէջ, կը ջանային անագնիւ մետաղները օսկիի փոխել, Նիւթի շրջականութիւնը (transmutabilité) իրականութիւն կ'ընդունէին:

Այժմ ալ միակ կամ մայր նիւթի գոյութեան հաւատքը շատ զօրաւոր է և զօրաւոր հիմերի վրայ յինած: Իրաւ է որ տակաւին ոչ մի դրական փորձ չը կայ մէջ տեղը, այդ հաւատքը իրականութեան փոխելու կարող, սակայն բազմաթիւ երեոյթներ, նոյն իսկ տարրերի թիւին շարունակական աւելացումը, իրաւունքը կու տան յուսալու, թէ մօտաւոր ապագայի մէջ կարելի պիտի լինի ձեռք ձգել վճռական փորձը:

Անատեսանելի ճառագայթներն են, որոնք հաւանականաբար պիտի իրականացնեն այդ յոյսը:

Երբ մի անգամ այդ սկզբնական նիւթին գոյութիւնը ստուգութիւն դառնայ, երբ մի կողմանէ եթերը, միւս կողմանէ ալ միակ նիւթը ունենանք մեր առջև, բնականաբար ստիպուած պիտի հարցընենք մենք մեզի թէ ի՞նչ առնչութիւն կայ այդ երկուսին միջև, թէ արդեօք ինչ որ նիւթ կը կոչենք, նոյնիսկ եթերը կամ ասոր մէկ արտայայտութիւնը, խտացումը չէ: Այս ինքնին յոյժ կարևոր կէտերի լուսաբանութեան յոյսն ևս կը ներշնչեն անատեսանելի ճառագայթները:

Շատ իրաւամբ է ուրեմն որ Սըր Ուիլքեմ Կրուքս կ'ըսէ անոնց համար, թէ անոնք մեզ բերած հասուցած են այն սահմանագծին, ուր Նիւթն և Զօրութիւնը միմեանց հետ կը շրջափոխին, և ուր կը զսնուին վերջնական իրականութիւնները: Այդ իրականութիւնները ահապէս կարևորութիւն ունին սկիզբի

և վախճանի հարցերին բանաւոր լուծմանը, հետեալաբար մարդկային բարոյականին համար:

Բ

Տիեզերքի մէջ շարժումը մի ընդհանուր և անհրաժեշտ իրողութիւն է: Աշխատութեան օրէնքը բացարձակ և ընդհանուր է տիեզերքի մէջ: Բացարձակ դադարը կամ հանգիստը գոյութիւն չ'ունի անոր համար: Ոչ մի տեղ կարելի չէ գտնել կայունութիւնը, անփոփոխելիութիւնը, ոչ իսկ երկինքին մէջ, որի ձեւը անփոփոխ նկատուած է: Ամէնուրեք եռուղեւում, ամէն տեղ շարժում, նոյնիսկ անշունչ և անկենդան ընտելեան մէջ: Խոնչ ահագին իրարանցում սաքարին և պողպատին մէջ, որոնց հիւլէները տենդոտ գործունէութեան մէջ են, փեթակներ են անոնք, ուր հիւլէ մեղունները շարունակ կը շարժին: Տարօրինակ պիտի թւին ձեզ այս բառերը, քար, պողպատ, շարժում, գործունէութիւն, միմեանց հետ հաշտուած, երբ գիտէք կամ այնպէս կը կարծէք թէ անշունչ նիւթին վիճակուած է յաւիտենական անշարժութիւնը: Մարդ երկար ատեն այս պատրանքը ունեցած է. պէտք է ըսել թէ, ուրիշ կերպով կարելի չէր, քանի որ մարդ, իր կազմուածքին պատճառաւ, կարող չէր բուն իրականութիւնը տեսնել ամէնուրեք: Մարդս մի դաճած և միանգամայն մի հսկայ է: Գաճած անհունապէս մեծերի, հսկայ անհունապէս փոքրերի հանդէպ: Բարեբախտաբար մարդուն իմացականութիւնը կարող է գոնէ մասամբ լեցնել թերին: Մանրադիտակը մի կողմէն, հեռադիտակը միւս կողմէն տհաղին նոր աշխարհներ պարզած են մեր չլացած աչքերի առջև: Ուրիշ այլազան գործիքներ նոյնպէս կու գան աւելի կամ նուազ յաջողութեամբ լրացնել մեր կազմութեան պակասը:

Դիտեցէք պարզ աչքով շատ հեռուն գտնուող մարդկանց մի ամբոխ. մի մութ, անշարժ և միօրինակ տարածութեան գաղափարը պիտի ունենաք, հակառակ այդ ամբոխը կազմող ամեն անհատի շարժումներին, հազուադէպ և դէմքերի պէս-պիսութեանը: Հեռուի եռուղեւում և անհուն գանազանութիւնը կը վերածուին այնպէս անշարժութեան և միօրինակութեան: Աւելի մօտ գացէք կամ ձեր աչքերը զինեցէք հեռադիտակով, և տհա իրականութեան վրայ բոլորովին տարբեր գաղափար պիտի ունենաք:

Մեր անշունչ, անշարժ և անզգայ կարծած նիւթն ալ մի

ահագին ամբոյս է, որը չափ հեռուէն և անկատար աչքերով կը դիտենք: Եւ սակայն ինչ մեծ իրարանցում, ինչ տենդային զործունէութիւն, ինչ խիտ կեանք նիւթին մէջ:

Մարմինները կազմուած են հիւլէներէ, այս վերջիններն ալ անհատներէ: Հիւլէ և անհատ շարունակ շարժման, աշխատութեան մէջ են: Մենք անոնց շարժման ծանօթութիւնը կ'ունենանք մարմինների ջերմութեան կամ բարեխառնութեան աստիճանով: Արդարև մարմինին տաքութիւնը յառաջ կու գայ անոր հիւլէների շարժումէն, և որովհետև ամէն մարմին, առանց բացառութեան տաքութիւն ունի, ըսել է թէ ամէն մարմինի մէջ աշխատութիւն, շարժում կայ: Այս ուսումնասիրութեան առաջին մասին մէջ տեսանք արդէն թէ նիւթի մասնիկների շարժումը կը հաշորդուի եթերին, որը, իր կարգին, կը սկսի թրթռալ, և իր թրթռացումների յաճախութեան համեմատ զանազան ներազործութիւններ բնել մարմիններին վրայ: Ըսել է թէ որքան մի մարմինի բարեխառնութիւնը աւելցնենք, այնքան անոր հիւլէների շարժումը պիտի արագանայ, սաստկանայ, ընդարձակի, հետեաքար մի կողմանէ անոր ծաւալը պիտի մեծնայ, և միւս կողմանէ կարող պիտի լինի հետզհետէ աւելի արագ և յաճախակի թրթռացումների ծնունդ տալ: Արդարև երբ տաքցնենք մի որևէ հաստատուն կամ պինդ մարմին, սա, չափ քիչ բացառութեամբ, կ'ընդարձակուի, հեղուկ կը դառնայ և վերջապէս դաղային վիճակ կը ստանայ, ուր հիւլէներն այլ ևս աղատ համարձակ կրնան շարժիլ: Նոյնպէս երբ տաքցնենք մի որևէ մարմին, ըսենք մի սետաղ, սա հետզհետէ աւելի կարճ ալիքներով ջերմական ճառագայթներ կ'արձակէ, յետոյ քանի աւելնայ իր բարեխառնութեան աստիճանը, լուսեղէն ճառագայթներ, որոնք նախ միայն կարմիր գոյնին կը վերաբերին: Մետաղը կը կարմիր: Շարունակելով բարձրացնել ջերմութեան աստիճանը, մետաղը բաց կարմիր, յետոյ ճերմակ լոյս կ'արձակէ: Մօտէն քննելով կը տեսնենք թէ հետզհետէ աւելի կարճ ալիքներով լուսեղէն ճառագայթները ծնունդ կ'առնեն, կարմիրէն վերջ կ'արձակուին յաջորդաբար նարնջադոյնը, դեղինը, կանաչը, կապույտը, և, չափ բարձր ջերմութիւնների մէջ ալ մանիշակագոյն և անդրամանիշակագոյնը կազմող ճառագայթները: Ուրեմն չափ բարձր բարեխառնութիւն ունեցող մի մարմին եթերական բարդ թրթռացումների ծնունդ կու տայ: Արևն ու աստղերը, իրենց սաստիկ ջերմութեան շնորհիւ, ճառագայթարձակ հսկայ հնոցներ են:

Արևին լոյսը, ինչպէս և արևէ ճերմակ լոյս, մի բարդ բազաղրութիւն է յառաջ եկած ջերմական, լուսեղէն և քիմիական

ճառագայթներէն: Երևակայեցէք մի ձայն, որը ահագին մի դաշնամուրի բոլոր ստեղներին միաժամանակ զարնուելէն արտադրուած լինի. այդ ձայնը պիտի կրնայ պատկերացնել ճերմակ լոյսը: Երբ օդէն աւելի խիտ թափանցիկ միջավայրէ անցնի սպիտակ լոյսը, օրինակի համար, ջուրէն կամ բիրեղին մէջէն, անոր այլևայլ թրթռացումները տարբեր կերպով ազդուելով միջավայրէն՝ այսպէս փոփոխութիւններ կարող են կրել: Կը պատահի որ, եթէ միջավայրին հարթ երեսները միմեանց հետ զուգահեռական չեն, դուրս ելնող խուրձին մէջ թրթռացումները տարբեր-տարբեր ուղղութիւններ ստացած լինին, հետեւաբար բազազրութիւն չը կազմեն: Այս պարագային մէջ ճերմակ լոյսի տեղ զանազան գոյներ պիտի առաջ գան, մի որոշ կարգով շարուած: Այս երևոյթն է որ տեղի կ'ունենայ, երբ արեւուն ճառագայթները անձրեւի կաթիլներէն կ'անցնին և կը կազմեն ծիրանի գօտին կամ ծիածանը: Նոյնը կը պատահի նաև, երբ որեւէ ճերմակ լոյս մի ջահի պրիսմալիններէն (prisme) կ'անցնի: Այս երևոյթը եկեղեցիների մէջ յաճախ դիտելի է: Լոյսի տարբազազրութենէն յառաջ եկած, և կարմիրէն մանիշակագոյնը տարածուող դուռաւոր չեքոյն կամ, գիտական լեզուով, լուսակին (spectre) երկու կողմերը ընդարձակօրէն կը տարածուին կարմիրէն անդին ջերմականները, իսկ մանիշակագոյնէն անդին ալ անդրամանիշակագոյնները:

Արեւին արձակած թրթռացումներէն մի որոշ մաս միայն կարող է հասնել մինչև երկրին երեսը: Մթնոլորտի վերի խաւերը ուժղին կերպով կը ծծեն թէ որոշ աստիճանէ մ'աւելի դանդաղ, և թէ որոշ աստիճանէ մ'աւելի արագ թրթռացումները: Պ. Նօրլմանի փորձերը, կատարուած Մօն-Բլանի վրայ, ցոյց տուած են թէ արեւի ճառագայթները, անոնք որոնք, երկրիս երեսը կը հասնին, երկտրական թրթռացումներ չեն պարունակեր: Արեւէն մեզ հասած ամէնէն երկար ալիքները միայն 27 հազարերորդ միլլիմէտր երկայնութիւն ունին. ծովին եզերքը այդ երկայնութիւնը կ'իջնայ 12 հազարերորդ միլլիմէտրի: Այս ալիքները բնականաբար ջերմականներ են, քանի որ լուսեղէնները կը սկսին միայն 8 տասնհազարերորդ միլլիմէտրէն: Երբ բազազառնը մեզ հասած երկար ալիքներով թրթռացումները պ. Ռուբէնսի ձեռք բերածներին հետ, պիտի տեսնենք թէ տարբերութիւնը մեծ է, առնուազն հինգ կամայի վրայ տարածուող ջերմական թրթռացումներ կը ծծուին ուրեմն մթնոլորտի վերին խաւերէն: Իսկ մեզ հասած ամէնէն կարճ ալիքները 3 տասնհազարերորդ միլլիմէտր երկայնութիւն ունին, մինչդեռ աշխատանոցների մէջ կարելի է մէկ տասնհազարերորդ միլլի-

մէտր, և տակաւին աւելի կարճ ակօքներով թրթռացումներ ձեռք բերելու Այսպէս նաև անդրամանիշակապոյններէն մի մեծ մաս, ինչպէս նաև X ճառագայթները, քաթողականները և ուրիշներ աւերողը մին կը ծծուին միջնոլորտի վերին խաւերէն:

*
* *

Եթերական թրթռացումների ամէնէն գանգալների, այն է՝ ելեկտրականների վրայ մասնաւորապէս պիտի խօսակցինք իրենց կիրարկումների ամէնէն գործնականին, անթեղ հեռազրույթեան ասիլով:

Վերը տեսանք արդէն թէ ամէն մարմին, նոյնիսկ հասարակ բարեխառնութեան մէջ ենթակարմիր կամ ջերմական ճառագայթներ կ'արձակէ: Ջերմաստիճան ունեցող մի սև մակերես կ'արձակէ թրթռացումներ, որոնք արդէն 0,011 միլլիմէտր երկայնութեամբ ակօքներ ունին: Ջերմական ճառագայթները աւելի կամ նուազ չափով միշտ կ'ընկերանան լուսեղէններին: Սովորական կերպով գործածուած ճրագների լոյսին մէջ մեծ քանակութեամբ կը գտնուին, ինչ որ մի շատ աննպաստ իրողութիւն է, եթէ միայն լուսաւորուել կը փափաղինք, որովհետև քարիւղին, օդային կապին, ոյժը փոխանակ ամբողջովին կամ մեծ մասամբ լուսեղէն ճառագայթների փոխուելու, մեծ մասամբ ջերմական թրթռացումների կը վերածուի: Հետաքրքրական լինելէ զուրկ չէ հարցնել թէ կարելի չէ միթէ ջերմականները լուսեղէնների վերածել, որով մեծաքանակութեամբ կամ մասամբ անհետացնել: Դո՛րա, Առւէրի պարկերը (մանջօնները) այս հարցումին կը պատասխանեն: Ամէն մարդ գիտէ թէ սրբան մեծ տարբերութիւն կայ մանջօնով և առանց մանջօնի երկու միևնոյն տեսակ նիւթ սպառող ճրագների մէջ թէ լոյսի ստատիկութեան և թէ խնայողութեան տեսակէտներով: Հետևեալ թիւերը մօտիկ գաղտնիք պիտի կրնան տալ այս մասին, օդային կաղ սպառող մի հասարակ ճրագ թիթիկեանիկի ձևով (bec papillon), կ'ըստառէ 160 լիտր կաղ մէկ ժամուան մէջ, և 16 մոմի լոյս կու տալ, ապակեայ խողովակ ունեցող մի ճրագ, որը ժամուան մէջ կը սպառէ 200 լիտր կաղ, կու տայ 20 մոմի լոյս, մինչդեռ մի ընկ Առւէր, կամ Առւէրի մանջօնով ճրագը ժամը կը սպառէ 100 լիտր կաղ միայն և կու տայ 50-էն 60 մոմի լոյս: Տարբերութիւնը ահագին է:

Առանց մանջօնի ճրագին մէջ յառաջ եկած թրթռացումների մեծ մասը ջերմական, հետևաբար անտեսանելի է: Մանջօնը, ր երկու «հալուպիւտ հող» կոչուած մետաղների, Օդաստոս, 1903.

thorium-ի և cérium-ի օքսիդներէն կը բաղկանայ, կարողութիւն ունի այդ ջերմականներն ալ մեծ քանակութեամբ լուսեղէնների փոխելու: Ահա թէ ուր կը կայանայ, ճշտիւ, գործածուած օքսիդների դերը: Առոնք շատ բարձր բարեխառնութեան մէջ միայն (1650) ատափճան ջերմութեան տակ) հրաշէկ կը գառնան, և մեծ մասամբ կ'արձակեն բուն լուսեղէն, այսինքն գեղին, կանանչ և կապոյտ ճառագայթներ, մինչդեռ կարմիրի և կնթաւարմիրների, որոնք ջերմական ճառագայթներ են, շատ քիչ քանակութեամբ ծնունդ կու տան: Այս պատճառաւ է որ մանչօն Աուէր ունեցող ճրագին լոյսը պաղ է:

Ջերմական ճառագայթները կարող չեն անցնելու լոյսին համար թափանցիկ բոլոր մարմիններէն. այսպէս, հասարակ պակին, որ լոյսին համար մեծապէս թափանցիկ է, ազօտ է ջերմութեան համար, թող չը տար որ սա անցնի, այլ կը ծծէ այն և կը տաքնայ:

*
* *

Քիմիական կամ անդրամանիչակագոյն ճառագայթներն ալ, որոնք ընդարձակօրէն կը տարածուին մանիչակագոյնէն անդին, երբ ճերմակ լոյսը տարբազարեմբ, մասամբ կը գտնուին արեւիկան լոյսին մէջ: Առոնք են որ, մանիչակագոյններին հետ, քիմիական դօրաւոր ազդեցութիւններ կ'ընեն, կ'աղբեն լուսանըկարչական պլաքների վրայ, մարմինների գոյները կը փոխեն կամ կ'ազօտացնեն, կը հականեխեն կամ միկրորեն կ'սպաննեն: Արդէն տեսանք թէ մթնոլորտէն մեծապէս կը ծծուին, իսկ հասարակ ազդակէն ընաւ չեն կրնար թափանցիլ, բակ է թէ սենեակի պատուհանները փակ պահել կամ բաց թողնել, հոյնիսկ լոյսի բազալլութեան տեսակէտով, միևնոյնը չէ: Յաճախ արեւ տեսնող և բաց պատուհաններով սենեակները միշտ սուլի առողջապահիկ են:

Անդրամանիչակագոյն ճառագայթները ելեկտրացած մարմինների վրայ յոյժ շահեկան ազդեցութիւններ կ'ընեն. օրինակ՝ ժխտապէս ելեկտրացած մարմինները կը պարպեն: Սենեակին մէջ դրէք առակեայ կոթի վրայ հաստատուած մետաղեայ մի ելեկտրացած դուռնա. եթէ սենեակին պատուհանները փակ են, դուռնը շատ դանդաղօրէն պիտի կորսնցնէ իր ելեկտրականութիւնը: Մինչդեռ եթէ պատուհանները բանալի, կամ թէ սենեակին մէջ երկու մետաղների միջև ելեկտրական կայծ յառաջ բերենք, ներս մտած կամ արտադրուած լոյսին մէջ զանազան անդրամանիչակագոյն ճառագայթների պատճառաւ, գուռնը

չուտով պետի կորսնցնէ իր ելեկտրականութիւնը, եթէ սա ժխտական է: Կան պիտուներ, որոնք այս ճառագայթները ազդեցութեան կը վերագրեն մթնոլորտի ելեկտրականութեան բաժանումը, հետեւեալը փոթորիկները, փայլալն ու կայծակը:

Մեզ զրազեցնող ճառագայթները ինքնին ելեկտրականութիւն չ'ունին, հակառակ, իրենց զործած ելեկտրական ազդեցութիւններին: Մի մետաղեայ թերթ անոնց ներգործութեան տակ մասնաւոր ճառագայթներ կ'արձակէ, որոնք յարինման են քաթոդական կոչումներին, որոնք քիչ վերջը պիտի ուսումնասիրենք:

Աշխատանքների մէջ անդրամանիշակազոյն ճառագայթներ ձեռք բերելու համար ելեկտրական ազդ կը կազմեն մետաղների, մանաւանդ cadmium-ի, aluminium-ի և zinc-ի միջև. յառաջ եկած ելեկտրական լոյսը մեծ քանակութեամբ կը պարուսկէ անոնցմէ:

Ինչպէս կարելի է այս անտեսանելի ճառագայթները տեսնելիները փոխել, կամ, ուրիշ բառերով, ինչպէս կարելի է անդրամանիշակազոյնների թրթռացումներին արագութիւնը նուազեցնել: Կան մարմիններ, ինչպէս են Ուրանի ազերը, որոնք այդ ճառագայթների ազդեցութեան ենթարկուելով կը ծծեն անոնք և տեսանելի ճառագայթներ կ'արձակեն: Ուրանի ազերը անոնց ազդեցութեան տակ կանանչ-դեղին լոյս կ'արձակեն: Այս իրողութիւնը մեծապէս դիւրացուցած է քիմիական անտեսանելի ճառագայթների ուսումնասիրութիւնը:

Միայն անդրամանիշակազոյն թրթռացումները չեն որ կարող են փոխուիլ նուազ արագ թրթռացումների, միևնոյն կը պատահի ըտոր զործոն ճառագայթների, այսինքն կոնանչի, կապոյտի և մանիշակազոյնի համար: Այն մարմինները, որոնք թրթռացումների արագութիւնը փոխելու կարողութիւն ունին, երկու ասարեք զոյն ունին բաժանում որ լոյսը կը ցրաջեն կամ կը փոխանջեն: Մագնակայի կարմիրով ներկուած, մի լուծաջուր (solution) կարմիր զոյն ունի. երբ լոյսը լուծաջուրին մէջէն անցնելով կու զայ կը հասնի մեր աչքին. մինչդեռ կանանչի զարնող նարնջազոյն է, երբ լոյսը լուծաջուրին վրայէ կը ցրանայ միայն: Այս տեսակ մարմինները կը կոչուին ֆիլուօրէսան, երկայթն ալ ֆիլուօրէսանս անստնով կը ճանչցուի:

*
* *

Եթերական թրթռացումների տեսնալարին վերջին կամ մաները ուսումնասիրելէ տաաջ, պարտինը մի քիչ կանդ ասնել

անոնց ծնունդ տուող պատճառին, քաթոդական ճառագայթների վրայ, և տեսնել անոնց արտադրութեան կերպը: Քաթոդական ճառագայթները, ինչպէս հետագայ տողերի մէջ պիտի տեսնենք, նիւթական ճառագայթներ են և ոչ թէ եթերական թրթռացումներ:

Բարդիչների մարտիցի (batterie d'accumulateurs), ելեկտրական զօրաւոր մեքենայի կամ, ինչպէս սովորաբար տեղի կ'ունենայ, մի Ռումֆորթեան ելեկտրազանի (bobine) երկու բեռները հաղորդակցութեան մէջ դնենք երկու ծայրերը գոյ ապակեայ խողովակի կամ սրուակի վրայ հաստատուած երկու մետաղեայ թելերի, կամ ելեկտրական լեզուով, երկու ելեկտրոդներէ հետ, որոնց իւրաքանչիւրը, ընդհանրապէս պլատինէ կաղմուած, կը վերջանայ խողովակին ներքը ալիւմինիումի թանձր թելով կամ գլանիկով կամ հարթ կամ գոգաւոր երեսով փոքր սկաւառակներով մի կատարելագործեալ օդահան զործիքի միջոցաւ սկսենք պարպել, կողմնակի խողովակէն, սրուակին կաղը, որը կրնայ լինել օդ, թթւածին, (oxygène), ջրածին (hydrogène), բորակածին (azote), կամ ածըխական թթու (acide carbonique): Երբ խողովակին մէջի կաղին ճնշումը մէկ քանի սանտիմէտրի իջնայ, հոսանքին մտած կողմի ելեկտրոդէն, կամ ելեկտրական լեզուով, անոդէն, մատիտի հաստութեամբ մի լուսաւոր շերտ կը մեկնի և, աստիճանաբար նուազելով, կը յանդի հոսանքին ղուրս ելած ելեկտրոդին՝ քաթոդին՝ մօտերը: Այս դրական լոյսը, մանիշակապոյն կարծիք՝ եթէ խողովակին կաղը օդ է, մեծապէս կ'աղբիւր մագնիսականութենէն. արդարեւ երբ մի մագնիս մօտեցնենք սրուակին, չերտն անոր մօտերը, անկէ վանուելով, կոր դիժ կը ձեւայնէ, յետոյ դարձեալ իր նախնական ուղղութիւնը ստանալու համար երբ, անօտրացումը յառաջ տանելով, ներքի կաղին ճնշումը մէկ միլլիմէտրի հասնի, չերտը ընդլայնելով կը լեցնէ ամբողջ խողովակը ու միանդամայն կը կարճնայ: Քաթոդին մօտն ալ կը սկսի ծայր տալ մի լուսեղէն պատեան—ժխտական լոյսը: Երբ վերջապէս ճնշումը մէկ հարիւրերորդ միլլիմէտրի հասնի, դրական լոյսը արդէն իսկ բոլորովին անհետացած է, խողովակը մեծ մասամբ մութ, իսկ քաթոդին շուրջը կաղմուող ժխտական պատեանն ալ (կապոյտ՝ օդին համար) գրեթէ ամբողջովին կը չրջապատէ այն, ասոր և իր միջև թողնելով մի մութ միջոց, որը խողովակին ամբողջութիւնը պիտի զրաւէր, եթէ կաղին անօտրացումն աւելի առաջ տանէինք: Իսկ խողովակին այն մասը, որ քաթոդին զիմացը կը գտնուի, ֆոսֆորաւիալ կը դառնայ, և կանանչ լոյս կ'արձակէ եթէ խողովակը հասարակ ապա-

կիւն է, կապոյտ՝ եթէ բիւրեղեայ է: Քաթողական կոչուած անտեսանելի ճառագայթները, որ ժխտական լոյսին երենալէն ի վեր ծնունդ առնել սկսած էին, պարապոլիկեան յառաջացած աստիճանին չնորհիւ կը հասնին ապակիին և լուսատու կը դարձնեն այն:

Այս ամէն իրողութիւնները գտած է մի գերմանացի բնագէտ, Հիտտորֆ, 1869-ին, բայց անոնց մանրամասն ու հիմնական ուսումնասիրութիւնը կը պատրինք Սըր Ուիլեմ Կրուքսի (1880), որի անունով վերոյիշեալ ճառագայթները արտադրող խողովակները կը կոչուին Կրուքսեան խողողակներ կամ սրուակներ:

Քաթողական ճառագայթները ծնունդ կ'առնին քաթողէն, ասոր ուղղահայեայ կերպով, և կը ճամբորդին ուղիղ զիծով, այնպէս որ անոնց ճանապարհին վրայ զրուած սրէն արգելք կրնայ կասեցնել անոնք ու իր ստուերը ձգել սրուակին պատին վրայ, ճիշտ լուսեղէն ճառագայթների պատահածին նման: Մեծապէս կ'ազդուին մագնիսի ներկայութեան, որը աւելի կամ նուազ ուժգնութեամբ կը տեղափոխէ լուսեղէն բիծը կամ հետքը խողովակին պատերին վրայ. ըսել է թէ քաթողական շերտը իր ուղղագիծ բնթաղքը թողնելով ազեղ կը ձևացնէ, որը այնքան աւելի պրկուած կը լինի, որքան ելեկտրական ճնշումը զօրաւոր է:

Քաթողական ճառագայթները իրենց հանդիպած մարմիններին վրայ մերկնական, բխիական, լուսեղէն և ջերմական շատ նշանաւոր ներգործումներ կ'ընեն: Մի շարժական արգելք, օրինակի համար մի փոքրիկ անիւ, որը խողովակին մէջը զրուած լինի, անոնց ազդեցութեան տակ կը սկսի դառնալ եքսթողէն հեռանալ միանգամայն: Մարմինների մեծ մասը կ'այլալի երբ անոնց հանդիպելու գծրաղղութիւնն ունենայ: Նոյնիսկ սրուակին ապակին իր խորութիւնների մէջ այլալիւով, այն է՝ վերածուելով, յատկանշական (caractéristique) դոյն կը ստանայ: Մարմիններէն շատերը նմանը չը տեսնուած սաստկութեամբ փոսփորափայլ կը դառնան անոնց ազդեցութեան տակ. տեսանք արդէն թէ սրուակին ապակին կանանչ լոյս կ'արձակէր: Կաւիճը անոնց ազդեցութեան տակ նարնջագոյն լոյս կ'արձակէ, ազամանդը՝ ընդհանրապէս կանանչ, սուտակը՝ կարմիր, կրածինի ֆլուօրիւրը՝ մանիշակագոյն, բարիումի պլատինոսիանիւրը՝ գեղին-կանանչ, բիւրեղը՝ կապոյտ, եայն: Ոչ նուազ զօրաւոր է անոնց ջերմական ազդեցութիւնը. արգարե երբ գոլաւոր քաթողի միջոցաւ կենտրոնացնենք անոնք պլատինի մի թերթի վրայ, սա հրաշէկ կը դառնայ, նոյնիսկ կը հալի: Եթէ հրաշէկ դարձած

կամ մասամբ հալած պլատինի թերթը մօտէն քննենք, կը տեսնենք որ անհամար փոփոխներ ունի, իբրեթէ գորտուր հարուածներ բնորոշած լինէր: Ազամանդը անոնց ազդեցութեան տակ երեսէն կը սկսայ, ինչ որ 3600 աստիճանի մօտ ջերմութիւն կը նշանակէ, որը անշուշտ բարձրագոյն չափը լինելէ հետի է:

Ի՞նչ են սակայն քաթոգական ճառագայթները: Երկար վիճաբանութիւններէ հտք, փորձերն այսօր վերջնականապէս ապացուցած կը թւին որ անոնք քաթոգէն նետուած նիւթի ժխտապէս ելեկտրացած մասնիկներ են, և ոչ թէ ելեկտրական թրթռացումներ, որպէս են լուսեղէն ճառագայթները և ուրիշներ: Անոնց ժխտապէս ելեկտրացած լինելը Մ. Պերրենի փոփոխութիւնի կերպով ապացուցուած է:

Մ. Ժ. Թոմսընի և ուրիշ բնագէտներէ հանձարեղ փորձերը ցոյց կու տան այդ մասնիկները մէկ վայրկեանի մէջ 40,000 քիլոմէտրի մօտ, այսինքն լոյսի արագութեան մէկ տասներորդէն քիչ աւելի արագութիւն կը ճանապարհորդին: Տրուած լինելով անօտարցումի աստիճանը, այդ արագութիւնը Լմբրեյի է, քանի որ խողովակին մէջ դանուող կազի փոքրաթիւ մասնիկները աղատօրէն շարժելու ահագին, անսահման գալա ունին իրենց արամադրութեան տակ: Անոնք են որ իրենց բնահարումովը առաջ կը բերեն մեր վերը տեսած ներգործութիւնները:

Սակայն խնդիրն այսքանով չը լուծուիր. ի՞նչ են նոյնիսկ այդ մասնիկները: Քաթոգական ճառագայթները յատկութիւնները քննարկելիս անկախ են գործածուած ելեկտրոդներէ և կազին բնութենէն, ինչպէս և աղակիին տեսակէն: Ըսել է թէ անոնց ծնունդ տուող պատճառը կամ ճառագայթող նիւթը միշտ միևնոյնն է: Արդեօք տիեզերական կամ նախնական նիւթին հանգէտ կը դանուինք: Այս յանգուցն ուսումը բնելէ առաջ բանաւոր է տեսնել թէ այդ մասնիկները արդէն ծանօթ մարմինի կամ տարրի չեն վերաբերեր: Մանրակրկիտ գննութիւններ մասնաւոր ըրած են միշտ ջրածինի ներկայութիւնը քաթոգական ճառագայթներ արտադրող ամէն սրտակի մէջ, առանց բացառութեան, ինչ որ ալ լինի գործածուած կազը, ինչ որ ալ լինին ձեռք առնուած զգուշութիւնները: Գիտենք նաև թէ երբ մի սրտակ այլեւ անկարող է գործելու, անոր համար որ անօտարցումը սրտեալ չափէն վեր է կամ վար, կը բաւէ պլատինի դրանիկ միջոցաւ մի քիչ ջրածին մաքնել կամ գաւրս հանել, որպէսզի սրտակը նորէն կարենայ գործել: Այս և առկաին ուրիշ բաղաժաթիւ իրողութիւններ իրաւունք կու տան ըսելու որ քաթոգական ճառագայթների ծնունդ տուող պատճառն են ջրածինի մասնիկները կամ չամանգաղները, որոնք,

քաթողէն ժխտապէս երկարանալով, անկէ ուժգին կերպով կը նկատուին ահագին արագութեամբ:

Ջրածինի ճառագայթող մասնիկներին արագութեան և փոխադրած երկարաւանութեան չափերը, փոքր հաշիւներէ վերջ, ցոյց կու տան թէ անոնց զանդուածը (masse) սովորական ջրածինի զանդուածէն (որը մեզ ծանօթ ամէնէն փոքրն է) հազար անգամ փոքր է: Կան գիտուններ որոնք չորրորդ կամ շաւանդաղային վիճակ կը կոչեն նիւթի այս վերջին աստիճան բաժանեալ վիճակը:

Քաթողական ճառագայթներն ալ, արեւին լոյսին նման, զանազան ճառագայթներէ կը բաղկանան: Թէև թափանցելու մեծ կարողութիւն չ'ունենան, առանց դժուարութեան կ'անցնին ալիւմինիւմի բարակ թերթին մէջէն, այնպէս որ եթէ սրուակին վրայ բացուած ծակը մի այդ տեսակ թերթով փակենք, ասոր մէջէն դուրս կրնան ելնել քաթողական ճառագայթները, որոնք այլևս Լէնարեան կը կոչուին: Ասոնք կրնան նոյնիսկ պարալին մէջ ճամբորդել, և քաթողականների միւս բոլոր ներգործութիւններին հետ, երկարացած մարմինները կը պարօքեն կամ կը չեղոքացնեն, յազեցած շողիները կը խտացնեն, օդի բաղադրութիւնը կը փոխեն, թթուածինը մասամբ օզօնի (ozon) վիճակին մէջ դնելով:

Լէնարեան ճառագայթները ճառագայթող նիւթի բացասորդութեան հակառակ էին, արդարեւ ջրածինի այնքան փոքր մասնիկները, ուժգնօրէն նկատւած քաթողէն, կրնան անցնել ալիւմինիւմի թերթին ծակախրքներէն:

*
* *

Քաթողական ճառագայթների յատկութիւնների ամէնէն նշանաւորը, հակառակ այնքան խուզարկողների, մանաւանդ Սըր Ու. Կրուքսի հանձարեղ փորձերին և խորաթափանց զննութիւններին, թաղուն մնացած է մինչև 1895-ի վերջերը: Մ. Ռէօնտլէնի վիճակուած էր անոր գիւտը ընելու փառքը:

Ահա թէ ինչպէս տեղի ունեցած է Ռէօնտլէնեան ճառագայթների գիւտը: Մ. Ռէօնտլէն, քաթողական ճառագայթների վրայ կատարած ուսումնասիրութեան ատեն, երբ մի անգամ խաւաքարտէ մի տուփի մէջ փակած էր կրուքսեան սրուակը, զարմանքով տեսաւ որ մօտը գտնուող բառիումի պլատինաւանի վրէ կազմուած մի լուսարգել (écran) ֆոսֆորաւալ կը դառնար, երբ սրուակը գործէր: Բնականաբար ոչ քաթողական ճառագայթները, ոչ ալ սրուակին ֆոսֆորաւալութիւնը կրնային

պատճառ լինել այս նոր ու բոլորովին խորհրդաւոր երևոյթին, քանի որ անոնք խաւարարտէն կ'ընդմիջուէին: Ուրիշ անտեսանելի ճառագայթներ էին տրեմն որ, անցնելով խաւարարտին մէջէն, կը զրդւէին լուսարդիկին ֆոսֆորափայլութիւնը:

Նոյնիսկ վերիվերոյ քննութիւն ցոյց տուաւ իսկոյն թէ այդ ճառագայթները, որոնք ծնունդ կ'անէին սրուակին՝ քաթթողական ճառագայթներէն ընդհարուած՝ մասէն միայն, ուղիղ զիծով ճամբայ կ'ընէին, լոյսին համար աղօտ մարմինների շատերէն կը թափանցէին, և բոլորովին կը տարբերէին մինչև այն ատեն ծանօթ տեսանելի և անտեսանելի ճառագայթներէն, լիւնին լուսեղէն, քաթթողական, ելեկտրական, հայլն:

Մ. Ռէօնտկէն իրենց բնութեամբ բոլորովին անձանօթ և խորհրդաւոր այս ճառագայթները X անուանով միրտեց: Այսօր սակայն, եօթը տարուան յարատե ու յամառ ճիգերէ վերջ, շատ բան զիտեց անոնց վրայ, որով, առանց զաղբելու մի հրաշալիք լինելէ, մեծապէս կորուսած են իրենց հին խորհրդաւորութիւնը: X-ը եթէ ոչ տակաւին A-ի, զոնէ Ռէօնտկէնեան անունին տեղի տուած է, ինչ որ պարզապէս արգարութիւն է:

Ամէն մարմին, առանց բացառութեան, քաթթողական ճառագայթներէն ընդհարուելով X ճառագայթների ծնունդ կուտայ: Արդէն տեսանք թէ մարմինների մեծ մասը առնց աղբեցութեան տակ լուսատու կամ ֆոսֆորափայլ կը դառնային: Սկիզբները այնպէս կարծուեցաւ թէ ֆոսֆորափայլ զարծող մարմինները միայն կարող էին X ճառագայթներ արձակել, զաղափար որ թէի անձուկ, զեղեցիկ զիւտերի դուռ բացած է: Ըսել է թէ մարմիններէն շատերը քաթթողական ճառագայթների ոյժը կը ձեւափոխեն մասամբ տեսանելի, այն է՝ լուսեղէն, մասամբ ալ անտեսանելի ճառագայթների. մինչդեռ ուրիշներ, փոքր թիւով, որոնցմէ է պլաթինը, միայն անտեսանելի ճառագայթներէ կը ձեւափոխեն այն:

Ռէօնտկէնեան ճառագայթներն արտադրող սրուակը, հաւկառակ իր անունը փոխելով ալիս tube focus կոչուելուն, մի կրաքանան սրուակ է, որի երկու ելեկտրոդները, ընդհանրապէս հարթ երեսով և պլաթինէ կաղմուած, միմեանց մօտ կը զըտնուին:

Ռէօնտկէնեան ճառագայթների յատկութիւնները բազմաթիւ են, որոնց ամէնն ալ սակայն նոր չեն: Անոնց անտեսանելիութիւնը, ինչպէս և անոնց թափանցելու կարողութիւնը, բնաւ վարմացնելու բնութիւն չ'ունին բնագիտները, որ անքան ուրիշ անտեսանելի և տարբեր աստիճանով թափանցող ճառագայթների հետ զործ ունին չարունակ: Գիտեմք արդէն թէ մեր

աչքերը, բնագիտական տեսակետով, չառ տկար և անկատար
գործիքներ են, և թէ անհամար ճառագայթներ անտեսանելի կը
մնան մեզ:

X ճառագայթները մեծապէս թափանցող են. անոնց թափանցողութիւնը սերտ առնչութիւն ունի նիւթին իսկութեան հետ: Թեթիւ բարմիւնները, ինչպէս են թուղթը, սև թէ ճերմակ, փայտը, սովորական ապակին, խաւարարարը, միսը, կայլն, ուր նիւթը համեմատաբար անօտ է, թափանցիկ են անոնց առջև. այս մարմինների մէջէն X ճառագայթները այնքան դիւրութեամբ կ'անցնին, որքան զիւրութեամբ կ'անցնի լոյսը ապակիէն: Մինչդեռ ծանր մարմինները, ուր նիւթը խիտ է, աւելի կամ նուազ անթափանց են. այսպէս են մետաղները, ոսկորը, բիւրեղը, կայլն: Մետաղների մէջ ալիւմինիումը, որ համեմատաբար թեթիւ է, քիչ-չառ թափանցիկ է, մինչդեռ կապարը, ամենածանր մետաղներէն մինը, գրեթէ բոլորովին ազօտ: Կապարին ներկայութիւնն է պատճառ, որ բիւրեղը անթափանց է X ճառագայթների հանդէպ: Այսպէս ուրեմն մէկ կողմէն կը գտնենք թուղթը, փայտը, խաւարարար, միսը ազօտ լոյսին համար, թափանցիկ X ճառագայթներին հանդէպ, միւս կողմէն՝ բիւրեղը թափանցիկ առաջինին համար, ազօտ վերջիններին հանդէպ: Այս կէտն ալ սակայն զարմացնելու կարող է. արդարեւ գիտենք թէ այսինչ լուսնոյն ճառագայթին համար թափանցիկ մի մարմին մի ուրիշի կամ ուրիշների համար բոլորովին ազօտ է: Այսպէս, կարմիր ապակին միմիայն կարմիր ճառագայթների համար թափանցիկ է, կանաչը՝ միայն կանաչների համար կայլն: Նաև աղուծակը (selgemme) որ բոլորովին թափանցիկ է լուսնոյն և ջերմական ճառագայթների հանդէպ, ազօտ է անդրամանիշակագոյնների համար, մինչդեռ բնածուխի ծծմբուկը (sulf. de carbone) բոլորովին հակառակ յատկութիւն ունի:

X ճառագայթները միշտ ուղիղ գիծով կը ճամբորդին, ոչինչ կարող է չեղեցնել անոնք, ոչ իսկ մագնիսը: Կամ այն է որ իրենց շիտակ ճամբան կ'երթան և կամ բոլորովին կ'աբղեւլուն, լայց երբէք իրենց ուղիղ ճամբէն չեն չեղեր: Հայելինների, այսինքն հորթ երեսների հանդիպելով չեն անդրադառնար, ոչ ալ պրիսմակէ անցած ատեննին կը բեկանին, ինչպէս կ'ընեն լուսնոյն, ջերմական, էլեկտրական և, զոնէ առ երևոյթս, քաթուղական ճառագայթները: Ելեկտրականութիւն չ'ունին, սակայն, զարմանալի բան, էլեկտրացած մարմինները կը պարպեն՝ օդը հաղորդիչ զարմանելով, ճիշտ անդրամանիշակագոյնների նման: Մագնիսականութենէ բնաւ չեն ազդուիր. մարմինները Փոռփո-

բաժնիքը կը դարձնեն, լուսանկարչական պլաքները վրայ կ'աղղեն արեւին լոյսին պէս, մի կէտ որը մեծապէս կը զլուրացնէ անոնց ուսումնասիրութիւնը. միայն թէ որովհետեւ անկարելի է մի որեւէ դործիքով անոնք անփոփել, կետրոնայնել կամ զուգահեռական դարձնել, լուսանկարները որոշ չրջազիծեր չեն տնկնար:

X ճառագայթներն ալ իրենց ծնունդ կու տան ուրիշ ճառագայթների. արդարեւ ամէն մարմին անոնցմէ բնագործելով, փոսփորափայլ դառնայ կամ ոչ, երկրորդական կամ, Մ. Սանեաքէ մանրամասն կերպով ուսումնասիրուած լինելուն պատճառաւ, Սանեաքեան կամ S կոչուած ճառագայթներ կ'արձակէ: Այս վերջինները X ճառագայթների և քաթոդակնների խառնուրդ լինել կը թւին, մասամբ մագնիսէն կը շեղին, ժխտական ելեկտրականութիւն և շատ տկար թափանցողութիւն ունին, մասամբ ալ մագնիսէն չեն շեղեր, ելեկտրականութիւն չ'ունին ու մեծապէս թափանցող են: Երկրորդական ճառագայթներն ևս իրենց կարգին երրորդականների ծնունդ կու տան:

X ճառագայթներն ալ, քաթոդականներին և լուսեղէններին նման, բաղմատեալ են, ինչպէս հաստատած է Մ. Պընուս. ինչդիրը այսպէս իր չահեկանութեան չափ ալ բարդ կը դառնայ:

X ճառագայթների կիրարկումները գրեթէ ամէնին ծանօթ են: Շատեր տեսած են անոնց միջոցաւ ամուռած լուսանկարները ձեռքի, բազուկի, կտրծրի կամ քսակի ներսը ցուցադրող: Երբ այդ ճառագայթները արտադրող մի սրտակի առջի գննք մեր ձեռքը կամ մարմնինն որեւէ մի մասը, ասոր ետին ալ լուսանկարչական պլաքը, որը սե թուղթով պատուած լինի, ցուցադրուած մասին ոսկորները, մետաղները, — մատանի, բանալի, չղթայ, ժամացույց, դրամ, կայլն, — ընդհատելով ճառագայթները չեն թողներ որ ասոնք սղղեն զգայուն պլաքին վրայ, մինչդեռ միտերը, գնդերները, գրեթէ բոլորովին թափանցիկ, ճամբայ կու տան անոնց, որոնք քիմիական կերպով կ'աղղեն պլաքին վրայ, ուր, սովորական դործողութիւններէն վերջը, պիտի տեսնենք ոսկորներն ու մետաղները մութ գոյնով, չրջապատուած միանունքների թեթի մշուշովը: Այս ուսումնասիրութեան սկիզբը տեսանք թէ որքան մեծ ծառայութիւններ կը մատուցանեն և սակաւին մատուցանելու կարող են մեզ զբաղեցնող ճառագայթները բնագործութեան բժշկութեան և վիրաբուժութեան մէջ: Մաքսատունների մէջ ալ մարդ անոնցմէ կ'օգտուի, առանց բանալու հակերի և ծրարների ներսը գննելու համար:

Ի՞նչ է X ճառագայթների բնութիւնը, ահա հիմնական

հարցումը: Արեգակնային ճառագայթներին նման են, թէ՛ քաթոդականներին, ուրիշ բառերով, եթեքական թրթռացումներէ՛ յառաջ կու գան, թէ՛ նիւթական մասնիկներէ: Պէտք է ըսել թէ երկու կողմն ալ մեծանուն պաշտոններ կան, սակայն վերջերս Մ. Բլոնտրլլօի հանձարեղ փորձերը մեծապէս ոյժ կու տան առաջիններին, արեւք X ճառագայթները իբրեւ անդրա-անդր-բամանիչակազոյն ճառագայթներ կ'ընդունին:

X ճառագայթները քաթոդականներէն հիմնովին կը տարբերին, որովհետեւ ասոնց նման երկտրացած չեն, ոչ ալ մագնիսականութենէ կ'ազդուին: Լուսեղէն ճառագայթներէն ալ հիմնովին կը տարբերին, կամ զոնէ կը աարբերէին մինչև մօտեքս, որովհետեւ ասոնց յատուկ երեոյթները յառաջ չէին բերեր, ինչպէս են ցոլացում,՝ բեկում (réfraction), խոտորում (diffraction) և բևեռացում (polarisation): Բայց ակսոթիւնը ցոյց կու տայ թէ անդրա-անդրամանիչակազոյն ճառագայթները ոչ ցոլացում, ոչ ալ բեկում պարտին ու կարող են ունենալ, այլ միայն խոտորում և բևեռացում: Ստուգիւ ալ Մ. Մ. Հակայի և Ուինտի, ինչպէս և Մ. Ջոմըրֆէլտի փորձերը ցոյց կու տան խոտորումի հետաքրքրաշարժ երեոյթների գոյութիւնը, իսկ Մ. Բլոնտրլլօ գեռ վերջերս կը հաղորդէր Փրանսական գիտութեանց Ակադեմիային թէ X ճառագայթների խորձին մէջ կը գտնուին թրթռացումներ, որոնք բևեռացած են, բևեռացած վիճակի մէջ ծնունդ կ'առնեն: Միևնայն գիտունը, նոյնպէս քիչ առաջները, յաջողած է չափել, խիստ հանձարեղ փորձերի միջոցաւ, X ճառագայթների արագութիւնը, որը հաւասար գտած է երկտրակաւն, հետեւաբար լուսեղէն ճառագայթների արագութեան, այսինքն մէկ վայրկեանի մէջ 300000 քելօմէտրի: Երկտրական ճառագայթների արագութեան հաւասար լինելը լուսեղէնների արագութեան, զարձեալ նոյն մեծանուն գիտունին փորձերին կը պարտինք: Այսպէս ուրեմն կ'երևայ այն պատուարը, որ կը բաժնէր X ճառագայթները լուսեղէններէն, և ընդհանրապէս եթերի թրթռացումներէն:

Միւս կողմանէ, Մ. Լէնար յաջողած է մինչև հիմայ ճանչըցումէն աւելի կարճ ալիքներով անդրամանիչակազոյն ճառագայթներ արտադրել որոնք շատ կը մօտենան X ճառագայթներին:

Այս ամէն նկատումները, տակաւին բազմաթիւ ուրիշների հետ, իրաւունք կու տան ընդունելու թէ X ճառագայթները պարզապէս խիստ արագ թրթռացումներէ կաղմուած են, յառաջ եկած՝ քաթոդականների ուժգին ընդհարումէն:

Այսպէս կը դանենք հիանալի միութիւնը նոյնքան հիանալի զանազանութեան մէջ:

* *
*

Անտեսանելի ճառագայթների թւումն մասնաւոր վերջացրնելու համար մեզ կը մնայ խօսել նաև Բէէկքըռէլեան ճառագայթների վրայ, որոնք մասամբ քաթոդականներին, մասամբ ալ Ռէօնտկէնեաններին կը մօտենան:

X ճառագայթների հիանալի զիւտէն մի ամիս վերջը, Մ. Հ. Պուէնկառէ, Սորբոնի ժաթեմատիկական բնագիտութեան մեծանուն ուսուցիչը, հետեւեալ զիտողութիւնը կ'ընէր. «Կրօքսի խողովակին ազակին, ընդհարուելով քաթոդական ճառագայթներէն, դունաւոր լոյս կ'արձակէ, այսինքն Ֆիւօրէսան կը դառնայ, այս ֆիւօրէսանին կ'ընկերանայ Ռէօնտկէնեան ճառագայթների ըլխումը: Կարելի է հարցնել թէ արդեօք բոլոր այն մարմինները, որոնց ֆիւօրէսանը սաստիկ է, չեն արձակեր, լուսեղէն ճառագայթների հետ նաև Ռէօնտկէնեան ճառագայթներ, ինչ որ ալ լինի անոնց ֆիւօրէսանին պատճառը»: Երբ զիտուն պրոֆէսսորն այս տողերը կը գրէր, դանում չէր տակաւին որ ֆիւօրէսանը անհրաժեշտ պայմանը չէր Ռէօնտկէնեան ճառագայթների ծագումին: Արդարև տեսանք արդէն թէ պլատինը ընդհարուելով քաթոդական ճառագայթներէն առանց լոյս արձակելու, այն է՝ ֆիւօրէսան դառնալու, X ճառագայթների ծնունդ կու տայ:

Այս զիտողութիւնէն քիչ վերջը մի քանի բնագէտներ զիտեցին որ ֆոսֆորալիւմինայ մարմիններէն ոմանք, ինչպէս զինկի և կրածինի ծծմբաւորները՝ (sulf. de zinc և sulf. de calcium), լուսանկարչական պլաքների վրայ տպաւորութիւն կ'ընէին, նոյնիսկ լոյսին հանդէպ բոլորովին ազատ սև թուղթի մէջէն: Պ. Բէէկքըռէլ, որ մեծ բաժին ունեցած է այս նորութիւնների զիւտին մէջ, նմանօրինակ փորձեր ընելով ուրանիում մետաղին աղերին վրայ, որոնցմէ ոմանք խիստ զեղեցիկ ֆիւօրէսանա մ'ունին, միևնոյն արդիւնքներին յանդեպաւ: Ուրանի բաղադրութիւնների վրայ կատարած աշխատութիւնների շարունակութեան մէջ տեսաւ սակայն որ իր զիտած երևոյթը նախորդներին նման չէր, և թէ նմանութիւնը աւերակոյթս էր միայն: Արդարև, եթէ ուրանի բաղադրութիւնները պլաքների վրայ տպաւորութիւն կը ձգեն, ազատ մարմիններ մէջէն թափանցելով, այս երևոյթն անկախ է բաղադրութեան ֆիւօրէսանսէն, այնպէս որ այդ մարմինները ֆիւօրէսան լինին կամ ոչ,

միշտ միևնույն ազդեցութիւնները կ'ընեն, և թէ մետադը, այն է՝ ուրանիումը, չատ աւելի գործոն է: Բայ աստի, մինչ առաջիկաներին համար լոյսն անհրաժեշտ է,—որպէսզի ղինկի և կրածինի ծծմբաւորները մութին մէջ լոյս արձակեն, այսինքն փոսփորափայլ զառնան, անհրաժեշտ է որ մի քիչ առաջ լոյսի ազդեցութեան ենթարկուած լինին. իրենց ամբարած ճառագայթները, կամ ոյժն է որ վերջը մութին մէջ դուրս կու տան,— ուրանիումի և ասոր աղերին համար բոլորովին անպէտ կը դառնայ, քանի որ տարիներ ամբողջ միշտ մութին մէջ այդ մարմինները շարունակ գործոն կը մնան, այսինքն պլաքների վրայ կ'ազդեն:

Բոլորովին նոր երևոյթ էր որ ի լոյս կու գար:

Այս գեղեցիկ աշխատութիւնէն վերջ բնական էր հարցնել թէ միայն ուրանիում մետաղն էր որ այդ խորհրդաւոր յատկութիւնն ունէր: Բաղմաթիւ բնագէտներ ինկան այս հարցին ետեւն և ուսումնասիրեցին, այս տեսակէտով, անհամար պարզ և բաղադրեալ մարմիններ: Տիկին Կիւռի և Մ. Շմիտի փորձերը ցոյց տուին թէ մի ուրիշ մետաղ ալ, թորիւմը, նոյնատեսակ յատկութիւններ ունէր:

Այս մետաղներին և անոնց բաղադրութիւններին արձակած ճառագայթները Բէկքըռէլեան ճառագայթ, և անոնք արձակող մարմիններն ալ ճառագայթագործոն (radioactif) կոչուեցան:

Տկն. Կիւռի շարունակելով իր աշխատութիւնը բաղմաթիւ հանածոների վրայ, տեսաւ որ անոնցմէ շատերը ճառագայթագործոն էին: Ի մէջ այլոց, pechblende կոչուած հանածոն, որ ուրանի օքսիդին հետ կը պարունակէ պղինձ, պիզմութ, դառիկ (arsenie), ծաբբաքար (antimoine), կապար, եայն, մասնաւորապէս նշանակելի էր իր գործունէութեան սաստկութեամբը: Շատ վաւուր և դժուարին միջոցներով յիշեալ գիտուն ասիկինը իր գիտուն ամուսինին հետ այդ մետաղներն իրարմէ անջատելով, տեսաւ որ ուրանի անջատումէն ետքն ալ մնացած մասը սաստիկ ճառագայթագործոն էր, իրեն ընկերացող և ի դործ դրուած քիմիական միջոցներովը անջատելն անկարելի եղող մի օտար մարմինի չորհիւ, քանի որ հասարակ պիզմութը այդ տեսակ յատկութիւն չ'ունի բնաւ: Տարակոյս չը կար թէ մի նոր տարրի հանգէպ կը գտնուէին: Այդ ենթադրական տարրը Պօլօնիում կը կոչուի:

Բոհեմիոյ Եօհակիմոտալի կայսերական հանքերէն ելած pechblende-ին վրայ ալ խուզարկութիւններ կատարելով, Տէր և Տիկին Կիւռի, 1899-ին, մի ուրիշ տարր ևս գտան, որ քա-

ընդամենը մեծագույն կ'ընկերանար, և որ քլորոսկի ձևին տակ 50,000 անգամ աւելի գործոն էր, քան ուրանիում մետաղը: Այդ նոր մետաղը, քլորոսկի վիճակին մէջ ձեռք բերուած, և Մ. Դըմար-սէյէն ալ լուսապատկերային կերպով (spectroscopiquement) յատկանշուած, Ռադիոլում անունը կը կրէ:

Վերջապէս Մ. Դըմարսէն, միևնույն միջոցներով, նոյն տարին, մի ուրիշ գործոն բաղադրութիւն գտած է, որը խիստ հաւանականաբար թորիումի մօտեցող մի տարր կը պարունակէ, որի Ակտինիում անունը տուած է:

Այս հրաշալի մարմինների վրայ կատարուած անընդհատ ուսումնասիրութիւններէն կը հետևի թէ ուրանիումը և թորիումը իրենց ճառագայթագործունէութիւնը կը պարտին, հաւանականաբար, վերոյիշեալ երեք տարրերէ մէկին ներկայութեան, այնպէս որ պօլօնիումը, ապիումը և ակտինիումը կը ներկայայնեն առաջմ նիւթի գործոն, ապրող, ճառագայթարձակ երրորդութիւն:

Ճառագայթագործող մարմինների զիւտի այս հակիրճ պատմութենէն վերջ, տեսնելը անոնց արձակած ճառագայթների բնութիւնը:

Իէկըրուէիւան ճառագայթները ինքնին անտեսանելի են, միայն աղբիւմի բաղադրութիւններն են որ մութին մէջ լուսաւոր են, և այս հաւանականաբար անտեսանելի ճառագայթների ըրած ներգործութեան շնորհիւ:

Ճառագայթագործոն մարմինների արձակած ճառագայթները տույժմ երեք տեսակ են. 1-ն անոնք որ մագնիսականութենէ կ'ազդուին ու կը շեղին, 2-ն անոնք որ մագնիսականութենէ չեն ազդուիր և նուազ թափանցող են, 3-ն անոնք որ մագնիսականութենէ չեն ազդուիր, և մեծապէս թափանցող են: Առաջինները յարկնաման են քաթոդական ճառագայթներին, երրորդները X ճառագայթներին: Ռադիումն է որ անոնց երեք տեսակն ալ միաժամանակ կ'արձակէ, մինչդեռ ուրանիումը, զրեթէ միայն առաջինները, իսկ պօլօնիւմը երկրորդ տեսակը, մի քիչ ալ առաջիններէն:

Մագնիսէն չեղող ճառագայթները քաթոդականներին նման ժխտական ելեկտրականութիւն կը փոխադրեն, այնպէս որ այն մարմինները, որոնք անոնցմէ կ'ընդհարուին, ժխտապէս կ'ելեկտրանան, մինչդեռ ճառագայթագործոն աղբիւրը զրական ելեկտրականութիւն կը ստանայ: Անոնց արագութիւնը քաթոդականների հետ միևնույն մեծութիւնն ունի: Օդը ելեկտրականութեան հազարիչ կը դարձնեն, առտուկ կամ նուազ ուժգնութեամբ ազօտ մարմինների մէջէն կը թափանցին: Մագնիսէն

չեզոյ ճառագայթներն ալ բարդ են, և անոնք որ նուազ կը չեզեն աւելի մեծ թափանցողութիւն ունին: Ամէնքն ալ լուսանկարչական պլաքների վրայ խոր ապաւորութիւն կ'ընեն: Մարմինների շատերը լուսատու կը դարձնեն: Այս վերջին երկու յատկութիւնները մեծապէս կը նպաստեն անոնց ուսումնասիրութեանը: Եւ եթէ բնւո՞թ է մեծապէս չեզելի ճառագայթները, որոնք նուազ թափանցող են, զարնուելով մի արգելքի կը ծծուին անկէ և նոր, կամ երկրորդական ճառագայթների աղբիւր կը դարձնեն այն, թւած կը լինի մագնիսականութենէ չեզոյ ճառագայթների զլխաւոր յատկութիւնները:

Երկրորդական ճառագայթներն եւ, իրենց ծնունդ առողջների նման, մագնիսէն կը չեզին. անոնք կ'անհետանան երբ իրենց ծնունդ առողջ պատճառը զազրի աղբիւրէ:

Մագնիսէն չի չեզոյ ճառագայթներէն մեծապէս թափանցողները շատ տկար կերպով կ'ազդեն լուսանկարչական պլաքների, ինչպէս և օդին վրայ, որոնց մէջէն դիւրութեամբ կ'անցնին, հետեւաբար որոնցմէ շատ քիչ քանակութեամբ կը ծծուին: Անոնց արագութիւնը զրեթէ հաւասար է X ճառագայթների, հետեւաբար լոյսի արագութեան: Անոնք ալ մարմինների ֆոսֆորափայլութիւնը կը գրգռեն: Զօրաւոր կերպով ծծող մի արգելք անոնք կը փոխէ մասամբ երկրորդ տեսակին, այսինքն նուազ թափանցող, կամ ինչ որ միւնայն է, աւելի ծծող ճառագայթների: Այսպէս՝ մէկ սանտիմէտր հաստութեամբ մի կտարակայ թերթի մէջէն անցնող ճառագայթները, մեծապէս փոխուած նուազ թափանցողների, ուժղնութեամբ կ'ազդեն լուսանկարչական պլաքին վրայ, և միւս կողմանէ երկրորդական ճառագայթների ծնունդ կու տան:

Տէր և Տիկին Կիւռի, իրենց աշխատութիւնների մէջ, տեսան թէ մարմինները ռադիումի ազդեցութեան տակ ժամանակաւորապէս ճառագայթադործօն կը գտնային: Այս երեւոյթը կարելի է չփոխել երկրորդական ճառագայթադործունէութեան հետ, քանի որ առաջինը սաղիումի ազդեցութենէն վերջն ալ բաւական երկար կը տեւէ, մինչդեռ վերջինը պատճառին անհետացումին հետ անյայտ կը լինի: Թէև այս մակաձևալ ճառագայթադործունէութիւնն մանրամասն ուսումնասիրութեան ենթարկուած է, անոր վրայ կարելի է այստեղ ծանրանալ:

Մ. Կիւռի և Մ. Լաբուզ այս տարուայ սկիզբները կը ծանուցանէին թէ ռադիումի աղերը նաև ահադին քանակութեամբ ջերմութիւն կ'արտադրեն անընդհատ. մէկ գրամ ռադիումը մէկ ժամուան մէջ գրեթէ 100 կալորի ջերմութիւն, այսինքն

մէկ գրամ ջուրը 100 ատոման բարձրացնելու կարող ջերմութիւն կ'արտադրէ:

Ճառագայթագործոն նիւթին արձակած երեք տեսակ ազօտ ճառագայթներին քով, որոնք կը թափանցեն մետաղներէ, ապակիին և միկային մէջէն, կայ մի չորրորդ, որը կը զանուի թորիումի ճառագայթներին մէջ, և կարող է անցնել ոչ ապակիին և ոչ ալ միկային մէջէն: Այս վերջին ճառագայթները գըլխաւորաբար ժխտապէս ելկկտրացած մարմինները ճառագայթագործոն կը դարձնեն:

Ի՞նչ է սակայն ճառագայթագործունէութեան պատճառը, ուրիշ կ'առնէ ճառագայթագործոն նիւթը իր արձակած ոյժը: Այս հարցումները տակաւին որեւէ փորձառական պատասխան ստացած չեն, այնպէս որ ճառագայթագործունէութիւնը մի յոյժ խորհրդաւոր երևոյթ կը մնայ միշտ: Ֆորձառական պատասխանին չգոյութիւնն իսկ գուռ բացած է բազմաթիւ տեսականերէ: Տարակոյս չը կայ որ ճառագայթագործոն մարմինը իր ոյժը փոխ կ'առնէ, բայց թէ ի՞նչպէս և ուրիշ, չը գիտենք: Ոմանք կ'ընդունին, թէ ճառագայթները կազմուած են նիւթէն դէն ամենափոքր մասնիկներէ, որոնք ժխտապէս ելկկտրացած են, դռնէ մագնիսէն շեղողները: Այս տեսութիւնը շատ հաւանական կը թուի, երբ նկատի առնենք թէ անոնք յատկութիւններով յարենման են քաթոդականներին, որոնց նիւթական լինելը գրեթէ մի ստուգութիւն է: Եւ ինչպէս որ քաթոդականները ծնունդ կու տան X ճառագայթների, նոյնպէս ալ ճառագայթագործոն մարմինների արձակած քաթոդականները կրնան արտադրել վերջիններիս նման ճառագայթներ: Կը սլակով ուրեմն ճառագայթող մարմինին ծանրութիւնը, ոչ, գոնէ մեր կշեռքների համար, բայց պէտք է ըսել թէ Մ. Կլուսիի և ուրիշների տեսական հաշիւները ցոյց տուած են, որ ռադիումի գեղեցիկ և գործոն նմոյշն անգամ երկիւլիոն տարիների մէջ կրնայ կտրսնցնել միայն մէկ գրամ ծանրութիւն:

Միւս կողմանէ Մ. Հայզվայլըրը գտնուած լինել կը կարծէ որ ճառագայթագործոն մարմինին ծանրութիւնը կը նուազի, հետեալաբ կ'ըսէ, երկրի ձգողութիւնն է որ մատամբ կը փոխուի ճառագայթող ուժի: Մ. Հայզվայլըրի փորձերը նոր են ու անբաւական, և չեն համաձայնեցրել Բէկքըռէլի և Կլուսիի փորձերին հետ, որոնք ցոյց կու տան թէ միևնոյն ֆիզիկական և քիմիական պայմանների մէջ միշտ ճառագայթագործունէութեան սաստկութիւնը միևնոյնն է, հաստատ և անփոփոխ:

Կարելի է ընդունել թէ սաղիումի ուրիշ ճառագայթագործոն մարմինների արձակած ոյժը փոխ առնուած լինի արտա-

քին միջավայրին ջերմութենէն: Գիտենք թէ կան մարմիններ, որոնք որոշեալ աստիճանի մէջ տաքնալով՝ մութին մէջ լոյս կ'արձակեն, այսինքն Փոսփորափայլ կը դառնան. վերոյիշեալ մարմինները ջերմութիւնը փոխանակ լուսնոյն ճառագայթներէ՝ անտեսանելի թրթռացումներէ կը ձեւափոխեն:

Կարելի է նաև ընդունել թէ անոնց ոյժը ներքին պատճառէ յառաջ կու գայ, որը կրնայ լինել քիմիական կամ ֆիզիկական: Քիմիական հակազդեցութիւնների կը վերադրեն այն Դոսէ, Թըթըրֆօրդ և ուրիշներ, մինչդեռ Բէկքըռէլ և Ժ. Պէռոէն հիւլէների և անհատների քայքայումին կը վերադրեն այն: Մ. Բէկքըռէլ կ'ընդունի թէ ճառագայթադործոն մարմինների մասնիկները ինքնաբերաբար երկու մասերի կը բաժանուին, մէկը շատ փոքր, միւսը մեծ: Առաջինը իր փոքրութեան և թեթեւութեան շնորհիւ ահագին արագութիւն կը ստանայ, այնպէս որ գիւրին կը թափանցէ արդեւքները. մինչդեռ երկրորդը նուազ արագութեամբ կրնայ ընթանալ և մարմինները չը կրնար թափանցել: Նիւթին թաղուել ոյժն է որ այսպէս կը պակսի և պատճառ կը լինի ճառագայթադործունէութեան: Այստեղ մի շատ կարեւոր կէտ իսկոյն ուշադրութեան կը դարնէ. արդարև բոլոր ճառագայթադործոն մարմինները, Ուրանիումը, Թորիումը, Ռադիումը, Պօլօնիումը և Օկդինիումը մինչև հիմա ծանօթ տարրերի ամէնէն ծանրներն են: Միւս կողմանէ ասոնց ընկերացող և մակաձութեամբ ճառագայթադործոն դարձող տարրերը, կապարը, բարիումը իսկոյն ասոնցմէ վերջ կու դառն ճառագայթադործունէութիւնը յատուկ է այն մարմիններին, ուր նիւթը ամէնէն աւելի խիտ է, և զանդուածով մեծ: Այս տեսակէտով նիւթին իսկութեան հետ դործ ունենալ կը թւի ճառագայթադործունէութիւնը: Անտեղի պիտի չը լինէր հարցնել թէ արդեօք այդ մարմինները մի օր, թող լինի շատ հեռաւոր, կորսնցնելով պիտի լինին հասարակ տարրեր, և թէ արդեօք միւսներն ալ իրենց ժամանակին այդ վիճակէն անցած չեն: Յուսալի է որ մօտաւոր ապագայի մէջ այս յոյժ չահեկան հարցումների պատասխան տալը կարելի կը լինի: Պէտք է մոռնալ թէ մեզ զբաղեցնող խնդիրը տասը տարուան կեսնք ալ չ'ունի:

* *

Անտեսանելի ճառագայթների այս հատկեալ թւումն մասնցը մեզ բաղմալիւ ճառագայթների առջև դրաւ, անոնք սակաւ կրնան վերածուել երկու անջատ խումբի—քաղցրահամներին և ասոնց նմաններին, որոնք ժխտական ելեկտրականու-

թիւն ունին, մաղնիսէ կը չեղեն, չատ քիչ թափանցող են և կազմուած նիւթեղէն անհունապէս փոքր մասնիկներէ, և ունենան անհասանելի և ասոնց նմաններին, որոնք ելեկտրականութիւն չ'ունին, մաղնիսէն չեն չեղեր, թափանցող են, և կազմուած եթերական թրթռացումներէ:

Ճառագայթների այս երկու խումբերին միջև գտնուած անջրպետը կամ տարբերութիւնը բացարձակ չէ. արդէն Մ. Գօլդշտայն երևան բերած է ճառագայթներ—իր գտած անօդական ճառագայթներէն դատ,—որոնք այդ անջրպետը մասամբ կը լեցնեն: Յանդո՛ւն է միթէ հարցնել թէ ժխտական ելեկտրականութիւն կրող մասնիկները պարզապէս եթերի ծաւալներ չեն, որոնք ժխտական կոչուած արտայայտութիւնը կը կրեն: Այսպէս կը յանդինք նիւթին և եթերին միջև գտնուած առնչութեան. կարևոր և էական խնդիր, որի լուծումը պահուած կը մնայ ապագայի խորհրդաւոր ծալքերի, և հաւանականաբար անտեսանելի ճառագայթների ուսումնասիրութեան մէջ:

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

ՆՈՐ ՄՏԱՅՈՒԱԾ ԳՐԻՔԵՐ

- 1) Ա. Իսահակեան, «Բանաստեղծութիւններ», Բագու, 1903 թ.,
գինն է 1 ռուբլի:
- 2) Բժշկ. Վահան Արծրունի, «Աղջիկ», ա. հատոր, Թիֆլիս,
1903 թ., գինն է 60 կոպ.:
- 3) Յ. Դուրբախեան, «Ծանօթ պատկերներ», Ս.-Պետերբուրգ,
1903 թ., գինն է 75 կ.:
- 4) Մաքսիմ Գորկի, «Մտեր», թարգմ. Յ. Ստեփանեան, Շու-
շի, 1903 թ., գինն է 5 կոպ.:
- 5) Արզում Սիմօն, «Ճորաղէպներ», Բուսշուք, 1903 թ., գինն է
50 սնտ.
- 6) Թաթուլ Վանանգեցի, «Ոսկեդարեան հայերէնի ինդիրը»,
Կ.-Պ., 1903 թ., գինն է 50 կոպ.:
- 7) Ա. Չ., «Մեծ առաւօաը», 1903 թ., գինն է 25 կոպէկ:
- 8) Վ. Մամիկոնեան, «Վերջին երգեր», Բագու, 1903 թ., գինն
է 20 կոպ.:
- 9) «Տնական դաստիարակութիւն», անգլ. թարգմ. Պ. Ալեքսա-
նեան, Նիկոսիա, 1903 թ., գինն է 10 սանտ.
- 10) «Ատրպատականի հայոց հիմնական և Հայաստանեայց եկե-
ղեցու ծրական կանոնագրութիւն», Թաւրիզ, 1903 թ.,
գինն է 40 կ.:
- 11) Աղլային կրթարան-որբանոց ի Կիպրոս», Նիկոսիա,
1903 թ.:
- 12) «Տեղեկագիր հոգաբարձութեան ս. Լուս. աղգ. հիւանդանո-
ցի Զմիւռնիոյ», Իզմիր, 1903 թ.:
- 13) «Տեղեկագիր համաբաւուրթեան ս. Մեսրոպեան և ս. Հարի-
սիմեանց աղգ. երկսեռ վարժարանաց հոգաբարձութեան
1902—1903 տարեշջանի», Բուսշուք, 1903 թ.:
- 14) «Տարեկան տեղեկագիր Վիեննական Միջինարեանց վարժա-
րանին 'ի Կ.-Պոլլիս, 1902—1903», Վիեննա, 1903 թ.:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

նոր փոխարկայութիւն:—նոր կանոններ դժբախտ դեպքերից վնասուած բանութիւններին վարձատրելու մասին:—Քիֆիսի նստանգապետի որոշումը:—Փոռայի ծրարների մեղացորդների քաղումը:—«Правит. Вѣст.» Կիւնի անկարգութիւնների մասին:—Փոփոխութիւններ փնականների միմիստրական մեջ:—Կանոններ արհամարհան հողերի վրայ ապրող գիւղացիների եւ զաղրականների հողատիրութեան մասին:—Մեռնի օրհնութիւնը:—Կարգադրութիւններ մամուլի վերաբերեալ:

Բարձրագոյն հրամանով յուլիսի 30-ին հեռաւոր Արեւելքում կազմուած է առանձին փոխարքայութիւն, որի մէջ մըտնում են Մերձամուրեան (Приамурск.) զենեքաւ-նահանգապետութիւնը եւ Կվանտունեան երկիրը: Այդ կարգադրութեան իբրեւ հիմք են ծառայում այն զինուորական-քաղաքական նպատակները, որ ունի Ռուսաստանը հեռաւոր Արեւելքում, ուր Չինաստանի, Ճապոնիայի եւ Կորէայի հարեանութիւնը եւ եւրոպական մեծ պետութիւնների ձգտումները բարդ յարաբերութիւններ են ստեղծում: Փոխարքային յանձնուած է թէ քաղաքացիական կառավարչապետութիւնը, թէ գիւղամատիական յարաբերութիւնները հարեան երկրների հետ, եւ թէ խաղաղ Ուկրաինոսի նաւատորմի հրամանատարութիւնը: Հեռաւոր Արեւելքի առաջին փոխարքան ամենայն լիազօրութիւններով նշանակուած է ադմիրալ Ալեքսէեւը:

Այդ առիթով Կառավարիչ Սենատի անունով հրատարակուած է հետեւեալ Բարձրագոյն Անուանական հրամանը. «Կայսրութեան արեւելեան ծայրերը կառավարելու բարդ խնդիրները զրգում են Մեզ հոգ տանել կազմելու իշխանութիւն, որի գործունէութեամբ

ապահովուէր այդ երկրի զարգացումը և տեղական կարիքներին անյետաձգելի բաւարարութիւն ապր: Այդ պատճառով բարիք համարելով Մերձամուրեան նահանգից և Կովնտունեան շրջանից առանձին փոխարքայութիւն կազմելը, հրամայում ենք մեր տեղապահին հետաւոր Արեւելքում 1) իւրացնել իրան հաւատացած երկրի քաղաքացիական կառավարութեան բոլոր մասերի բարձրագոյն իշխանութիւնը, վերցնելով այդպիսին մինիստրութեան իրաւասութիւնից: Նոյնպէս նրան է յանձնում բարձրագոյն հոգատարութիւն կարգապահութեան և ապահովութեան մասին այն տեղերի վերաբերմամբ, որոնք գտնուում են չինական արեւելեան երկրամասում ձեռքում. նոյնպէս մօտակայ հոգատարութիւն ունենալ սահմանին կից սուս աղգարնակութեան օգտի և կարիքների մասին: 2) Մինչև հետաւոր Արեւելքի նահանգները կառավարելու մասին օրէնքներ հրատարակելը փոխարքայի իրաւունքների սահմանները որոշել այն զլխաւոր հիմունքներով, որոնք գտնուում են 1845 թ. յունուարի 30-ին Կովկասեան փոխարքայութիւն կազմելիս հրատարակած հրովարտական փոխարքային ենթարկուած պետական հիմնարկութիւնները և պաշտօնակատար անձերը մինիստրութիւնների հետ յարաբերութիւն են ունենում միայն փոխարքայի միջոցով: 3) Հետաւոր Արեւելքի փոխարքայի իրաւասութեան տակ կենտրոնացնել այդ նահանգների գործերի վերաբերեալ քաղաքական յարաբերութիւնները հարնան պետութիւնների հետ: 4) Փոխարքային յանձնել իրաւաւ սկիզբնուած գտնուող բոլոր ծովային ոյժերի և նրան հաւատացած երկրում գտնուած ամբողջ զօրքի հրամանատարութիւնը: 5) Հետաւոր Արեւելքի զլխաւոր իշխանութեան կարգադրութիւնները ընդհանուր պետական նպատակների և մինիստրների գործունէութեան հետ համաձայնեցնելու համար հիմնել մի առանձին կոմիտեա Մեր նախագահութեամբ և Մեր հաւատով մասնակցութեան հրաւիրուած անձերի անդամակցութեամբ: 6) Գնեւերալ-աղիւտանա Ալեքսէեւին, որը սրանով նշանակուած է Հետաւոր Արեւելքի փոխարքայ, յանձնել իբրեւ Մեր ցուցմունքների լրացումն կազմել կանոններ Հետաւոր Արեւելքը կառավարելու մասին և այդ ենթադրութիւնները ներկայացնել Մեր հաստատութեանը: Կառավարիչ Սենատը տնօրինելու է պատշաճաւոր կարգադրութիւն այս բոլորը իրադրեւելու համար: Իսկականի վրայ Նորին Կայսերական Մեծութեան ձեռքով ստորագրուած է «ՆԻԿՈԼԱՅ». Պետերհոֆ, 1903 թ. յուլիսի 30-ին:

Հրատարակուած են Բարձրագոյն հաստատուած նոր կանոններ, որոնցով իրաւունք է տրուած գործարանական և հանքադորձական արդիւնաբերական հիմնարկութիւններին մէջ ծառայող բանուորներին որոշ վարձատրութիւն ստանալ այն զրգրազդ գէպքերի համար, որոնց զոհ են դառնում նրանք աշխատելու ժամանակ: Բանուորներին նոր կանոններով մերժուած է վարձատրութիւն տալ այն ժամանակ, երբ զժրադր գէպքերը առաջանում են բանուորների գիտաւորեալ չարակամութիւնից կամ կողմիտ անզգուշութիւնից: Գործարանատէրերի կողմից վարձատրութիւնը բանուորներին նշանակելու է որպէս նպաստ և որպէս կենսաթոշակ. նպաստ այն գէպքում, երբ բանուորը ժամանակաւորապէս կորցնում է աշխատելու ընդունակութիւնը, իսկ կենսաթոշակ այն գէպքում, երբ բանուորը ընդ միշտ զրկւում է աշխատելու ընդունակութիւնից: Նման գէպքեր գէպքի հետեանքը եղել է բանուորի մահը, նրա ընտանիքը իրաւունք է ստանում վարձատրութիւն պահանջելու գործարանատիրոջից:

Թիֆլիսի նահանգապետը կայացրել է հետեւեալ որոշումը. «1903 թւականի յուլիսի 26-ին, Թիֆլիսի նահանգապետս, համաձայն Կովկասեան կառավարչապետի՝ Թիֆլիս քաղաքի համար հրատարակած պարտադիր կանոնների, որոշեցի երեք ամսուայ բանտարկութեան ենթարկել հետեւեալ անձերին ոստիկանութեան պաշտօնեաների պահանջը՝ փողոցներում համախմբումներ չը կազմել՝ անկատար թողնելու համար.— 1) Գողովայ Սակվատիային, 2) Ղարիբով Գէորգիին, 3) Մին Աւալխանիին, 4) Գորգիշեւ Դաւթին, 5) Մերարով Բուզդանին, 6) Մարկարեւ Նանիին, 7) Սարգըսեան Արշակին: Առաջին երկու անձերի բանտարկութեան սկիզբը պէտք է համարել յուլիսի 24-ի երեկոյեան ժամի 8-ից, իսկ մնացած հինգ հոգւոնը յուլիսի 25-ի երեկոյեան ժամը 8-ից:

«Правительственный Вѣстникъ» լրագրում տպագրուած է կառավարչական հետեւեալ հաղորդագրութիւնը. «Յուլիսի 23-ին Կիւեւի նրկաթուղու արհեստանոցների բանուորները ժողովուրդեցին արհեստանոցներում, բայց գործադուլի պատճառով ձեռնամուխ չ'եղան աշխատանքների: Այս պատճառով ճանապարհի վարչութիւնը կախեց մի յայտարարութիւն, որով հրաւիրում էր աշխատել չը ցանկացող բանուորներին հաշիւ

ստանալ: Ճաշի ժամանակ բանուորները ջրուեցին, և արհեստանոցները փակուեցին: Գալով ճաշից յետոյ արհեստանոցները և գտնելով նրանց փակուած՝ բանուորները սկսեցին խմբուել և րկաթ ուղիական դժի վրա, որտեղ նրանց միացան բանուորներ Հարաւային Ռուսական ընկերութեան մերձակայ գործարանները: Այդ ժամանակ ամբողջ, բազկացած մօտ 2000 հոգուց, բոնեց ճանապարհի ամբողջ լայնութիւնը: Բայց համոզումները՝ հեռանալ ճանապարհից՝ անհետեանք մնացին: Այս պատճառով էլ անհրաժեշտ ճանաչուեց մաքրել ճանապարհը զօրքերի աջակցութեամբ: Այդ բանը սկսելու աջողուեց առանց զիմեյու ղէնքի օգնութեան, բայց երբ բանուորների մի խմբի միջից սկսեցին զօրքի վրայ քարեր զցել, որոնից վէրքեր ստացան պրիստաւի օգնականը, մի օֆիցեր և մի քանի ղինուորներ, այն ժամանակ անկարգութիւններ անողների վրայ արձակեցին հրացաններ, որոնցով սպանուեցին երկու հոգի, և 27 հոգի էլ վիրաւորուեցին:

Սերգէյ Իւրիւեւիչ Վիտտէն 11 տարուայ գործունէութիւնից յետոյ թողնում է ֆինանսների մինիստրի պաշտօնը: Նրա կատարած գլխաւոր գործերն են—ուսկի դրամի չրջանառութիւնը. խմիչքների արքունի վաճառումը. պետական փոխառութիւնների վերածումը $4\frac{1}{2}\%$ — 6% թղթերից 4% թղթերի. արքունական և մասնաւորնոր երկաթուղիների ահադին ցանցի շինութիւնը. ղիւղացիների փոխատու պատասխանատուութեան վերացումը. Գերմանիայի հետ առևտրական դաշնագրի կնքումը. վնասուած բանուորներին գործարանատէրերի կողմից բաւարարութիւն տալու մասին օրէնքը. առևտրական-արդիւնաբերական զբաղմունքների վրայ հարկը, բնակարանային պետական հարկը և այլն:

Վիտտէն նշանակուած է մինիստրների կօմիտեաի նախագահ և չարունակելու է գիւղատնտեսական արդիւնաբերական կարիքների քննութեան համար կազմուած Առանձին Սորհրդակցութեան նախագահի պաշտօնը: Նա պէտք է վերջացնի և Գերմանիայի հետ կատարելիք նոր առևտրական դաշնագրի հարցը:

Ֆինանսների մինիստր է նշանակուած Պետական Բանկի կառավարիչ Էդուարդ Դմիտրիււիչ Պլիսկէ, որ մօտ 52 տարեկան է:

Բարձրագոյն հաստատուած են այս տարուայ ապրիլի 21-ին Անդրկովկասի (քայի Կարսի և Զաքաթալի շրջաններէց) արքունական հոգերի վրայ ապրող գիւղացիների և գաղթականների հոգաւորական զրութիւնը որոշող կանոններ, որոնց էութեան հետ կ'աշխատենք ծանօթացնել մի այլ անգամ:

Օգոստոսի 24-ին Էջմիածնում տեղի ունեցաւ Մեռնի օրհնութիւնը: Պատարագիչ էր Սեդրակեան արքեպիսկոպոսը: Վեհափառ կաթողիկոսը 14 եպիսկոպոսների, բաղմաթիւ վարդապետների, քահանաների և ուխտաւորների ներկայութեամբ կատարեց Հայաստանայց եկեղեցու այդ ամենափառաւոր արարողութիւնը:

Կարգադրութիւններ մամուլի վերաբերեալ:—Վերջերումս թոյլ են տրուած մի քանի ուսերէն պարբերական հրատարակութիւններ՝ մեծ մասամբ մասնագիտական բովանդակութեամբ: Այդպէս ակադեմիկոս Բեխտերեւին և պրոֆ. Սերեբրեննիկովին «Вѣстникъ Психологіи, Криминальной Антропологіи и Гипнотизма» ամսագիրը, ակադեմիկոս Իշխ. Թարխանովին ամեն շաբաթեայ պատկերազարդ «Охрана Здорovia въ Семѣѣ и Обществѣ» հանգէսը:

Ներքին գործերի մինիստրի կարգադրութեամբ առաջին նախազգուշացում է յայտնուած լրագիր-ամսագիր «Гражданинъ»-ին, երրորդ նախազգուշացում «Хозяинъ» ամսագրին:

Նոր-նախընտանցի պ. Յ. Բուղդանեանը թոյլաւութիւն էր խնդրել հրատարակելու նոյն քաղաքում «Զրոյց» անունով հայերէն լրագիր: «Պրիադ. Կրայ» Թերթի ասելով՝ մամուլի գործերի գլխաւոր վարչութիւնը յայտնել է խնդրատուին, որ ներքին գործոց մինիստրը հնարաւոր չէ համարել գոհացում տալու նրա խնդրքին:

Յուլիսի 24-ին Բաթումում սպանուեց «Թատրոն» հանդիսի խմբագիր-հրատարակիչ Ալ. Թարխանեանը: Լուրերին նա՝ յաճ՝ նրա այրին մտադիր է շարունակել այդ հանդիսի հրատարակութիւնը:

Չորս ամսով դադարեցրուած է «Урагъ» լրագրի և 6 ամսով «Развлеченіе» ամսագրի հրատարակութիւնը:

Պետական խորհրդի Բարձրագոյն հաստատուած կարծի-

քով որոշուած է հիմնել առանձին գրաքննիչների պաշտօններ Սարկով, Բոստով Դոնի վրայ, Եկատերինսկաւ, Նիժնի-Նով-գորոդ, Սարատով, Տոմսկ և Վլադիվոստոկ: Նոր գրաքննիչները ստանալու են 2 հազ. ռ. ուժիկ և 200 ռ. գիւտնական ծախքերի համար:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Լորդ Սոյսթերի մահը:—Անգլիական պահպանողականների ընտրոշ կողմնորդ:—Անգլիական պահպանողականների քրիստոնքիւնը:—Յոյների քրիստոնքիւնը:—Կառալ. հաղորդ. Բիսոփի ոռն հիւս. սպանութեան առիթով:—Չանի նուիրած հողը ոռնաց կայսրուհուն Ուրմիայուն:

Մի տարի է արդէն, որ մարկիզ Սոլսբերին հետացած էր պետական գործունէութիւնից. ֆիզիկական մահը շատ շուտ վրայ հասաւ նրա հասարակական-քաղաքական մահից յետոյ: Իր կեանքի 73 տարիներից 50 նա նուիրեց իր հայրենիքին, որի ամենահարուստ և մեծանուն ընտանիքներից, անգլիական արիստոկրատիայի շառաւիղներից մէկն էր ինքը: Սոլսբերին անգլիական պահպանողականութեան տիպիկ ներկայացուցիչներից էր: Սակայն «պահպանողական» խօսքը անգլիական քաղաքական կուսակցութիւնների նկատմամբ չը պէտք է այնպէս հասկանալ, ինչպէս այլ երկրներում, որովհետև անգլիական պահպանողականները երբէք չեն պաշտպանում այնպիսի կարգերի գոյութիւնը, որոնք այլևս չեն վայելում հասարակական կարծիքի մեծամասնութեան համակրանքը: Անգլիական պահպանողականները շատ անգամ իրանք են իրադրոծել այն բեֆորմները, որոնց դէմ սկզբում իրանք մտքառել են, այդպէս օրինակ՝ Իրլանդիայի ինքնավարութեան հարցում: Անգլիական պահպանողականը ձգտելով պահպանել գոյութիւն ունեցող կարգերը՝ դէմ չէ զբանց աստիճանական բարեփոխութեան և երբէք յետ գնալու, բէակցիոն ձգտումների կողմնակից չէ եղել. նա գիտէ ժամանակին զիջել և նոյնիսկ իր վրայ վերցնել

որոշ ազատական բեֆորմների իրադարձում։ Իսկ անձի ազատութեան, վարչութեան քմահաճոյքների օրինական սահմանափակումների մէջ անդլիայի կոնսերվատորը նոյնքան ազատամիտ է, որքան և լիբերալը։ Ժողովրդի ներկայացուցիչներին մեծամասնութեան հաւանութիւն զտած որոշումները կամ օրէնքները միատեսակ են զործադրում բոլոր անդլիական հպատակների վրայ։ Ժողովրդից բնորոշած անկախ դատաստանը հաւասար աչքով է նայում բոլոր մարդկանց վրայ։ Անդլիայում սահմանադրական բեթիմը, տեղական ինքնավարութիւնը—մարմին և արբւն են գտել իւրաքանչիւր անդլիացու մէջ, և այդ հիմնական հարցերում անդլիայի պահպանողականը չի տարբերում լիբերալից։ Մեր չափերով իսկապէս պէտք է անդլիական կոնսերվատիզմը կոչել լիբերալիզմ, իսկ նրա լիբերալիզմը—գեմոկրատիզմ։ Սակայն մի հարց կայ, որի մէջ անդլիական պահպանողականութիւնը զգալ է տալիս իր նմանութիւնը եւրոպական կոնտինենտի պահպանողականութեան. այդ նրա սնտիրտ, վեհերոտ, եսական վերաբերմունքն է արեւելեան հարցում։ Պահպանել կազմալուծուող Թիւրքիան, որպէսզի Ռուսիան աւելի առաջ չը գնայ մերձաւոր Արեւելքում—անդլիական կոնսերվատիզմի մի *idée fixe* է, որին պատրաստ է նա զոհել մանրագլուխներէրի զոյութիւնն անգամ։ Այդպէս նա վարուեց 1878 թւականին, 1896 թւականին Սոլսբերին կարծես ուղեց շեղուել այդ աւանդական ուղղութիւնից, սակայն թունդ ճառերից զէնք զընալու կամքի ոյժ չ'ունեցաւ և յետ նահանջեց ռուսական զիւլումատիայի առաջ, գտնելով որ անդլիական նաւատորմիզը անզոր է անցնել Տաւրոսի լեռներով... Բնականաբար Սոլսբերին չէր կարող վայելել արեւելեան քրիստոնեաների համակրանքը, ինչպէս նրա հակառակորդ Գլադստոնը և առհասարակ անդլիական լիբերալիզմը, որը արեւելեան հարցում այլ ուղղութեան է հետևում։

Վերին ստորճանի զգոյշ, վեհերոտ վերաբերմունք դէպի թիւրքական գործերը չարունակում է ցոյց տալ և Սոլսբերիի յաջորդ Բալֆուրը։ Մակեդոնական հարցում Անդլիայի չէզոքութիւնը ուղղակի յանցաւոր չափերի է հասնում։

„Правительственный Вѣстникъ“ լրագրում տպուած են արտաքին գործերի մինիստրի հեռագիրները— առաջին՝ Կ. Պոլսի Կայսերական դեսպանին յուլիսի 29-ից. «Սուլթանի արտայայտած խորին ցաւակցութիւնները, պրինց Ահմէդի այցելութիւնը դեսպանին և ցաւակցութիւն յայտնելը մեծ վիզիրի, մինիստրների և այլ բարձրաստիճան անձերի կողմից չեն կարող բաւական բաւարարութիւն համարուել: Թագաւոր Կայսրը բարեհաճեց ներողամիտ լինել Միտրովցի հիւպատոսի սպանութեան առիթով, որովհետեւ յանցանքը կատարել էր ալբանացին այն ժամանակ, երբ այդ ցեղը ապստամբուել էր և՛ կառավարութեան դէմ: Բոլորովին այլ բնաւորութիւն ունի Բիտոլիում կատարած յանդուգն չարադործութիւնը, որը ամենախիստ հատուցումն է պահանջում: Թագաւոր Կայսրը բարեհաճեց այդ առիթով Բարձրագոյն հրամայել, որպէսզի դուք մերժէք ամեն տեսակ անփաստ խոստումներ և պահանջէք կատարելու հետեւալ պայմանները. Բոստովսկուն սպանող ժանդարմին անյապաղ ամենածանր պատժին ենթարկել, կալանաւորել և օրինակելի պատիժ տալ ռուսաց հիւպատոսի կողքի վրայ հրացան արձակողներին, անյապաղ ներկայացնել ձեզ դրական փաստեր Բիտոլիի վալիի իսկական քսոյի մասին և անյապաղ խիստ պատժի ենթարկել բոլոր քաղաքացիական և զինուորական պաշտօնեաներին, որոնք պատասխանատու են ռուսական հիւպատոսի սպանման համար: Վիլայէթների ընդհանուր խաղաղացման նպատակներով դուք պէտք է պահանջէք որ անյապաղ ամենախիստ պատիժ կրեն այն բոլոր թիւրք պաշտօնեաները, որոնց վրդովեցուցիչ գործողութիւնների վրայ մատնացոյց էր անում Ուսկիւրի հիւպատոսութեան կառավարիչը աւստրիական հիւպատոսի հետ միասին Կոստովի վիլայէթում պտոյտ գործելուց յետոյ. որ կրկին իր պաշտօնն ստանայ արձակուած Իսմայիլ Հակիին, որի գործունէութեան մասին բարենպաստ կարծիքներ էին տրուած Խիլմի-փաշային. որ ըստ տարկութիւնից ազատեն այն գիւղացիներին, որոնք վկայութիւններ էին տուել ռուսաց և աւստրիական հիւպատոսներին թիւրքաց գազանութիւնների մասին. որ անյապաղ պաշտօնանկ անուեն և պատժուեն այն վարչական պաշտօնեաները, որոնց ղեղձումները երևան հանուեցին Սոլունում և Պրիլորենում և, վերջապէս, որ առանց յետաձգելու նշանակուեն օտարահպատակ օֆիցիւրներ ժանդարմերիայի և ոստիկանութեան կազմի մէջ՝ խաղաղ ազգաբնակչութեան անհրաժեշտ հանգստացման և օրինական կարգ մտցնելու համար:—Նրկրորդ հեռագիր՝ Կայսերական զիպլոմատիական գործակալին Բուլղարիայում յու-

լիսի 30-ից. «Կայսերական կառավարութիւնը չէ կարող առանց պատշաճաւոր հատուցման թողնել այն վրդովեցուցիչ չարագործութիւնը, որին զոհ գնաց Բիտուլիի սուսական հիւպատոսը, և արդէն եռանդուն միջոցներ ձեռք առաւ պահանջելու Թիւրքիայից պամպատասիան բաւարարութիւն: Որպէս Միտրովիցի մեր հիւպատոսի սպանութիւնից յետոյ մենք պնդեցինք ձնչել պլեանական ցեղերի միջև այն ժամանակ ծագած շարժումը, այնպէս և այժմ օսմանեան կառավարութեան առաջ պահանջներ են դրուած պատժելու թիւրքաց այն բոլոր քաղաքացիական և զինուորական իշխանութիւնները, որոնք յանցաւոր են զաղանութիւնների մէջ բրիտանեայ ազգաբնակիւթեան գէմ: Դուք սակայն պէտք է հոգ տանէք, որպէսզի Ռուսաստանի եռանդոտ ներգործութիւնը Կ. Պոլսում չը բացատրուի ոչ բուլղարական կառավարութեան, ոչ էլ մակեդոնական կոմիտեաների կողմից այն մաքուր, թէ փոխուել է այն քաղաքական պրոգրամմը, որ հրատարակուած էր կառավարչական հաղորդագրութիւնների մէջ: Բուլղարական իշխանութեան կողմից վտանգաւոր մոլորութիւն կը լինէր ձեռնարկած միջոցները կոմիտեաների յեղափոխական ագիտացիայի խրախույս համարել, որոնց յանցաւոր գործունէութիւնը շարունակում է վիւայէթների խաղաղացման, հետեապէս և նախադրուած բեֆորմները մտցնելուն արդելք դառնալ: Ռուսաց հիւպատոսներից ստացուած ղեկուցումներից երկուսն է, որ բրիտանեայ խաղաղ ազգաբնակիւթիւնը պակաս չէ տանջուում յեղափոխական աւազակախմբերից, քան թիւրքերի վայրագութիւններից և կողոպտումներից: Այդ բոլոր հանգամանքները մատնացոյց են անում, որ անհրաժեշտ է, որ սոֆիական կառավարութիւնն ևս ամենակտրական ազդեցութիւնը գործ դնէ յուղմունքներին վերջ տալու նպատակով Բալկանեան թերակղզու վրայ»:—Երրորդը՝ Բիտուլիի սուսաց հանգուցեալ հիւպատոսի այրին, յուլիսի 30-ից. «Մեր Օգոստոսիաո Ինքնակալը բարեհաճեց հրամայել ինձ յայտնել ձեզ Նորին Կայսերական Մեծութեան խորին ցաւակցութիւնը ձեր կրած անիրիւարինքի կորուստի համար յանձին ձեր վաղաժամ սպանուած ամուսնու, որը զգուելի չարագործութեան զոհ դարձաւ իր պաշտօնական պարտքը կատարելու ժամանակ»: «Правительственный Вѣстникъ» լրագրում տպուած է. «Կոմս Լամզգորֆի հեռագրի հետ միաժամանակ գեսպան Զինովիււին յուլիսի 29-ից, Կ. Պոլսի սուսաց գեսպանին հաղորդուած էր, թէ Սեւաստոպոլից կ'ուղարկուի թիւրքաց ջրերը սնծովեան նաւերի մի զօրարածին»:

„Правит. В.“ օգոստոսի 10-ին հրատարակուած է հետեւեալ կառավարչական հաղորդագրութիւնը. «Կառավարութիւնը պաշտօնապէս տեղեկութիւն է ստացել, որ սուլթանը հրամայել է առանց բացառութեան կատարել Բիտոլիի ոռոսաց հիւպատոսի սպանութեան առիթով Կ.-Պոլսի Կայսերական դեսպանի միջոցով Բ. Դրան ներկայացրած բոլոր պահանջները: Թաղաւոր Կայսրը բարհաճեց հրամայել, որպէսզի Խնիաղում գտնուող ոռոսաց զինուորական նաւերը վերադառնան Սեաստոպոլ: Կ.-Պոլսի ոռոսական դեսպանից ստացուած տեղեկութիւններէ համեմատ Բ. Դուռն ընդունել է հետեւեալ միջոցները.— Կայսերական կառավարութեան արած պահանջը կատարելու համար՝ բացի յանցաւորներին մահուան պատժի ենթարկելուց և երկու ժանդարմների տաժանակիր աշխատանքների դատապարտելուց՝ պաշտօնից զրկուած են այն օֆիցերները, որոնք անարգանքով են խօսել Բիտոլիի հանդուցեալ հիւպատոսի մասին. խստիւ որոնում են այն մարդկանց, որոնք հրացան են արձակել Ռոստկովսկու կողքի վրայ. պաշտօնից արձակուած և դատի են ենթարկուած 24 պաշտօնատար անձինք, որոնք նշանակուած էին Ձինովիեւի կողմից Բ. Դրանը տրուած ցուցակում, և որոնց դրօժունէութեան մասին աննպաստ տեղեկութիւններ էին տուել մեր հիւպատոսական ներկայացուցիչները. նոյն ցուցակում յիշուած մասնաւոր մարզիկ, որոնք մեղադրուած էին զանազան յանցանքների համար, նոյնպէս դատի են ենթարկուած. իր նախկին կոչմանն է արժանացել Պալանկայի ոստիկանական զործակալ Իսմայիլ Հակիկին, որը պաշտօնից արձակուած էր՝ հակառակ Ուսկիւքի ոռոսական հիւպատոսարանի կառավարչի միջնորդութեան: Ազատուած են բոլոր այն անձինք, որոնք ձերբակալուած էին՝ մահմէդականների կողմից կատարուած բռնութիւնների և չարագործութիւնների մասին պահանջարկու համար: Բարենորոգումների զլխաւոր վերատեսուչ Հիլմի փաշային յանդիմանութիւն է արուած: Սոլունի ժանդարմերիայի և ոստիկանութեան զլխաւորներ՝ Հայրէզդին բէյը և Մասխար բէյը զրկուած են պաշտօնից և նրանց փոխարէն ուրիշներն են նշանակուած: Բ. Դուռը ժանդարմերիայի մէջ պաշտօնավարելու է հրաւիրել մի քանի օտարերկրացի օֆիցերներէ, որոնց անունները յետոյ պէտք է յայտարարուեն: Վերջապէս բոլոր զինուորական, քաղաքացիական և դատաստանական իշխանաւորներին խիստ հրամաններ են տրուած կարգապահութիւն ու ապահովութիւն հաստատելու համար:

Բրիւսսելից տեղեկութիւն է ստացուած, որ Բ. Դուռը խաղաղէս դիտել է բելգիական կառավարութեանը և խնդրել է

չորս ժանդարմներ նշանակել թիւրքական ժանդարմերիայի համար:

«Правит. Вѣстникъ»-ը հաղորդում է, որ 1900 թ. պարսից Շահը Թազուհի Կայսրուհի Մարիա Ֆէոդորովնային նուիրեց 2,892 քառ. սաժէն հող՝ Ուրմիայում տեղական ուղղափառ ուսական հոգեորականութեան միասիայի պէտքերի համար: Ներկայ տարուայ յունիսի 26-ին այդ հողաբաժնի վրայ ժամասացութեամբ հիմք է դրուած այդ միասիայի տան, որի մասին հաղորդուած է Սինոդի օբեր-պրոկուրորին՝ խնդրելով Թազուհի Կայսրուհուն մատուցանել միասիայի զգացմունքները: Այդ մասին ամենահպատակօրէն ղեկուցումը լսելուց յետոյ Թազուհի Կայսրուհի Մարիա Ֆէոդորովնան հրամայեց յայտնել միասիայի գլխաւորին և անդամներին շնորհակալութիւն արտայայտած զգացմունքների համար:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ

Մամուլի գործերի գլխավոր վարչութիւնը օգոստոսի 8-ից գրուած № 7637 ծանուցումով յայտնում է, որ ներքին գործոց մինիստրը գաղանի խորհրդականի այրի տիկին Վառվառէ Յովհաննիսեան Քանանեանին հաստատել է «Մուրճ» ամսագրի հրատարակչի իրաւունքի մէջ:

Խմբագրութիւնը մնում է անփոփոխ:

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

№ 7-ում

երես	առդ	տպուած է	պէտք է լինի
168	2	eiene	eine
»	»	vidle	vile
Այս համարում			
172	41	1869	1896
105	2	հողիկ	հողմիկ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի
2-րդ տպագրութեամբ
(փոփոխուած)

Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆԻ և Լ. ՍԱՐԳՍԵԱՆԻ
Կազմած

Մ Ա Յ Ր Ե Ն Ի Խ Օ Ս Ք

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ

Երրորդ և չորրորդ տարիների համար
Համառոտ հայերէն-ռուսերէն բառագրքով
Գինն Ե 70 Կ.

(246 երես)

Դիմել թիֆլիս «Մուրճի» խմբագրատան կամ «Գուտտենբերգ» և
«Կենդրոնական» գրավաճառանոցներին: 100 օրինակից աւելի
քանակութեամբ ձեռք բերողներին 20% զիջում:

1903 թ. „ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ“ 1903 թ.

Ժ. Ե. տարի

ԲԵՐՈՑԵԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԵԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԵԳԻՏԵԿԱՆ ԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԵԳԻՆԸ

Տարեկան 10 ֆր. ոսկի=4 ր.:

Վեցամսեայ 6 » » =2 » :

Մէկ թիւ կ'արժէ 1 ֆր.=50 կոպ.:

Հասցէն՝ VIENNE (Autrich) VII/2 Mechitharistengasse 4.

Pedaction de la Revue „HANDESS“

ՀԱՅ ԾՆՈՂՆԵՐՈՒՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԻՇԵՐՈԹԻԿ ԴՊՐՈՑ

Լ Ո Ջ Ա Ն, Ջ ՈՒ Ե Ց Ե Ր Ի Ա

Երկրորդ տարի

(16-րդ անգամէն սկսեալ. ձմեռուան վեցամսեային դասերը կը սկսին սեպտ. 1/14-ին)

Արեւելեան կամ հայկական դպրոցը կ'ընդունի 10-էն 20 տարեկան աշակերտներ, որոնց կուտայ, ծնողներու բաղձանքին համեմատ, դիտական, դրական, առետրական կամ արդիւնաբերական առողջ ու հիմնաւոր կրթութիւն՝ ներդաշնակօրէն և սերտ կերպով միացած ազգային հիմնական դաստիարակութեան հետ: Մեր հայ սաներուն կ'աւանդենք, և այս՝ առանց ունի մասնաւոր վճարումի, հայոց լեզու (ռուսահայ և տաճկահայ բարբառ), մատենագրութիւն հայոց (հին և նոր), հայոց պատմութիւն և այլն: Ռուսահայ աշակերտները կարող են նաև ուսանել ռուսաց լեզուն:

Դպրոցիս տարեթոշակը, հակառակ իր ընծայած բազմաթիւ իրական առաւելութիւններուն, անօրինակ կերպով չափաւոր է:—Ընտանեկան կեանք:—Դպրոցիս յայտադիրը ամեն ուղղի կը ղրկուի: «Մուրճի» № 7-ի հետ այդ յայտադիրը ստացան անոր բաժանորդները:

Տնօրէն Մ. Նալբանդեան, դոկտ. գիտութեանց՝ պրիւատ-դոցենտ

Longeraie, Lausanne, Suisse

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

ՏԻԳՐԱՆ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆՑԻ

ԲԱՌԳԻՐՔ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԲԱՐԲԱՌԻ

(Մօտ 5000 քառ ու ոճ)

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.

Հասցէն՝ Тифлиς, Городская Управа Тиграну Навасардянцу

ԲԱՅՈՒՍԺ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԱՌՈՂՋԱՊԱՅԻԿ ԹԵՐԹ“

երկշաքաթեայ պատկերազարդ հանդիսի

1903-4 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Իբրև յաւելուած, բաժանորդները կը ստանան ճրիապէս

4-ից մինչև 6 պատկերազարդ գրքոյկներ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆ Է 2 ռ. 50 կ. (ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ—10 ֆրանկ)
կարելի է վճարել եւ մաս-մաս, սկզբում 1 ռ. 50 կ. յունուարին—1ր.:
Հրատարակութիւնը սկսուելու է սեպտեմբերին: Տարին սեպ-
տեմբերից—սեպտեմբեր է:

Աշխատակցելու են շատ հայ բժիշկներ թէ Ռուսաստանի և թէ
Թիւրքիայի ու Պարսկաստանի:

Բաժանորդագրութեան համար թէ Թիֆլիսի մէջ և թէ գաւառնե-
րից պէտք է գիմել կամ թերթիս խմբագրատունը (Сергиевская
ул. д. № 12), կամ «Գուտտենբերգ» գրավաճառանոցը (Книжная
торговля „Гуттенберг“):

Բազում կարելի է գրուել «Պրոսեթեուս» գրավաճ. (Товарище-
ство „Прометеусъ“), Պարսկաստանում գիմել Դ-ր Փաշայեանին
(Թաւրիզ):

Մեր հասցէն Тифлисъ, Редакция „Арогджапайкъ Тертъ.“

Արտասահմանից. Tiflis. Redaction „Arogdjapahik Tert“.

Խմբ.-Հրատ. բժշ. Վ. Արծրունի

Լ յ յ ա է տ ե ս ե լ

Ջ Է Յ Թ Ո Ղ Ն Յ Ո Ղ

„ՋԷՅԹՈՂՆԻ ԱՆՅԵԱԼԵՆ ԵՒ ՆԵՐԿԱՅԵՆ“

Բ. մասն

Գինը 1 ռուբլի Ռուսաստանի համար:

Դիմել՝ Թիֆլիս, «Գուտտենբերգ» գրավաճառանոցին:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՅ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՅ

ՊԵՏ. ԽՈՐՀՐԴ. ԴԱՆԻԷԼ ԳԱՔՐԻԷԼԵԱՆ ՔԱՆԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ 7-րորդ յօդուածի հիմամբ Լազարեան ճեմարանի Մասնադիտական Դասարանների Խորհուրդը իւր՝ 1902 թ. Նոյեմբերի 12-ին կայացած նիստում վճռեց յայտարարել ի գիտութիւն մասնադէտների առաջիկայ երկու նիւթերը՝ երկու մրցանակի համար, որոնցից առաջինին՝ 800 և երկրորդին՝ 600 բուրլի ֆ յատկացնուով:

Ա.—«Հայոց այբուբենը և Ս. Մաշտոցի վարքը», (1904 թ. լրանալիք հայոց տառերի գիւտի 1500-ամեակի առիթով):

Բ.—«Իրանական տարրը հայոց լեզուի մէջ». (մինչև այսօր լոյս տեսած հետազոտութիւններից դատւած):

Հետազոտութիւնները կարող են ներկայացուել Հայերէն կամ Ռուսերէն, Յոյաներէն կամ Գերմաներէն:

Լաւագոյն հետազոտութիւնը յիշեալ նիւթերից առաջինի մասին կը պարգևատրուի Խորհրդի կողմից ութ հարիւր (800) բուրլի մրցանակով:

Լաւագոյն հետազոտութիւնը յիշեալ նիւթերից երկրորդի մասին կը պարգևատրուի Խորհրդի կողմից վեց հարիւր (600) բուրլի մրցանակով:

Եթէ ին կառաջամ երրորդ նիւթի մասին որևէ ներկայացրած հետազոտութիւններից երկուսը հաւասար արժանաւորութիւն ունենան, Խորհուրդը կարող է բաժանել մրցանակը երկուսի հեղինակների մէջ:

Հետազոտութիւնները պէտք է ներկայացուեն ոչ ուշ, քան 1904 թ. 15-ը դեկտեմբերի:

Ժամանակաւոր պատասխանատու-խմբագիր՝ Յ. ՍՊԵՆԴԻԱՐԵԱՆ

Հրատարակչուհի՝ Վ. ՔԱՆԱԿԱՆ

18. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— Լորդ Սոլսբերիի մահը:— Անգլիական պահպանողականների բնորոշ կողմերը:— Անգլիական պահպանողականների թրքասիրութիւնը:— Մակեդոնական հարցի ներկայ վիճակը:— Յոյների թրքասիրութիւնը:— Կառավ. հաղորդ. Բիտոլիի ռուս. հիւպ. սպանութեան ատիժով:— Շահի նուիրած հոգը ռուսաց կայսրուհուն Ուրմիայում. Լ. Ս.	222
19. ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ,	228
20. ՎՐԻՊԱԿՆԵՐ,	«
22. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ	229
23. ՅԱԽԼՈՒԱԾ, Ա. Ըօլլէսի՝ Հրաչայի դար, թարգմ. Սա. Լիսիցկանի	144—160

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից դրել պարզ, մանաւանդ թւերը, յատուկ անուններն ու օտար բառերը, և թերթի միայն մի կրեալ վրայ:

2. 2՝ ընդունուած մեծ յօդուածները պահուած են խմբագրատանը 6 ամիս: 2 եռադիրը յետ ատանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը: Իսկ փոքր յօդուածներն ու բանաստեղծութիւնները չեն վերադարձնուում:

3. Գրուածքների վարձատրութիւնն չափը սրոշում է խմբագրութիւնը: Խմբագրութեան առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարուած են անվճարելի:

4. Խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:

5. «Մուշէի» համարը չը օտապուելու դէպքում պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ռուսերէն գրուած ազդով (заявление) ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելը: Եւթ տեղեկութեանը պէտք է կցել տեղական պոստային գրասենեակի հաստատողիւրը (удостоверение), որ ամսագրի համարը չէ յանձնուած զանգատաւորին:

6. Խմբագրութեանը զանազան հարցումներով դիմող անձինք պէտք է պատասխանի համար ուղարկեն նամակադրոշմ կամ պոստային րլանկ:

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄԷ

1903

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

(Նոր շրջան, III-րդ տարի)

Խմբագրութեան անդամների եւ աշխատակիցների նոյն կազմով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ

Ռուսաստանում տարեկան 10 րուբ. Արաստանում 12 րուբ.

„ կէս տարին 6 „ „ 7 „

„ 1 ամսուան 1 „ „ 1 „ 20 է.

«Մուրճ» ամսագրին կարելի է դաժանորդ դրուել.

Թիֆլիսում—խմբագրատանը (ձափնափածեան փողոց, տ. № 16):

Պայտրեան տղայ թղերից պէտք է գրիմի՝ Тифлисе, въ редакцію

журнала „МУРՃ“.

Արաստանումից՝ Тифлисе, Rédaction de la revue „MOURTCH“.

Բոցի տղ. «Մուրճին» կարելի է գրուել նաև՝

Թիֆլիսում—«Գուտտենբերգ» գրափառատանցում:

Ծանօթութիւն. Ռուսաստանի բաժանորդներէց նրանք, որոնք դժուարա-
նում են տարեկան բաժանորդագինը (10 ռ.) վճարել միանուաճ կ'ուր են տալ
մաս - մաս. սկզբում 5 ռ., մայիսի 1-ին 3 ռ. և յուլիսի 1-ին 2

Ոչ-Թիֆլիսի բաժանորդները հասցէն փոխելու համար պէտք է ուղարկ-
են 40 կոպ.

Ձեռագիրները և նամակները պէտք է ուղղել խմբագրու-
թեան, ԼՆԻՈՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ անունով:







